Հայաստանում, տարրական և միջին դպրոցների տարիքի (7-14 տարեկան) գրեթե բոլոր անձինք՝ առանց որևէ սեռային տարբերության, հաճախել են դպրոց: Ավագ դպրոցի տարիքի (15-16 տարեկան) բնակչության շրջանում, մասնավորապես տղաների մոտ, նկատվել է ընդգրկվածության նվազման միտում: Հատկանշական է, որ ուսումնական հաստատություն հաճախող 17-19 տարեկանների շրջանում նշանակալիորեն ավելի մեծ տեսակարար կշիռ են կազմում կանայք: Նշենք նաև, որ տղաները բանակ են զորակոչվում հենց այս տարիքում:

Հայաստանում, գրեթե բոլոր աշակերտներն ուսանում են մինչև 8-րդ դասարան, քանզի աշակերտները հեշտությամբ են փոխադրվում 2-8 դասարաններ: ՀԺԱՀ-2005-ի արդյունքները ցույց են տալիս, որ 8-րդ դասարանից հետո հաջորդ դասարաններ չփոխադրման գործակիցը կազմել է 9 տոկոս (արդյունքները ներկայացված չեն):

² Այն աշակերտները, որոնց տարիքը դպրոցական մակարդակի համար նախատեսված տարիքից բարձր է, կարող էին գնալ դպրոց ավելի մեծ տարիքում, կարող էին կրկնած լինել որևէ դպրոցական տարի, կամ կարող էին դպրոցից դուրս մնացած և հետագայում կրկին վերադարձած լինել:

Պճապատկեր 2.2 Կրթական մակարդակներում ընդգրկվածության տարիքային ցուցանիշն ըստ սեռի

Բնակչության տոկոս



ՀԺԱԴ-2005

Աղյուսակ 2.5 Ուսումնական հաստատություն ընդգրկվածության ցուցանիշներ

Ընդգրկվածության զուտ ցուցանիշները (ԸԶՑ) և ընդգրկվածության համախառն ցուցանիշները (ԸԳՑ) տնային տնտեսությունների մշտական բնակչության համար ըստ կրթական մակարդակի, սեռի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Ընդգրկվածության զուտ ցուցանիշ ¹			Ընդգրկվածության համախառն ցուցանիշ ²			Գենդերային համարժեքության համաթիվ ³
	Տղամարդ	Կին	Ընդամենը	Տղամարդ	Կին	Ընդամենը	
ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ							
Բնակավայր							
Քաղաքային	94.1	92.6	93.4	102.9	98.0	100.4	0.95
Գյուղական	95.1	92.2	93.7	102.2	99.1	100.7	0.97
Մարդ							
Երևան	94.1	91.6	92.9	104.0	97.3	100.8	0.94
Արագածոտն	93.5	92.9	93.2	100.4	98.3	99.5	0.98
Արարատ	93.8	94.5	94.2	99.6	103.7	101.7	1.04
Արմավիր	97.0	89.7	93.3	101.5	93.9	97.7	0.93
Գեղարքունիք	96.5	95.2	95.8	107.2	100.5	103.8	0.94
Լոռի	92.4	92.2	92.3	97.4	98.0	97.7	1.01
Կոտայք	92.5	96.9	94.7	99.7	103.3	101.5	1.04
Շիրակ	94.7	87.5	91.3	101.9	92.4	97.5	0.91
Սյունիք	96.7	94.3	95.4	106.9	98.0	102.2	0.92
Վայոց ձոր	95.0	95.8	95.4	101.2	100.7	101.0	1.00
Տավուշ	96.9	95.1	96.1	108.9	108.8	108.8	1.00
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	94.9	91.1	93.1	102.0	99.0	100.6	0.97
Ցածր	95.4	92.3	93.9	103.4	95.8	99.9	0.93
Միջին	93.6	91.8	92.7	99.2	99.6	99.4	1.00
Բարձր	95.2	94.8	95.0	106.0	99.3	102.7	0.94
Ամենաբարձր	93.5	92.4	93.0	102.3	98.1	100.3	0.96
Ընդամենը	94.6	92.4	93.5	102.6	98.4	100.6	0.96
ԱՎԱԳ ԴՊՐՈՑ							
Բնակավայր							
Քաղաքային	68.0	74.8	71.4	85.4	96.5	91.0	1.13
Գյուղական	70.1	76.9	73.2	81.0	95.2	87.5	1.18
Մարդ							
Երևան	63.4	68.5	66.1	83.9	93.8	89.1	1.12
Արագածոտն	77.1	92.3	86.5	92.6	101.7	98.3	1.10
Արարատ	62.9	52.9	59.0	77.0	74.7	76.1	0.97
Արմավիր	71.2	67.0	69.3	74.5	89.0	80.9	1.19
Գեղարքունիք	67.4	85.6	75.7	78.6	97.2	87.1	1.24
Լոռի	90.0	71.3	78.3	115.9	87.2	98.0	0.75
Կոտայք	56.7	87.3	69.0	67.3	96.7	79.1	1.44
Շիրակ	75.0	88.9	81.9	91.0	121.7	106.3	1.34
Սյունիք	83.3	95.4	88.6	90.9	110.4	99.5	1.22
Վայոց ձոր	78.4	82.0	79.6	87.0	92.6	88.9	1.06
Տավուշ	76.2	85.3	80.5	87.6	97.0	92.1	1.11
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	54.3	73.6	63.9	61.8	90.7	76.2	1.47
Ցածր	74.0	79.1	76.2	90.8	97.7	93.8	1.08
Միջին	75.5	79.6	77.5	91.5	112.2	101.4	1.23
Բարձր	67.8	68.1	67.9	80.2	86.1	82.8	1.07
Ամենաբարձր	76.2	77.7	77.1	98.6	95.5	96.7	0.97
Ընդամենը	68.9	75.6	72.2	83.4	96.0	89.5	1.15

¹ ԸԶՑ-ն տարրական և միջին դպրոցի համար, դա տարրական և միջին դպրոցում սովորող 7-14 տարեկան բնակչությունն է՝ արտահայտված տոկոսներով: ԸԶՑ-ն ավագ դպրոցի համար, դա ավագ դպրոցում սովորող 15-16 տարեկան բնակչությունն է՝ արտահայտված տոկոսներով: Ըստ սահմանման, ԸԶՑ-ն չի կարող գերազանցել 100 տոկոսը:

² ԸԳՑ-ն տարրական և միջին դպրոցի համար, դա տարրական և միջին դպրոցի աշակերտների ընդհանուր թվաքանակի հարաբերակցությունն է պաշտոնապես սահմանված տարրական և միջին դպրոցի տարիքի բնակչությանը՝ արտահայտված տոկոսներով: ԸԳՑ-ն ավագ դպրոցի համար, դա ավագ դպրոցի աշակերտների ընդհանուր թվաքանակի հարաբերակցությունն է պաշտոնապես սահմանված ավագ դպրոցի տարիքի բնակչությանը՝ արտահայտված տոկոսներով: ԸԳՑ-ն կարող է գերազանցել 100 տոկոսի սահմանը, եթե տվյալ կրթական մակարդակում բարձր է՝ պաշտոնապես սահմանված տարիքից բարձր կան ցածր անձանց ընդգրկվածությունը:

³ Գենդերային համարժեքության համաթիվը տարրական և միջին դպրոցի համար, դա տարրական և միջին դպրոցում սովորող աղջիկների թվաքանակի հարաբերակցությունն է տարրական և միջին դպրոցում սովորող տղաների թվաքանակին (աղջիկների համար հաշվարկված ԸԳՑ-ն բաժանած տղաների համար հաշվարկված ԸԳՑ-ի վրա): Գենդերային համարժեքության համաթիվն ավագ դպրոցի համար, դա ավագ դպրոցում սովորող աղջիկների թվաքանակի հարաբերակցությունն է ավագ դպրոցում սովորող տղաների թվաքանակին (աղջիկների համար հաշվարկված ԸԳՑ-ն բաժանած տղաների համար հաշվարկված ԸԳՑ-ի վրա):

2.2 ԿԱՑԱՐԱՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները գնահատելու նպատակով հարցվողներին խնդրել են տրամադրել տեղեկություններ բնակարանային պայմանների վերաբերյալ: Խմելու ջրի աղբյուրի տեսակը, սանիտարական պայմանները և հատակի շինանյութը տնային տնտեսության անդամների՝ մասնավորապես երեխաների առողջական վիճակի կարևոր ազդակներն են: Դրանք նաև խոսում են տնային տնտեսության սոցիալ-տնտեսական պայմանների մասին: Աղյուսակներ 2.6, 2.7 և 2.8-ը ներկայացնում են հիմնական կացարանային բնութագրիչներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի:

Հայաստանի բոլոր տնային տնտեսություններն ունեն էլեկտրականություն (Աղյուսակ 2.6): Տնային տնտեսությունների և բնակչության հիմնական մասն ունեն մշակված հատակ, կերակուրը պատրաստելու նպատակով օգտագործում են հեղուկ կամ բնական գազ և դրա համար կացարանում ունեն հատուկ տարածք: Ընդհանուր առմամբ, քաղաքային բնակավայրերի հարցվողների մեծամասնությունն ապրում է համապատասխան սանիտարական պայմաններով կացարաններում: Գյուղական բնակավայրերում կացարանային պայմանները բազմաբնույթ են:

Մանրահատակը կամ ողորկ հատակն առավել տարածված են քաղաքային բնակավայրերում (63 տոկոս): Գյուղական բնակավայրերում, տնային տնտեսությունների հիմնական մասն ունեն փայտե տախտակներով հատակ (67 տոկոս), մինչդեռ տնային տնտեսությունների 2 տոկոսն ունեն հողային կամ ավազային ծածկույթով հատակ: Տնային տնտեսությունների զրեթե կեսը (45 տոկոս) քնելու նպատակով օգտագործում է 2 սենյակ: Քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև տարբերություններն աննշան են:

Կերակուր պատրաստելու նպատակով օգտագործվող վառելանյութը կտրուկ փոփոխվել է ՀԺԱՀ-2000-ի համեմատությամբ: Այդ նպատակով էլեկտրականություն օգտագործող տնային տնտեսությունների տոկոսը ՀԺԱՀ-2000-ին կազմել է 37, իսկ ՀԺԱՀ-2005-ին այն նվազել է՝ կազմելով 14 տոկոս: Նույն ժամանակահատվածում նկատվել է հեղուկ գազի օգտագործման հակառակ միտում՝ աճելով 14 տոկոսից մինչև 80 տոկոս:

Աղյուսակ 2.6-ի վերջին հատվածը ցույց է տալիս այն տնային տնտեսությունների (5 տոկոս) տոկոսային բաշխումը, որոնք կերակուր պատրաստելու նպատակով օգտագործում են չոր վառելիք՝ ածուխ/քարածուխ, փայտածուխ, փայտ/ցախ, աթար և այլն: Այդ տնային տնտեսությունների մեծամասնությունը (չորսից երեքը), սննդի պատրաստման նպատակով օգտագործում են բաց կրակ կամ վառարան առանց ծխնելույզի: Ի տարբերություն քաղաքային բնակավայրերի, գյուղական բնակավայրերում ավելի շատ են օգտագործում վառարանի այս տեսակը:

Խմելու ջուր

Խմելու ջրի աղբյուրի տեսակը հանդիսանում է ցուցիչ՝ պարզելու, թե որքանով է ջուրը պիտանի խմելու համար: Աղյուսակ 2.7-ում ներկայացված են տվյալներ խմելու ջրի աղբյուրի տեսակի, ջուրը հավաքելու համար ժամանակի, սովորաբար ջուր բերող անձի տարիքի և սեռի, խմելու ջուրն ապահով դարձնելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ: Աղյուսակում ներկայացված են տնային տնտեսությունների և նրանց մշտական բնակչության տոկոսները:

Հայաստանում տնային տնտեսությունների չորսից երեքում առկա է ջրի կենտրոնացված մատակարարում: Ի տարբերություն գյուղական բնակավայրերի, քաղաքային բնակավայրերում շատ ավելի տարածված է ունենալ խմելու ջրի աղբյուր տան ներսում (համապատասխանաբար՝ 39 և 94 տոկոս): Գյուղական բնակավայրերում 36 տոկոս տնային տնտեսությունների ջուրը կենտրոնացված կերպով մատակարարվում է բակ: Քանի որ տնային տնտեսությունների մեծամասնությունն ունեն ջրի աղբյուր կացարանում կամ շրջակայքում, ուստի բնակիչների 10 տոկոսից քիչն է ստիպված ջուր բերել մեկ այլ վայրից: Կացարանում ջուր չունեցող տնային տնտեսություններում, ավելի հաճախ ջուր բերելու են

գնում 15 տարեկանից բարձր կանայք: Այս երևույթը, մասնավորապես, տարածված է գյուղական բնակավայրերում (16 տոկոս):

Աղյուսակ 2.6 Բնակարանային բնութագրիչներ				
Էլեկտրականությամբ ապահովված տնային տնտեսությունների տոկոսը և տնային տնտեսությունների տոկոսային բաշխումն ըստ բնակարանային բնութագրիչների, Հայաստան 2005				
Բնութագրիչներ	Բնակավայր			Մշտական բնակչություն ¹
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	
Էլեկտրականություն	99.9	99.7	99.8	99.8
Հատակի ծածկույթ				
Հող, ավազ	0.5	2.0	1.0	1.0
Փայտե տախտակներ	20.8	66.9	36.5	39.0
Մանրահատակ, ողորկ հատակ	63.4	12.6	46.2	44.5
Լինոլիում	9.1	5.8	8.0	6.8
Կերամիկական սալիկներ	2.7	1.3	2.2	2.2
Ցեմենտ	1.9	8.2	4.0	4.4
Այլ/տեղեկատվություն չկա	1.7	3.2	2.2	2.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Քնելու նպատակով օգտագործվող սենյակների թիվ				
Մեկ	34.7	23.8	31.0	19.4
Երկու	45.9	41.6	44.5	47.4
Երեք կամ ավելի	18.5	33.5	23.6	32.2
Տեղեկատվություն չկա	0.9	1.1	1.0	1.0
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Կերակուր պատրաստելու նպատակով օգտագործվող էներգիայի աղբյուր				
Էլեկտրականություն	15.9	15.6	15.8	14.2
Հեղուկ գազ	39.9	31.3	36.9	36.2
Բնական գազ	43.4	41.0	42.6	44.9
Այլ/տեղեկատվություն չկա	0.9	12.1	4.7	4.7
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Կերակուր պատրաստելու վայր				
Տանը	98.9	92.9	96.9	96.7
Առանձին կառույցում	0.6	4.5	1.9	2.1
Դրսում	0.2	2.6	1.0	1.0
Այլ/տեղեկատվություն չկա	0.3	0.1	0.2	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
SS թիվ	4,429	2,278	6,707	25,235
Կրակի տեսակ/տաքացվող վառարանով կերակուր պատրաստելու համար օգտագործվող չոր վառելիք²				
Փակ վառարան ծխնելույզով	1.8	6.8	6.2	6.9
Բաց կրակ/վառարան ծխնելույզով	3.0	16.9	15.4	16.1
Բաց կրակ/վառարան առանց ծխնելույզի	75.5	75.7	75.7	74.6
Այլ/տեղեկատվություն չկա	19.6	0.6	2.7	2.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Չոր վառելիք օգտագործող SS թիվ/մշտական բնակչության թվաքանակ	34	269	303	1,149


¹Տնային տնտեսության անդամներ, այսինքն սովորաբար այդ տնային տնտեսությունում բնակվողներ:

²Չոր վառելիք կարող են հանդիսանալ ածուխը, փայտածուխը, փայտը, աթարը և այլն:

Քանի որ տնային տնտեսությունները կարող են ջուրն ապահով դարձնել մի քանի եղանակներով, ուստի աղյուսակում ներկայացված են մշտական բնակչության և

միջոցառումներ իրականացնող տնային տնտեսությունների տոկոսները: Աղյուսակ 2.7-ի տվյալները վկայում են, որ տնային տնտեսությունների 89 տոկոսն ոչ մի միջոցառում չի ձեռնարկել խմելու ջուրն ապահով դարձնելու նպատակով: Ջուրն ապահով դարձնելու նպատակով ամենահաճախ կիրառվող միջոցը՝ ջրի եռացումն է (8 տոկոս):

Բնութագրիչներ	Բնակավայր		Մշտական բնակչություն ¹	
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	
Աղյուսակ 2.7 Տնային տնտեսության ջրի աղբյուր				
Տնային տնտեսությունների տոկոսային բաշխումն ըստ ջրի աղբյուրի, ջրի աղբյուրին հասնելու ժամանակի, սովորաբար ջուրը հավաքող անձի, համաձայն բնակավայրի: Մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ ջրի աղբյուրի, ջրի աղբյուրին հասնելու ժամանակի, սովորաբար խմելու ջուրը հավաքող անձի: Տնային տնտեսությունների տոկոսային բաշխումն ըստ խմելու ջուրն ապահով դարձնելու համար ձեռնարկող միջոցների և մշտական բնակչության տոկոսն ըստ խմելու ջուրն ապահով դարձնելու համար ձեռնարկող միջոցների համաձայն բնակավայրի, Չայաստան 2005				
Խմելու ջրի աղբյուր				
<i>Ապահով</i>				
Ջրի ծորակը կացարանում	93.6	38.8	75.0	73.0
Ջրի ծորակը բակում/փողոցում	3.8	36.2	14.8	16.1
Այլ ապահով աղբյուր	2.0	17.9	7.4	7.7
<i>Անապահով</i>				
Ջրատար մեքենա	0.0	6.1	2.1	2.4
Այլ անապահով աղբյուր	0.1	0.4	0.2	0.3
Այլ/տեղեկատվություն չկա	0.5	0.7	0.6	0.5
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Խմելու ջրի հետևից գնալու, այն հավաքելու և վերադառնալու համար անհրաժեշտ ժամանակահատված				
Տնային տնտեսության սահմաններում				
30 րոպեից քիչ	97.7	77.8	91.0	90.4
30 րոպեից ավելի	1.5	14.9	6.1	6.5
2 գիտի/ տեղեկատվություն չկա	0.7	6.8	2.8	2.8
2 գիտի/ տեղեկատվություն չկա	0.1	0.4	0.2	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Անձը, ով սովորաբար գնում է ջրի				
2 ավազանից 15+	0.5	3.7	1.6	1.6
2 ավազանից 15+	1.6	16.4	6.6	7.1
Տղա երեխա մինչև 15 տարեկան	0.0	0.6	0.2	0.3
Աղջիկ երեխա մինչև 15 տարեկան	0.1	0.6	0.3	0.4
Ջուրը տնային տնտեսության սահմաններում է	97.7	77.8	91.0	90.4
Այլ/տեղեկատվություն չկա	0.1	0.8	0.3	0.3
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Խմելու ջուրն ապահով դարձնելու համար ձեռնարկվող միջոցները				
Եռացնել	8.7	5.4	7.6	8.3
Այլ	2.6	2.5	2.6	2.5
Ոչ մի միջոց չի ձեռնարկվում	88.8	90.8	89.4	88.7
2 գիտի/ տեղեկատվություն չկա	0.7	1.9	1.1	1.2
SS թիվ/մշտական բնակչություն	4,429	2,278	6,707	25,235
¹ Տնային տնտեսության անդամներ, այսինքն սովորաբար այդ տնային տնտեսությունում բնակվողներ:				



Սանիտարական պայմաններ

Աղյուսակ 2.8-ը ցույց է տալիս այն տնային տնտեսությունների և մշտական բնակչության մասնաբաժինը, որոնք ապահովված են բավարար սանիտարահիգիենիկ պայմաններով: Հիգիենիկ պայմանների առկայությունը որոշվում է տնային տնտեսությունում սովորաբար օգտագործվող զուգարանի տեսակով և այդ զուգարանից սովորաբար օգտվող տնային տնտեսությունների քանակով:

Տնային տնտեսության սանիտարական պայմանները համարվում են հիգիենիկ, եթե տնային տնտեսության զուգարանի տեսակը բացառում է մարդու շփումը կղանքի հետ և այդ զուգարանից օգտվում են միայն մեկ տնային տնտեսության անդամներ: Վերոնշյալ նկարագրությանը համապատասխանում են զուգարանի հետյալ տեսակները՝ դեպի կոյուղի ողողվող զուգարան, սեպտիկ բաք, փոսի ձևով օդափոխվող զուգարան, փոսի ձևով զուգարան սալիկներով, փոսի ձևով զուգարան առանց սալիկների, դույլ-զուգարան: Տնային տնտեսության սանիտարական պայմանները համարվում են հակահիգիենիկ, եթե տնային տնտեսության զուգարանի տեսակը չի բացառում մարդու շփումը կղանքի հետ և այդ զուգարանից օգտվում են մի քանի տնային տնտեսություններ:

Հայաստանում տնային տնտեսությունների մեծամասնությունն ունեն բավարար հիգիենիկ սանիտարական պայմաններ (Աղյուսակ 2.8): Երեք տնային տնտեսություններից երկուսն օգտվում են դեպի կոյուղի ողողվող զուգարանից և 18 տոկոսն օգտվում է օդափոխվող զուգարանից փոսի ձևով: Ողողվող զուգարաններն առավել տարածված են քաղաքային բնակավայրերում (92 տոկոս), մինչդեռ գյուղական բնակավայրերում ամենահաճախ հանդիպող տեսակը՝ օդափոխվող զուգարանն է փոսի ձևով (47 տոկոս): Հարկ է նշել, որ սանիտարական պայմանների նկարագրությունը ՀԺԱՅ-2005-ի և ՀԺԱՅ-2000-ի հարցաթերթերում տարբեր է, ինչը դժվարեցնում է այս երկու հետազոտությունների տվյալների համադրումը:


Աղյուսակ 2.8 Տնային տնտեսության սանիտարական պայմաններ

Տնային տնտեսությունների և մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ սանիտարական պայմանների, Հայաստան 2005

Բնութագրիչներ	Բնակավայր		Մշտական	
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	բնակչություն ¹
Բավարար, օգտվում է 1 ՏՏ				
Ողողվող դեպի կոյուղի	92.1	17.3	66.7	64.1
Ողողվող դեպի սեպտիկ բաք	0.3	0.3	0.3	0.3
Ողողվող զուգարան փոսի ձևով	1.0	7.1	3.1	3.6
Օդափոխվող զուգարան փոսի ձևով	2.9	47.2	18.0	19.3
Ձուգարան փոսի ձևով սալիկով	0.6	7.5	3.0	3.1
Անբավարար				
Այլ տնային տնտեսության հետ համատեղ օգտագործման որևէ վայր	1.6	3.1	2.1	1.9
Ողողվող կոյուղուն /սեպտիկ բաքին/փոսին չմիացված զուգարան	0.5	0.2	0.4	0.3
Փոսի ձևով առանց սալիկի/բաք փոս	0.5	17.0	6.1	7.1
Դուլ-զուգարան	0.2	0.1	0.1	0.1
Ձուգարան չկա/թուփ/դաշտ	0.1	0.0	0.1	0.1
Այլ/տեղեկատվություն չկա	0.2	0.1	0.1	0.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
ՏՏ թիվ/մշտական բնակչություն	4,429	2,278	6,707	25,235

¹Տնային տնտեսության անդամներ, այսինքն սովորաբար այդ տնային տնտեսությունում բնակվողներ:

Գծապատկեր 2.4 Տնային տնտեսությունների տոկոսն ըստ բնակավայրի, որոնց խմբելու ջրի աղբյուրն է հանդիսանում ջրմուղը կացարանում և սանիտարական պայմաններն ապահովվում են կոյուղու միջոցով



Տնային տնտեսությունների տոկոս

ՀԺԱԳ-2005

Տնային տնտեսության ունեցվածք

Երկարաժամկետ սպառման ապրանքների առկայությունը հնարավորություն է տալիս մոտավոր գնահատել տնային տնտեսության սոցիալ-տնտեսական վիճակը: Ավելին, որոշ ապրանքներ ունեն հատուկ նշանակություն: Ռադիոյի կամ հեռուստացույցի առկայությունը նպաստում է տնային տնտեսության անդամների տեղեկացվածությանը: Սառնարանի առկայությունն ապահովում է մթերքների թարմությունը: Տրանսպորտային միջոցի առկայությունը հնարավորություն է տալիս օգտվել նաև տեղանքից դուրս գտնվող ծառայություններից: Աղյուսակ 2.9-ը ցույց է տալիս տնային տնտեսության սեփականություն հանդիսացող երկարաժամկետ սպառման ապրանքների (ռադիո, հեռուստացույց և սառնարան), ինչպես նաև փոխադրամիջոցի տեսակի (հեծանիվ, մոտոցիկլ և ավտոմեքենա) առկայությունը:

Աղյուսակ 2.9-ից երևում է, որ քաղաքային բնակավայրերում ավելի շատ տնային տնտեսություններ ունեն երկարաժամկետ սպառման ապրանքներ, իսկ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունները՝ փոխադրամիջոց: Ընդհանուր առմամբ, Հայաստանի տնային տնտեսությունների 85 տոկոսն ունի գունավոր հեռուստացույց, 72 տոկոսը՝ ոչ բջջային հեռախոս, իսկ 67 տոկոսը՝ լվացքի մեքենա: Ի տարբերություն գյուղական բնակավայրերում, քաղաքային բնակավայրերում տարածված են և՛ բջջային, և՛ ոչ բջջային հեռախոսները: Ոչ բջջային հեռախոս ունեն քաղաքային տնային տնտեսությունների 84 տոկոսը, այս ցուցանիշը գյուղական բնակավայրերում կազմել է 49 տոկոս:

Աղյուսակ 2.9 Տնային տնտեսության ունեցվածք				
Երկարաժամկետ օգտագործման տարաբնույթ ապրանքներ և փոխադրամիջոց ունեցող տնային տնտեսությունների տոկոսն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրի, և երկարաժամկետ օգտագործման տարաբնույթ ապրանքներ և փոխադրամիջոց ունեցող մշտական բնակչության տոկոսը, Հայաստան 2005				
Երկարաժամկետ օգտագործման ապրանքներ	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը բնակչություն ¹	
Ռադիո	34.7	17.8	28.9	29.6
Սև/սպիտակ հեռուստացույց	11.1	18.6	13.6	12.1
Գունավոր հեռուստացույց	88.5	77.3	84.7	88.0
Լվացքի մեքենա	69.2	62.7	67.0	71.3
Փոշեկուլ	54.1	24.7	44.1	46.5
Համակարգիչ	12.1	2.0	8.7	9.1
Բջջային հեռախոս	39.2	19.4	32.5	37.1
Ոչ բջջային հեռախոս	83.5	49.4	71.9	72.5
Սառնարան	86.3	74.8	82.4	84.0
Լուսանկարչական ապարատ	46.1	27.7	39.9	45.6
Փոխադրամիջոց				
Հեծանիվ	1.9	11.6	5.2	6.7
Անասուններով կառք	0.1	1.6	0.6	0.7
Մոտոցիկլետ	0.2	1.2	0.6	0.8
Մարդատար/բեռնատար ավտոմեքենա	22.6	27.6	24.3	29.7
Գյուղատնտեսական հողակտորի սեփականատերեր	17.3	85.4	40.5	45.2
Գյուղատնտեսական նշանակության անասունների սեփականատեր ²	5.1	63.7	25.0	30.4
SS թիվ/մշտական բնակչություն	4,429	2,278	6,707	25,235

¹Տնային տնտեսության անդամները, այսինքն սովորաբար բնակվողները
²Խոշոր եղջերավոր անասուն, ձի, ավանակ, ջորի, այծ, ոչխար, ընտանի թռչուն, խոզ, ճագար:

Հայաստանում չորս տնային տնտեսություններից մեկն ունի ավտոմեքենա կամ տրակտոր, և միայն 5 տոկոսը՝ հեծանիվ: Ի տարբերություն քաղաքային բնակավայրերի տնային տնտեսությունների, գյուղական բնակավայրերի տնային տնտեսություններն ավելի հակված են ունենալ սեփական ավտոմեքենա կամ տրակտոր: Հեծանիվները նույնպես ավելի տարածված են գյուղական, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար՝ 12 և 2 տոկոս):

Հայաստանի տնային տնտեսությունների 41 տոկոսն ունի գյուղատնտեսական նշանակության սեփական հողատարածք: Ի տարբերություն քաղաքային բնակավայրերի, գյուղական բնակավայրերում այս ցուցանիշը շատ ավելի բարձր է (համապատասխանաբար՝ 17 և 85 տոկոս): Հայաստանում, տնային տնտեսությունների մեկ քառորդն ունի գյուղատնտեսական նշանակության սեփական անասուններ:

2.3 ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

Բարեկեցության մակարդակների չափումը վերջերս մշակված մեթոդ է, որը կապված է տնային տնտեսության եկամուտների, առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիության և առողջական վիճակի անհամաչափության հետ և այն փորձարկվել է մի շարք երկրներում: Բարեկեցության մակարդակները կազմվում են սկզբունքային բաղադրիչների վերլուծության միջոցով յուրաքանչյուր տնային տնտեսությանը կշիռ կամ գործոնի մակարդակ նշանակելով: Այդ մակարդակների հանրագումարը ստացվում է տնային տնտեսության կողմից և անհատները բաշխվում են ըստ խմբերի՝ համապատասխան այն

Աղյուսակ 2.10 Բարեկեցության մակարդակներ
Մշտական բնակչության տոկոսային բաշխումն ըստ բարեկեցության մակարդակների համաձայն քաղաքային, գյուղական բնակավայրերի և մարզերի, Հայաստան 2005

Բնակավայր/ մարզ	Բարեկեցության մակարդակներ					Մշտական բնակչության թվաքանակը ¹	
	Ամենացածր	Ցածր	Միջին	Բարձր	Ամենաբարձր	Ընդամենը	Թվաքանակը
Բնակավայր							
Քաղաքային	3.6	12.9	24.2	28.7	30.7	100.0	15,703
Գյուղական	47.1	31.8	12.9	5.9	2.3	100.0	9,531
Մարզ							
Երևան	0.7	6.8	20.8	30.7	41.0	100.0	9,115
Արագածոտն	54.2	26.4	8.4	8.0	3.1	100.0	1,091
Արարատ	27.3	38.3	21.1	10.0	3.3	100.0	2,101
Արմավիր	39.9	27.1	14.2	12.9	5.9	100.0	2,201
Գեղարքունիք	33.8	28.7	19.3	11.6	6.6	100.0	1,578
Լոռի	25.0	24.3	21.3	17.4	12.0	100.0	2,190
Կոտայք	13.2	21.4	26.8	20.6	17.9	100.0	2,044
Շիրակ	32.6	35.5	19.7	9.2	3.0	100.0	2,184
Սյունիք	16.0	14.0	21.9	31.5	16.6	100.0	1,137
Վայոց ձոր	38.8	30.9	15.3	9.8	5.2	100.0	462
Տավուշ	46.0	21.5	19.4	7.9	5.3	100.0	1,130
Ընդամենը	20.0	20.0	19.9	20.1	20.0	100.0	25,235

¹Տնային տնտեսության անդամներ, այսինքն սովորաբար բնակվողներ

տնային տնտեսության ընդհանուր մակարդակի, որում նրանք բնակվում են: Այնուհետև ընտրանքը բաժանվել է բնակչության 5 մակարդակների, յուրաքանչյուրում ընդգրկվելով նույն քանակությամբ մարդկանց: Ազգային մակարդակով, յուրաքանչյուր մակարդակում ընդգրկվել է բնակչության մոտավորապես 20 տոկոսը:

Աղյուսակ 2.10-ը ցույց է տալիս բնակչության բաշխումը 5 մակարդակներում ըստ քաղաքային, գյուղական բնակավայրերի և մարզերի: Բաշխումն արտացոլում է, թե ինչպես են համաչափորեն (կամ անհամաչափորեն) դասավորվել բարեկեցության մակարդակներն աշխարհագրական առումով: Օրինակ, գյուղական բնակչության 3/4-րդից ավելին գտնվում է ամենացածր և ցածր բարեկեցության մակարդակներում: Ի տարբերություն այս ցուցանիշի, քաղաքային բնակավայրերի մոտավորապես տասն բնակիչներից վեցը գտնվում են բարեկեցության բարձր կամ ամենաբարձր մակարդակներում:

2.4 ԾՆՆԴՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Հայաստանում, ծննդյան գրանցումը համարվում է երեխայի իրավունքներից մեկը: Ծննդյան գրանցումը ծննդյան փաստի գրանցումն է քաղաքացիական կացության ակտերի պաշտոնական գրանցամատյանում: Որպես ծնունդը հավաստող փաստաթուղթ հանդիսանում է ծննդյան վկայականը, որը տրվում է գրանցման ժամանակ կամ ավելի ուշ: ՀԺԱՀ-2005-ի ընթացքում մայրերը հարցվել են, թե արդյոք գրանցվել է 2000թ-ից ի վեր ծնված իրենց յուրաքանչյուր երեխայի ծնունդը: Աղյուսակ 2.11-ը ցույց է տալիս մինչև 5 տարեկան այն երեխաների տոկոսային բաշխումը, ում ծնունդը գրանցվել է պետական մարմինների կողմից և հարցման պահին ծննդյան վկայական ունեցող երեխաների տոկոսը: Ոչ բոլոր գրանցված երեխաները կարող են ունենալ ծննդյան վկայական, քանի որ այն կարող են կորցրած լինել կամ երբեք էլ վերցրած չլինեն: Ինչևէ, ծննդյան վկայական ունեցող բոլոր երեխաներն էլ եղել են գրանցված:

Աղյուսակ 2.11 Մինչև 5 տարեկան երեխաների ծննդյան գրանցում				
Մշտական մինչև հինգ տարեկան երեխաների տոկոսը, ում ծնունդը գրանցվել է ՔԿԱԳ բաժինների կողմից ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005				
Երեխաների տոկոսը, ում ծնունդը գրանցվել է				
Հիմնական բնութագրիչներ	Ունեն ծննդյան վկայական ¹	Չունեն ծննդյան վկայական	Ընդամենը գրանցված են	Երեխաների թվաքանակ
Տարիք				
<2	95.6	0.5	96.1	659
2-4	96.0	0.6	96.6	867
Սեռ				
Արական	96.2	0.4	96.6	839
Իգական	95.3	0.8	96.1	687
Բարեկեցության մակարդակ				
Ամենացածր	90.8	2.6	93.4	293
Ցածր	93.4	0.0	93.4	301
Միջին	96.3	0.0	96.3	297
Բարձր	99.5	0.3	99.8	328
Ամենաբարձր	98.6	0.0	98.6	307
Բնակավայր				
Քաղաքային	97.0	0.2	97.1	928
Գյուղական	94.0	1.2	95.2	598
Մարզ				
Երևան	96.6	0.0	96.6	573
Արագածոտն	96.0	2.7	98.7	82
Արարատ	96.4	1.5	97.9	141
Արմավիր	93.6	0.0	93.6	133
Գեղարքունիք	96.0	0.2	96.3	122
Լոռի	94.8	2.8	97.6	99
Կոտայք	97.0	0.0	97.0	123
Շիրակ	90.0	0.0	90.0	91
Սյունիք	95.1	1.9	97.0	66
Վայոց ձոր	95.9	0.0	95.9	21
Տավուշ	99.5	0.0	99.5	75
Ընդամենը	95.8	0.6	96.4	1,526

Նշում՝ Աղյուսակը հիմնված է տնային տնտեսության մշտական, այսինքն տնային տնտեսությունում սովորաբար բնակվող անդամների վրա:

Հայաստանում ծննդյան գրանցման գործընթացը գրեթե համատարած է: Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծնված երեխաների 96 տոկոսը գրանցվել են և ունեն ծննդյան վկայական: Չնչին տարբերություններ են նկատվում երեխաների ենթախմբերի միջև: Գրանցված ծնունդների մասնաբաժինը տատանվում է 90 տոկոսից՝ Շիրակում, մինչև 100 տոկոս՝ Տավուշում:

ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Սույն գլխի նպատակն է ներկայացնել ՀԺԱՀ-2005-ի ընտրանքային համակցության ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական պատկերը: Հարցված կանանց և տղամարդկանց հիմնական բնութագրիչների վերաբերյալ տեղեկատվությունը կարևոր է զեկույցում ներկայացված հետազոտության արդյունքների մեկնաբանման համար և կարող է հանդիսանալ որպես հետազոտության ներկայացուցչականության մոտավոր ցուցիչ:

3.1 ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Աղյուսակ 3.1-ը ներկայացնում է 15-49 տարեկան հարցված կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների՝ ներառյալ տարիքը, ամուսնական կարգավիճակը, կրթական մակարդակը, բնակավայրը (քաղաքային/գյուղական) և մարզը: Ինչպես նշվել է առաջին գլխում, 15-49 տարեկան բոլոր կանայք, ովքեր սովորաբար բնակվել են կամ ներկա են եղել տնային տնտեսությունում հարցմանը նախորդող գիշերը, համարվել են իրավասու հարցվող ՀԺԱՀ-2005 հետազոտության շրջանակներում: Յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսությունում հարցվել են նաև տղամարդիկ¹: Հարցվողների կրկնահաշվարկից խուսափելու նպատակով՝ զեկույցում ներկայացված աղյուսակները հիմնված են առկա բնակչության վրա, այսինքն նրանք, ովքեր հետազոտությանը նախորդող գիշերը գիշերել են տնային տնտեսությունում:

Ընտրանքում ներկայացված արական և իգական սեռի բնակչությունը հավասարապես բաշխված է ըստ տարիքի՝ որոշակի ակնառու բացառություններով: Օրինակ, ընդհանուր բնակչության մեջ 30-34 և 35-39 տարիքային խմբերի տղամարդկանց և կանանց տեսակարար կշիռը ցածր է, քան ավելի երիտասարդ և ավելի բարձր տարիքային խմբերում: Սա հատկանշական է, քանի որ այս երկու տարիքային խմբերը ևս համարվում են տնտեսապես ակտիվ:

Հարցման պահին և՛ տղամարդկանց, և՛ կանանց գերակշիռ մասն ամուսնացած են եղել կամ ապրել են համատեղ առանց ամուսնության գրանցման (բնակվում են համատեղ): Ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի, ՀԺԱՀ-2005-ի տվյալներով ամուսնացած տղամարդկանց ցուցանիշն ավելի ցածր է (համապատասխանաբար՝ 68 և 56 տոկոս): Այս տարբերությունը մասամբ բացատրվում է 15-19 տարիքային խմբում տղամարդկանց բարձր տեսակարար կշռով և ՀԺԱՀ-2005-ին 50-54 տարիքային խմբի տղամարդկանց հետազոտության մեջ չընդգրկելով: Ամուսնալուծված, առանձին բնակվող կամ այրի կանայք կազմել են 7 տոկոս՝ տղամարդկանց միայն 1 տոկոսի դիմաց: Կանանց 31 և տղամարդկանց 43 տոկոսն երբեք ամուսնացած չի եղել:

Բնակչության գրեթե երկու երրորդը բնակվում է քաղաքային բնակավայրերում, որոնց մեծամասնությունը՝ Երևանում: Մարզային կտրվածքով կան զգալի տարբերություններ: Հարցվողների մեծամասնությունը, չնչին բացառությամբ, երբևէ հաճախել են դպրոց: Հարցվողների գրեթե 10 տոկոսը ստացել են միայն հիմնական ընդհանուր կրթություն, մինչդեռ 40 տոկոսը՝ ուսանել են ավագ դպրոցում կամ ստացել են միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն: Կանանց 30 և տղամարդկանց 22 տոկոսը հաճախել է միջին մասնագիտական հաստատություններ: Հարցվողների գրեթե մեկ քառորդը հաճախել է բարձրագույն ուսումնական հաստատություններ:

¹ ՀԺԱՀ-2000-ի ժամանակ հարցմանը մասնակցել են յուրաքանչյուր երրորդ տնային տնտեսության 15-54 տարեկան տղամարդիկ:

Աղյուսակ 3.1 Հարցվողների հիմնական բնութագրիչներ

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք			Տղամարդիկ		
	Կշռված տոկոս	Կշռված թիվ	Չկշռված թիվ	Կշռված տոկոս	Կշռված թիվ	Չկշռված թիվ
Տարիք						
15-19	17.1	1,123	1,136	20.2	292	295
20-24	17.2	1,131	1,067	16.3	237	239
25-29	14.2	929	910	14.0	202	183
30-34	11.4	749	709	10.8	156	157
35-39	10.8	711	720	10.4	150	138
40-44	14.7	965	1,024	13.8	199	210
45-49	14.6	958	1,000	14.6	211	225
Ամուսնական կարգավիճակ						
Երբևէ չամուսնացած	31.1	2,043	2,006	42.5	615	614
Ամուսնացած	60.8	3,995	4,064	49.6	717	754
Բնակվում են համատեղ	0.7	49	48	6.7	98	61
Ամուսնալուծված/ բնակվում են առանձին	4.9	325	281	0.9	13	15
Այրի	2.4	155	167	0.3	4	3
Բնակավայր						
Քաղաքային	63.9	4,194	4,592	63.1	913	999
Գյուղական	36.1	2,372	1,974	36.9	534	448
Մարզ						
Երևան	37.6	2,468	1,141	37.8	547	262
Արագածոտն	4.5	292	553	4.9	71	142
Արարատ	7.0	462	545	7.6	110	108
Արմավիր	8.6	567	613	9.6	139	146
Գեղարքունիք	6.7	443	593	5.6	81	123
Լոռի	8.2	537	464	6.0	87	56
Կոտայք	8.6	563	562	10.4	151	128
Շիրակ	8.6	563	583	6.8	98	112
Սյունիք	4.3	281	537	4.6	67	139
Վայոց ձոր	1.6	107	407	2.1	31	106
Տավուշ	4.3	285	568	4.4	64	125
Կրթություն						
Հիմնական ընդհանուր ¹	8.1	529	506	14.1	205	193
Միջնակարգ ընդհանուր	37.2	2,440	2,522	40.5	586	601
Միջին մասնագիտական	30.4	1,997	2,141	21.5	310	328
Բարձրագույն	24.4	1,600	1,397	23.9	346	325
Ընդամենը	100.0	6,566	6,566	100.0	1,447	1,447

Նշում՝ Չկշռված թվերն իրենցից ներկայացնում են ավարտուն հարցազրույցների թիվը: Կրթությունը ներառում է հարցվողի կողմից ամենաբարձր կրթական մակարդակում ընդգրկվածությունը, անկախ այն հանգամանքից նա այն ավարտել է, թե՛ ոչ:

¹ Ներառում է կրթություն չունեցող անձանց չնչին համամասնությունը

3.2 ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Աղյուսակներ 3.2.1 և 3.2.2-ը ցույց են տալիս կին և տղամարդ հարցվողների կրթական մակարդակն ըստ ընտրված հիմնական բնութագրիչների: Որոշակի ժամանակաշրջանում կրթությունը Հայաստանում ունեցել է գրեթե համատարած բնույթ: Կանանց համար ուսման տարիների մեդիանը կազմել է 10.8, իսկ տղամարդկանց համար՝ 9.9:

Բնակչության հիմնական բնութագրիչների ենթախմբերի միջև գոյություն ունի չնչին տարբերություն: Երիտասարդ, գյուղական բնակավայրերի և բարեկեցության ամենացածր մակարդակի տնային տնտեսությունների կանայք ունեն ավելի ցածր կրթական մակարդակ, ի տարբերություն այլ ենթախմբերի կանանց: Այնուամենայնիվ, եթե հիմնվենք ուսումնառության մեդիան տարիների վրա, ապա կարելի է ասել, որ այդ ենթախմբերի կանանց կեսն ունեն առնվազն 10 տարվա կրթություն: Կրթական մակարդակը սերտ կապված է բարեկեցության կարգավիճակի հետ: Ամենացածր բարեկեցության ենթախմբի կանայք ունեն ցածր կրթական մակարդակ, մինչդեռ ամենաբարձր բարեկեցության ենթախմբի կանայք ունեն բարձր կրթական մակարդակ: Ի տարբերություն մյուս մարզերի, Երևանի և Սյունիքի կանայք ունեն ավելի բարձր կրթական մակարդակ: Այս մարզերի կանանց ուսումնառության տարիների մեդիանը կազմել է 11.5 և բարձր, մինչդեռ այլ մարզերում ուսումնառության տարիների մեդիանը 10 և ավելի ցածր է:

Աղյուսակ 3.2.1 Հարցվողների կրթական մակարդակը, Կանայք											
15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ ամենաբարձր կրթական մակարդակում ընդգրկվածության, ուսումնառության տարիների մեդիանի, հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող անձանց տոկոսների համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005											
Հիմնական բնութագրիչներ	Ընդգրկվածությունն ամենաբարձր կրթական մակարդակում							Ռեսուրսային տարիների մեդիան	Հիմնական ընդհանուր ¹	Միջնակարգ ընդհանուր ²	Կանանց թվաքանակ
	Կրթություն չունի	Տարրական (1-3)	Միջին (4-8)	Ավագ (9-10)	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Ընդամենը				
Տարիք											
15-19	0.0	0.2	18.7	43.7	16.3	21.1	100.0	9.4	98.6	62.6	1,123
20-24	0.2	0.0	6.8	29.8	30.6	32.6	100.0	11.7	99.5	92.7	1,131
25-29	0.0	0.8	7.6	35.5	27.6	28.5	100.0	11.4	99.0	90.4	929
30-34	0.0	0.2	4.4	36.9	32.0	26.7	100.0	11.4	99.3	94.8	749
35-39	0.3	0.0	4.1	35.8	35.7	24.2	100.0	11.5	98.8	94.6	711
40-44	0.1	0.8	3.6	40.9	35.9	18.7	100.0	11.1	98.8	95.4	965
45-49	0.0	0.5	4.8	37.3	38.9	18.5	100.0	11.3	99.0	94.4	958
Բնակավայր											
Քաղաքային	0.0	0.3	5.8	30.2	31.4	32.3	100.0	11.5	99.3	90.6	4,194
Գյուղական	0.2	0.5	10.8	49.4	28.7	10.3	100.0	9.7	98.5	84.2	2,372
Մարզ											
Երևան	0.0	0.3	5.6	25.6	28.6	39.9	100.0	11.9	99.2	91.1	2,468
Արագածոտն	0.0	0.0	6.9	51.2	31.2	10.7	100.0	9.8	100.0	86.0	292
Արարատ	0.0	0.1	10.2	46.1	32.7	11.0	100.0	9.8	98.4	88.2	462
Արմավիր	0.0	0.9	11.7	44.5	30.4	12.5	100.0	9.8	98.0	84.2	567
Գեղարքունիք	0.4	0.0	11.7	48.8	27.2	11.9	100.0	9.7	99.0	82.2	443
Լոռի	0.2	0.1	4.3	45.7	31.5	18.1	100.0	10.0	99.6	90.7	537
Կոտայք	0.1	0.5	9.0	43.2	31.0	16.2	100.0	9.9	98.7	87.1	563
Շիրակ	0.3	0.0	9.2	42.6	29.6	18.3	100.0	9.9	98.9	86.3	563
Սյունիք	0.2	0.8	5.8	29.2	43.5	20.6	100.0	11.5	98.9	89.3	281
Վայոց ձոր	0.0	0.5	5.4	51.9	29.9	12.3	100.0	9.8	99.2	90.3	107
Տավուշ	0.0	1.2	10.3	39.0	32.5	17.0	100.0	9.9	98.3	84.0	285
Բարեկեցության մակարդակ											
Ամենացածր	0.2	0.8	16.4	54.2	22.3	6.1	100.0	9.6	97.2	77.5	1,164
Ցածր	0.1	0.2	8.3	48.2	33.6	9.6	100.0	9.8	99.5	88.0	1,284
Միջին	0.0	0.1	6.2	36.5	35.9	21.3	100.0	11.0	99.6	90.0	1,303
Բարձր	0.1	0.1	6.0	31.0	33.9	28.8	100.0	11.5	99.3	90.9	1,375
Ամենաբարձր	0.0	0.5	2.8	20.0	25.8	50.9	100.0	12.4	99.1	93.4	1,440
Ընդամենը	0.1	0.3	7.6	37.2	30.4	24.4	100.0	10.8	99.0	88.3	6,566

¹8-րդ դասարան կամ ավելի բարձր մակարդակ ավարտած
²Ավագ դպրոց (10-րդ դասարան) ավարտած, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկված անձինք: Որոշ տվյալներ հնարավոր է ունենան փոքր շեղում, քանի որ աշակերտների մի մասն ընդունվել է միջին մասնագիտական հաստատություն ավարտելով՝ 8-րդ դասարանը:

Ինչպես երևում է աղյուսակ 3.2.2-ից, տղամարդկանց կրթական մակարդակի վերաբերյալ տվյալները գրեթե չեն տարբերվում կանանց կրթական մակարդակի վերաբերյալ տվյալներից: Գյուղաբնակ, ինչպես նաև երիտասարդ տղամարդկանց կրթական մակարդակն ավելի ցածր է ի տարբերություն այլ ենթախմբերի տղամարդկանց: Քաղաքաբնակ տղամարդկանց 30 տոկոսը հաճախել է բարձրագույն կրթական հաստատություն, գյուղաբնակ տղամարդկանց 14 տոկոսի համեմատությամբ: Բարեկեցության մակարդակը ուղիղ համեմատական է կրթությանը: Բարեկեցության ամենացածր ենթախմբում տղամարդկանց միայն 7 տոկոսն է ստացել բարձրագույն կրթություն, նույն ցուցանիշը բարեկեցության ամենաբարձր խմբում կազմում է 53 տոկոս: Հատկանշական տարբերություն է նկատվում նաև ըստ մարզերի: Ի տարբերություն այլ մարզերում բնակվող տղամարդկանց, Երևանի և Սյունիքի մարզերի տղամարդկանց շրջանում կրթական հաստատություններում ուսանելու տարիների ցուցանիշը շատ ավելի բարձր է:

Աղյուսակ 3.2.2 Հարցվողների կրթական մակարդակը, Տղամարդիկ											
15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ ամենաբարձր կրթական մակարդակում ընդգրկվածության, ուսումնառության տարիների մեդիանի, ինչպես նաև հիմնական ընդհանուր և միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող անձանց տոկոսների համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005											
Ընդգրկվածությունն ամենաբարձր կրթական մակարդակում											
Հիմնական բնութագրիչներ	Կրթություն չունի	Տարրական (1-3)	Միջին (4-8)	Ավագ (9-10)	Միջին մասնագիտական	Բարձրագույն	Ընդամենը	Ուսումնառության տարիների մեդիան	Հիմնական ընդհանուր ¹	Միջնակարգ ընդհանուր ²	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք											
15-19	0.8	0.4	23.7	53.3	4.8	17.0	100.0	8.9	98.4	47.7	292
20-24	0.0	0.0	18.0	46.0	11.4	24.5	100.0	9.7	99.3	81.4	237
25-29	0.0	0.0	16.3	42.5	13.9	27.3	100.0	9.8	97.9	82.2	202
30-34	0.0	0.0	7.5	30.1	28.3	34.1	100.0	11.8	99.7	92.2	156
35-39	1.1	0.0	7.4	40.6	33.5	17.3	100.0	10.8	99.1	91.7	150
40-44	0.0	0.0	7.3	30.9	40.7	21.1	100.0	11.8	99.6	92.7	199
45-49	0.8	0.2	7.2	31.0	31.2	29.6	100.0	12.1	98.8	91.7	211
Բնակավայր											
Քաղաքային	0.4	0.2	10.8	36.4	22.3	29.9	100.0	10.3	98.8	83.8	913
Գյուղական	0.3	0.0	18.6	47.4	20.0	13.7	100.0	9.6	99.2	73.5	534
Մարզ											
Երևան	0.4	0.0	10.8	32.6	22.8	33.4	100.0	11.4	99.0	84.6	547
Երևան	0.0	0.0	16.9	34.3	32.7	16.1	100.0	9.9	97.7	78.0	71
Արագածոտն	1.5	0.0	7.3	61.0	18.7	11.5	100.0	9.6	98.7	79.5	110
Արարատ	0.0	0.0	25.7	44.0	18.3	12.1	100.0	9.5	99.1	69.7	139
Արմավիր	0.0	0.0	15.1	40.4	30.3	14.1	100.0	9.8	98.7	81.7	81
Գեղարքունիք	2.0	0.0	13.6	42.1	13.9	28.4	100.0	9.8	98.4	78.1	87
Լոռի	0.0	0.7	16.7	52.3	10.6	19.7	100.0	9.6	98.9	75.8	151
Կոտայք	0.0	0.0	13.0	38.3	23.7	25.0	100.0	9.8	99.9	78.3	98
Շիրակ	0.0	0.6	11.2	32.8	29.3	26.1	100.0	10.5	99.7	80.2	67
Սյունիք	0.0	0.0	5.8	72.9	9.8	11.5	100.0	9.5	99.6	82.1	31
Վայոց ձոր	0.0	0.0	17.5	37.5	27.6	17.4	100.0	9.8	99.8	78.5	64
Տավուշ	0.4	0.0	10.8	32.6	22.8	33.4	100.0	11.4	99.0	84.6	547
Բարեկեցության մակարդակ											
Ամենացածր	0.0	0.0	26.6	46.7	19.3	7.3	100.0	9.4	99.4	68.8	261
Ցածր	0.0	0.0	11.2	51.2	26.8	10.8	100.0	9.7	99.2	81.0	264
Միջին	1.2	0.3	11.1	43.0	26.6	17.8	100.0	9.8	98.4	80.4	326
Բարձր	0.6	0.1	12.5	38.9	18.4	29.6	100.0	10.0	98.2	81.7	316
Ամենաբարձր	0.0	0.0	8.1	23.3	15.9	52.7	100.0	12.5	99.7	87.1	280
Ընդամենը	0.4	0.1	13.6	40.5	21.5	23.9	100.0	9.9	98.9	80.0	1,447

¹8-րդ դասարան կամ ավելի բարձր մակարդակ ավարտած

²Ավագ դպրոց (10-րդ դասարան) ավարտած, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդգրկված անձինք: Որոշ տվյալներ հնարավոր է ունենան փոքր շեղում, քանի որ աշակերտների մի մասն ընդունվել է միջին մասնագիտական հաստատություն ավարտելով՝ 8-րդ դասարանը:

3.3 ԶԱՆԳԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ /ԶԼՄ/ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

ՀԺԱՀ-2005-ի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն, թե հեռահաղորդակցությունն ու տպագիր լրատվամիջոցներն որքանով են մատչելի կանանց և տղամարդկանց: Այս տեղեկատվությունը կարևոր է, քանի որ այն կարող է օժանդակել ծրագրերի ղեկավարներին՝ նախագծելու առողջության, ընտանիքի պլանավորման, սնուցման և այլ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Տվյալները ներկայացված են աղյուսակներ 3.3.1 և 3.3.2-ում:

Հայաստանի կանանց 97 տոկոսն առնվազն շաբաթը մեկ անգամ դիտել է հեռուստացույց, 53 տոկոսը՝ կարդացել է ամսագրեր և 33 տոկոսը՝ լսել է ռադիո (Աղյուսակ 3.3.1): Զանգվածային լրատվամիջոցները մշտապես մատչելի չեն եղել կանանց միայն 2 տոկոսին, իսկ 23 տոկոսն օգտվել են բոլոր 3 տեսակի տեղեկատվության աղբյուրներից:

Ավելի երիտասարդ կանայք առավել հաճախ են ընթերցում թերթեր կամ ամսագրեր և ունեն հնարավորություն օգտվելու բոլոր 3 տեսակի ԶԼՄ-ից: ԶԼՄ-ի հասանելիությունը ուղիղ համեմատական կապի մեջ է կրթության և բարեկեցության մակարդակի հետ: Օրինակ, ամենաբարձր բարեկեցության մակարդակում գտնվող կանանց 44 տոկոսը հնարավորություն ունի օգտվել բոլոր 3 տեսակի ԶԼՄ-ից, ի տարբերություն ամենացածր բարեկեցության մակարդակում գտնվող կանանց միայն 5 տոկոսի: Քաղաքաբնակ կանայք գրեթե երկու անգամ ավելի մեծ հնարավորություն ունեն օգտվել ԶԼՄ-ից, քան գյուղաբնակ կանայք: Այսպիսով, ԶԼՄ-ի բոլոր տեսակներից օգտվելն ավելի մատչելի է եղել Երևանի, Սյունիքի և Վայոց ձորի կանանց համար:

Հետաքրքրական է, որ տղամարդկանց շրջանում ըստ տարիքային խմբերի ԶԼՄ-ից օգտվելու պատկերն այլ է: Ընդհանուր առմամբ, երիտասարդ տղամարդիկ ավելի քիչ են հակված բոլոր 3 տեսակի ԶԼՄ-ից օգտվելուն, քան տարիքով ավելի մեծ տղամարդիկ: Պատճառն այն է, որ երիտասարդ տղամարդիկ ավելի քիչ են թերթ կարդում շաբաթական կտրվածքով: Բոլոր 3 տեսակի ԶԼՄ-ից օգտվելու հաճախականությունն ըստ մարզերի տատանվում է Երևանում՝ 37 տոկոսից, մինչև 5 տոկոս կամ ավելի քիչ՝ Արարատում, Գեղարքունիքում, Շիրակում և Վայոց ձորում:

Ակնհայտ փոփոխություն է նկատվել շաբաթական առնվազն մեկ անգամ թերթ կարդացող կանանց շրջանում, որի ցուցանիշը 2000թ-ի 29 տոկոսի համեմատությամբ աճել է 2005թ-ին՝ կազմելով 53 տոկոս: Կանանց շրջանում շաբաթական առնվազն մեկ անգամ հեռուստացույց դիտելու ցուցանիշը նույնպես աճել է 2000թ-ին արձանագրված 88 տոկոսից մինչև 2005-ի՝ 97 տոկոսը: Այս միտումը մասամբ բացատրվում է երկու հետազոտությունների ընթացքում օգտագործված հարցաթերթերում հարցադրման չնչին փոփոխությամբ:

Աղյուսակ 3.3.1 Ձանգվածային լրատվական միջոցների հասանելիություն, Կանայք

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր շաբաթական կտրվածքով օգտվել են նշված զանգվածային լրատվական միջոցներից ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Հասանելի ՁԼՍ-ի տեսակ			Օգտվել է ՁԼՍ-ի բոլոր երեք տեսակից առնվազն շաբաթը մեկ անգամ	Չի օգտվել ոչ մի ՁԼՍ-ից առնվազն շաբաթը մեկ անգամ	Կանանց թվաքանակ
	Կարդացել է թերթ/ամսագիր առնվազն շաբաթը մեկ անգամ	Դիտել է հեռուստացույց առնվազն շաբաթը մեկ անգամ	Լսել է ռադիո առնվազն շաբաթը մեկ անգամ			
Տարիք						
15-19	64.0	97.7	35.8	26.5	1.0	1,123
20-24	56.4	97.6	41.6	29.3	1.8	1,131
25-29	48.8	97.5	31.1	20.5	1.9	929
30-34	51.1	97.5	33.2	22.0	1.9	749
35-39	50.9	96.9	30.0	22.0	2.3	711
40-44	47.0	95.6	27.9	17.1	3.5	965
45-49	46.4	95.7	28.0	18.5	2.9	958
Բնակավայր						
Քաղաքային	58.0	98.0	39.9	27.9	1.2	4,194
Գյուղական	43.0	95.1	20.5	13.1	3.9	2,372
Մարզ						
Երևան	60.6	98.2	48.9	34.0	0.9	2,468
Արագածոտն	46.0	94.0	27.5	14.9	4.2	292
Արարատ	43.9	98.9	26.2	18.9	1.0	462
Արմավիր	46.4	94.5	20.6	13.4	5.0	567
Գեղարքունիք	47.8	96.8	5.2	3.6	2.5	443
Լոռի	50.2	94.5	27.4	17.1	3.6	537
Կոտայք	49.7	95.5	36.3	22.9	3.6	563
Շիրակ	41.4	98.5	13.8	9.2	0.9	563
Սյունիք	66.5	97.6	42.8	36.3	1.7	281
Վայոց ձոր	57.0	97.7	44.4	36.1	1.4	107
Տավուշ	40.5	94.7	5.7	3.1	4.7	285
Կրթություն						
Հիմնական	30.1	89.3	23.5	10.8	8.6	529
ընդհանուր						
Միջնակարգ	40.7	96.7	25.8	14.6	2.5	2,440
ընդհանուր						
Միջին	54.1	97.8	31.5	21.4	1.4	1,997
մասնագիտական						
Բարձրագույն	76.3	98.8	48.6	40.2	0.5	1,600
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	30.5	90.9	11.1	5.4	7.2	1,164
Ցածր	46.4	96.1	23.3	14.3	2.7	1,284
Միջին	54.8	98.7	26.2	17.7	0.4	1,303
Բարձր	58.6	98.7	40.9	27.4	1.0	1,375
Ամենաբարձր	68.2	99.4	57.5	43.7	0.4	1,440
Ընդամենը	52.6	97.0	32.9	22.6	2.2	6,566

Աղյուսակ 3.3.2 Զանգվածային լրատվական միջոցների հասանելիություն, Տղամարդիկ

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր շաբաթական կտրվածքով օգտվել են նշված զանգվածային լրատվական միջոցներից ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005


Հիմնական բնութագրիչներ	Հասանելի ՁԼՄ-ի տեսակ			Օգտվել է ՁԼՄ-ի			Տղամարդկանց թվաքանակ
	Կարդացել է թերթ/ամսագիր առնվազն շաբաթը մեկ անգամ	Դիտել է հեռուստացույց առնվազն շաբաթը մեկ անգամ	Լսել է ռադիո առնվազն շաբաթը մեկ անգամ	բոլոր երեք տեսակից առնվազն շաբաթը մեկ անգամ	Չի օգտվել ոչ մի ՁԼՄ-ից առնվազն շաբաթը մեկ անգամ		
Տարիք							
15-19	26.0	99.0	35.1	17.3	1.0	292	
20-24	30.6	100.0	51.9	21.1	0.0	237	
25-29	31.1	99.3	57.6	22.1	0.0	202	
30-34	43.1	99.3	52.9	26.5	0.0	156	
35-39	36.0	98.3	53.7	24.2	1.7	150	
40-44	40.9	97.8	44.3	24.6	1.8	199	
45-49	39.8	98.7	39.1	21.2	0.5	211	
Բնակավայր							
Քաղաքային	39.9	98.9	55.8	28.0	0.7	913	
Գյուղական	25.0	99.1	31.2	11.4	0.7	534	
Մարզ							
Երևան	45.6	99.0	72.7	37.3	0.6	547	
Արագածոտն	40.0	100.0	48.7	26.2	0.0	71	
Արարատ	15.0	100.0	23.7	3.4	0.0	110	
Արմավիր	33.0	100.0	62.0	24.4	0.0	139	
Գեղարքունիք	36.9	99.5	8.9	4.0	0.0	81	
Լոռի	31.4	95.3	30.1	8.1	1.9	87	
Կոտայք	28.8	98.5	43.7	18.1	1.5	151	
Շիրակ	4.0	98.0	3.4	1.8	2.0	98	
Սյունիք	25.8	99.3	16.7	7.3	0.0	67	
Վայոց ձոր	8.4	98.2	9.3	5.4	1.8	31	
Տավուշ	52.1	100.0	21.8	15.8	0.0	64	
Կրթություն							
Հիմնական ընդհանուր Միջնակարգ ընդհանուր Միջին մասնագիտական Բարձրագույն	11.2	98.9	33.5	6.4	0.5	205	
	24.8	99.2	41.6	14.7	0.7	586	
	29.0	98.8	46.8	14.8	0.9	310	
	69.2	98.8	63.0	49.5	0.7	346	
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	21.9	98.1	27.1	9.0	1.4	261	
Ցածր	21.1	98.3	29.9	7.6	1.7	264	
Միջին	33.9	100.0	39.4	17.7	0.0	326	
Բարձր	39.4	99.5	59.8	26.7	0.0	316	
Ամենաբարձր	53.7	98.7	74.6	46.6	0.6	280	
Ընդամենը	34.4	99.0	46.7	21.9	0.7	1,447	

3.4 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԺԱԴ-2005-ի ընթացքում հարցվողները պատասխանել են հարցման պահին և հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում տնտեսական ակտիվության կարգավիճակը բնորոշող մի շարք հարցերի: Կանանց զբաղվածության գնահատումը բարդ է, քանզի կան գործունեության տեսակներ, որոնք իրականացվում են չհաշվառվող (ոչ ֆորմալ) տնտեսության շրջանակում, մասնավորապես գյուղացիական տնտեսություններում, ընտանեկան բիզնեսում կամ ոչ ֆորմալ այլ ոլորտներում, որպես զբաղվածություն շատ հաճախ չեն գնահատվում հենց կանանց կողմից, հետևաբար նաև չեն գրանցվում: Կանանց զբաղվածության թերգրանցումից խուսափելու համար, ՀԺԱԴ-2005-ի ընթացքում տրվել են մի քանի հարցեր, որոնցով գնահատվել է կնոջ տնտեսական ակտիվության կարգավիճակը: Կանանց նախ տրվել է հարց. «Բացի Ձեր տնային աշխատանքներից կատարե՞լ եք որևէ այլ աշխատանք վերջին 7 օրվա ընթացքում»: Այս հարցին «Ոչ» պատասխանողները հարցվել են. «Ինչպես գիտեք, որոշ կանայք կատարած աշխատանքի դիմաց վճարվում են կանխիկ կամ բնեղեն: Ոմանք ապրանքներ են վաճառում, զբաղվում են փոքր գործարարությամբ կամ աշխատում են ընտանեկան ագարակում կամ ընտանեկան բիզնեսում: Վերջին յոթ օրում կատարե՞լ եք վերոնշյալ աշխատանքներից որևէ մեկը կամ որևէ այլ աշխատանք»: Այն կանանց, ովքեր այս հարցին տվել են բացասական պատասխան, տրվել է հարց. «Դուք կատարե՞լ եք որևէ աշխատանք վերջին 12 ամիսների ընթացքում»: Կանայք տվյալ պահին համարվել են զբաղված, եթե պատասխանել են «Այո» առաջին երկու հարցերից որևէ մեկին: Երրորդ հարցին «Այո» պատասխանած կանայք տվյալ պահին զբաղված չեն եղել, բայց կատարել են որևէ աշխատանք նախորդ 12 ամիսների ընթացքում: Բոլոր զբաղված կանանց տրվել են հարցեր նրանց զբաղմունքի, վարձատրության տեսակի (կանխիկ, բնամթերքով, առանց վարձատրության), գործատուի վերաբերյալ:

Գծապատկեր 3.1

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին տնտեսական ակտիվության կարգավիճակի



ՀԺԱԴ-2005

Աղյուսակ 3.4 Տնտեսական ակտիվության կարգավիճակ

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ տնտեսական ակտիվության համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005


Հիմնական բնութագրիչներ	Կանայք				Տղամարդիկ						
	Չբաղված են եղել նախորդող 12 ամիսների ընթացքում		Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված չեն եղել	Ընդամենը	Չբաղված են եղել նախորդող 12 ամիսների ընթացքում		Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված չեն եղել	Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված չեն եղել	Ընդամենը	Տղամարդկանց թվաքանակ	
	Հարցման պահին զբաղված	Հարցման պահին չզբաղված			Կանանց թվաքանակ	Հարցման պահին զբաղված					Հարցման պահին չզբաղված
Տարիք											
15-19	3.3	0.3	96.4	100.0	1,123	4.9	13.4	81.6	100.0	292	
20-24	17.7	2.4	79.8	100.0	1,131	36.6	15.9	47.5	100.0	237	
25-29	25.4	3.3	71.3	100.0	929	68.1	12.8	19.1	100.0	202	
30-34	32.1	2.7	65.2	100.0	749	70.0	20.0	10.0	100.0	156	
35-39	39.0	1.8	59.2	100.0	711	71.8	15.2	12.0	100.0	150	
40-44	39.0	2.5	58.6	100.0	965	64.6	21.1	14.1	100.0	199	
45-49	42.4	3.0	54.6	100.0	958	68.9	14.0	17.1	100.0	211	
Ամուսնական կարգավիճակ											
Երբևէ չամուսնացած	19.3	1.5	79.2	100.0	2,043	26.1	14.6	59.3	100.0	615	
Ամուսնացած/բնակվում են համատեղ	28.1	2.3	69.6	100.0	4,044	68.8	16.2	14.7	100.0	815	
Ամուսնալուծված/բնակվում են առանձին/այրի	50.5	5.3	44.2	100.0	479	*	*	*	*	17	
Կենդանի երեխաների թվաքանակ											
0	20.2	1.8	78.0	100.0	2,352	30.0	14.8	55.3	100.0	688	
1-2	29.4	2.3	68.3	100.0	2,812	73.2	15.0	11.8	100.0	519	
3+	33.7	2.8	63.6	100.0	1,402	59.6	20.4	19.0	100.0	240	
Բնակավայր											
Քաղաքային	27.9	2.1	70.0	100.0	4,194	53.2	12.4	34.1	100.0	913	
Գյուղական	25.4	2.5	72.0	100.0	2,372	45.5	21.5	32.9	100.0	534	
Մարզ											
Երևան	29.4	2.4	68.2	100.0	2,468	57.2	9.7	32.8	100.0	547	
Արագածոտն	15.8	4.4	79.8	100.0	292	42.2	21.0	36.8	100.0	71	
Արարատ	37.8	0.1	62.1	100.0	462	41.8	9.5	48.7	100.0	110	
Արմավիր	30.5	4.7	64.7	100.0	567	64.0	9.5	26.5	100.0	139	
Գեղարքունիք	19.9	0.8	79.4	100.0	443	53.0	22.1	24.9	100.0	81	
Լոռի	17.9	1.5	80.5	100.0	537	28.0	54.2	17.9	100.0	87	
Կոտայք	22.4	2.8	74.8	100.0	563	51.1	21.4	27.4	100.0	151	
Շիրակ	13.0	1.0	86.0	100.0	563	42.0	3.4	54.6	100.0	98	
Սյունիք	47.3	2.1	50.6	100.0	281	46.9	28.1	25.0	100.0	67	
Վայոց ձոր	20.7	0.3	78.5	100.0	107	26.0	4.2	67.9	100.0	31	
Տավուշ	41.4	2.8	55.8	100.0	285	40.4	24.2	35.5	100.0	64	
Կրթություն											
Հիմնական ընդհանուր	16.8	1.6	81.6	100.0	529	36.8	21.8	41.3	100.0	205	
Միջնակարգ ընդհանուր	19.5	1.5	78.9	100.0	2,440	43.1	15.5	41.4	100.0	586	
Միջին մասնագիտական	30.8	3.0	66.1	100.0	1,997	60.6	21.1	18.3	100.0	310	
Բարձրագույն	37.0	2.5	60.5	100.0	1,600	61.7	7.9	30.0	100.0	346	
Բարեկեցության մակարդակ											
Ամենացածր	23.7	2.8	73.5	100.0	1,164	42.2	24.3	33.3	100.0	261	
Ցածր	23.5	1.7	74.7	100.0	1,284	44.2	18.1	37.7	100.0	264	
Միջին	27.3	3.2	69.5	100.0	1,303	49.1	16.1	34.8	100.0	326	
Բարձր	28.6	1.4	70.1	100.0	1,375	47.2	14.0	38.3	100.0	316	
Ամենաբարձր	31.1	2.2	66.7	100.0	1,440	69.0	7.3	23.8	100.0	280	
Ընդամենը	27.0	2.2	70.7	100.0	6,566	50.4	15.8	33.7	100.0	1,447	

Նշում՝ Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:
 * «Հարցման պահին զբաղված» նշանակում է, որ հարցվողն աշխատել է նախորդ 7 օրերի ընթացքում: Այս խմբում ներառվել են նաև անձինք, ովքեր չեն աշխատել նախորդ 7 օրերի ընթացքում, սակայն ունեն աշխատանք և բացակայել են հիվանդության, արձակուրդի կամ որևէ այլ պատճառով:

Աղյուսակ 3.4-ը ցույց է տալիս տղամարդ և կին հարցվողների տոկոսային բաշխումն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի՝ համաձայն հիմնական բնութագրիչների: Կանանց 27 տոկոսը նշել է, որ զբաղված է եղել հարցման պահին, 2 տոկոսը նշել է, որ զբաղված է եղել հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, բայց չի աշխատում հարցման պահին և 71 տոկոսը զբաղված չի եղել հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում (Գծապատկեր 3.1): Հարցման պահին գրեթե երկու անգամ ավելի շատ տղամարդիկ են զբաղված եղել, քան կանայք (համապատասխանաբար՝ 50 և 27 տոկոս): Միաժամանակ, տղամարդկանց շուրջ մեկ երրորդը նշել է, որ զբաղված չի եղել հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում:

Ջբաղվածությունն աճում է կանանց և տղամարդկանց տարիքի, կրթության և բարեկեցության մակարդակին զուգահեռ: Գծապատկեր 3.2-ը ցույց է տալիս զբաղվածության կարգավիճակի տարբերություններն ըստ բնակավայրի և կրթական մակարդակի: Ի տարբերություն հարցման պահին այլ ամուսնական կարգավիճակ ունեցող կանանց, նախկինում ամուսնացած կանայք ավելի շատ են զբաղված եղել: Տղամարդկանց շրջանում ավելի շատ զբաղված են եղել հարցման պահին ամուսնացած տղամարդիկ:

Քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց զբաղվածության միջև տարբերությունը նշանակալի չէ, սակայն ի տարբերություն գյուղաբնակ տղամարդկանց, քաղաքաբնակ տղամարդկանց շրջանում զբաղվածությունն ավելի մեծ է: Կանանց զբաղվածությունը բարձր է Սյունիքում և Տավուշում (համապատասխանաբար՝ 47 և 41 տոկոս), մինչդեռ Շիրակի մարզում այս ցուցանիշը կազմել է ընդամենը 13 տոկոս: Տղամարդկանց շրջանում ցուցանիշը տատանվում է 26 տոկոսից՝ Վայոց ձորում, մինչև 64 տոկոս՝ Արմավիրում:



3.5 ԶԲԱՂՄՈՒՆՔ

Այն հարցվողներին, ովքեր հետազոտության ընթացքում նշել են, որ հարցման պահին զբաղված են եղել, տրվել են հարցեր իրենց կատարած աշխատանքի բնույթի վերաբերյալ: Հարցվողների պատասխանները գրանցվել են բառացի և հիմք են հանդիսացել զբաղմունքի կողավորման համար, որը կատարվել է ՀՀ ԱՎԾ կենտրոնական գրասենյակում: Աղյուսակ 3.5.1-ը ցույց է տալիս հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, համաձայն հիմնական բնութագրիչների, զբաղված կանանց տոկոսային բաշխումն ըստ զբաղմունքի: Կնոջ զբաղմունքի վերաբերյալ տեղեկատվությունը թույլ է տալիս որոշել նրա եկամտի աղբյուրը, ինչպես նաև բացահայտել կնոջ լիազորությունների շրջանակը:

Զբաղված կանանց գրեթե կեսը (45 տոկոս) աշխատել է մասնագիտական, տեխնիկական կամ վարչակառավարչական պաշտոններում, իսկ 20 տոկոսը զբաղված է եղել առևտրի և ծառայությունների ոլորտում: Տաս կանանցից երկուսն աշխատել են գյուղատնտեսության ոլորտում: Միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունեցող, բարեկեցության ամենաբարձր խմբում գտնվող և քաղաքացիական կանայք ավելի հակված են եղել ունենալու մասնագիտական, տեխնիկական կամ վարչակառավարչական աշխատանքներ: Կնոջ երեխաների թվաքանակի և նրա զբաղմունքի միջև գոյություն ունի կախվածություն: Բազմազավակ կանայք ավելի շատ զբաղված են եղել գյուղատնտեսության ոլորտում: Այն մարզերում, որտեղ զբաղվածությունը գյուղատնտեսության ոլորտում ցածր է, ինչպիսիք են Երևանը, Գեղարքունիքը, Լոռին և Շիրակը, կանանց գերակշիռ մասը զբաղեցրել է մասնագիտական պաշտոններ: Մյուս կողմից, Արարատի մարզում 3 կանանցից 2-ը զբաղված են եղել գյուղատնտեսության ոլորտում:

Աղյուսակ 3.5.2-ը ցույց է տալիս, որ զբաղված տղամարդկանց 25 տոկոսը կատարել է մասնագիտական, տեխնիկական կամ վարչակառավարչական բնույթի աշխատանքներ, 27 տոկոսը զբաղված է եղել առևտրով և ծառայությունների սպասարկմամբ, 19 տոկոսն աշխատել է որպես որակավորված բանվոր, և 18 տոկոսը զբաղված է եղել գյուղատնտեսական աշխատանքներով: Ըստ ենթախմբերի ցուցանիշները տատանվում են, ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շրջանում: Միաժամանակ հարկ է նշել, որ երեխաների թվաքանակն ավելի քիչ ազդեցություն ունի տղամարդկանց, քան կանանց զբաղմունքի վրա:

Աղյուսակ 3.5.1 Զբաղմունք, Կանայք

Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղված կանանց տոկոսային բաշխումն ըստ զբաղմունքի տեսակի, համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Մասնագիտական/ տեխնիկական/ վարչակառավարչական	Օառայող	Առևտուր և սպասարկում	Որակավորված բանվոր	Բանվոր	Գյուղատնտեսություն	Տվյալ չկա	Ընդամենը	Կանանց թվաքանակ
Տարիք									
15-19	(38.3)	(3.8)	(34.1)	(0.4)	(7.1)	(16.3)	(0.0)	(100.0)	40
20-24	53.1	8.8	23.7	2.8	0.2	9.7	1.8	100.0	228
25-29	53.2	9.3	17.4	2.1	0.8	16.2	0.9	100.0	267
30-34	48.5	2.8	20.4	4.6	2.8	20.9	0.0	100.0	261
35-39	47.3	3.1	16.8	3.3	3.0	25.8	0.6	100.0	290
40-44	38.9	3.8	18.9	7.1	8.3	22.8	0.1	100.0	400
45-49	39.5	3.5	22.0	5.2	7.6	21.8	0.4	100.0	434
Ամուսնական կարգավիճակ									
Երբևէ չամուսնացած	51.4	14.5	22.4	3.7	1.2	6.3	0.5	100.0	425
Ամուսնացած/Բնակվում են համատեղ	46.1	2.0	15.6	4.6	4.3	27.0	0.4	100.0	1,229
Հիմնական բնութագրիչներ	Աբորտ ունեցած կանանց տոկոսը	Կանանց թվաքանակ	Կանանց տոկոսային բաշխումն ըստ աբորտների թվի				Ընդամենը	Աբորտների միջին թիվը	Աբորտ ունեցած կանանց թվաքանակ
			1	2-3	4-5	6+			
Տարիք									
15-19	0.2	1,123	*	*	*	*	*	*	2
20-24	8.1	1,131	74.0	23.3	2.7	0.0	100.0	1.4	92
25-34	44.4	1,679	43.1	42.0	9.4	5.6	100.0	2.3	745
35+	60.1	2,633	29.9	48.1	12.9	9.0	100.0	2.8	1,582
Կենդանի երեխաների թվաքանակ									
0	0.6	2,352	*	*	*	*	*	*	13
1	21.6	743	51.7	36.8	7.6	3.8	100.0	2.0	160
2-3	64.4	3,194	34.6	46.6	11.3	7.6	100.0	2.6	2,056
4+	69.0	278	30.4	40.3	17.1	12.2	100.0	3.2	192
Ամուսնական կարգավիճակ									
Երբևէ չամուսնացած	0.5	2,043	*	*	*	*	*	*	10
Ամուսնացած	54.5	4,044	35.1	45.4	11.8	7.7	100.0	2.6	2,203
Նախկինում ամուսնացած	43.3	479	42.3	44.5	7.5	5.7	100.0	2.2	208
Բնակավայր									
Քաղաքային	35.0	4,194	36.6	44.7	11.0	7.6	100.0	2.6	1,467
Գյուղական	40.2	2,372	34.3	46.1	12.0	7.6	100.0	2.6	955
Մարզ									
Երևան	34.4	2,468	38.7	43.1	10.4	7.8	100.0	2.6	849
Արագածոտն	38.0	292	33.7	42.7	13.2	10.4	100.0	2.6	111
Արարատ	38.2	462	38.9	50.9	8.0	2.2	100.0	2.1	177
Արմավիր	35.1	567	39.5	52.4	7.3	0.7	100.0	1.9	199
Գեղարքունիք	45.7	443	24.2	36.1	17.7	22.0	100.0	3.9	202
Լոռի	39.0	537	39.7	54.9	4.8	0.6	100.0	1.9	209
Կոտայք	41.7	563	22.2	44.9	19.0	13.9	100.0	3.6	235
Շիրակ	35.4	563	35.7	45.4	12.6	6.2	100.0	2.7	199
Սյունիք	28.9	281	64.2	33.9	1.3	0.7	100.0	1.5	81
Վայոց ձոր	34.4	107	29.5	50.2	14.4	5.9	100.0	2.6	37
Տավուշ	42.9	285	26.8	48.2	18.6	6.4	100.0	2.7	122
Կրթություն									
Հիմնական ընդհանուր	27.2	529	39.7	42.8	13.7	3.8	100.0	2.4	144
Միջնակարգ ընդհանուր	40.8	2,440	32.5	44.4	12.6	10.5	100.0	2.9	995
Միջին մասնագիտական	42.6	1,997	37.8	45.1	11.2	5.8	100.0	2.4	850
Բարձրագույն	27.0	1,600	37.4	48.2	8.5	5.9	100.0	2.4	432
Բարեկեցության մակարդակ									
Ամենացածր	39.3	1,164	35.8	44.9	11.1	8.2	100.0	2.6	457
Ցածր	37.8	1,284	34.7	45.5	12.0	7.8	100.0	2.7	485
Միջին	39.3	1,303	38.0	44.6	10.8	6.6	100.0	2.4	513
Բարձր	36.6	1,375	34.4	46.6	11.9	7.1	100.0	2.6	504
Ամենաբարձր	32.0	1,440	35.4	44.7	11.2	8.7	100.0	2.7	461
Ընդամենը	36.9	6,566	35.7	45.3	11.4	7.6	100.0	2.6	2,421

Նշում՝ Ամուսնացածների խմբում ներառված են նաև հարցվողներ, ովքեր բնակվում են իրենց զուգընկերոջ հետ: Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

6.3 ԱՐՐՈՏՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Աղյուսակ 6.3-ում ներկայացված են աբորտների գործակիցները՝ ՀԺԱՀ-ին նախորդող 3 տարիների կտրվածքով (մոտավորապես 2002թ հոկտեմբերից մինչև 2005թ հոկտեմբեր): Ներկայացված են 3 տիպի գործակիցներ՝ աբորտների տարիքային գործակից (ԱՏԳ), աբորտների գումարային գործակից (ԱԳԳ) և աբորտների հատուկ գործակից (ԱՀԳ): Աբորտների տարիքային գործակիցը (ԱՏԳ), որը ներկայացված է 1000 կնոջ հաշվով, արտահայտում է տվյալ տարիքային խմբի կանանց կատարած աբորտների թվի հարաբերությունը նույն տարիքային խմբին պատկանող կանանց ընդհանուր թվաքանակին: Աբորտների գումարային գործակից (ԱԳԳ), որը ներկայացված է 1 կնոջ հաշվով, իրենից ներկայացնում է ԱՏԳ-ների գումարը: Աբորտների գումարային գործակիցը (ԱԳԳ) իրենից ներկայացնում է աբորտների թիվ, որը կինը կարող է ունենալ իր ողջ կյանքի ընթացքում, եթե իր վերարտադրողական կյանքի ընթացքում ունենար հետազոտության արդյունքում ստացված աբորտների տարիքային գործակիցը:

Աղյուսակ 6.3 Աբորտների գործակիցներ


Աբորտների տարիքային գործակիցը (1000 կնոջ հաշվով), աբորտների գումարային գործակիցը (ԱԳԳ), և աբորտների հատուկ գործակիցը հարցմանը նախորդող 3 տարվա կտրվածքով, Հայաստան 2005

Տարիքային խումբ	Բնակավայր		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
15-19	5	2	4
20-24	53	73	60
25-29	112	144	123
30-34	75	122	92
35-39	39	73	53
40-44	15	16	16
45-49	9	2	7
Գործակից¹			
ԱԳԳ 15-49	1.5	2.2	1.8
ԱԳԳ 15-44	1.5	2.2	1.7
ԱՀԳ	48	64	54

¹Աբորտների գումարային գործակիցը (ԱԳԳ) արտահայտված է մեկ կնոջ հաշվով: Աբորտների հատուկ գործակիցը (ԱՀԳ, աբորտները բաժանած 15-44 տարեկան կանանց թվաքանակի վրա) արտահայտված է 1000 կնոջ հաշվով:

Ազգային մակարդակում աբորտների տարիքային գործակիցը երիտասարդ կանանց մի քանի տարիքային խմբերում աճել է: Ամենաբարձր արժեքը գրանցվել է 25-29 տարեկան կանանց շրջանում (123՝ 1000 կնոջ հաշվով), այնուհետև նվազել՝ ավելի բարձր տարիքային խմբերում: Աբորտների տարիքային գործակիցը (ԱՏԳ) փոքր է մինչև 25 տարեկան կանանց պտղաբերության գործակիցից: Բարձր տարիքային խմբի կանանց շրջանում այդ ցուցանիշը մեծ է պտղաբերության գործակիցի (Գծապատկեր 6.2):

Աբորտների գումարային գործակիցը կազմել է 1.8: Գյուղական բնակավայրերում այն ավելի քան 50 տոկոսով բարձր է եղել, քան քաղաքային բնակավայրերում (համապատասխանաբար՝ 2.2 և 1.5): Ամենաբարձր և ամենացածր տարիքային խմբերին կանանց շրջանում ԱՏԳ-ն ավելի բարձր է եղել քաղաքաբնակ, քան գյուղաբնակ կանանց մոտ:



Աղյուսակ 6.4-ը ցույց է տալիս արբորտների գործակիցներն ըստ հիմնական բնութագրիչների: Գոյություն ունի հատկանշական տարբերություն ըստ հիմնական բնութագրիչների: ԱԳԳ-ն տատանվել է ըստ մարզերի՝ ամենացածրից Արարատում և Սյունիքում՝ 1.1, մինչև ամենաբարձրը Գեղարքունիքում՝ 2.9: Երևանում ԱԳԳ-ն կազմել է 1.6: Բարձր կրթական մակարդակ ունեցող կանանց ԱԳԳ-ն եղել է ամենացածրը:

6.4 ԱՐՈՐՏՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐ

ՀԺԱՀ 2005-ի արդյունքում ստացված ԱԳԳ-ի 1.8 ցուցանիշը նշանակալիորեն ցածր է ՀԺԱՀ 2000-ի արդյունքում ստացված 2.6 ցուցանիշից: Ցուցանիշի անկումը ակնհայտ է բոլոր տարիքային խմբերում, բացառությամբ 45-49 տարիքային խմբի (Գծապատկեր 6.3): Նման տարբերության պատճառը պարզ չէ, մասնավորապես, եթե ԱԳԳ-ի այս տարբերությունը դիտարկենք հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման ցուցանիշի նվազմանը զուգահեռ: Ի տարբերություն ՀԺԱՀ 2000-ի, ՀԺԱՀ 2005-ի ընթացքում անուսնացած կանանց ավելի մեծ տոկոսն է նշել, որ իրենց ամուսինները բնակվում են որևէ այլ տեղ (համապատասխանաբար՝ 11 և 14 տոկոս):

Զնայած ԱԳԳ-ի ցածր մակարդակի պատճառ կարող էր հանդիսանալ նաև սեռական ակտիվության նվազումը, այնուամենայնիվ, 2 հետազոտությունների ժամանակ, նախորդ ամսվա ընթացքում սեռապես ակտիվ են եղել գրեթե նույն համամասնությամբ կանայք (Աղյուսակ 7.6.1): Հետևաբար, ըստ ստացված արդյունքների սեռական ակտիվության նվազում տեղի չի ունեցել:


Դեռ ավելին, եթե անգամ նկատվել է արբորտների նվազում, միևնույն է չի կարելի ենթադրել, որ ողջ, կյանքի ընթացքում կատարված արբորտների ցուցանիշը նույնպես կրճատվել է: Օրինակ, ՀԺԱՀ 2000-ի արդյունքում ստացված տվյալների համաձայն կանանց գրեթե կեսը (47 տոկոս) ունեցել են արբորտ, այնինչ ՀԺԱՀ 2005-ի արդյունքում այս ցուցանիշը կազմել է 37 տոկոս: ՀԺԱՀ 2000-ի արդյունքում ստացված տվյալների համաձայն 40-49 տարեկան կանայք միջինում ունեցել են 2.8 արբորտ: Այս ցուցանիշը ՀԺԱՀ 2005-ի համաձայն կազմել է 1.7:

Աղյուսակ 6.4 Արբորտների գործակիցներն ըստ հիմնական բնութագրիչների

Արբորտների գումարային գործակիցը հարցմանը նախորդող 3 տարվա կտրվածքով և արբորտների միջին թիվը 40-49 տարեկան կանանց շրջանում ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Արբորտների գումարային գործակիցը 15-49 տարեկան կանանց շրջանում	40-49 տարեկան կանանց արբորտների միջին թիվը
Բնակավայր		
Քաղաքային	1.5	1.7
Գյուղական	2.2	1.8
Մարզ		
Երևան	1.6	1.6
Արագածոտն	2.6	1.9
Արարատ	1.1	1.3
Արմավիր	2.1	1.0
Գեղարքունիք	2.9	3.1
Լոռի	(1.4)	1.2
Կոտայք	2.1	3.1
Շիրակ	1.8	1.8
Սյունիք	1.1	0.6
Վայոց ձոր	(1.4)	1.7
Տավուշ	1.9	2.1
Կրթություն		
Հիմնական ընդհանուր	1.7	1.5
Միջնակարգ ընդհանուր	2.1	2.0
Միջին մասնագիտական	1.7	1.6
Բարձրագույն	1.4	1.4
Բարեկեցության մակարդակ		
Ամենացածր	2.4	1.6
Ցածր	2.0	1.8
Միջին	1.4	1.7
Բարձր	1.5	1.7
Ամենաբարձր	1.6	1.8
Ընդամենը	1.8	1.7

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 250-499 չկշռված կանանց վրա:



Տվյալների մանրամասն վերլուծությունը չի հանդիսանում հետազոտության հիմնական նպատակը: Այնուամենայնիվ, այս հակասությունը բացատրելու նպատակով հնարավոր է նշել մի քանի պատճառ: Առաջին հերթին պետք է հաշվի առնել ՀԺԱԴ 2005-ի ընթացքում հնարավոր չգրանցված աբորտները: “Ցիտոտեկ” դեղը, ինչն իրենից ներկայացնում է սինթետիկ պրոստագլանդինի նմանօրինակի ապրանքային անվանումը, ինչպես տարբեր երկրներում, այնպես էլ Հայաստանում լայնորեն օգտագործվում է որպես մինչև 63 օրական հղիության արհեստական ընդհատման միջոց: Եթե կնոջ դաշտանն ուշանում է 1 շաբաթով կամ ավելի, նա կարող է ձեռք բերել այդ հաբերը դեղատներից: Դեղատներում ինչպես դեղանյութերի ճնշող մեծամասնությունը, այնպես էլ “Ցիտոտեկ”-ը կարող է վաճառվել առանց բժշկի նշանակման թերթիկի կամ հղիության դրական թեսթի առկայության: Դեղորայքի համատեղ օգտագործումը՝ ներհեշտոցային տեղադրման և խմելու ձևով, 2-3 օրվա ընթացքում արդյունավետ է հղիության արհեստական ընդհատում առաջացնելու համար: Ընդհանուր արժեքը կազմում է մոտավորապես 1000 դրամ և ավելի, ինչն անհամեմատ ավելի էժան է, քան բժշկի հսկողությամբ հիվանդանոցային պայմաններում կատարած մինչև 12 շաբաթական հղիության արհեստական ընդհատումը: Այսպիսով, ի տարբերություն հիվանդանոցային պայմաններում կատարած աբորտի, “Ցիտոտեկ”-ի օգտագործմամբ պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը՝ կնոջ կողմից ինքնանշանակման և տնային պայմաններում իրականացվող փորձն է, ինչը կնոջը թույլ է տալիս մտածել, որ դա դաշտանի կարգավորման գործընթաց է և հետազոտության ընթացքում կարող է իր կողմից նշված չլինի որպես ունեցած աբորտ:

Երկրորդ հերթին, եթե Հայաստանում սոցիալական նորմերը փոխվեն և հասարակության բոլոր շերտերում կնոջ կողմից կատարված աբորտներն այլևս չդիտարկվեն որպես պարծանքի առարկա, ապա կանայք առավել կաշկանդված կխոսեն կատարած աբորտների մասին:

Երրորդ հերթին, թերգրանցումը կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ հարցազրուցավարներին չի տրվել հատուկ հրահանգ գրառել՝ կնոջ կողմից կատարած դաշտանը կարգավորող որևէ փորձ: Տնային պայմաններում “Ցիտոտեկ”-ի կամ համանման այլ դեղորայքի օգտագործման դեպքում, կինը կարող է իրեն չհամարել հղի և ի տարբերություն հիվանդանոցային պայմաններում կատարված աբորտների, չնշել դեղորայքի օգտագործումը, որպես հղիության արհեստական ընդհատման դեպք:

6.5 ՀԱԿԱՔԵԴՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՆԱԽՔԱՆ ԱԲՈՐՏԸ

Հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման նկատմամբ կանանց դիրքորոշումը կարևոր է աբորտին հանգեցնող պատճառները բացահայտելու համար: Այս տեղեկատվությունը անհրաժեշտ է մասնավորապես ընտանիքի պլանավորման խորհրդատուներին, և աբորտ իրականացնող բուժաշխատողներին, քանի որ կինը, որն ունեցել է աբորտ, հղիանալու ժամանակ կամ չի օգտագործել հակաբեղմնավորման որևէ մեթոդ, կամ օգտագործել է որևէ մեթոդ (հավանաբար սխալ), որը ձախողվել է: Հետազոտությանը նախորդող 3 տարիների ընթացքում ավարտված յուրաքանչյուր հղիության համար հարցվողներին նշել են, թե արդյոք նրանք հղիանալու ժամանակ օգտագործել են հակաբեղմնավորման որևէ մեթոդ, և եթե այո, ապա ինչ մեթոդ են օգտագործել:

Աղյուսակ 6.5-ը ցույց է տալիս հղիանալու ժամանակ հակաբեղմնավորման մեթոդների օգտագործման վերաբերյալ տվյալներ: Աբորտ ունեցած կանանց գրեթե կեսն օգտագործել է հակաբեղմնավորման մեթոդ իրենց հղիանալու ժամանակ (52 տոկոս): Հետևաբար, այս աբորտները հակաբեղմնավորման մեթոդների ձախողման արդյունք են հանդիսացել: Հակաբեղմնավորման մեթոդների ձախողման 43 տոկոս դեպքերը տեղի են ունեցել հակաբեղմնավորման ավանդական մեթոդների ձախողման պատճառով, որի 33 տոկոսը կազմել է սեռական հարաբերությունների ընդհատման մեթոդը և 6 տոկոսը՝ ռիթմիկ մեթոդը:

Աղյուսակ 6.5 Հղիությունից առաջ հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը				
Հղիության ելքերի տոկոսային բաշխումը հարցմանը նախորդող 3 տարիների կտրվածքով ըստ հղիանալու ժամանակ հակաբեղմնավորման մեթոդի օգտագործման, Հայաստան 2005				
Հակաբեղմնավորման մեթոդ	Հղիության ելք			Բոլոր հղիությունները
	Կենդանի ծնունդ	Աբորտ	Վիժում	
Չի օգտագործել	84.0	48.1	80.5	67.6
Որևէ մեթոդ	16.0	51.9	19.5	32.4
Որևէ ժամանակակից մեթոդ	4.1	9.2	3.9	6.3
Հաբեր	0.1	1.1	0.6	0.6
ՆԱՄ	1.2	0.3	0.0	0.7
Ներարկում	0.0	0.0	0.0	0.0
Տղամարդու պահպանակ	2.8	7.0	3.3	4.7
Փրփուր/գել	0.0	0.8	0.0	0.4
Որևէ ավանդական մեթոդ	11.9	42.7	15.7	26.1
ԼԱՄ	0.4	0.0	0.0	0.2
Ռիթմիկ մեթոդ	0.2	5.7	0.0	2.7
Ընդհատված սեռ. հարաբ.	9.9	33.0	10.5	20.4
Այլ	1.3	4.0	5.2	2.8
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0
Հղիությունների թիվ	959	892	133	1,990

Նշում՝ Ընդամենում ներառված են նաև 6 մեռելածիններ, որոնք ներկայացված չեն առանձին սյունով

Հարկ է նշել, որ հակաբեղմնավորման մեթոդի անարդյունավետության բարձր մակարդակին զուգահեռ, աբորտով ավարտված հղիությունների գրեթե կեսի դեպքում՝ հղիությունից խուսափելու նպատակով, հակաբեղմնավորման մեթոդներ չեն օգտագործվել: Պարզ է դառնում, որ հակաբեղմնավորման վստահելի մեթոդների մատչելիությունը և դրանց կիրառումը կկրճատի աբորտների դեպքերը, ինչը կբարելավի հայ կանանց վերարտադրողական առողջությունը:

ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԱՅԼ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Սոցիալական միջավայրը մեծ ազդեցություն ունի վերարտադրելու կենսաբանական ունակությամբ օժտված զույգերի երեխա ունենալու, ինչպես նաև երեխաների թվաքանակի և միջծննդյան միջակայքերի վերաբերյալ որոշումների կայացման վրա: Սույն գլխում ներկայացված են պտղաբերության վրա ազդող հիմնական գործոնները, բացի հակաբեղմնավորման մեթոդներից և աբորտից (հղիության արհեստական ընդհատումից): Այդ գործոններն են՝ ամուսնությունը (ներառյալ քաղաքացիական), սեռական ակտիվությունը, հետծննդյան շրջանում դաշտանի բացակայության տևողությունը, սեռական հարաբերությունից ձեռնպահ մնալը (ինքնազսպումը) և դաշտանադադարը:

Կնոջ հղիանալու հավանականության առաջնային ցուցիչն ամուսնությունն է: Առավել անմիջական չափանիշներն են՝ տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ և սեռական հարաբերությունների հաճախականությունը: Կնոջ հղիանալու ունակությունը, հետծննդյան դաշտանադադարը և սեռական հարաբերություններից ձեռնպահ մնալը (ինքնազսպումը) ներազդում են միջծննդյան միջակայքերի վրա: Դաշտանադադարը կարևոր ցուցիչ է, քանի որ այն մատնանշում է կնոջ հղիանալու հավանականության ավարտը: Որոշիչ այս գործոններից ոչ մեկն ինքնին անկախ չէ, դրանք փոխադարձ կապված են և ներազդում են պտղաբերության մակարդակների և միտումների վրա: Գործոնները միմյանց վրա ազդում են կախված անհատից, բնակավայրից և ժամանակից:

7.1 ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Աղյուսակ 7.1-ը և գծապատկեր 7.1-ը ցույց են տալիս 15-49 տարեկան բոլոր կանանց բաշխումն ըստ հարցման պահին ամուսնական կարգավիճակի: “Ամուսնացած” հասկացությունը վերաբերվում է օրինական կամ քաղաքացիական ամուսնություններին (քաղաքացիական կամ կրոնական), մինչդեռ “ապրում են համատեղ”-ը՝ վերաբերվում է ոչ օրինական ամուսնություններին: Չետագա աղյուսակներում այս երկու հասկացությունները միացվել են և հավաքական կերպով անվանվել “հարցման պահին ամուսնացած”: Այրի, բաժանված կամ առանձին բնակվող անձանց խումբը հավաքական կերպով անվանվել է “երբևէ ամուսնացած”: Համաձայն ՀՄԱԳ-2005-ի արդյունքում ստացված տվյալների, կանանց մեծամասնությունը (62 տոկոս) օրինական կերպով ամուսնացած է եղել կամ գտնվել է քաղաքացիական ամուսնության մեջ: Կանանց 5 տոկոսն ամուսնալուծված է եղել, իսկ 2 տոկոսը՝ այրի: Կանանց 31 տոկոսն երբևէ ամուսնացած չի եղել (Գծապատկեր 7.1):

Այս տվյալները հաստատում են, որ ամուսնությունը Հայաստանում գրեթե համընդհանուր երևույթ է: Հարցման պահին ամուսնացած կանանց համամասնությունն աճում է տարիքին զուգընթաց՝ հասնելով առավելագույնի 40-44 տարեկան կանանց շրջանում, այնուհետև այն սկսում է նվազել, քանի որ գնալով աճում է այրի, ամուսնալուծված և առանձին բնակվող կանանց համամասնությունը: 45-49 տարեկան կանանց շրջանում ընդամենը 5 տոկոսն երբևէ ամուսնացած չի եղել, 77 տոկոսն եղել է ամուսնացած կամ գտնվել է քաղաքացիական ամուսնության մեջ, իսկ 18 տոկոսը՝ նախկինում է եղել ամուսնացած: Այս տարիքային խմբում ամուսնության ընդհատման հիմնական պատճառն այրիանալն է (8 տոկոս):


Աղյուսակ 7.1-ը ցույց է տալիս, որ ի տարբերություն կանանց, երբևէ չամուսնացած տղամարդկանց ցուցանիշն ավելի բարձր է (համապատասխանաբար՝ 31 և 43 տոկոս): Այս տարբերությունը բացատրվում է տղամարդկանց մեծ տարիքում ամուսնանալու միտումով: Օրինակ՝ 20-24 տարիքային խմբում, ի տարբերություն տղամարդկանց 21 տոկոսի, կանանց 45 տոկոսը հարցման պահին եղել են ամուսնացած կամ բնակվել են համատեղ:

Աղյուսակ 7.1 Ամուսնական կարգավիճակը հարցման պահին

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հարցման պահին ամուսնական կարգավիճակի և տարիքի, Հայաստան 2005

Տարիք	Ամուսնական կարգավիճակ						Ընդամենը	Հարցվողների թվաքանակ
	Երբևէ չամուսնացած	Ամուսնացած	Ապրում են համատեղ	Ամուսնալուծված	Ապրում են առանձին	Այրի		
ԿԱՆԱՅՔ								
Տարիք								
15-19	92.9	6.8	0.2	0.1	0.0	0.0	100.0	1,123
20-24	54.2	43.9	0.7	1.1	0.1	0.0	100.0	1,131
25-29	21.2	74.4	0.4	2.8	1.0	0.3	100.0	929
30-34	9.0	79.9	0.3	5.5	2.1	3.3	100.0	749
35-39	4.6	83.6	1.0	6.6	2.3	1.9	100.0	711
40-44	4.6	84.1	1.2	5.1	1.0	4.0	100.0	965
45-49	4.6	76.0	1.4	6.8	3.4	7.9	100.0	958
Ընդամենը	31.1	60.8	0.7	3.7	1.3	2.4	100.0	6,566
ՏՂԱՄԱՐԴԻԿ								
Տարիք								
15-19	100.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	292
20-24	79.0	18.8	2.2	0.0	0.0	0.0	100.0	237
25-29	37.3	52.8	9.7	0.0	0.2	0.0	100.0	202
30-34	12.8	79.5	4.8	2.3	0.5	0.0	100.0	156
35-39	13.1	73.9	12.1	0.8	0.0	0.0	100.0	150
40-44	7.4	78.7	11.7	2.3	0.0	0.0	100.0	199
45-49	3.0	82.7	11.3	0.9	0.0	2.1	100.0	211
Ընդամենը	42.5	49.6	6.7	0.8	0.1	0.3	100.0	1,447

Գծապատկեր 7.1 Հարցվողների ամուսնական կարգավիճակ



ՀԺԱԴ-2005

7.2 ՏԱՐԻՔՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ամուսնությունը կարևոր ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշ է: Այն սովորաբար մատնանշում է անհատի կյանքի այն ելակետը, երբ ծնող լինելը ցանկալի է դառնում: Հարցման միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն բոլոր երբևէ ամուսնացած կանանց տարիքի վերաբերյալ առաջին ամուսնության ժամանակ՝ ճշտելով ամուսնության ամիսն ու տարեթիվը: ՀԺԱՀ 2005-ի ընթացքում կանանց տրվել է հարց առաջին սեռական հարաբերության ժամանակ նրանց տարիքի վերաբերյալ:


Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ-2005-ի արդյունքները վկայում են, որ Հայաստանում կանանց տարիքն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության ժամանակ գրեթե համընկնում է: Աղյուսակ 7.2 և 7.3-ը ցույց են տալիս, որ կանանց մինչև 20 տարեկանների շրջանում ամուսնացածների և սեռական հարաբերություն ունեցածների համամասնությունը գրեթե նույնն է (համապատասխանաբար՝ 42 տոկոս և 43 տոկոս): Կանանց 80 տոկոսը 25 տարեկանին մոտ հասակում եղել է ամուսնացած և կանանց նույն համամասնությունն ունեցել է սեռական հարաբերություն: Առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության միջև կապը հետազոտվել է բոլոր տարիքային խմբերի կանանց միջև: Մեղիան տարիքն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության ժամանակ նկատելի աճում է երիտասարդ կանանց շրջանում (25-29), աննշան նվազում է 45-49 տարեկան կանանց շրջանում՝ կազմելով 21-ից փոքր ինչ ավելի, իսկ 30-34 տարեկան կանանց շրջանում այն չի հասնում 20-ի: 25-49 տարեկան բոլոր կանանց շրջանում մեղիան տարիքն և՛ առաջին ամուսնության, և՛ առաջին սեռական հարաբերության համար կազմել է 20.7:

Աղյուսակ 7.2 Տարիքն առաջին ամուսնության ժամանակ								
15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր առաջին անգամ ամուսնացել են նշված տարիքներում, երբևէ չամուսնացածների տոկոսը և առաջին ամուսնության ժամանակ տարիքի մեղիանն ըստ հարցման պահին տարիքի, Հայաստան 2005								
Տարիքը հարցման պահին	Հարցվողների տոկոսը, ովքեր ամուսնացել են նշված տարիքում ¹					Երբևէ չամուսնացածների տոկոս	Հարցվողների թվաքանակ	Առաջին ամուսնության ժամանակ տարիքի մեղիան ¹
	15	18	20	22	25			
ԿԱՆԱՅՔ								
Տարիք								
15-19	0.3	4.2	4.2	4.2	4.2	92.9	1,123	a
20-24	0.3	9.9	26.8	4.2	4.2	54.2	1,131	a
25-29	0.9	20.6	39.7	57.3	72.4	21.2	929	21.2
30-34	0.3	23.9	52.7	67.6	80.6	9.0	749	19.8
35-39	0.7	17.5	49.8	69.8	87.1	4.6	711	20.0
40-44	0.2	11.4	40.8	65.2	81.7	4.6	965	20.7
45-49	0.6	10.8	32.7	55.6	78.6	4.6	958	21.5
25-49	0.5	16.4	42.3	62.5	79.7	8.9	4,312	20.7
ՏՐԱՄԱՐԴԻԿ								
Տարիք								
15-19	0.0	4.2	4.2	4.2	4.2	100.0	292	a
20-24	0.0	0.2	1.6	4.2	4.2	79.0	237	a
25-29	0.0	1.3	2.4	13.0	41.1	37.3	202	a
30-34	0.0	1.1	6.1	16.2	37.7	12.8	156	25.9
35-39	0.0	0.0	2.2	14.5	41.6	13.1	150	25.9
40-44	0.0	1.4	3.3	19.1	49.9	7.4	199	25.0
45-49	0.0	0.0	1.2	20.0	49.8	3.0	211	25.0
25-49	0.0	0.8	2.9	16.7	44.5	14.8	918	a

Կ2 - Կիրառելի չէ
a = Ցուցանիշները չեն հաշվարկվել, քանի որ հարցվողների 50 տոկոսից քիչն է ունեցել սեռական հարաբերություն մինչև այդ տարիքային խումբ հասնելը
¹ Իրենից ներկայացնում է առաջին ամուսնության ժամանակ հարցվողների բաշխման միջնակետն ըստ նշված տարիքների:

Ի տարբերություն կանանց, տղամարդիկ ավելի հաճախ են նշում մինչև ամուսնությունն ունեցած սեռական հարաբերության մասին: Օրինակ՝ ընդհանուր առմամբ 20 տարեկան տղամարդկանց միայն 3 տոկոսն է ամուսնացած, մինչդեռ նույն տարիքի տղամարդկանց կեսից ավելին (53 տոկոս) նշել է ունեցած սեռական հարաբերության մասին: 30-34 տարիքային խմբի տղամարդկանց շրջանում առաջին անգամ սեռական հարաբերություն ունենալու մեղիան տարիքը 6 տարով ավել է առաջին ամուսնության մեղիան տարիքից (համապատասխանաբար՝ 26 և 20):

Աղյուսակ 7.3 Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ								
15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն նշված տարիքներում, երբևէ սեռական հարաբերություն չունեցածների տոկոսը և առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքի մեղիանն ըստ տարիքի հարցման պահին, Հայաստան 2005թ								
Տարիքը հարցման պահին	Հարցվողների տոկոսը, ովքեր առաջին սեռական հարաբերությունն ունեցել են նշված տարիքում ¹					Երբևէ սեռ. հարաբ. չունեցածների տոկոս	Հարցվողների թվաքանակ	Առաջին սեռ. հարաբ. ժամանակ տարիքի մեղիան ¹
	15	18	20	22	25			
ԿԱՆԱՅՔ								
Տարիք								
15-19	0.3	4.2	4.2	4.2	4.2	92.9	1,123	a
20-24	0.2	9.0	26.2	4.2	4.2	54.2	1,131	a
25-29	0.9	20.1	39.2	56.6	73.0	20.4	929	21.2
30-34	0.3	22.9	52.4	65.9	79.8	8.3	749	19.8
35-39	0.4	16.9	50.8	69.8	86.4	4.4	711	20.0
40-44	0.2	11.5	41.6	63.2	82.0	3.8	965	20.7
45-49	0.7	10.7	34.1	57.1	79.5	4.3	958	21.4
25-49	0.5	16.0	42.8	62.0	79.9	8.4	4,312	20.7
ՏՂԱՄԱՐԴԻԿ								
Տարիք								
15-19	2.6	4.2	4.2	4.2	4.2	86.6	292	a
20-24	3.0	29.5	56.1	4.2	4.2	26.4	237	19.4
25-29	0.8	24.9	50.5	72.9	86.2	7.9	202	19.9
30-34	2.2	27.4	54.8	71.8	83.9	0.3	156	19.6
35-39	0.4	21.9	56.9	76.8	88.4	1.6	150	19.6
40-44	0.4	20.8	49.6	68.5	87.3	0.5	199	20.0
45-49	0.9	19.6	52.7	73.4	89.4	0.2	211	19.7
25-49	0.9	22.7	52.6	72.5	87.2	2.2	918	19.8
<p>4.2 - Կիրառելի չէ</p> <p>a = Ցուցանիշները չեն հաշվարկվել, քանի որ հարցվողների 50 տոկոսից քիչն է ունեցել սեռական հարաբերություն մինչ այդ տարիքային խումբ հասնելը</p> <p>¹ Իրենից ներկայացնում է առաջին սեռական հարաբերության ժամանակ հարցվողների բաշխման միջնակետն ըստ նշված տարիքների:</p>								



Աղյուսակ 7.4-ը ցույց է տալիս կանանց և տղամարդկանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ ըստ հիմնական բնութագրիչների, ինչպես նաև նույն ցուցանիշն ըստ կանանց տարիքային խմբերի: Նմանատիպ կտրվածքով առաջին սեռական հարաբերության ժամանակ մեղիան տարիքի տվյալները ներկայացված են աղյուսակ 7.5-ում: Ի տարբերություն գյուղաբնակ կանանց, քաղաքաբնակ կանանց շրջանում առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերություն ունենալու մեղիան տարիքն ավելի բարձր է: Ինչպես և ակնկալվում էր, նկատելի է դրական կախվածություն կնոջ կրթական մակարդակի և առաջին ամուսնության ժամանակ (առաջին սեռական հարաբերության ժամանակ) նրա տարիքի միջև: Հիմնական ընդհանուր կրթությամբ կանանց շրջանում առաջին ամուսնության ժամանակ մեղիան տարիքը մոտավորապես 19 է: Կանանց մեղիան տարիքը կայուն կերպով աճում է կրթական մակարդակին զուգընթաց՝ հասնելով գրեթե 24-ի բարձրագույն կրթություն ունեցող կանանց շրջանում:

Կանանց մեղիան տարիքն առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության ժամանակ փոքր ինչ տատանվում են ըստ մարզերի: Ամենաբարձր մեղիան տարիքը կանանց շրջանում գրանցվել է Երևանում (21.8 տարեկան առաջին ամուսնության և առաջին սեռական հարաբերության ժամանակ), իսկ ամենացածրը՝ Գեղարքունիքում (համապատասխանաբար՝ 19.6 և 19.5): Վերջին հինգ տարվա ընթացքում տեղի է ունեցել այս ցուցանիշների որոշակի փոփոխություն կանանց շրջանում:

Աղյուսակներ 7.4 և 7.5 ներկայացնում են նաև 30-49 տարիքային խմբերի տղամարդկանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ և 25-49 տարիքային խմբերի տղամարդկանց մեղիան տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ: Համապատասխան տղամարդկանց փոքր թվաքանակից ելնելով՝ տվյալները չեն ներկայացվել տարիքային խմբերի կտրվածքով: Ի տարբերություն գյուղաբնակ տղամարդկանց, քաղաքաբնակ տղամարդիկ ամուսնանում են ավելի մեծ տարիքում, չնայած որ հաճախ են նշել վաղ տարիքում ունեցած սեռական հարաբերության մասին: Բարձրագույն կրթություն ունեցող տղամարդկանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ 3 տարով ավելի է հիմնական ընդհանուր կրթություն ունեցող տղամարդկանց մեղիան տարիքից, այնուամենայնիվ ի տարբերություն ցածր կրթական մակարդակ ունեցող

տղամարդկանց, բարձր կրթական մակարդակ ունեցող տղամարդիկ 1 տարով շուտ են սկսում իրենց սեռական կյանքը: Տղամարդկանց շրջանում առաջին սեռական հարաբերության ժամանակ մեղիան տարիքը նշանակալիորեն տատանվում է ըստ մարզերի՝ ամենացածրը կազմելով 17.8 Արարատում, մինչև 24.9՝ Շիրակում:

Աղյուսակ 7.4 Առաջին ամուսնության ժամանակ տարիքի մեղիանը
 25-49 տարեկան կանանց և 30-49 տարեկան տղամարդկանց մեղիան տարիքն առաջին ամուսնության ժամանակ ըստ հարցման պահին տարիքի (կանայք) և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Տարիքը հարցման պահին					25-49 տարեկան կանայք	30-49 տարեկան տղամարդիկ
	25-29	30-34	35-39	40-44	45-49		
Բնակավայր							
Քաղաքային	22.1	21.0	20.5	21.3	21.8	21.4	26.1
Գյուղական	19.6	18.8	19.6	20.0	21.1	19.8	24.5
Մարզ							
Երևան	22.4	21.8	20.8	21.9	22.1	21.8	27.4
Արագածոտն	20.2	18.8	19.7	20.4	21.4	20.3	24.9
Արարատ	20.2	19.6	20.3	20.9	20.9	20.3	24.7
Արմավիր	19.6	18.5	19.6	20.2	22.0	20.0	24.1
Գեղարքունիք	18.7	18.9	19.4	19.6	20.9	19.6	25.1
Լոռի	20.1	19.3	(19.8)	19.8	20.9	20.0	23.3
Կոտայք	20.4	19.8	19.5	19.9	20.0	19.9	24.7
Շիրակ	22.5	18.8	20.4	20.9	21.5	20.8	24.4
Սյունիք	21.8	20.4	19.9	20.7	21.1	20.8	24.2
Վայոց ձոր	(21.3)	(19.2)	(19.6)	20.7	21.6	20.5	24.3
Տավուշ	20.1	19.4	19.7	20.3	21.3	20.3	24.5
Կրթություն							
Հիմնական							
ընդհանուր	17.0	(17.7)	(17.9)	(18.8)	(20.2)	18.6	24.2
Միջնակարգ							
ընդհանուր	18.8	18.4	18.8	19.7	20.4	19.3	24.5
Միջին							
մասնագիտական	22.4	19.7	20.3	20.9	21.3	20.8	25.4
Բարձրագույն	24.0	23.3	23.0	23.7	24.1	23.6	27.4
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	18.9	18.5	19.6	20.2	21.5	19.8	24.4
Ցածր	20.4	19.2	19.8	20.1	21.6	20.2	25.4
Միջին	20.9	20.4	19.9	20.9	21.1	20.8	25.5
Բարձր	22.3	20.1	20.2	21.0	21.0	21.0	25.6
Ամենաբարձր	22.5	21.8	20.9	21.5	22.3	21.8	26.7
Ընդամենը կանայք	21.2	19.8	20.0	20.7	21.5	20.7	ԿԶ
Ընդամենը տղամարդիկ	a	25.9	25.9	25.0	25.0	ԿԶ	25.5

Նշում՝ Մեղիանն իրենից ներկայացնում է առաջին ամուսնության ժամանակ հարցվողների բաշխման միջնակետն ըստ նշված տարիքների:
 Փակագծերուն ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա
 ԿԶ – Կիրառելի չէ
 a – Տվյալը տվել է, քանի որ հարցվողների 50 տոկոսից քիչն է եղել ամուսնացած մինչ այդ տարիքային խումբ հասնելը

Աղյուսակ 7.5 Առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքի մեղիանը

25-49 տարեկան կանանց և տղամարդկանց տարիքի մեղիանն առաջին սեռական հարաբերության ժամանակ ըստ հարցման պահին տարիքի (կանայք) և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Տարիքը հարցման պահին					25-49 տարեկան կանայք	25-49 տարեկան տղամարդիկ
	25-29	30-34	35-39	40-44	45-49		
Բնակավայր							
Քաղաքային	22.1	21.0	20.4	21.3	21.5	21.4	19.4
Գյուղական	19.7	18.8	19.6	20.0	21.2	19.8	20.3
Մարզ							
Երևան	22.4	22.0	20.8	22.1	21.7	21.8	18.8
Արագածոտն	20.2	18.7	20.2	20.6	21.4	20.4	20.2
Արարատ	20.3	19.9	20.2	21.2	21.5	20.6	17.8
Արմավիր	19.6	18.5	19.5	20.0	21.6	19.9	20.0
Գեղարքունիք	18.7	18.8	19.3	19.5	20.6	19.5	21.6
Լոռի	20.1	19.3	(19.7)	19.8	21.2	20.0	20.1
Կոտայք	20.5	20.0	19.5	19.9	19.6	19.9	19.4
Շիրակ	22.6	19.1	20.3	21.0	21.6	20.8	24.9
Սյունիք	21.8	20.5	19.9	20.7	21.3	20.8	22.5
Վայոց ձոր	(22.0)	(20.1)	(19.7)	20.8	21.6	20.6	19.0
Տավուշ	20.1	19.4	19.7	20.3	21.3	20.3	22.2
Կրթություն							
Հիմնական							
ընդհանուր	17.0	(17.6)	(18.4)	(18.8)	(19.6)	18.5	20.8
Միջնակարգ							
ընդհանուր	19.0	18.5	18.8	19.7	20.2	19.4	19.6
Միջին							
մասնագիտական	22.5	19.8	20.2	21.0	21.4	20.9	19.5
Բարձրագույն	23.9	23.3	23.1	23.7	24.0	23.6	19.7
Բարեկեցության մակարդակ							
Անենացածր	19.0	18.6	19.6	20.4	21.4	19.8	21.0
Ցածր	20.5	19.3	19.7	19.9	21.5	20.1	19.7
Միջին	20.8	20.7	19.9	21.0	21.0	20.8	19.8
Բարձր	22.3	20.1	20.2	20.9	20.9	20.9	18.9
Անենաբարձր	22.7	22.0	20.8	21.6	22.3	21.9	19.2
Ընդամենը կանայք	21.2	19.8	20.0	20.7	21.4	20.7	ԿԶ
Ընդամենը տղամարդիկ	19.9	19.6	19.6	20.0	19.7	ԿԶ	19.8

ԿԶ – Կիրառելի չէ

7.3 ՍԵՌԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՑՄԱՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՐԱՏՎԱԾՈՒՄ

Սեռական հարաբերությունների հաճախականությունը՝ հակաբեղմնավորման մեթոդներ չօգտագործելու պայմաններում, հղիությունը պայմանավորող ուղղակի գործոն է, հետևաբար, այդ հարաբերությունների հաճախականության պարզաբանումը կարևոր է հղիանալու հավանականության գնահատման համար: ՀԺԱՀ-2005-ի ընթացքում կանանց տրվել է հարց. «Ե՞րբ եք վերջին անգամ ունեցել սեռական հարաբերություն»:

Աղյուսակ 7.6.1-ը ցույց է տալիս կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին սեռական հարաբերությունից հետո անցած ժամանակի: Հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում առնվազն մեկ սեռական հարաբերություն ունեցած կանայք դասվել են «Սեռապես ակտիվ» համարվող խմբին:

Հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում կանանց գրեթե կեսը (49 տոկոս) եղել է սեռապես ակտիվ: Կանանց 10 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն հարցմանը նախորդող մեկ տարվա, բայց ոչ հարցմանը նախորդող մեկ ամսվա ընթացքում, իսկ 9 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն ավելի քան մեկ տարի առաջ: Հարցման պահին բոլոր կանանց 31 տոկոսն երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն: Ամուսնացած կանանց շրջանում, վերջին ժամանակահատվածում սեռական հարաբերությունների բացակայությունը բացատրվում է նրանով, որ ամուսնացած կանանց մոտ 14 տոկոսի վկայությամբ, նրանց ամուսինները բնակվում են այլ վայրերում (տվյալները ներկայացված չեն):

Վերջին ժամանակաշրջանում ունեցած սեռական հարաբերությունների մասին նշած կանանց մասնաբաժինն աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով առավելագույնը 70 տոկոս՝ 35-39 տարիքային խմբում, այնուհետև այն նվազում է մինչև 55 տոկոս՝ 45-49 տարիքային խմբի կանանց շրջանում: 15-19 տարեկան կանանց մեծամասնությունը (93 տոկոս) երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն: Այս տարիքային խմբի կանանց միայն 6 տոկոսն է վերջին շրջանում ունեցել սեռական հարաբերություն: Շատ քիչ թվով կանայք են նշել, որ ունեցել են սեռական հարաբերություն մինչև ամուսնությունը: Երբևէ չամուսնացած կանանց 99 տոկոսը նշել է, որ երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն:

Հարցմանը նախորդող վերջին շաբաթների ընթացքում ունեցած սեռական ակտիվության վերաբերյալ նշել են հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց 35, իսկ միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց՝ 54 տոկոսը: Վերջին ժամանակահատվածում ունեցած սեռական ակտիվության տվյալները տատանվում են ըստ մարզերի: Ի տարբերություն Արարատի և Սյունիքի մարզերի տաս կանանցից վեցի, Երևանի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի կանանց կեսից քիչն են ունեցել սեռական հարաբերություն հարցմանը նախորդող 4 շաբաթվա ընթացքում:

Ընդհանուր առմամբ, տղամարդիկ ավելի հաճախ են նշել ունեցած սեռական հարաբերության մասին, քան կանայք (Աղյուսակ 7.6.2): Տղամարդկանց 63 տոկոսը նշել է, որ հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում ունեցել է սեռական հարաբերություն, 11 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն հարցմանը նախորդող մեկ տարվա ընթացքում, բայց ոչ հարցմանը նախորդող չորս շաբաթվա ընթացքում, 3 տոկոսն ունեցել է սեռական հարաբերություն հարցման պահից ավելի քան մեկ տարի առաջ և 23 տոկոսն երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն: Տղամարդկանց սեռական ակտիվությունն աճում է տարիքին զուգընթաց: Ի տարբերություն 15-19 տարիքային խմբի 6 տոկոս և 20-24 տարիքային խմբի 49 տոկոս տղամարդկանց, 30 և բարձր տարիքի տաս տղամարդկանցից մոտ ինն ունեցել են սեռական հարաբերություն հարցմանը նախորդող մեկ ամսվա ընթացքում:

Ինչպես և կանանց դեպքում, ի տարբերություն երբևէ չամուսնացած տղամարդկանց 23 տոկոսի, հարցման պահին ամուսնացած, ինչպես նաև կանանց հետ բնակվող տղամարդիկ, ավելի շատ են նշել ունեցած սեռական հարաբերությունների մասին՝ 94 տոկոս: Սեռական ակտիվության տվյալները տատանվում են ըստ մարզերի: Վերջին չորս շաբաթվա ընթացքում սեռական հարաբերություններ ունեցած տղամարդկանց տոկոսը տատանվել է 53 տոկոսից՝ Շիրակում, մինչև 71 տոկոս՝ Արագածոտնում:

Աղյուսակ 7.6.1 Վերջին սեռական հարաբերությունը, Կանայք

Կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին սեռական հարաբերության և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Վերջին սեռական հարաբերությունը՝				Երբևէ չի ունեցել սեռ. հարաբ.	Ընդամենը	Կանանց թվաքանակ
	Վերջին 4 շաբաթվա ընթացքում	1 տարվա ընթացքում ¹	1 տարուց ավելի	Տվյալ չկա			
Տարիքը հարցման պահին							
15-19	5.5	1.2	0.0	0.4	92.9	100.0	1,123
20-24	36.7	7.1	1.0	1.1	54.2	100.0	1,131
25-29	63.7	10.4	3.7	1.8	20.4	100.0	929
30-34	67.4	12.2	9.9	2.2	8.3	100.0	749
35-39	69.7	11.4	13.4	1.2	4.4	100.0	711
40-44	65.3	16.8	13.8	0.3	3.8	100.0	965
45-49	55.1	16.2	22.5	1.9	4.3	100.0	958
Ամուսնական կարգավիճակ							
Երբևէ չամուսնացած	0.4	0.6	0.2	0.0	98.8	100.0	2,043
Ամուսնացած/Բնակվում են համատեղ	79.0	15.5	4.5	1.0	0.0	100.0	4,044
Ամուսնալուծված/Բնակվում են առանձին/Այրի	4.9	8.1	79.2	7.8	0.0	100.0	479
Ամուսնության տևողությունը²							
Միայն 1 անգամ ամուսնացած							
0-4 տարի	82.2	13.7	1.2	2.9	0.0	100.0	732
5-9 տարի	83.7	12.9	1.9	1.5	0.0	100.0	591
10-14 տարի	85.8	10.4	3.4	0.5	0.0	100.0	649
15-19 տարի	79.1	15.6	4.6	0.7	0.0	100.0	676
20-24 տարի	71.1	20.1	8.6	0.2	0.0	100.0	784
25+ տարի	72.1	21.2	6.4	0.3	0.0	100.0	548
Մեկից ավելի անգամ ամուսնացած	82.5	8.0	7.3	2.2	0.0	100.0	64
Բնակավայր							
Քաղաքային	47.7	8.7	9.9	1.2	32.5	100.0	4,194
Գյուղական	51.7	13.2	6.3	1.3	27.5	100.0	2,372
Մարզ							
Երևան	46.7	7.5	10.6	1.3	33.9	100.0	2,468
Արագածոտն	51.7	13.0	4.9	1.2	29.2	100.0	292
Արարատ	58.6	2.5	9.3	2.5	27.1	100.0	462
Արմավիր	55.7	8.0	8.7	0.7	27.0	100.0	567
Գեղարքունիք	45.0	22.0	5.8	0.4	26.9	100.0	443
Լոռի	47.1	13.7	7.8	0.5	30.9	100.0	537
Կոտայք	50.8	12.3	6.7	0.9	29.4	100.0	563
Շիրակ	41.3	17.8	6.8	2.6	31.5	100.0	563
Սյունիք	58.6	6.6	6.7	0.9	27.2	100.0	281
Վայոց ձոր	51.2	6.8	7.3	1.7	33.1	100.0	107
Տավուշ	51.9	11.7	9.2	0.2	27.1	100.0	285
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	34.6	8.9	6.8	2.2	47.5	100.0	529
Միջնակարգ ընդհանուր	51.6	12.5	8.3	1.3	26.2	100.0	2,440
Միջին մասնագիտական	54.1	11.3	10.0	1.1	23.5	100.0	1,997
Բարձրագույն	43.9	6.4	7.8	0.9	41.0	100.0	1,600
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	50.8	12.5	8.9	1.7	26.1	100.0	1,164
Ցածր	47.7	12.7	8.5	1.0	30.0	100.0	1,284
Միջին	47.6	11.9	9.7	1.1	29.6	100.0	1,303
Բարձր	50.4	8.1	9.7	1.3	30.6	100.0	1,375
Ամենաբարձր	49.3	7.3	6.3	1.0	36.2	100.0	1,440
Ընդամենը	49.1	10.4	8.6	1.2	30.7	100.0	6,566

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած, այսինքն՝ բնակվում են համատեղ: Երբևէ ամուսնացած, այսինքն՝ հարցման պահին եղել են ամուսնալուծված, այրի կամ բնակվել են առանձին:

¹ Բացառությամբ այն կանանց, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն հարցմանը նախորդող 4 շաբաթվա ընթացքում:

² Բացառությամբ այն կանանց, ովքեր հարցման պահին ամուսնացած չեն եղել:

Աղյուսակ 7.6.2 Վերջին սեռական հարաբերությունը, Տղամարդիկ

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ վերջին սեռական հարաբերության և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Վերջին սեռական հարաբերություն ¹				Երբևէ չի ունեցել սեռ. հարաբ.	Ընդամենը	Տղամարդկանց թվաքանակ
	Վերջին 4 շաբաթվա ընթացքում	1 տարվա ընթացքում ¹	1 տարուց ավելի	Տվյալ չկա			
Տարիքը հարցման պահին							
15-19	5.6	6.7	1.1	0.0	86.6	100.0	292
20-24	49.3	16.2	8.1	0.0	26.4	100.0	237
25-29	68.2	20.2	2.9	0.8	7.9	100.0	202
30-34	88.8	10.0	0.9	0.0	0.3	100.0	156
35-39	89.7	7.4	1.3	0.0	1.6	100.0	150
40-44	90.3	5.0	4.1	0.1	0.5	100.0	199
45-49	86.1	8.1	4.5	1.1	0.2	100.0	211
Ամուսնական կարգավիճակ							
Երբևէ չամուսնացած	22.8	16.6	6.1	0.0	54.5	100.0	615
Ամուսնացած/Բնակվում են համատեղ	93.5	5.2	0.8	0.5	0.0	100.0	815
Ամուսնալուծված/Բնակվում են առանձին/Ամուսնի	*	*	*	*	*	*	17
Ամուսնության տևողություն²							
Միայն 1 անգամ ամուսնացած							
0-4 տարի	89.6	9.5	0.1	0.9	0.0	100.0	190
5-9 տարի	93.2	6.0	0.8	0.0	0.0	100.0	141
10-14 տարի	99.7	0.3	0.0	0.0	0.0	100.0	137
15-19 տարի	95.0	3.2	1.8	0.0	0.0	100.0	152
20-24 տարի	90.8	5.9	1.3	2.0	0.0	100.0	123
25+ տարի	93.8	6.0	0.0	0.2	0.0	100.0	54
Մեկից ավելի անգամ ամուսնացած	*	*	*	*	*	*	17
Բնակավայր							
Քաղաքային	63.0	12.6	3.4	0.2	20.8	100.0	913
Գյուղական	61.9	7.0	3.4	0.4	27.3	100.0	534
Մարզ							
Երևան	65.0	14.2	3.5	0.0	17.2	100.0	547
Արագածոտն	70.7	4.5	6.0	0.0	18.7	100.0	71
Արարատ	63.6	7.6	1.5	0.2	27.0	100.0	110
Արմավիր	65.0	12.1	2.7	0.0	20.1	100.0	139
Գեղարքունիք	63.1	8.7	5.8	0.0	22.4	100.0	81
Լոռի	58.8	6.4	4.1	2.0	28.7	100.0	87
Կոտայք	56.8	13.5	3.6	1.1	25.0	100.0	151
Շիրակ	53.4	2.6	2.5	0.0	41.6	100.0	98
Սյունիք	57.9	7.2	3.3	0.0	31.6	100.0	67
Վայոց ձոր	59.9	6.8	0.9	1.9	30.5	100.0	31
Տավուշ	63.7	6.0	2.4	0.0	27.9	100.0	64
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	39.9	16.3	4.3	0.9	38.6	100.0	205
Միջնակարգ ընդհանուր	56.4	10.2	3.4	0.4	29.7	100.0	586
Միջին մասնագիտական	83.6	6.8	2.0	0.1	7.6	100.0	310
Բարձրագույն	67.5	11.2	4.2	0.0	17.1	100.0	346
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	63.0	7.1	4.2	0.2	25.6	100.0	261
Ցածր	63.4	5.9	3.5	0.0	27.2	100.0	264
Միջին	58.4	12.0	3.1	0.6	25.9	100.0	326
Բարձր	57.7	13.7	3.8	0.6	24.2	100.0	316
Ամենաբարձր	71.6	12.9	2.5	0.0	13.0	100.0	280
Ընդամենը	62.6	10.5	3.4	0.3	23.2	100.0	1,447

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած, այսինքն՝ բնակվում են համատեղ: Երբևէ ամուսնացած, այսինքն՝ հարցման պահին եղել են ամուսնալուծված, այրի կամ բնակվել են առանձին: Աստղանիշը ցույց է տալիս, որ տվյալի հաշվարկը հիմնված է 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և այդ պատճառով սղվել է:

¹ Բացառությամբ այն տղամարդկանց, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն հարցմանը նախորդող 4 շաբաթվա ընթացքում:

² Բացառությամբ այն տղամարդկանց, ովքեր հարցման պահին ամուսնացած չեն եղել:

7.4 ՀԵՏԾՆՆԴՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԴԱՇՏԱՆԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ (ԱՄԵՆՈՐԵԱ), ԻՆՔՆԱԶՄՊՈՒՄ ԵՎ ԱՆԲԵՂՄՆՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Հետծննդյան շրջանում դաշտանի բացակայությունը՝ ծննդաբերության և վերսկսված դաշտանի միջև ընկած ժամանակահատվածն է: Այս ընթացքում հղիանալու հավանականությունը նվազում է, եթե կինը կերակրում է երեխային բացառապես կրծքով և գիշերվա ընդմիջումը չի գերազանցում 6 ժամը: Բեղմնավորման ցածր հավանականության տևողությունն առավելապես կախված է երկու գործոններից՝ սեռական հարաբերությունները վերսկսելու տևողությունից և կրծքով կերակրման տևողությունից, հաճախականությունից, որոնք միտում ունեն խաթարելու ձվազատման վերականգնումը: Հետծննդյան շրջանում դաշտանի բացակայություն (ամենորեա) ունեցող կան սեռական հարաբերությունից ձեռնպահ մնացող կանայք (կան երկուսը միասին) ենթակա չեն հղիանալու և համարվում են անբեղմնունակ:

Աղյուսակ 7.7-ը ցույց է տալիս հարցմանը նախորդող 3 տարվա ընթացքում ծննդաբերած, հետծննդյան շրջանում դաշտանի բացակայություն ունեցող, սեռական հարաբերություններից ձեռնպահ մնացող և անբեղմնունակ մայրերի տոկոսային բաշխումը: Հարցմանը նախորդող 3 տարվա ընթացքում ծննդաբերած կանանց 18 տոկոսն ունեցել է հետծննդյան շրջանում դաշտանի բացակայություն, իսկ 8 տոկոսը՝ ձեռնպահ է մնացել սեռական հարաբերություններից: Ընդհանուր առմամբ 20 տոկոսը եղել է անբեղմնունակ և հետևաբար չի ենթարկվել հղիանալու ռիսկի:

Աղյուսակ 7.7 Հետծննդյան շրջանում դաշտանի բացակայություն (ամենորեա), ինքնազսպում և անբեղմնունակություն				
Հարցմանը նախորդող երեք տարիների ընթացքում ծնունդների տոկոսային բաշխումը, որոնց դեպքում մայրն ունեցել է հետծննդյան դաշտանի բացակայություն, օգտագործել է ինքնազսպման մեթոդը և եղել է անբեղմնունակ ըստ ծննդաբերությանը հաջորդող ամիսների, մեդիան և միջին տևողությունների, Հայաստան 2005				
Ծննդաբերությանը հաջորդող ամիսների թիվ	Ծնունդների տոկոսը, որոնցից հետո մայրերն ունեն՝			Ծնունդների թվաքանակ
	Ամենորեա	Ինքնազսպում	Անբեղմնունակություն ¹	
< 2	(93.8)	(76.8)	(97.2)	42
2-3	60.3	26.3	67.4	64
4-5	(47.9)	(6.9)	(54.8)	51
6-7	(33.1)	(20.0)	(33.1)	51
8-9	(16.7)	(5.8)	(22.5)	59
10-11	(20.4)	(0.3)	(20.7)	54
12-13	(4.7)	(2.9)	(7.6)	53
14-15	(7.8)	(2.9)	(7.8)	41
16-17	(2.7)	(3.4)	(6.1)	42
18-19	0.9	0.3	0.9	63
20-21	(4.1)	(7.3)	(11.4)	45
22-23	0.0	1.5	1.5	64
24-25	0.6	0.0	0.6	76
26-27	15.3	1.6	15.3	58
28-29	(4.3)	(2.6)	(4.3)	47
30-31	(3.9)	(0.0)	(3.9)	51
32-33	6.5	5.7	12.3	36
34-35	(0.0)	(0.0)	(0.0)	45
12-15	6.0	2.9	7.7	94
16-19	1.6	1.5	3.0	105
20-23	1.7	3.9	5.6	109
24-29	6.3	1.2	6.3	181
30-35	3.3	1.6	4.9	133
Ընդամենը	17.5	8.4	19.9	943
Մեդիան	4.3	1.8	4.9	42
Միջին	7.1	3.9	8.2	42

Նշում՝ Ցուցանիշները հիմնված են հարցման պահին ունեցած կարգավիճակի վրա:
 42 = Կիրառելի չէ
¹Ներառում է ծնունդները, որոնց մայրերը ծննդաբերությունից հետո կան դեռ գտնվում են դաշտանադադարի մեջ կամ դեռ օգտագործում են ինքնազսպման մեթոդը (կան երկուսը համատեղ)

Ծննդաբերությունից հետո մեկ տարվա ընթացքում հետծննդյան անդաշտանություն ունեցող կանանց տոկոսն առաջին երկու ամիսների ընթացքում կազմում է 94, ապա կտրուկ նվազում է՝ 10-11-րդ ամիսներին կազմելով 20 տոկոս: Ծննդաբերությունից հետո մեկ տարվա ընթացքում կանանց հետծննդյան ինքնազսպման տոկոսն առաջին երկու ամիսների ընթացքում կազմել է 77, ապա 2-3-րդ ամիսներին նվազել է մինչև 26 տոկոս, այնուհետև 10-11-րդ ամիսներին կազմել՝ 1 տոկոսից պակաս: Ընդհանուր առմամբ, հետծննդյան ինքնազսպման տևողության մեդիանը կազմել է 5 ամիս:

7.5 ԴԱՇՏԱՆԱԴԱԴԱՐ

Հղիանալու հավանականությունը նվազում է 30 տարեկանից հետո՝ դաշտանադադարի մեջ գտնվող կանանց համամասնության աճին զուգընթաց: Չնայած որ դժվար է սահմանել դաշտանադադարի սկիզբը յուրաքանչյուր կնոջ համար, սակայն ընդհանուր առմամբ հնարավոր է գնահատել բնակչության մեջ դաշտանադադարում գտնվող կանանց մասնաբաժինը: Աղյուսակ 7.8-ը ցույց է տալիս դաշտանադադարի մեջ գտնվող 30 և բարձր տարիքի կանանց տոկոսը, այսինքն այն կանայք, ովքեր հղի չեն, չունեն հետծննդյան շրջանում դաշտանի բացակայություն և հարցմանը նախորդող վեց կամ ավելի ամիսների ընթացքում չեն ունեցել դաշտան:

Համաձայն ՀԺԱՀ-2005-ի ընթացքում հավաքագրված տվյալների, 30-49 տարիքային խմբերի կանանց 10 տոկոսը գտնվում է դաշտանադադարի մեջ: Դաշտանադադարում գտնվող կանանց համամասնությունն աճում է տարիքին զուգընթաց՝ կազմելով 30-34 տարիքային 48-49 տարեկան կանանց համար՝ 31 տոկոս:

Աղյուսակ 7.8 Դաշտանադադար

30-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր գտնվում են դաշտանադադարի մեջ, Հայաստան 2005

Տարիք	Դաշտանադադարի	
	մեջ գտնվողներ ¹	կանանց թվաքանակ
30-34	1.5	749
35-39	2.6	711
40-41	3.9	345
42-43	10.6	416
44-45	14.4	418
46-47	19.7	423
48-49	30.6	321
Ընդամենը	9.7	3,383

¹Կանանց տոկոսը, ովքեր հղի չեն, չունեն հետծննդյան դաշտանի բացակայություն և հարցմանը նախորդող վեց կամ ավելի ամիսների ընթացքում չեն ունեցել դաշտան:

խմբի կանանց համար 1.5 տոկոս, իսկ

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ

Բնակչության վերարտադրողական նպատակների ուսումնասիրությունը կարևոր է ինչպես հետագա պտղաբերության կանխատեսման, այնպես էլ ընտանիքի պլանավորման ծառայության պոտենցիալ պահանջների գնահատման համար: Սույն գլուխը ներկայացնում է Հայաստանի կանանց ծնելիության մտադրությունների, ընտանիքի պլանավորման ծառայությունների անհրաժեշտության և ընտանիքի նախընտրելի չափի վերաբերյալ ՀԺԱՀ-2005-ի տվյալները: Գլխում դիտարկվում է նաև կանխարգելված անցանկալի հղիության արդյունքում պտղաբերության ցուցանիշի հնարավոր փոփոխությունը:

8.1 ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾ

ՀԺԱՀ 2005-ի ընթացքում կանանց տրվել են հարցեր իրենց վերարտադրողական ցանկությունների վերաբերյալ: Աղյուսակ 8.1-ը և Գծապատկեր 8.1-ը ներկայացնում են հարցման պահին ամուսնացած կանանց հետագա վերարտադրողական ցանկություններն ըստ կենդանի երեխաների թվաքանակի (ներառյալ հարցման պահին հղիությունը): Հայաստանի ամուսնացած կանանց մեծամասնությունը ցանկանում է վերահսկել իր հետագա պտղաբերությունը: Կանանց 70 տոկոսը և տղամարդկանց 62 տոկոսը հայտնել են, որ այլևս երեխա ունենալ չեն ցանկանում: Վերարտադրողականությունը սահմանափակելու ցանկությունը նկատելիորեն աճում է կենդանի երեխաների թվաքանակի աճին զուգընթաց: Օրինակ՝ երեխա չունեցող ամուսնացած կանանց մեծամասնությունը ցանկանում է երեխա


Աղյուսակ 8.1 Ծնելիության հետագա վերարտադրողական ցանկություններն ըստ կենդանի երեխաների թվաքանակի						
Հարցման պահին ամուսնացած կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հետագա վերարտադրողական ցանկությունների և կենդանի երեխաների թվաքանակի, Հայաստան 2005						
Երեխա ունենալու հետ կապված ցանկություններ	Կենդանի երեխաների թվաքանակ ¹					Ընդամենը
	0	1	2	3	4+	
ԿԱՆԱՅՔ						
Երեխա ունենալ շուտով ²	76.4	19.9	4.9	0.8	2.2	8.8
Երեխա ունենալ հետագայում ³	1.1	44.7	7.6	0.7	1.0	10.8
Երեխա ունենալ, չգիտի, թե երբ	7.7	8.2	1.8	0.8	0.0	2.6
Չի որոշել	1.2	4.6	3.3	1.6	1.2	2.8
Չի ցանկանում այլևս ոչ մի երեխա	0.9	18.2	78.9	89.8	90.6	70.1
Ստերիլացված է ⁴	0.0	0.0	0.3	1.5	0.5	0.6
Անպտուղ է	12.5	4.2	2.9	4.8	4.5	4.1
Տվյալ չկա	0.3	0.0	0.4	0.1	0.0	0.2
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ	159	624	1,923	1,076	263	4,044
ՏՂԱՄԱՐԴԻԿ						
Երեխա ունենալ շուտով ²	(79.0)	26.6	7.6	1.7	(0.0)	13.1
Երեխա ունենալ հետագայում ³	(8.8)	42.6	5.6	2.6	(4.4)	11.5
Երեխա ունենալ, չգիտի, թե երբ	(4.7)	3.9	2.7	1.4	(0.0)	2.6
Չի որոշել	(0.6)	10.0	11.7	5.8	(3.4)	8.9
Չի ցանկանում այլևս ոչ մի երեխա	(2.3)	13.8	71.3	86.4	(89.5)	62.0
Ստերիլացված է ⁴	(0.0)	1.9	0.0	0.4	(0.0)	0.4
Անպտուղ է	(2.3)	1.1	1.2	1.6	(0.6)	1.3
Տվյալ չկա	(2.2)	0.0	0.0	0.0	(2.2)	0.2
Ընդամենը	(100.0)	100.0	100.0	100.0	(100.0)	100.0
Տղամարդկանց թվաքանակ	45	144	386	200	41	815

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:
¹ Ներառում է կանանց, ովքեր հղի են եղել հարցման պահին
² Ցանկանում է երեխա ունենալ հաջորդ երկու տարիների ընթացքում
³ Ցանկանում է հետաձգել երեխա ունենալն երկու և ավելի տարով
⁴ Ներառում է և՛ տղամարդու, և՛ կնոջ ստերիլացումը

ունենալ և նրանց երեք քառորդը պատասխանել է, որ ուզում է երեխա ունենալ մոտ ապագայում: Մյուս կողմից, երկու երեխա ունեցող կանանց 79 և երեք երեխա ունեցող կանանց 90 տոկոսը նշել են, որ այլևս չեն ուզում երեխա ունենալ:

Ընդհանուր առմամբ, տղամարդկանց և կանանց վերարտադրողական նպատակները համընկնում է: Այնուամենայնիվ, ի տարբերություն կանանց, ավելի փոքր թվով տղամարդիկ են պատասխանել, որ այլևս չեն ուզում երեխա ունենալ (համապատասխանաբար՝ 62 և 70 տոկոս):

Գծապատկեր 8.1 Հարցման պահին ամուսնացած կանանց և տղամարդկանց շրջանում երեխա ունենալու ցանկություն



ՀԺԱԴ-2005

2000թ-ից ի վեր փոքր ինչ փոխվել են հետազայում երեխաներ ունենալու մտադրությունները: Ամուսնացած կանանց մասնաբաժինը, ովքեր եղել են ամուսնացած (ստերիլացված) կան նշել են, որ այլևս չեն ցանկանում երեխա ունենալ՝ նվազել է 2000թ-ին արձանագրված 74 տոկոս ցուցանիշից, մինչև 2005թ-ի՝ 71 տոկոս ցուցանիշը:

Աղյուսակ 8.2-ը ներկայացնում է հարցման պահին ամուսնացած, կենդանի երեխաներ ունեցող և հետազայում երեխա ունենալ չցանկացող կանանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների: Ի տարբերություն գյուղաբնակ կանանց, քաղաքաբնակ կանայք ավելի հակված են սահմանափակել հետազայում երեխա ունենալու ցանկությունը (համապատասխանաբար՝ 69 և 74 տոկոս): Կնոջ կրթական մակարդակի և երեխա ունենալու ցանկության միջև կապը հստակ չէ: Սակայն, գոյություն ունի բացասական կախվածություն կնոջ բարեկեցության մակարդակի և հետազայում երեխա ունենալու ցանկության միջև: Երկու և ավելի երեխա ունեցող, բարեկեցության ավելի բարձր խմբի կանայք ավելի հակված են սահմանափակել երեխա ունենալու ցանկությունը, քան բարեկեցության առավել ցածր մակարդակում գտնվող կանայք:

Աղյուսակ 8.2 Ծնելիությունը սահմանափակելու ցանկություն

15-49 տարեկան ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր այլևս չեն ցանկանում ունենալ երեխա ըստ կենդանի երեխաների թվաքանակի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կենդանի երեխաների թվաքանակ ¹					Ընդամենը
	0	1	2	3	4+	
Բնակավայր						
Քաղաքային	0.5	17.7	79.6	91.8	95.1	68.5
Գյուղական	1.4	19.5	78.3	90.8	89.0	74.1
Մարզ						
Երևան	(0.0)	17.6	81.2	94.5	*	67.7
Արագածոտն	*	(22.1)	75.8	92.0	(80.7)	73.0
Արարատ	*	15.4)	69.7	85.5	(74.0)	64.9
Արմավիր	*	(23.0)	81.0	93.7	(94.9)	77.3
Գեղարքունիք	*	(20.0)	82.3	95.1	(96.5)	77.3
Լոռի	*	(18.7)	81.8	84.9	*	72.9
Կոտայք	*	19.8	73.1	93.0	(90.4)	68.3
Շիրակ	*	16.0	80.4	88.3	*	71.4
Սյունիք	*	10.0	71.3	91.4	*	68.0
Վայոց ձոր	*	(4.5)	72.8	85.1	(80.4)	66.5
Տավուշ	*	(29.5)	81.8	90.5	(100.0)	78.8
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	*	(33.7)	71.4	89.1	(80.1)	67.9
Միջնակարգ ընդհանուր	0.9	14.8	79.2	90.2	93.1	73.8
Միջին մասնագիտական	(0.0)	16.9	81.0	92.1	90.5	72.0
Բարձրագույն	(2.2)	19.4	77.9	94.1	*	63.1
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	(0.0)	27.0	79.1	90.5	87.3	74.6
Ցածր	(0.0)	17.2	77.0	90.7	86.3	72.8
Միջին	(5.0)	22.4	82.3	88.9	99.4	73.5
Բարձր	(0.0)	17.7	76.7	92.4	(100.0)	65.7
Ամենաբարձր	(0.0)	11.0	80.3	95.7	*	67.4
Ընդամենը	0.9	18.2	79.2	91.3	91.0	70.7

Նշում՝ Այն կանայք, ովքեր եղել են ստերիլացված, համարվել է, որ այլևս չեն ցանկանում երեխա ունենալ: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են մինչև 25 չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

¹Ներառում է հարցման պահին հղիներին

8.2 ԸՆՏԱՆԻՔԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Վերարտադրողական առողջությամբ զբաղվող կազմակերպությունների նպատակներից է բացահայտել բնակչության մեջ այն կանանց թվաքանակը, ովքեր ընտանիքի պլանավորման ծառայություններից օգտվելու և հակաբեղմնավորման մեթոդների կարիք ունեն: Հարցման պահին վերարտադրողական տարիքի ամուսնացած կանայք, ովքեր չեն ցանկանում այլևս երեխա ունենալ կամ ցանկանում են սպասել առնվազն երկու տարի մինչև հաջորդ երեխա ունենալը, սակայն չեն օգտագործում հակաբեղմնավորման որևէ մեթոդ, համարվում են ընտանիքի պլանավորման հարցում *չբավարարված պահանջ ունեցողներ*¹: Հարցման պահին հակաբեղմնավորման մեթոդներ օգտագործողները համարվում են ընտանիքի պլանավորման հարցում *բավարարված պահանջ ունեցողներ*: Ընտանիքի պլանավորման *ընդհանուր պահանջարկն* իրենից ներկայացնում է ընտանիքի պլանավորման հարցում բավարարված և չբավարարված պահանջ ունեցողների հանրագումարը:

¹ Հաշվարկի ճշգրիտ նկարագրության համար, տես աղյուսակ 8.3-ի 1-ին նշումը:

Աղյուսակ 8.3 Ընտանիքի պլանավորման պահանջարկ

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսը, ովքեր չեն բավարարել ընտանիքի պլանավորման պահանջը, ովքեր բավարարել են ընտանիքի պլանավորման պահանջը և բավարարված պահանջարկի տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

	Ընտանիքի պլանավորման չբավարարված պահանջ ¹			Ընտանիքի պլանավորման բավարարված պահանջ (հարցման պահին օգտագործող) ²			Ընտանիքի պլանավորման ընդհանուր պահանջարկ ³			Բավարարված տոկոս	Կանանց թվաքանակ
	Չենտոծոբել	Սահմանափակելի	Ընդամենը	Չենտոծոբել	Սահմանափակելի	Ընդամենը	Չենտոծոբել	Սահմանափակելի	Ընդամենը		
Հիմնական բնութագրիչներ											
Տարիք											
15-19	19.2	0.0	19.2	14.6	1.9	16.5	33.8	1.9	35.7	46.1	78
20-24	13.3	6.1	19.4	27.9	15.0	42.9	42.1	21.1	63.3	69.3	504
25-29	5.8	12.2	18.0	24.0	37.7	61.7	30.7	50.2	80.9	77.8	695
30-34	2.5	9.8	12.3	13.8	53.5	67.3	16.3	63.4	79.7	84.5	601
35-39	0.9	10.6	11.5	7.3	55.1	62.4	8.2	65.7	73.9	84.5	602
40-44	0.1	11.6	11.7	1.5	54.4	55.9	1.6	66.2	67.8	82.8	824
45-49	0.2	7.8	8.0	0.3	33.2	33.5	0.5	41.0	41.5	80.8	741
Բնակավայր											
Քաղաքային	3.3	7.9	11.2	13.3	40.9	54.3	17.0	48.8	65.8	83.0	2,447
Գյուղական	4.0	12.5	16.5	8.4	42.9	51.2	12.6	55.6	68.2	75.8	1,597
Մարզ											
Երևան	3.0	5.8	8.8	16.0	42.5	58.5	19.3	48.3	67.6	87.0	1,362
Արագածոտն	2.4	8.3	10.7	11.2	42.4	53.6	13.7	50.7	64.4	83.4	196
Արարատ	4.4	10.8	15.3	7.2	33.9	41.1	11.6	44.7	56.4	72.9	307
Արմավիր	1.1	10.4	11.6	10.1	47.7	57.8	11.8	58.6	70.4	83.6	381
Գեղարքունիք	6.5	22.4	28.8	4.9	36.1	41.0	11.7	58.5	70.2	59.0	303
Լոռի	4.0	14.1	18.2	8.1	43.3	51.4	12.1	57.5	69.6	73.9	343
Կոտայք	3.4	10.8	14.2	12.2	36.7	48.9	16.1	47.9	63.9	77.9	357
Շիրակ	5.2	8.4	13.6	4.6	37.0	41.7	10.1	45.4	55.5	75.5	357
Սյունիք	3.9	8.2	12.1	14.3	47.1	61.4	19.0	55.3	74.3	83.7	189
Վայոց ձոր	3.5	3.6	7.1	13.5	53.4	66.9	17.3	57.1	74.3	90.4	65
Տավուշ	3.8	11.7	15.6	11.3	50.9	62.2	15.3	62.9	78.2	80.1	184
Կրթություն											
Հիմնական ընդհանուր	4.5	13.8	18.4	8.2	33.3	41.6	12.7	48.0	60.8	69.8	235
Միջնակարգ ընդհանուր	3.3	11.2	14.5	9.3	43.0	52.3	12.8	54.4	67.2	78.4	1,629
Միջին մասնագիտական	2.8	9.4	12.2	11.2	41.3	52.5	14.2	50.7	64.9	81.1	1,353
Բարձրագույն	5.1	5.9	11.0	16.6	42.2	58.8	22.3	48.1	70.4	84.3	828
Բարեկեցության մակարդակ											
Ամենացածր	3.6	12.2	15.7	7.6	43.2	50.8	11.2	55.6	66.8	76.4	764
Ցածր	3.6	11.0	14.6	8.7	39.8	48.4	12.8	51.0	63.8	77.0	809
Միջին	3.8	10.2	14.0	7.6	43.5	51.1	11.5	53.8	65.3	78.6	788
Բարձր	3.7	8.5	12.2	14.8	39.9	54.7	18.7	48.4	67.1	81.8	841
Ամենաբարձր	3.2	6.8	10.0	17.5	42.3	59.8	21.2	49.2	70.4	85.8	842
Ընդամենը	3.6	9.7	13.3	11.4	41.7	53.1	15.2	51.5	66.7	80.1	4,044

Հղիության և ծննդաբերության ընթացքում կնոջ ստացած բուժօգնությունը կարևոր է ինչպես մոր, այնպես էլ մանկան գոյատևման և առողջության համար: Նախածննդյան (անտենատալ) խնամքը նկարագրվում է համաձայն նախածննդյան հսկողությունն իրականացնող անձի, բժշկին նախածննդյան այցելությունների քանակի, առաջին անգամ այցելության ժամանակ հղիության ժամկետի, այցելությունների ընդհանուր թվի, ինչպես նաև նախածննդյան հսկողության ընթացքում տրամադրվող ծառայությունների և հղի կնոջը տրվող տեղեկատվության:

Նախածննդյան խնամքն իրականացնող անձ

Աղյուսակ 10.1-ը տվյալներ է ներկայացնում նախածննդյան խնամք և բուժօգնություն տրամադրողների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց 93 տոկոսն առնվազն մեկ անգամ ստացել է նախածննդյան խնամք բժշկի (90 տոկոս) կամ բուժքրոջ, մանկաբարձուհու (3 տոկոս) կողմից (Գծապատկեր 10.1): Քաղաքային բնակավայրերում նախածննդյան խնամքի և բուժօգնության 94 տոկոսն իրականացվել է բժիշկների և 2 տոկոսը՝ բուժքույրերի կամ որակավորված



մանկաբարձուհիների կողմից: Գյուղական բնակավայրերի կանանց 83 տոկոսը ստացել է նախածննդյան խնամք բժշկի, իսկ 6 տոկոսը՝ բուժքրոջ կամ որակավորված մանկաբարձուհու կողմից:

Գրեթե բոլոր նարգերում, նվազագույնը տասից ինը կին ստացել է նախածննդյան խնամք և բուժօգնություն որակավորված բուժաշխատողի կողմից: Այնուամենայնիվ, Շիրակի միայն 78, իսկ Գեղարքունիքի 74 տոկոս մայրերն են ստացել նախածննդյան որակյալ բուժսպասարկում (բժշկի, բուժքրոջ կամ մանկաբարձուհու կողմից):

ՀԺԱՀ 2000-ից ի վեր՝ վերջին հինգ տարիների ընթացքում, տեղի է ունեցել նախածննդյան խնամքի ոլորտում ընդգրկվածության նշանակալի փոփոխություն: Բժշկի կողմից մատուցված նախածննդյան խնամք և բուժօգնություն ստացածների տոկոսն աճել է 84-ից մինչև 90, իսկ բուժքրոջ կամ որակավորված մանկաբարձուհու կողմից ստացած նախածննդյան խնամքի և բուժօգնության ցուցանիշը նվազել է 9 տոկոսից մինչև 3 տոկոս:

Աղյուսակ 10.1 Նախածննդյան խնամք

Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին հղիության ընթացքում նախածննդյան խնամք իրականացնող անձի համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Բժիշկ	Բուժքույր/ մանկաբարձուհի	Այլ	Ոչ մեկը	Տվյալ չկա	Ընդամենը	Կանանց թվաքանակ
Տարիքը ծննդաբերության ժամանակ							
15-19	86.6	3.4	0.5	9.5	0.0	100.0	111
20-34	90.3	3.4	0.2	5.6	0.5	100.0	991
35-49	88.2	0.2	0.0	11.7	0.0	100.0	74
Ծնունդների հերթականություն							
1	94.2	3.1	0.2	2.5	0.0	100.0	455
2-3	88.9	3.6	0.2	6.9	0.3	100.0	638
4+	73.2	0.7	0.0	22.8	3.4	100.0	82
Բնակավայր							
Քաղաքային	93.7	1.9	0.1	4.2	0.1	100.0	736
Գյուղական	83.4	5.5	0.4	9.9	0.9	100.0	440
Մարզ							
Երևան	95.4	1.8	0.0	2.8	0.0	100.0	456
Արագածոտն	92.8	0.8	0.0	6.4	0.0	100.0	59
Արարատ	87.3	5.6	0.0	7.1	0.0	100.0	102
Արմավիր	88.9	4.0	0.5	6.6	0.0	100.0	95
Գեղարքունիք	65.9	8.0	0.0	24.4	1.7	100.0	87
Լոռի	83.0	9.7	1.5	5.8	0.0	100.0	76
Կոտայք	96.6	0.0	0.0	2.3	1.2	100.0	104
Շիրակ	76.7	1.7	0.9	18.8	1.8	100.0	72
Սյունիք	95.7	2.2	0.0	1.1	0.9	100.0	50
Վայոց ձոր	88.1	6.7	3.2	1.9	0.0	100.0	16
Տավուշ	93.4	2.7	0.0	4.0	0.0	100.0	61
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	79.9	1.8	0.0	16.4	1.8	100.0	99
Միջնակարգ ընդհանուր	87.2	2.8	0.3	9.1	0.6	100.0	442
Միջին մասնագիտական	91.8	3.4	0.4	4.3	0.0	100.0	359
Բարձրագույն	95.0	4.1	0.0	0.9	0.0	100.0	276
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	80.9	3.7	0.2	13.3	1.9	100.0	212
Ցածր	83.2	4.3	0.8	11.5	0.2	100.0	229
Միջին	91.8	3.4	0.2	4.6	0.0	100.0	224
Բարձր	93.5	3.6	0.0	2.9	0.0	100.0	265
Ամենաբարձր	98.0	1.2	0.0	0.8	0.0	100.0	245
Ընդամենը	89.8	3.2	0.2	6.3	0.4	100.0	1,176

Նշում՝ Եթե նշվել է նախածննդյան խնամք իրականացնող մի քանի անձ, ապա այս աղյուսակում ներկայացվել է ամենաբարձր որակավորում ունեցող մասնագետը:

Նախածննդյան խնամք ստանալու նպատակով այցելությունների թիվը և ժամկետները

Հղիության և ծննդաբերության բարդությունների կանխարգելման և բարեհաջող ծննդաբերության գրավականն են որակյալ նախածննդյան խնամքը, բավարար այցելությունների թիվը, առաջին այցելության ժամկետը: Ժամկետի առումով, ՀՀ ԱՆ-ի կողմից առաջարկվում է առաջին անգամ դիմել նախածննդյան բուժօգնության մինչև հղիության 12-րդ շաբաթը: ՀՀ ԱՆ-ն ընդունել է ԱՀԿ-ի կողմից նորմալ ընթացող հղիության համար առաջարկվող նախածննդյան բուժօգնության 4-6 այցելությունների, իսկ բարդությունների դեպքում առանց այցերի սահմանափակման ուղեցույցը:

Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց 71 տոկոսը կատարել է առնվազն 4 նախածննդյան այցելություն (Աղյուսակ 10.2) իրենց վերջին ծննդաբերության ժամանակ: Նշանակալի տարբերություն կա քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև: Ի տարբերություն քաղաքաբնակ կանանց 82 տոկոսի, գյուղաբնակ կանանց միայն 53 տոկոսն է կատարել չորսից ավելի այցելություն:

Ընդհանուր առմամբ, քաղաքաբնակ կանայք իրենց առաջին նախածննդյան խնամքը ստանում են ավելի շուտ, քան գյուղաբնակ կանայք: Քաղաքաբնակ կանանց կեսից ավելին (51 տոկոս) ստացել են նախածննդյան խնամք իրենց հղիության առաջին չորս ամիսների ընթացքում, ի տարբերություն գյուղաբնակ կանանց 43 տոկոսի: Այնուամենայնիվ, շատ չնչին է տարբերությունը քաղաքաբնակ և գյուղաբնակ կանանց առաջին այցելության ժամանակ հղիության ամիսների մեդիանների միջև (համապատասխանաբար՝ 4.0 և 4.1 ամիս):

Նախածննդյան խնամքի բովանդակություն

Այցելությունների ժամանակ տրամադրված նախածննդյան բուժօգնության ծավալի որոշումը կարևոր է նախածննդյան բուժօգնության ծառայությունների գնահատման համար: Հայաստանում նախածննդյան բուժօգնությունը պետք է ներառի անհրաժեշտ հետազոտությունների որոշակի ծավալ, որից կանանց տրվել են հարցեր հետևյալ հետազոտությունների վերաբերյալ՝ արյան, մեզի ընդհանուր քննություն, հեշտոցի քսուկի բակտերիոսկոպիկ քննություն, հասակ-քաշի և արյան ճնշման չափում: Հավելյալ

Աղյուսակ 10.2 Նախածննդյան խնամքի այցելությունների թիվ և առաջին այցի ժամկետ

Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին երեխայի դեպքում նախածննդյան խնամքի այցելությունների թվի, առաջին նախածննդյան խնամքի այցի ժամկետի, նախածննդյան խնամք ստացածների շրջանում առաջին նախածննդյան խնամքի այցի ժամանակ հղիության ամիսների թվի մեդիանի, համաձայն բնակավայրի, Հայաստան 2005

Նախածննդյան խնամքի այցելությունների թիվ	Բնակավայր		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
Նախածննդյան խնամքի այցելությունների թիվ			
Ոչ մի	4.2	9.9	6.3
1	1.9	4.6	2.9
2-3	11.8	28.5	18.1
4+	81.6	53.0	70.9
Զգիտի/Տվյալ չկա	0.4	4.0	1.7
Ընդամենը	100.0	100.0	100.0
Առաջին նախածննդյան խնամքի այցի ժամանակ հղիության ամիսների թիվ			
Զի ստացել նախածննդյան խնամք			
<4	4.2	9.9	6.3
4-5	51.4	42.9	48.2
6-7	35.1	39.3	36.6
8+	7.5	4.4	6.4
Զգիտի/Տվյալ չկա	1.6	0.5	1.2
Ընդամենը	100.0	100.0	100.0
Կանանց թվաքանակ			
Առաջին նախածննդյան խնամքի այցի ժամանակ հղիության ամիսների թվի մեդիան (նախածննդյան խնամք ստացածների շրջանում)	4.0	4.1	4.0
Նախածննդյան խնամք ստացած կանանց թվաքանակ			
	704	393	1,097

հետազոտություններ կատարվում են հիվանդ կամ հղիության բարձր ռիսկի խմբում գտնվող կանանց:

Աղյուսակ 10.3 Նախածննդյան խնամքի բովանդակություն

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսը, ովքեր վերջին երեխայով հղիության ժամանակ ստացել են նախածննդյան խնամք (ՆԽ), ըստ նախածննդյան խնամքի բովանդակության, ինչպես նաև հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսը, ովքեր վերջին երեխայով հղիության ժամանակ ստացել են երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանայք, որոնց վերջին երեխայով հղիության ժամանակ կատարվել են նախածննդյան խնամքի հետևյալ միջոցառումները՝					Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանայք		
	Տեղեկացվել է հղիության բարդությունների մասին	Կշռվել է ծնունդը	Հափվել է արյան թմբուկը	Կատարվել է մեզի կաթաբերություն	Կատարվել է արյան քննություն	ՆԽ ստացած կանանց թվաքանակ	Երկաթ պարունակող հաբ կամ օշարակ ստացածների տոկոս	Կանանց թվաքանակ
Տարիքը ծննդաբերության ժամանակ								
15-19	45.0	94.6	93.7	95.6	95.6	100	15.0	111
20-34	44.8	98.6	98.9	98.5	98.7	931	18.6	991
35-49	68.4	100.0	100.0	100.0	100.0	65	12.5	74
Հերթական ծնունդ								
1	46.3	98.6	98.5	99.2	99.2	444	18.9	455
2-3	44.6	98.1	98.4	97.7	97.9	592	17.9	638
4+	61.6	98.2	100.0	98.2	98.2	61	12.4	82
Բնակավայր								
Քաղաքային	50.7	99.4	99.2	99.1	99.4	704	21.1	736
Գյուղական	38.2	96.4	97.3	97.1	96.7	393	12.7	440
Մարզ								
Երևան	54.0	99.3	99.1	98.8	99.3	443	23.3	456
Արագածոտն	51.6	88.5	93.0	94.8	92.5	55	21.7	59
Արարատ	7.6	100.0	100.0	100.0	100.0	94	8.6	102
Արմավիր	52.3	99.5	99.5	100.0	100.0	89	11.0	95
Գեղարքունիք	64.5	93.0	93.0	93.0	93.0	64	10.4	87
Լոռի	41.4	98.4	98.4	98.4	98.4	71	32.1	76
Կոտայք	51.8	98.9	99.1	100.0	100.0	100	16.2	104
Շիրակ	14.1	100.0	100.0	98.9	98.9	57	8.1	72
Սյունիք	48.3	100.0	100.0	100.0	100.0	49	8.6	50
Վայոց ձոր	23.7	100.0	100.0	100.0	100.0	15	17.3	16
Տավուշ	47.6	97.5	97.5	94.0	94.5	58	15.3	61
Կրթություն								
Հիմնական ընդհանուր	41.9	94.8	94.8	92.6	92.6	81	5.5	99
Միջնակարգ ընդհանուր	42.7	97.3	98.0	98.3	98.0	399	14.3	442
Միջին մասնագիտական	44.7	99.3	99.6	99.3	99.3	343	16.9	359
Բարձրագույն	54.7	99.7	99.0	99.0	99.9	273	29.6	276
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	37.1	94.4	95.7	95.1	94.5	180	11.7	212
Ցածր	40.6	99.2	99.3	99.0	99.0	202	13.6	229
Միջին	45.1	97.5	97.6	98.2	98.2	214	16.6	224
Բարձր	46.4	100.0	100.0	100.0	100.0	258	18.8	265
Ամենաբարձր	58.6	99.5	99.2	98.6	99.5	243	27.5	245
Ընդամենը	46.2	98.3	98.5	98.4	98.5	1,097	17.9	1,176

Ի վերջո, նախածննդյան խնամքը ներառում է հղի կանանց առողջության հարցերի վերաբերյալ իրազեկում, ինչն իր հերթին տեղեկացնում է նրանց հղիության բարդությունների վերաբերյալ:

Աղյուսակ 10.3-ը ներկայացնում է տվյալներ այն կանանց վերաբերյալ, ովքեր տեղեկացված են եղել հղիության բարդությունների նախանշանների մասին և հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում ունեցած իրենց վերջին հղիության ժամանակ ստացել են ընթացիկ նախածննդյան բուժօգնություն ըստ հիմնական բնութագրիչների: Նախածննդյան խնամքն ապահովող վերոնշյալ միջոցառումները կատարվում են հղիության բարդությունների վաղ ախտորոշման նպատակով, ինչը կարևոր է մայրական ու մանկական հիվանդացության և մահացության նվազեցման համար:

Ընդհանուր առմամբ, հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած Հայաստանի գրեթե բոլոր կանանց կատարվել են վերոնշյալ միջոցառումները: Այնուամենայնիվ, այդ կանանց կեսից փոքր մասն է եղել տեղեկացված հղիության բարդությունների նախանշանների մասին: Հղիության բարդությունների նախանշանների մասին իրազեկ կանանց թվաքանակը նվազել է ՀԺԱՀ-2000-ի 57 տոկոսից մինչև ՀԺԱՀ-2005-ի՝ 46 տոկոս: Արարատի և Շիրակի մարզերի կանայք ամենաքիչն են տեղեկացված եղել հղիության բարդությունների նախանշանների մասին (համապատասխանաբար՝ 8 և 14 տոկոս):

Ի տարբերություն այլ կանանց, տարիքով ավելի մեծ և քաղաքային բնակավայրերի փոքր ինչ ավելի մեծ թվով կանայք են ստացել վերոնշյալ բոլոր հատուկ միջոցառումները: Առավել բարձր կրթական մակարդակ ունեցող և բարեկեցության բարձր խմբի կանանց շրջանում փոքր ինչ ավելի տարածված է նախածննդյան վերոնշյալ բոլոր հատուկ միջոցառումների ստանալը, մասնավորապես հղիության բարդությունների մասին տեղեկացվածությունը, քան ցածր կրթական մակարդակ ունեցող և ցածր բարեկեցության խմբում գտնվող կանանց շրջանում:

Երկաթի հավելումներ

Մայրերին խորհուրդ է տրվում հղիության ընթացքում ընդունել երկաթ պարունակող հավելումներ, քանզի մոր սակավարյունությունը կարող է հանդիսանալ ինչպես մայրական, այնպես էլ նորածնային մահացության լուրջ պատճառ: Աղյուսակ 10.3-ը ցույց է տալիս, որ մայրերի 18 տոկոսը հղիության ընթացքում ստացել են երկաթ պարունակող հավելումներ: Ինչպես ակնկալվում էր ցուցանիշները տատանվում են ըստ կրթական մակարդակի և բնակավայրերի: Քաղաքաբնակ մայրերն ավելի հակված են ընդունել երկաթ պարունակող հավելումներ, քան գյուղաբնակ մայրերը (համապատասխանաբար՝ 21 և 13 տոկոս): Հղիության ընթացքում երկաթ պարունակող հավելումներ ստացած կանանց մասնաբաժինը նշանակալիորեն աճում է կրթական մակարդակին զուգահեռ՝ հիմնական ընդհանուր կրթական մակարդակ ունեցող կանանց 6 տոկոսից, մինչև բարձրագույն կրթական մակարդակ ունեցող կանանց 30 տոկոսը:

Հարկ է նշել, որ հնարավոր է հղի կանայք ստացել են պոլիվիտամիններ, որոնք պարունակում են երկաթ, սակայն հետազոտության ժամանակ չեն նշել այն, որպես երկաթի հավելում:

10.2 ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԾՆՆՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ծննդաբերության ժամանակ հիգիենիկ պայմանների և որակյալ բուժանձնակազմի առկայությունը նվազեցնում են վարակների վտանգը և ապահովում ծննդաբերության ընթացքում հնարավոր բարդությունների արդյունավետ կանխարգելումը: ՀԺԱՀ-2005-ի արդյունքում հավաքագրվել է տեղեկատվություն նախորդող հինգ տարիների ընթացքում ծնված երեխաների ծննդյան վայրի, ինչպես նաև ծնունդն ընդունած բժշկական անձնակազմի վերաբերյալ:

Աղյուսակ 10.4-ը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր ծնունդները (97 տոկոս) տեղի են ունեցել բուժհաստատությունում: Տանը տեղի ունեցած ծննդաբերությունների տոկոսը նվազել է ՅՄԱՅ-2000-ին արձանագրված 9 տոկոսից, մինչև ՅՄԱՅ-2005-ի 2 տոկոսը: Տնային պայմաններում տեղի ունեցած ծննդաբերություններն առավել տարածված են բարձր հերթական կարգի, գյուղական բնակավայրերի, ցածր կրթական մակարդակ ունեցող կանանց և բարեկեցության ցածր խմբում գտնվող կանանց ծնունդների շրջանում: Տնային պայմաններում ծննդաբերության ամենաբարձր տոկոսը գրանցվել է նախածննդյան խնամք չստացած կանանց շրջանում (18 տոկոս):

Տնային պայմաններում ծննդաբերությունների նշանակալի տարբերություններ են նկատվում ըստ մարզերի: Գրեթե բոլոր մարզերում տնային պայմաններում ծննդաբերությունների տոկոսը չի գերազանցում մեկ տոկոսը, մինչդեռ, Գեղարքունիքում այն կազմել է 14, իսկ Արագածոտնում՝ 11 տոկոս: Գեղարքունիքում տեղի ունեցած տնային ծննդաբերությունների բարձր տոկոսը բացատրվում է բազմաթիվ հանգամանքներով, մասնավորապես՝ մարզում ձևավորված՝ տանը ծննդաբերելու ավանդույթը, հեռավորությունը մինչև բուժհաստատություն, դրամի սղությունը, Ադրբեջանից փախստականների մեծ տեսակարար կշիռը: Հարկ է նշել, որ Գեղարքունիքի մարզում տեղի են ունեցել մեծ բարեփոխումներ, քանզի տնային պայմաններում ծննդաբերության ցուցանիշը նվազել է ՅՄԱՅ-2000-ին արձանագրված 41 տոկոսից, 2005թ-ին կազմելով 14 տոկոս:

Հայաստանում ծնունդների ընդունումը բուժանձնակազմի կողմից գրեթե համընդհանուր է (Աղյուսակ 10.5): Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում կենդանի ծնունդների 98 տոկոսն ընդունվել է բժշկի (93 տոկոս), բուժքրոջ կամ որակավորված մանկաբարձուհու (4 տոկոս) կողմից: Առկա են նշանակալի տարբերություններ ըստ մարզերի: Օրինակ՝ Գեղարքունիքում ծնունդների 71 տոկոսն է ընդունվել բժշկի կողմից, իսկ Սյունիքում՝ 98 տոկոսը: Բուժքրոջ և մանկաբարձուհու մասնակցությունը ծննդաբերությանը գերակշռում է Գեղարքունիքում և Վայոց ձորում (համապատասխանաբար՝ 20 և 17 տոկոս):

Աղյուսակ 10.5-ը նաև ցույց է տալիս կեսարյան հատումով ծննդաբերությունների վերաբերյալ տվյալներ: Ըստ ԱՀԿ-ի կեսարյան հատումով ծննդաբերությունների ցուցանիշը չպետք է գերազանցի 10 տոկոսը: Հայաստանում, ծնունդների 9 տոկոսը կատարվել են կեսարյան հատմամբ: Կեսարյան հատումների մասնաբաժինն աճում է կնոջ տարիքին, կրթության և բարեկեցության մակարդակին զուգընթաց: Վերջին ծննդաբերությունները (առաջին հերթական կարգի ծնունդներ) ավելի շատ են կատարվել կեսարյան հատմամբ, քան մյուս հերթական կարգերի ծնունդների դեպքում: Քաղաքաբնակ կանանց շրջանում ավելի տարածված է եղել կեսարյան հատմամբ ծնունդները: Կեսարյան հատմամբ ծննդաբերությունների տոկոսը տատանվում է Գեղարքունիքի 1 տոկոս ցուցանիշից, մինչև Տավուշի 14 և Լոռու 15 տոկոս ցուցանիշները:

Աղյուսակ 10.4 Ծննդաբերության վայր

Հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերության վայրի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Բուժաստատություն				Տվյալ չկա	Ընդամենը	Ծնունդների թվաքանակ
	Պետական հատված	Մասնավոր հատված	Տուն	Այլ			
Մոր տարիքը ծննդաբերության ժամանակ							
15-19	98.6	0.8	0.6	0.0	0.0	100.0	190
20-34	95.3	0.7	2.3	0.3	1.4	100.0	1,241
35-49	95.7	0.0	4.3	0.0	0.0	100.0	82
Հերթական ծնունդ							
1	97.3	1.1	0.3	0.3	0.9	100.0	716
2-3	96.2	0.3	2.4	0.2	1.0	100.0	702
4+	80.5	0.0	15.8	0.0	3.7	100.0	94
Նև ալցելություններ¹							
Ոչ մի	80.5	0.0	17.8	1.6	0.0	100.0	75
1-3	98.2	0.0	1.8	0.0	0.0	100.0	247
4+	98.0	1.0	0.7	0.3	0.0	100.0	834
Բնակավայր							
Քաղաքային	97.6	1.0	0.2	0.2	1.0	100.0	930
Գյուղական	92.8	0.2	5.5	0.2	1.3	100.0	582
Մարզ							
Երևան	97.5	0.7	0.0	0.4	1.5	100.0	584
Արագածոտն	87.9	0.6	11.4	0.0	0.2	100.0	83
Արարատ	98.3	0.0	1.7	0.0	0.0	100.0	127
Արմավիր	97.4	0.0	1.2	0.0	1.5	100.0	125
Գեղարքունիք	84.2	0.0	13.5	1.0	1.2	100.0	120
Լոռի	97.5	0.0	2.5	0.0	0.0	100.0	96
Կոտայք	95.2	1.8	1.1	0.0	1.9	100.0	129
Շիրակ	96.0	1.8	0.7	0.0	1.4	100.0	90
Սյունիք	95.5	2.6	0.0	0.0	1.9	100.0	63
Վայոց ձոր	100.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	19
Տավուշ	100.0	0.0	0.0	0.0	0.0	100.0	75
Մոր կրթություն							
Հիմնական ընդհանուր	92.2	2.0	4.9	0.0	0.9	100.0	138
Միջնակարգ ընդհանուր	94.4	0.2	4.2	0.6	0.7	100.0	579
Միջին մասնագիտական	98.1	0.4	0.6	0.0	0.8	100.0	448
Բարձրագույն	96.4	1.3	0.0	0.0	2.3	100.0	347
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	86.5	0.4	9.9	0.4	2.7	100.0	286
Ցածր	97.1	0.3	1.5	0.0	1.1	100.0	294
Միջին	98.9	1.1	0.0	0.0	0.0	100.0	289
Բարձր	96.6	0.6	0.4	0.6	1.8	100.0	335
Ամենաբարձր	99.1	0.9	0.0	0.0	0.0	100.0	308
Ընդամենը	95.8	0.7	2.2	0.2	1.1	100.0	1,512

Լշում՝ Ընդամենում ներառված են նաև նրանք, ում մասին չկան տվյալներ:

¹ Ներառված են միայն վերջին հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած ամենավերջին կենդանի ծնունդները

Աղյուսակ 10.5 Աջակցություն ծննդաբերության ընթացքում

Հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների տոկոսային բաշխումն ըստ ծննդաբերության ընթացքում աջակցություն ցուցաբերած անձի և կեսարյան հատումով կատարված ծննդաբերությունների տոկոսը համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Բժիշկ	Բուժքույր/ մանկաբարձուհի	Այլ բուժաշխատող	Բարեկամ/ այլ	Չգիտի/ Տվյալ չկա	Ընդամենը	Կեսարյան հատումով ծննդաբերությունների տոկոս	Ծնունդների թվաքանակ
Մոր տարիքը ծննդաբերության ժամանակ								
15-19	94.6	5.4	0.0	0.0	0.0	100.0	2.1	190
20-34	93.3	4.2	0.8	0.2	1.5	100.0	8.7	1,241
35-49	92.8	4.7	0.0	2.5	0.0	100.0	28.5	82
Հերթական ծնունդ								
1	95.7	2.9	0.2	0.0	1.2	100.0	10.8	716
2-3	92.0	6.2	0.6	0.2	1.0	100.0	7.1	702
4+	86.8	1.6	4.4	3.6	3.7	100.0	8.7	94
Բնակավայր								
Քաղաքային	96.0	2.6	0.0	0.1	1.2	100.0	10.7	930
Գյուղական	89.2	7.1	1.6	0.7	1.3	100.0	6.1	582
Մարզ								
Երևան	97.1	1.1	0.0	0.0	1.8	100.0	11.2	584
Արագածոտն	94.8	3.5	0.0	1.6	0.2	100.0	7.5	83
Արարատ	94.9	4.5	0.4	0.0	0.0	100.0	4.5	127
Արմավիր	94.2	4.4	0.0	0.0	1.5	100.0	6.7	125
Գեղարքունիք	70.6	19.6	7.4	1.1	1.2	100.0	1.1	120
Լոռի	90.8	9.2	0.0	0.0	0.0	100.0	15.0	96
Կոտայք	94.9	2.1	0.0	1.1	1.9	100.0	9.6	129
Շիրակ	93.3	4.6	0.0	0.7	1.4	100.0	5.7	90
Սյունիք	98.1	0.0	0.0	0.0	1.9	100.0	8.1	63
Վայոց ձոր	83.5	16.5	0.0	0.0	0.0	100.0	5.5	19
Տավուշ	95.8	4.2	0.0	0.0	0.0	100.0	13.9	75
Մոր կրթություն								
Հիմնական ընդհանուր	89.7	5.7	2.6	1.0	0.9	100.0	3.0	138
Միջնակարգ ընդհանուր	92.3	5.1	1.0	0.6	1.0	100.0	5.9	579
Միջին մասնագիտական	94.8	4.4	0.0	0.0	0.8	100.0	10.1	448
Բարձրագույն	94.9	2.7	0.0	0.0	2.3	100.0	14.9	347
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	86.0	6.8	2.8	1.6	2.7	100.0	5.5	286
Ցածր	93.0	5.3	0.5	0.0	1.1	100.0	4.7	294
Միջին	94.0	6.0	0.0	0.0	0.0	100.0	10.3	289
Բարձր	93.6	4.0	0.0	0.0	2.4	100.0	9.8	335
Ամենաբարձր	99.9	0.1	0.0	0.0	0.0	100.0	14.0	308
Ընդամենը	93.4	4.4	0.6	0.3	1.3	100.0	9.0	1,512

Նշում՝ Եթե հարցվողը նշել է մեկից ավելի անձանց, ովքեր աջակցել են ծննդաբերության ընթացքում, աղյուսակում ներառվել են միայն ամենաբարձր որակավորում ունեցողները:

10.3 ՀԵՏԾՆՆԴՅԱՆ (պոստնատալ) ԽՆԱՄՔ

Հետծննդյան շրջանը ծննդաբերությունից անմիջապես հետո և դրան հաջորդող 42 օրվա ժամանակահատվածն է: Հետծննդյան խնամքը կարևոր է և՛ մոր, և՛ մանկան առողջության համար, քանզի պաշտպանում է նրանց ոչ միայն հետծննդյան շրջանում առաջացող բարդություններից, այլ նաև մորը տալիս է անհրաժեշտ և կարևոր տեղեկատվություն իր և իր մանկան ճիշտ խնամքի վերաբերյալ: Հետծննդյան խնամքը կարևոր է, քանի որ մեծամասամբ մայրական և նորածնային մահացությունը տեղի է ունենում ծննդաբերությանը հաջորդող առաջին մի քանի օրերի ընթացքում:

Աղյուսակ 10.6-ը ցույց է տալիս հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծննդաբերած կանանց վերջին ծնունդի ժամանակ հետծննդյան խնամքի վերաբերյալ տվյալներ: Տվյալները վկայում են, որ այդ կանանց 16 տոկոսը չի ստացել հետծննդյան որևէ զննում: Երիտասարդ, բարեկեցության բարձր խմբի և գյուղաբնակ կանայք ավելի քիչ են ստացել հետծննդյան խնամք, քան մյուս ենթախմբերի կանայք: Հետծննդյան խնամք ստանալու հավանականությունն աճում է կանանց կրթական և բարեկեցության մակարդակներին զուգընթաց: Օրինակ՝ ի տարբերություն միջին մասնագիտական և ավելի բարձր կրթական մակարդակ ունեցող 10 տոկոս կանանց, հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց 21 տոկոսը չի ստացել հետծննդյան խնամք: Ըստ մարզերի այս ցուցանիշը տատանվում է ամենաբարձրը 47 տոկոս՝ Արարատում, մինչև ամենացածրը 4 տոկոս՝ Արմավիրում:

Կանանց 79 տոկոսը հետևել է բժշկական ցուցումներին և բուժզննում անցել ծննդաբերությանը հաջորդող երկու օրերի ընթացքում: Սյունիքի մարզում այս ցուցանիշը կազմել է 94 տոկոս, մինչդեռ Արարատի մարզում՝ կանանց միայն 50 տոկոսն է ստացել հետծննդյան խնամք առաջարկված ժամկետներում:

Աղյուսակ 10.7-ը ներկայացնում է հարցմանը նախորդող հինգ տարվա ընթացքում վերջին ծննդի հետծննդյան խնամքն իրականացնող բուժաշխատողի մասին տեղեկատվություն: Ընդհանուր առմամբ, հետծննդյան խնամք ստացած 78 տոկոս կանանց զննումը կատարել է բժիշկը, իսկ 6 տոկոս կանանց զննումը՝ բուժքույրը կամ մանկաբարձուհին: Համեմատաբար մեծահասակ և քաղաքաբնակ կանանց շրջանում ավելի տարածված է հետծննդյան խնամքի ստացումը բժիշկների կողմից: Բժշկին դիմած կանանց տեսակարար կշիռն աճում է կրթական և բարեկեցության մակարդակներին զուգընթաց: Արմավիրի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի կանանց 90 տոկոսից ավելին ստացել է հետծննդյան խնամք բժշկի մոտ: Մյուս կողմից, այս ցուցանիշը Արարատի և Գեղարքունիքի մարզերում համապատասխանաբար կազմել է 53 և 56 տոկոս:

Աղյուսակ 10.6 Հետծննդյան առաջին բուժզննում

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին ծննդաբերության ժամանակ առաջին հետծննդյան բուժզննում ստանալու համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Հետծննդյան առաջին բուժզննում				Չգիտի/ Տվյալ չկա	Չի ստացել հետծննդյան խնամք ¹	Ընդամենը	Կանանց թվաքանակ
	4 ժամից քիչ	4-23 ժամվա ընթացքում	2 օրվա ընթացքում	3-41 օրվա ընթացքում				
Տարիքը ծննդաբերության ժամանակ								
15-19	60.1	17.7	4.3	1.9	0.0	16.0	100.0	111
20-34	56.0	22.6	2.0	1.3	1.7	16.4	100.0	991
35-49	73.4	16.4	0.6	0.0	1.1	8.5	100.0	74
Հերթական ծնունդ								
1	57.4	23.2	2.1	2.1	0.4	14.9	100.0	455
2-3	57.4	21.7	2.1	0.9	2.5	15.3	100.0	638
4+	58.0	14.5	2.4	0.0	0.0	25.2	100.0	82
Բնակավայր								
Քաղաքային	61.1	21.8	2.0	1.0	2.4	11.7	100.0	736
Գյուղական	51.3	21.7	2.4	1.8	0.0	22.8	100.0	440
Մարզ								
Երևան	61.2	22.1	2.4	0.9	2.9	10.6	100.0	456
Արագածոտն	48.1	20.0	5.3	5.7	0.5	20.4	100.0	59
Արարատ	39.8	9.8	0.0	2.7	0.6	47.0	100.0	102
Արմավիր	38.7	51.3	3.9	1.8	0.0	4.3	100.0	95
Գեղարքունիք	57.2	12.5	0.0	0.0	0.0	30.2	100.0	87
Լոռի	81.2	8.0	2.6	0.0	1.5	6.8	100.0	76
Կոտայք	66.3	20.6	1.3	2.2	1.6	7.9	100.0	104
Շիրակ	52.1	14.8	1.7	0.0	1.1	30.3	100.0	72
Սյունիք	54.4	39.3	0.0	0.0	0.0	6.3	100.0	50
Վայոց ձոր	33.0	49.3	7.0	4.1	0.0	6.7	100.0	16
Տավուշ	68.0	14.5	2.9	0.4	0.4	13.7	100.0	61
Կրթություն								
Հիմնական ընդհանուր	58.9	14.7	3.1	1.4	0.6	21.4	100.0	99
Միջնակարգ ընդհանուր	55.5	20.4	2.5	0.8	1.2	19.6	100.0	442
Միջին մասնագիտական	56.0	25.6	2.3	1.0	0.5	14.6	100.0	359
Բարձրագույն	62.0	21.5	0.9	2.4	3.8	9.5	100.0	276
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	45.4	22.6	4.0	0.2	0.2	27.5	100.0	212
Ցածր	59.2	19.4	3.0	2.9	0.1	15.4	100.0	229
Միջին	59.1	23.2	1.5	0.3	5.3	10.5	100.0	224
Բարձր	56.5	21.5	1.6	2.7	1.1	16.6	100.0	265
Ամենաբարձր	65.7	22.2	1.0	0.0	1.0	10.1	100.0	245
Ընդամենը	57.5	21.8	2.1	1.3	1.5	15.8	100.0	1,176

¹Ներառում է կանանց, ովքեր ստացել են առաջին հետծննդյան բուժզննումը 41 օր հետո

Աղյուսակ 10.7 Հետծննդյան առաջին բուժզննում իրականացնող անձ

Հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում կենդանի ծնունդ ունեցած կանանց տոկոսային բաշխումն ըստ վերջին ծննդաբերության ժամանակ առաջին հետծննդյան բուժզննում իրականացնող անձի համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Առաջին հետծննդյան բուժզննում իրականացնող անձ			Չի ստացել հետծննդյան խնամք ¹	Ընդամենը	Կանանց թվաքանակ
	Բժիշկ	Բուժքույր/ մանկաբարձուհի	Տվյալ չկա			
Տարիքը ծննդաբերության ժամանակ						
15-19	76.5	7.5	0.0	16.0	100.0	111
20-34	77.1	5.9	0.6	16.4	100.0	991
35-49	88.1	3.4	0.0	8.5	100.0	74
Հերթական ծնունդ						
1	79.4	5.7	0.0	14.9	100.0	455
2-3	77.3	6.4	1.0	15.3	100.0	638
4+	72.6	2.2	0.0	25.2	100.0	82
Բնակավայր						
Քաղաքային	83.2	4.5	0.7	11.7	100.0	736
Գյուղական	68.8	8.2	0.3	22.8	100.0	440
Մարզ						
Երևան	85.6	2.8	1.0	10.6	100.0	456
Արագածոտն	72.7	4.6	2.3	20.4	100.0	59
Արարատ	52.6	0.0	0.4	47.0	100.0	102
Արմավիր	90.0	5.7	0.0	4.3	100.0	95
Գեղարքունիք	55.6	14.2	0.0	30.2	100.0	87
Լոռի	79.6	13.6	0.0	6.8	100.0	76
Կոտայք	83.1	9.0	0.0	7.9	100.0	104
Շիրակ	60.1	9.6	0.0	30.3	100.0	72
Սյունիք	93.7	0.0	0.0	6.3	100.0	50
Վայոց ձոր	90.0	3.2	0.0	6.7	100.0	16
Տավուշ	71.8	14.5	0.0	13.7	100.0	61
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	69.7	8.5	0.4	21.4	100.0	99
Միջնակարգ ընդհանուր	74.1	5.9	0.5	19.6	100.0	442
Միջին մասնագիտական	79.3	5.7	0.3	14.6	100.0	359
Բարձրագույն	84.5	5.0	1.0	9.5	100.0	276
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	65.7	6.6	0.2	27.5	100.0	212
Ցածր	75.5	8.6	0.5	15.4	100.0	229
Միջին	81.9	6.8	0.8	10.5	100.0	224
Բարձր	76.2	6.2	1.0	16.6	100.0	265
Ամենաբարձր	88.3	1.5	0.0	10.1	100.0	245
Ընդամենը	77.8	5.9	0.5	15.8	100.0	1,176

¹ Ներառում է կանանց, ովքեր ստացել են առաջին հետծննդյան բուժզննումը 41 օր հետո

10.4 ԿԱՆԱՆՑ ՎԵՐԱՐՏԱՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒՄ

Այցելություններ գինեկոլոգին


Հերթական գինեկոլոգիական հետազոտությունները կարևոր են կանանց վերարտադրողական առողջության համար: Այդ հետազոտությունների ընթացքում բժիշկը շոշափում է հեշտոցը, արգանդը, ձվարանները, ֆալոպյան փողերը, միզապարկը և այլն: Արևմտյան Եվրոպայում, ԱՄՆ-ում, ինչպես նաև Հայաստանում վերարտադրողական տարիքի կանանց խորհուրդ է տրվում կատարել ամենամյա գինեկոլոգիական հետազոտություններ:

Աղյուսակ 10.8 Վերջին այցելությունը գինեկոլոգին									
Կանանց տոկոսային բաշխումն ըստ գինեկոլոգին վերջին այցելության և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005									
Հիմնական բնութագրիչներ	Երբևէ չի այցելել	Վերջին այցելությունը գինեկոլոգին					5+ տարի առաջ	Ընդամենը	Կանանց թվաքանակ
		0-11 ամիս առաջ	12-23 ամիս առաջ	24-35 ամիս առաջ	36-59 ամիս առաջ				
Տարիք									
15-19	90.2	8.1	0.8	0.4	0.5	0.1	100.0	1,123	
20-24	54.7	38.2	5.0	0.9	0.6	0.4	100.0	1,131	
25-29	21.6	52.5	9.6	6.3	6.0	3.7	100.0	929	
30-34	10.7	45.8	10.5	6.2	9.0	17.7	100.0	749	
35-39	6.9	29.4	14.5	6.6	11.2	31.4	100.0	711	
40-44	6.4	23.6	8.0	7.6	10.7	43.8	100.0	965	
45-49	9.3	17.9	6.3	4.7	8.2	53.7	100.0	958	
Բնակավայր									
Քաղաքային	32.7	30.3	7.4	4.2	6.0	19.3	100.0	4,194	
Գյուղական	31.2	29.1	6.8	4.7	6.0	22.2	100.0	2,372	
Մարզ									
Երևան	33.3	32.7	7.2	4.2	5.4	17.3	100.0	2,468	
Արագածոտն	33.7	33.9	4.8	3.0	4.7	19.9	100.0	292	
Արարատ	37.2	23.1	5.4	3.8	7.7	22.7	100.0	462	
Արմավիր	28.6	29.0	6.7	6.2	5.9	23.6	100.0	567	
Գեղարքունիք	30.3	35.2	8.0	4.8	5.8	15.9	100.0	443	
Լոռի	31.6	26.0	7.2	4.3	3.9	26.6	100.0	537	
Կոտայք	29.0	32.7	9.7	3.6	7.4	17.7	100.0	563	
Շիրակ	34.8	23.4	5.9	3.8	8.2	24.0	100.0	563	
Սյունիք	28.5	27.7	7.3	5.9	8.3	22.1	100.0	281	
Վայոց ձոր	35.4	26.1	8.1	6.0	7.5	16.9	100.0	107	
Տավուշ	27.4	24.2	10.2	4.4	5.2	28.5	100.0	285	
Կրթություն									
Հիմնական ընդհանուր	50.9	21.7	5.2	4.4	4.6	13.2	100.0	529	
Միջնակարգ ընդհանուր	27.7	30.5	6.8	4.2	7.3	23.4	100.0	2,440	
Միջին մասնագիտական	25.5	32.2	7.6	4.9	5.6	24.3	100.0	1,997	
Բարձրագույն	41.2	28.7	8.0	3.9	5.1	13.0	100.0	1,600	
Բարեկեցության մակարդակ									
Ամենացածր	30.2	26.2	6.9	4.4	6.2	26.1	100.0	1,164	
Ցածր	32.3	29.2	5.9	4.0	5.6	22.8	100.0	1,284	
Միջին	31.3	27.4	7.0	4.5	6.7	23.1	100.0	1,303	
Բարձր	31.8	32.6	7.3	4.8	6.3	17.2	100.0	1,375	
Ամենաբարձր	34.8	33.1	8.8	4.0	5.5	13.8	100.0	1,440	
Ընդամենը	32.2	29.9	7.2	4.3	6.0	20.3	100.0	6,566	

Հայաստանում, հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում կանանց 30 տոկոսն այցելել է գինեկոլոգին (Աղյուսակ 10.8): Վերարտադրողականության մեղիան տարիքի կանայք (25-34 տարեկան) առավել հաճախ են այցելել գինեկոլոգին հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում: Նկատելի են որոշակի տարբերություններ ըստ այլ հիմնական բնութագրիչների:

Ընդհանուր առմամբ, կանանց 32 տոկոսն երբեք չի այցելել գինեկոլոգին, ինչպես նաև հինգ կանանցից մեկը չի այցելել գինեկոլոգին վերջին հինգ տարիների ընթացքում: Ինչպես ակնկալվում էր, գինեկոլոգին այցելությունների հաճախականությունը տատանվում է ըստ կնոջ տարիքի: 15-19 տարիքային խմբի կանանց 90 տոկոսն երբեք չի այցելել գինեկոլոգի, 45-49 տարիքային խմբի կանանց շրջանում այդ ցուցանիշը կազմում է 9 տոկոս: Մյուս կողմից, 45-49 տարիքային խմբի կանանց 54 տոկոսը չի դիմել գինեկոլոգին վերջին հինգ և ավելի տարիների ընթացքում:

Անգամ այն կանանց շրջանում, ովքեր նշել են, որ վերջին անգամ այցելել են գինեկոլոգին հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում, միայն մեկ երրորդ մասն է արձանագրել, որ այդ այցելությունն եղել է հերթական (Գծապատկեր 10.2): Կանանց 22 տոկոսը նշել է, որ այցելել է գինեկոլոգի հերթական ստուգման, իսկ 17 տոկոսը՝ արբորտի (արհեստական վիժման) նպատակով: Կանանց միայն 6 տոկոսն է նշել ընտանիքի պլանավորումը, որպես իրենց այցի պատճառ:



Կրծքի զննում

Կրծքի քաղցկեղը հայ կանանց մոտ հանդիպող ամենատարածված քաղցկեղի տեսակն է: Չնայած կրծքի քաղցկեղի ճշգրիտ պատճառները բացահայտված չեն, սակայն հայտնի է, որ դրա առաջացման ռիսկն աճում է կնոջ տարիքին զուգընթաց: Կրծքի քաղցկեղի հայտնաբերման մեթոդներ են հանդիսանում կրծքի ինքնազննումը, երբ կինն ինքնուրույն կատարում է կրծքի ֆիզիկական հետազոտում, բժիշկ մասնագետների կողմից իրականացվող կրծքի ֆիզիկական հետազոտումը և մամոգրաֆիան:

Կրծքի ինքնազննումը պարզ գործողություն է, որը կարող է իրականացվել ամիսը մեկ անգամ կնոջ կողմից՝ կրծքում որևէ փոփոխություն հայտնաբերելու նպատակով: Մինչև վերջերս Հայաստանի բնակչությունը քիչ էր տեղեկացված կրծքի ինքնազննման կարևորության մասին: Անգամ գինեկոլոգները չէին տիրապետում կրծքի ինքնազննման հմտություններին (ՀՀ կառավարություն, Յունիսեֆ և «Փրկեք երեխաներին», 1999թ): Այնուամենայնիվ, վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացվել են տարբեր հասարակական առողջապահական նախաձեռնություններ, որոնք ուղղված են եղել կրծքի ինքնազննման հմտությունների կիրառման ընդլայնմանը:

Ըստ աղյուսակ 10.9-ի, Հայաստանի կանանց 81 տոկոսը տեղեկացված չեն եղել, թե ինչպես կարելի է իրականացնել կրծքի ինքնազննում: Կրծքի ինքնազննման հմտություններին տիրապետող կանանց կեսը (բոլոր կանանց 10 տոկոսը) իրականացրել է այն հարցմանը նախորդող երեք ամիսների ընթացքում: Կրծքի ինքնազննման իրականացումը և դրա վերաբերյալ գիտելիքներն աճում են ըստ կնոջ տարիքի, քաղաքային բնակության, կրթական

և բարեկեցության մակարդակների: Ի տարբերություն Արարատի, Գեղարքունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերի կանանց, Երևանի և Կոտայքի կանայք առավել հակված են կրծքի ինքնազննման իրականացմանը:

Կանանց 90 տոկոսը նշել է, որ չի դիմել բուժաշխատողի կրծքի հետազոտման նպատակով: Հատկանշական է, որ չնայած կանանց 30 տոկոսն այցելել է գինեկոլոգի հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, սակայն նրանց միայն 1 տոկոսն է նշել նույն ժամանակահատվածում կրծքի հետազոտության մասին (Աղյուսակ 10.8):

Աղյուսակ 10.9 Կրծքի վերջին զննում

Կանանց տոկոսային բաշխումն ըստ կրծքի վերջին ինքնազննման (ԿԿԻ) և կրծքի վերջին զննման բուժաշխատողի կողմից համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Վերջին անգամ իրականացված կրծքի ինքնազննում					Վերջին անգամ իրականացված կրծքի զննում բուժաշխատողի կողմից					Կանանց թվաքանակ	
	Չգիտի	Երբեք	Վերջին 3 ամսվա ընթացքում	3+ ամիս առաջ	Ընդամենը	Երբեք	Վերջին 1 տարվա ընթացքում	1 տարուց ավելի առաջ	Տվյալ չկա	Ընդամենը		
Տարիք												
15-19	97.2	1.7	0.8	0.3	100.0	98.6	0.2	1.1	0.1	100.0	1,123	
20-24	87.9	5.4	5.7	0.9	100.0	93.3	1.6	5.1	0.0	100.0	1,131	
25-29	78.1	6.9	9.7	5.3	100.0	90.0	0.9	9.0	0.1	100.0	929	
30-34	74.8	5.1	13.9	6.2	100.0	85.2	1.5	12.9	0.4	100.0	749	
35-39	74.1	7.2	14.7	4.0	100.0	86.6	0.7	12.4	0.3	100.0	711	
40-44	75.1	6.1	15.8	2.9	100.0	86.9	1.5	11.0	0.6	100.0	965	
45-49	74.2	6.3	15.1	4.4	100.0	85.9	2.1	11.5	0.5	100.0	958	
Բնակավայր												
Քաղաքային	78.0	6.4	11.8	3.7	100.0	88.5	1.3	9.8	0.3	100.0	4,194	
Գյուղական	87.0	3.5	7.4	2.2	100.0	92.8	1.0	6.0	0.2	100.0	2,372	
Մարզ												
Երևան	72.8	8.8	14.3	4.2	100.0	86.7	1.6	11.5	0.2	100.0	2,468	
Արագածոտն	85.3	4.0	8.8	1.9	100.0	89.8	1.4	8.1	0.7	100.0	292	
Արարատ	93.3	1.6	4.6	0.5	100.0	98.2	0.6	1.2	0.0	100.0	462	
Արմավիր	87.1	3.6	7.3	2.0	100.0	92.7	0.5	6.8	0.0	100.0	567	
Գեղարքունիք	88.5	5.4	4.4	1.7	100.0	93.6	1.5	4.8	0.1	100.0	443	
Լոռի	81.0	3.8	10.8	4.3	100.0	92.8	1.1	6.1	0.0	100.0	537	
Կոտայք	79.2	2.0	14.6	4.0	100.0	85.3	1.8	11.3	1.5	100.0	563	
Շիրակ	91.9	2.9	3.0	2.2	100.0	96.7	0.0	3.3	0.0	100.0	563	
Սյունիք	83.3	5.2	7.2	4.2	100.0	86.1	1.4	12.2	0.2	100.0	281	
Վայոց ձոր	94.6	1.0	3.0	1.4	100.0	97.6	0.7	1.4	0.2	100.0	107	
Տավուշ	84.1	3.3	10.2	2.5	100.0	87.9	0.9	10.9	0.3	100.0	285	
Կրթություն												
Հիմնական ընդհանուր	91.7	1.6	3.9	2.8	100.0	92.7	1.2	6.1	0.0	100.0	529	
Միջնակարգ ընդհանուր	88.1	2.8	6.6	2.4	100.0	92.0	1.0	6.6	0.3	100.0	2,440	
Միջին մասնագիտական	78.5	5.9	12.0	3.6	100.0	89.2	1.0	9.6	0.2	100.0	1,997	
Բարձրագույն	70.7	9.8	15.5	3.9	100.0	87.4	1.8	10.6	0.3	100.0	1,600	
Բարեկեցության մակարդակ												
Ամենացածր	90.4	2.4	5.1	2.1	100.0	93.2	0.9	5.7	0.2	100.0	1,164	
Ցածր	86.9	3.8	6.3	2.8	100.0	93.5	0.8	5.3	0.4	100.0	1,284	
Միջին	84.5	5.4	8.3	1.8	100.0	91.2	1.4	7.2	0.2	100.0	1,303	
Բարձր	78.0	6.6	11.8	3.6	100.0	88.4	1.2	10.1	0.3	100.0	1,375	
Ամենաբարձր	68.8	8.0	17.9	5.2	100.0	85.2	1.7	13.0	0.2	100.0	1,440	
Ընդամենը	81.2	5.4	10.2	3.2	100.0	90.1	1.2	8.5	0.3	100.0	6,566	

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Սույն գլխում ներկայացված են ՀԺԱՀ-2005-ի արդյունքում ստացված Հայաստանի երեխաների առողջության վերաբերյալ տվյալներ: Գլխում ներառված է տեղեկատվություն նորածնի քաշի, նրա ստացած պատվաստումների, ինչպես նաև տարածված մանկական հիվանդությունների ու դրանց բուժման վերաբերյալ: Վերոնշյալ, ինչպես նաև երեխաների մահացության մասին տեղեկությունների համատեղ վերլուծությունը հնարավորություն կընձեռի երեխաների առողջության բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացման համար: Ստացված արդյունքները հիմնված են հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ունեցած բոլոր կենդանի ծնունդների վերաբերյալ մայրերից հավաքագրված տեղեկատվության վրա:

11.1 ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Թերքաշ նորածնիների մահացության ռիսկը շատ ավելի բարձր է: Հետազոտությանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծնված երեխաների քաշը գրանցվել է տարածքային սպասարկման առողջապահական հաստատություններում պահվող «երեխայի զարգացման քարտից»: Ծննդկանի քաշի վերաբերյալ տեղեկատվություն է հավաքագրվել բոլոր ծնունդների 98 տոկոսի համար:

Նորածնիների 93 տոկոսն ունեցել են ծննդյան առնվազն 2.5 կիլոգրամ քաշ (Աղյուսակ 11.1): Արագածոտնում գրանցված բարձր հերթական կարգի ծնունդների, ինչպես նաև 35 և բարձր տարիքի կանանց շրջանում ավելի տարածված է ցածր քաշի երեխաներ ունենալը (2.5 կիլոգրամից ցածր):

11.2 ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առողջապահության նախարարությունը հաստատել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից առաջարկվող պատվաստումների օրացույցը, ըստ որի երեխան իր կյանքի առաջին 12 ամիսների ընթացքում պետք է ստանա հետևյալ պատվաստումները՝ ԲՅԺ՝ թոքախտի դեմ, ԱԿՊՓ-ի 3 չափաբաժին՝ դիֆտերիա, կապույտ հազ և փայտացում հիվանդությունների դեմ, պոլիո՝ նվազագույնը 3 չափաբաժին, ինչպես նաև պատվաստում կարմրուկի դեմ: Հայաստանում կարմրուկի պատվաստումը տրվում է եռավալենտ վակցինայի տեսքով (կարմրուկ, կարմրախտ և խոզուկ (ԿԿԽ)) երեխայի կյանքի 12-րդ ամսվա ընթացքում: Սկսած 1999թ-ից Առողջապահության նախարարությունը պարտադիր պատվաստումների օրացույցում ներառել է նաև հեպատիտ B-ի պատվաստումը՝ նվազագույնը երեք չափաբաժին:

ՀԺԱՀ-2005-ի ընթացքում պատվաստումների ընդգրկվածության վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվել է մինչև 5 տարեկան բոլոր երեխաների համար: Հայաստանում «Երեխայի զարգացման քարտերը» պահվում են առողջապահական տարածքային սպասարկման հաստատություններում: «Ինունհիզացման անձնագիր» (քարտեր, որոնք պահվում են երեխայի ծնողի/խնամակալի մոտ) մշակվել և ներդրվել է 1995 թվականից: Այս հետազոտության ընթացքում տվյալները հավաքագրել են նշված երկու աղբյուրներից՝ ըստ դրանց առկայության: Այն դեպքում, երբ մայրը չի ունեցել ինունհիզացման անձնագիր, նրան խնդրել են վերհիշել իր երեխայի ստացած բոլոր պատվաստումները: Ըտրանքի տվյալ խմբում բոլոր հարցազրույցներն ավարտելուց հետո խմբի ղեկավարը պարտավոր էր գնալ առողջապահական տարածքային սպասարկման հաստատություն, «Երեխայի զարգացման քարտից» պատվաստումների մասին տվյալները հարցաթերթի մեջ

գրանցելու համար: 12-23 ամսական գրեթե բոլոր երեխաները (92 տոկոս) բուժհաստատություններում ունեցել են «Երեխայի զարգացման քարտ»: Բուժհաստատությունում «Երեխայի զարգացման քարտ» չունեցող երեխաների շրջանում շատ քչերն են տանն ունեցել «Իմունիզացման անձնագիր», որոնցից հարցաթերթում լրացվել է պատվաստումների վերաբերյալ տվյալներ:

Տվյալները վկայում են, որ հետազոտությանը նախորդող 5 տարիների ընթացքում և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերում նվազել է «Իմունիզացման անձնագրերի» առկա դեպքերի թիվը: 12-23 ամսական երեխաների շրջանում ՀԺԱՀ-2000-ին «Իմունիզացման անձնագիր» առկա է եղել 33 տոկոսի մոտ, իսկ 2005թ-ին այդ ցուցանիշը կազմել է 12 տոկոս: Համանման կերպով, քաղաքաբնակ մայրերի 11 տոկոսը և գյուղաբնակ

Աղյուսակ 11.1 Երեխայի կշիռը և հասակը ծննդյան ժամանակ

Հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած կենդանի ծնունդների շրջանում, որոնց համար գրանցել է կշիռը ծննդյան ժամանակ, մինչև 2.5 կիլոգրամ կշիռ ունեցողների տոկոսը, և հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում տեղի ունեցած բոլոր կենդանի ծնունդների տոկոսային բաշխումն, ըստ մոր՝ երեխայի չափի պատկերացման, համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կշիռը ծննդյան ժամանակ, գրանցվածների շրջանում ¹		Բոլոր կենդանի ծնունդների տոկոսային բաշխումը, ըստ ծննդյան ժամանակ երեխայի չափի					
	Մինչև 2.5կգ քաշ ունեցող	Ծնունդների թիվ	Շատ նվազ	Միջինից նվազ	Միջին կամ ավելի	Չգիտի/ Տվյալ չկա	Ծնունդների Ընդամենը	Թիվ
Մոր տարիքը ծննդաբերության ժամանակ								
15-19	189	0.5	15.6	83.4	0.5	100.0	190	
20-34	6.6	1,212	2.5	8.5	86.6	2.5	100.0	1,241
35-49	18.6	80	13.6	14.7	71.7	0.0	100.0	82
Հերթական ծնունդ								
1	7.3	704	1.6	10.6	85.7	2.1	100.0	716
2-3	7.0	690	3.3	8.3	86.9	1.6	100.0	702
4-5	12.1	76	10.2	11.5	71.6	6.7	100.0	82
6+	*	*	*	*	*	*	*	13
Բնակավայր								
Քաղաքային	8.8	913	3.6	12.2	82.2	2.0	100.0	930
Գյուղական	5.4	568	1.7	5.7	90.5	2.2	100.0	582
Մարզ								
Երևան	9.2	571	4.4	11.6	81.5	2.5	100.0	584
Արագածոտն	13.9	83	3.5	9.8	86.6	0.2	100.0	83
Արարատ	5.3	125	0.3	4.4	94.4	0.9	100.0	127
Արմավիր	3.2	124	1.3	4.3	93.0	1.5	100.0	125
Գեղարքունիք	3.4	116	0.5	6.5	91.7	1.2	100.0	120
Լոռի	6.6	94	2.4	16.9	78.8	1.9	100.0	96
Կոտայք	8.5	122	2.2	11.4	82.7	3.7	100.0	129
Շիրակ	5.5	89	3.3	7.9	86.4	2.4	100.0	90
Սյունիք	9.7	62	3.2	14.2	77.7	4.9	100.0	63
Վայոց ձոր	6.3	19	0.0	5.8	93.2	1.0	100.0	19
Տավուշ	5.2	75	1.9	5.7	92.4	0.0	100.0	75
Մոր կրթություն								
Հիմնական ընդհանուր	3.9	135	1.5	4.4	91.9	2.2	100.0	138
Միջնակարգ ընդհանուր	7.6	569	3.4	8.0	87.4	1.2	100.0	579
Միջին մասնագիտական	7.7	439	2.2	10.3	85.2	2.3	100.0	448
Բարձրագույն	8.6	338	3.2	14.0	79.7	3.2	100.0	347
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	6.1	275	2.4	6.8	87.3	3.5	100.0	286
Ցածր	5.0	289	2.4	8.1	87.9	1.6	100.0	294
Միջին	7.1	287	1.2	11.8	86.4	0.7	100.0	289
Բարձր	10.9	324	5.2	11.0	80.0	3.7	100.0	335
Ամենաբարձր	8.0	306	2.6	10.6	86.0	0.7	100.0	308
Ընդամենը	7.5	1,481	2.8	9.7	85.4	2.1	100.0	1,512

¹ Հիմնված է կամ գրանցված, կամ մոր հիշողությամբ նշված տվյալների վրա

մայրերի 13 տոկոսը հարցազրուցավարներին ներկայացրել են «Իմունիզացման անձնագրեր», ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ին արձանագրված նույն ցուցանիշի համապատասխանաբար՝ 22 և 27 տոկոսի (տվյալները ներկայացված չեն):

Այն ժամանակ, երբ «Երեխայի զարգացման քարտը» կամ «Իմունիզացման անձնագիրը» չի եղել, տեղեկատվությունը հիմնվել է մոր վկայությունների վրա:

Աղյուսակ 11.2-ը ներկայացնում է 12-23 ամսական երեխաների պատվաստումների ընդգրկվածությունն ըստ տեղեկատվության հավաքագրման աղբյուրի («Երեխայի զարգացման քարտ» կամ մոր վկայություններ): Աղյուսակի երրորդ տողը ցույց է տալիս մինչև հարցման պահը ցանկացած տարիքում պատվաստումներ ստացած երեխաների մասնաբաժինը, չորրորդ տողը՝ մինչև 12 ամսական հասակը պատվաստումներ ստացած երեխաների մասնաբաժինը, և հինգերորդ տողը՝ մինչև 18 ամսական հասակը պատվաստումներ ստացած երեխաների մասնաբաժինը: Վերջինս այն տարիքն է, երբ երեխան պետք է ստացած լինի բոլոր պատվաստումները:

Հարցման պահին 12-23 ամսական գրեթե բոլոր երեխաները (նվազագույնը 95 տոկոս) ստացել են ԲՑԺ-ն, ինչպես նաև Պոլիո, ԱԿԴՓ, ՀԵՊ պատվաստումների առաջին չափաբաժինները: Այնուամենայնիվ, երեխաների այն համամասնությունը, ովքեր ստացել են Պոլիո, ԱԿԴՓ և Հեպատիտ B պատվաստումների երկրորդ և երրորդ չափաբաժինները, ինչպես նաև ԿԿԽ պատվաստում, ավելի ցածր է: Օրինակ՝ ի տարբերություն երրորդ չափաբաժինը ստացած երեխաների 71 տոկոսի, ԱԿԴՓ պատվաստման առաջին չափաբաժինը ստացել են երեխաների 95 տոկոսը: Այսինքն, պատվաստումից դուրս մնացածների տոկոսաչափն առաջին և երրորդ չափաբաժինների միջև կազմել է 24 տոկոս: Դուրս մնացածների տոկոսաչափը հեպատիտ B-ի և պոլիոյի համար համապատասխանաբար կազմել է 23 և 21 տոկոս:

Ընդհանուր առմամբ, ըստ ստացված տվյալների, հարցման պահին 12-23 ամսական երեխաների միայն 60 տոկոսն է ստացել ԱՀԿ-ի կողմից առաջադրվող պատվաստումները: Նկատվել է նշանակալի անկում ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 76 տոկոս ցուցանիշի համեմատությամբ: Երեխաների առավել ցածր տոկոսն է (56 տոկոս) ստացել ՀՀ ԱՆ-ի կողմից առաջարկված բոլոր պատվաստումները, որը ներառում է նաև Հեպատիտ B-ն: Ժամանակին պատվաստում ստանալու տեսանկյունից, հարկ է նշել, որ երեխաների միայն 54 տոկոսն է

Աղյուսակ 11.2 Պատվաստումների ընդգրկվածությունն ըստ տեղեկատվության աղբյուրի
 12-23 ամսական երեխաների տոկոսը, ովքեր ստացել են նշված պատվաստումները հետազոտությանը նախորդող որևէ ժամանակահատվածում ըստ տեղեկատվության աղբյուրի («Երեխայի զարգացման քարտ» կամ մոր վկայություններ), ինչպես նաև մինչև 12 և 18 ամսական հասակը պատվաստումներ ստացածների տոկոսը, Հայաստան 2005

Տեղեկատվության աղբյուր	ԲՑԺ	ԱԿԴՓ			Պոլիո			ԿԿԽ	Հիմնական		Հեպատիտ			Երեխաների թվաքանակ	
		1	2	3+	1	2	3+		Բոլոր ¹	Ոչ մի	1	2	3		Բոլոր
Ստացել է պատվաստում հարցմանը նախորդող որևէ ժամանակահատվածում															
«Երեխայի զարգացման քարտ» ²															
Սոր վկայություն	90.4	87.4	79.3	68.2	89.9	84.5	72.5	69.2	59.4	0.4	90.3	84.5	71.9	55.3	277
Նշված աղբյուրներից որևէ մեկը	7.7	7.1	3.4	3.2	7.5	4.9	4.3	3.1	0.3	0.5	7.1	4.6	3.5	0.3	25
Ընդամենը	98.1	94.5	82.7	71.4	97.5	89.5	76.9	72.3	59.7	0.9	97.5	89.1	75.4	55.7	302
Ստացել է պատվաստում մինչև 12 ամսական հասակը³															
Ընդամենը	97.9	86.7	70.6	44.8	92.8	73.9	41.6	2.9	1.8	1.0	97.3	85.3	66.5	1.8	302
Ստացել է պատվաստում մինչև 18 ամսական հասակը															
Ընդամենը	98.1	93.7	82.1	69.3	96.6	87.4	73.5	69.0	54.4	0.9	97.5	88.9	74.0	49.8	302
Իրական ամսաթվեր															
Ընդամենը	93.7	89.6	82.7	72.7	93.3	89.1	76.2	65.0	60.0	5.2	93.8	88.9	76.8	56.4	277

Նշում՝ Տեղեկատվությունը հավաքագրվել է «Երեխայի զարգացման քարտից», «Իմունիզացման անձնագրից» կամ, եթե առկա չի եղել գրառված տվյալ, ապա մոր հիշողությամբ: «Երեխայի զարգացման քարտում» նշված պատվաստման ստացման ամսաթիվը գտնվել է երեխայի ծննդից մինչև 2 տարի հետո ընկած ժամանակահատվածում: Իրական ամսաթվերը նշանակում են, որ նշված ամսաթվերը հաջորդել են երեխայի ծննդին:
¹ ԲՑԺ, ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ և խոզուկ) և ԱԿԴՓ-ի և Պոլիոյի 3 չափաբաժիններ (բացառելով ծննդաբերության օրը կատարված պոլիո պատվաստումը)
² Ներառում է «Իմունիզացման անձնագիրը», որը գտնվում է երեխայի մոր/խնամակալի մոտ
³ Սոր վկայությամբ գրանցված տվյալներ ունեցող երեխաների շրջանում, կյանքի առաջին տարվա ընթացքում ստացած պատվաստումների մասնաբաժինը չի տարբերվում գրառված տվյալ ունեցող երեխաների ստացած պատվաստումներից:

Աղյուսակ 11.3 Պատվաստումների ընդգրկվածությունն ըստ հիմնական բնութագրիչների

12-23 ամսական երեխաների տոկոսը, ովքեր ստացել են նշված պատվաստումները հետազոտությանը նախորդող որևէ ժամանակահատվածում (ըստ «Երեխայի զարգացման քարտի» կամ մոր վկայության), և «Երեխայի զարգացման քարտ» կամ «Իմունիզացման անձնագիր» ունեցողների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	ԲՑԺ	ԱԿԴՓ			Պոլիո			ԿԿԽ	Հիմնական		Հեպատիտ			Բոլոր ² + ՀեպB	Բոլոր	Երեխայի զարգացման քարտի առկայություն ³	Երեխաների թվաքանակ
		1	2	3+	1	2	3+		1	2	3						
Սեռ																	
Արական	98.3	92.6	80.8	69.0	96.2	89.1	74.3	71.4	58.7	1.4	96.1	85.4	69.9	54.4	54.4	93.6	177
Իգական	97.8	97.2	85.3	74.9	99.3	90.1	80.5	73.5	61.2	0.2	99.4	94.5	83.2	57.5	57.5	89.2	125
Հերթական ծնունդ																	
1	98.4	94.1	88.2	76.8	98.7	90.7	81.5	75.6	64.6	0.9	97.1	87.4	75.3	54.8	58.9	94.1	146
2-3	97.6	94.3	76.3	67.5	95.9	88.5	74.3	70.5	54.8	1.1	97.5	91.9	76.3	57.9	52.0	88.9	138
4+	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	18
Բնակավայր																	
Քաղաքային	99.2	94.1	81.3	68.1	98.4	90.7	77.6	67.0	55.7	0.2	97.8	87.9	74.5	51.3	51.3	92.3	183
Գյուղական	96.4	95.2	84.8	76.5	96.0	87.6	75.6	80.4	65.9	2.1	96.9	91.1	76.9	62.4	62.4	90.9	119
Մարզ																	
Երևան	100.0	94.5	79.6	62.0	98.6	91.9	74.9	59.3	47.0	0.0	97.4	84.8	71.1	(42.5)	42.5	92.1	112
Այլ	97.0	94.6	84.5	77.0	96.8	88.1	78.0	80.0	67.2	1.5	97.5	91.7	78.0	63.5	63.5	91.6	189
Մոր կրթություն																	
Հիմնական ընդհանուր	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	28
Միջնակարգ ընդհանուր	98.5	92.9	84.7	72.5	96.0	89.3	76.2	70.8	57.7	1.1	97.8	87.6	73.7	56.2	56.2	93.4	122
Միջին																	
մասնագիտական	100.0	94.6	77.4	68.7	99.4	88.5	73.5	73.8	64.1	0.0	98.8	85.6	71.5	59.1	59.1	91.8	96
Բարձրագույն	96.6	97.3	89.7	70.2	98.5	93.2	80.1	79.4	65.6	0.5	95.3	95.1	82.7	57.9	57.9	96.3	56
Բարեկեցության մակարդակ																	
Ամենացածր	92.5	93.5	79.9	68.9	93.5	81.5	70.6	71.6	59.0	4.4	93.5	91.4	75.2	56.8	56.8	90.6	56
Ցածր	98.8	89.8	80.1	69.6	96.6	83.3	67.3	74.2	55.6	0.4	99.2	85.0	66.0	49.3	49.3	91.9	70
Միջին	98.3	93.9	80.3	78.9	96.5	88.7	82.1	86.5	73.1	0.0	98.9	88.7	87.0	73.1	73.1	96.3	44
Բարձր	100.0	96.5	82.5	69.1	100.0	95.9	79.2	71.1	62.6	0.0	100.0	87.5	70.1	58.6	58.6	92.8	76
Ամենաբարձր	(100.0)	(99.3)	(91.1)(73.4)	(100.0)	(97.2)(87.8)	(60.7)	(50.8)	(0.0)	(94.6)	(94.6)	(85.6)	(44.6)	(44.6)	(87.7)		55	
Ընդամենը	98.1	94.5	82.7	71.4	97.5	89.5	76.9	72.3	59.7	0.9	97.5	89.1	75.4	55.7	55.7	91.8	302

Նշում՝ Տեղեկատվությունը հավաքագրվել է «Երեխայի զարգացման քարտից», «Իմունիզացման անձնագրից» կամ, եթե առկա չի եղել գրառված տվյալ, ապա մոր հիշողությամբ: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

¹ ԲՑԺ, ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ և խոզուկ) և ԱԿԴՓ-ի և Պոլիոյի 3 չափաբաժիններ (բացառելով ծննդաբերության օրը կատարված պոլիո պատվաստումը)

² ԲՑԺ, ԿԿԽ և ԱԿԴՓ-ի և պոլիոյի երեքական չափաբաժին

³ Ներառում է «Իմունիզացման անձնագիրը», որը գտնվում է երեխայի մոր/խնամակալի մոտ

ստացել ԱԿԿ-ի կողմից առաջարկվող բոլոր պատվաստումները մինչև 18 ամսական հասակը:


Աղյուսակ 11.3-ը ցույց է տալիս 12-23 ամսական բոլոր երեխաների շրջանում ստացված պատվաստումների ցուցանիշներն ըստ հիմնական բնութագրիչների: Բոլոր պատվաստումները ժամանակին ստացած երեխաների մասնաբաժինը նշանակալիորեն տարբերվում է ըստ բնակավայրերի: Ջարմանալիորեն, ավելի շատ գյուղաբնակ երեխաներ են ժամանակին ստացել բոլոր պատվաստումները, քան քաղաքաբնակ երեխաները: Այս տարբերությունը բացատրվում է քաղաքաբնակ երեխաների շրջանում ստացած պատվաստումների առաջին և երրորդ չափաբաժինների միջև եղած տարբերության ավելի մեծ տոկոսով: Օրինակ՝ ԱԿԴՓ-ի առաջին և երրորդ չափաբաժինների տարբերությունը քաղաքաբնակ երեխաների համար կազմել է 28 տոկոս, իսկ գյուղաբնակ երեխաների համար՝ 20 տոկոս:

Երեխաների թվաքանակները հիմնականում բավարար չեն առավել մանրամասն վերլուծության համար: Օրինակ՝ բացի Երևանից, մյուս մարզերի համար դեպքերը քիչ են:

11.3 ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՎԱՐԱԿՆԵՐ (ՍՇՎ)

2005թ-ին Հայաստանում գրանցված մահակական մահերի մոտ 11 տոկոսի պատճառ են հանդիսացել սուր շնչառական վարակները (ՍՇՎ) (ՀՀ ԱՎԾ, 2006թ-ի վիճակագրական տարեգիրք): Վաղ ախտորոշումը և հակաբիոտիկներով ճիշտ բուժումը կարող է կանխարգելել սուր շնչառական վարակներից մահացության զգալի մասը: ՀՀ-ում 2005-ի ՍՇՎ տարածվածությունը գնահատվել է մայրերին հարցնելով, թե արդյոք հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում մինչև 5 տարեկան նրանց երեխաները հիվանդ են եղել հազով՝ զուգորդված կարճ և արագ շնչառությամբ: Նշվածները հանդիսանում են ՍՇՎ-ի ախտանիշները: Անհրաժեշտ է նշել, որ հիվանդացության վերաբերյալ հավաքագրված տվյալները սուբյեկտիվ են, քանզի հիմնված են մոր, այլ ոչ թե բուժաշխատողի գնահատականի վրա: Ավելին, ՍՇՎ-ի տարածվածությունը պայմանավորված է նաև սեզոնայնությամբ, քանի որ ՀՀ-ում 2005 դաշտային աշխատանքներն անցկացվել են սեպտեմբեր-դեկտեմբեր ժամանակահատվածում, երբ հիվանդացության հավանականությունը բարձր է:

Աղյուսակ 11.4-ը ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում երեխաների 8 տոկոսն ունեցել է ՍՇՎ ախտանիշներ: Նկատելի է ամենաբարձր տարբերությունը ըստ հիմնական բնութագրիչների:



Աղյուսակ 11.4 ՍՇՎ-ի տարածվածություն

Մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում հարցմանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում ՍՇՎ-ի ախտանիշներ ունեցողների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	ՍՇՎ ախտանիշ ունեցող երեխաների տոկոս	Մինչև 5 տարեկան երեխաների թվաքանակ
Երեխայի տարիքն ամիսներով		
<6	5.9	163
6-11	10.0	162
12-23	8.0	302
24-35	6.3	311
36-47	10.3	275
48-59	7.5	257
Սեռ		
Արական	6.5	807
Իգական	9.8	663
Կերակուր պատրաստելու նպատակով օգտագործվող էներգիայի աղբյուր		
Էլեկտրականություն	5.8	204
Հեղուկ/Բնական գազ	8.3	1,207
Այլ/Տվյալ չկա	9.5	58
Բնակավայր		
Քաղաքային	7.6	908
Գյուղական	8.5	562
Մարզ		
Երևան	8.1	566
Այլ	7.9	904
Սոր կրթություն		
Հիմնական ընդհանուր	8.6	135
Միջնակարգ ընդհանուր	8.6	563
Միջին մասնագիտական	6.7	436
Բարձրագույն	8.3	335
Բարեկեցության մակարդակ		
Ամենացածր	10.9	271
Ցածր	5.7	288
Միջին	5.7	286
Բարձր	6.8	319
Ամենաբարձր	10.9	305
Ընդամենը	8.0	1,470

Նշում՝ ՍՇՎ-ի ախտանիշները (հազ՝ զուգորդված կարճ և արագ շնչառությամբ) համարվում են թոքախտի առաջացման նախապայման:

Գծապատկեր 11.1-ը ցույց է տալիս, որ բուժաստատությունում կամ բուժաշխատողի կողմից բուժում են ստացել ՍՇՎ ախտանիշներ ունեցող երեխաների մեկ երրորդից ավելին (36 տոկոս): Հակաբիոտիկներ տրվել են մոտավորապես տասից մեկ հիվանդ

երեխային: Ձարմանալիորեն, տղա երեխաների շրջանում բուժաստատություն դիմելու հաճախականությունը երկուսից ավելի անգամ շատ է եղել, քան աղջիկների մոտ (համապատասխանաբար՝ 52 և 24 տոկոս): Ի տարբերություն աղջիկների, տղաների շրջանում հակաբիոտիկներ ընդունելն ավելի տարածված է: Հատկանշական է նաև բուժաստատություն դիմելու հավանականության տարբերությունն ըստ բնակավայրերի՝ բուժում են ստացել գյուղական բնակավայրի երեխաների 46 և քաղաքային երեխաների 30 տոկոսը: Այս հետևությունները պետք է դիտարկվեն ուշադրությամբ, քանզի ՍՇԿ-ի ախտանիշեր ունեցող երեխաների թվաքանակը փոքր է:

11.4 ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ (ՏԵՆԴ)

Աղյուսակ 11.5-ը ցույց է տալիս մինչև 5 տարեկան այն երեխաների տոկոսը, ովքեր ունեցել են ջերմություն (տենդ), հետազոտությանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում:

Աղյուսակ 11.5 Ջերմության (տենդի) տարածվածություն և բուժում					
Մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում հարցմանը նախորդող երկու շաբաթվա ընթացքում ջերմություն (տենդ) ունեցած երեխաների տոկոսը, ինչպես նաև ջերմություն (տենդ) ունեցած երեխաների շրջանում բուժաստատությունում կամ բուժաշխատողի կողմից բուժում ստացածների տոկոսը և հակաբիոտիկ դեղորայք ընդունածների տոկոսը համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005					
Հիմնական բնութագրիչներ	Մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում՝		Տենդ ունեցող մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում		
	Տենդ ունեցող երեխաների տոկոս	Երեխաների թվաքանակ	Բուժաստատություն կամ բուժաշխատողի դիմած և բուժում ստացած երեխաների տոկոս	Հակաբիոտիկ դեղորայք ընդունած երեխաների տոկոս	Տենդ ունեցող երեխաների թվաքանակ
Երեխայի տարիքն ամիսներով					
<6	6.3	163	*	*	10
6-11	21.0	162	(38.0)	(4.8)	34
12-23	17.2	302	(18.8)	(9.8)	52
24-35	13.8	311	(28.3)	(17.6)	43
36-47	18.8	275	(7.0)	(8.4)	52
48-59	14.7	257	(24.1)	(15.1)	38
Սեռ					
Արական	16.8	807	22.9	9.8	136
Սակավարյունությունը պայմանավորված է արյան մեջ հեմոգլոբինի նվազող խտությամբ: Հեմոգլոբինն անհրաժեշտ է դեպի մարմնի հյուսվածքներ և այլ օրգաններ թթվածնի փոխանցման համար: Օրգաններում և հյուսվածքներում թթվածնի քանակի նվազումը հեմոգլոբինի ցածր մակարդակի դեպքում բերում է սակավարյունության ախտանիշների դրսևորման: Սակավարյունության հետևանքով առաջանում է ընդհանուր թուլություն, հաճախակի հոգնածություն և հիվանդությունների նկատմամբ ցածր դիմադրողականություն: Սակավարյունությունն երեխաների շրջանում առավել մտահոգիչ է, քանզի այն ուղեկցվում է մտավոր և ֆիզիկական թերզարգացվածությամբ: Սակավարյունություն ունեցող անձանց շրջանում աճում է հիվանդացության և մահացության ռիսկը:

ՀԺԱՀ-ի բաղադրիչներից մեկն է հանդիսանում կանանց և մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում սակավարյունության մակարդակի բացահայտումը: Սակավարյունության մակարդակի որոշման նպատակով չափվել է արյան մեջ հեմոգլոբինի պարունակությունը, որի ցածր խտությունը վկայում է սակավարյունության մասին: Հեմոգլոբինի չափման նպատակով մատից վերցվել է մազանոթային արյուն՝ օգտագործելով «ՀեմոՔյու» սարքի ապահով նշտարները (ստերիլ, միանվագ օգտագործման պարագաներ, որոնք թույլ են տալիս համեմատաբար անցավ ծակել մաշկը): Ինչպես արդեն նկարագրվել է առաջին գլխում, այդ գործընթացն իրականացվել է հատուկ ուսուցում անցած բուժաշխատողների կողմից, որոնք կցված էին ՀԺԱՀ-ն իրականացնող յուրաքանչյուր թիմին: Մինչև 5 տարեկան 1333 երեխաներից 83 տոկոսին կատարվել է հեմոգլոբինի չափում:

Համաձայն արյան մեջ հեմոգլոբինի պարունակության, սակավարյունության մակարդակները դասակարգվել են որպես ծանր, միջին և թեթև սակավարյունություն՝ ըստ ԱՀԿ-ի կողմից սահմանված չափորոշիչների (Դե Մայեր և այլք, 1989): Քանի որ հեմոգլոբինի մակարդակը փոփոխվում է կախված ծովի մակերևույթի նկատմամբ բարձրությունից, ստացված տվյալները ճշտվել են յուրաքանչյուր ընտրանքային միավորի համար՝ ըստ ծովի մակարդակի նկատմամբ բարձրության: Սակավարյունության մակարդակները դասակարգվել են հետևյալ կերպ՝

- թեթև/ցածր՝ հեմոգլոբինի պարունակությունը 10.0-10.9 g/dl
- միջին՝ հեմոգլոբինի պարունակությունը 7.0-9.9 g/dl
- ծանր՝ հեմոգլոբինի պարունակությունը մինչև 7.0 g/dl:

Աղյուսակ 12.8-ում ներկայացված են 6-59 ամսական երեխաների սակավարյունության ցուցանիշները: Երեխաների 37 տոկոսի մոտ գրանցվել է սակավարյունություն, ընդ որում նրանցից մոտ կեսն ունի միջին սակավարյունություն, իսկ 1 տոկոսը՝ ծանր սակավարյունություն: Սակավարյունություն ունեցող քաղաքաբնակ երեխաները փոքր-ինչ գերակշռում են, հատկանշական է, որ նրանց միջին սակավարյունության ցուցանիշները երկու անգամ գերազանցում են գյուղաբնակ երեխաների նույն ցուցանիշին: Երեխաների սակավարյունության ցուցանիշը զգալի տարբերվում է ըստ մարզերի: Մարզային կտրվածքով սակավարյունությունը երեխաների շրջանում բաշխվել է հետևյալ կերպ՝ ամենացածրը 7 տոկոս Վայոց ձորում, իսկ ամենաբարձրը 63 տոկոս Գեղարքունիքում: Սպասումներին հակառակ, երեխայի մոտ սակավարյունության առկայության հավանականությունը բարձրանում է մոր կրթական և բարեկեցության մակարդակին զուգընթաց: Երեխայի սակավարյունության բարձր մակարդակի և մոր կրթական ու բարեկեցության մակարդակի միջև դրական կապն անհասկանալի է: Այս երևույթը հնարավոր է պայմանավորված լինի Երևանում և Գեղարքունիքում գրանցված սակավարյունության բարձր ցուցանիշներով (տես ներքևում):

ՀԺԱՀ 2000 և 2005 հետազոտությունների համեմատության արդյունքում կարելի է նշել, որ երեխաների շրջանում սակավարյունության ցուցանիշը վերջին հինգ տարիների ընթացքում աճել է ավելի քան հիսուն տոկոսով (հիմնականում ցուցանիշի աճը

պայմանավորված է միջին սակավարյունության մակարդակի բարձրացմամբ): Ի տարբերություն ՅՄԱԳ-2000-ին գրանցված 24 տոկոս ցուցանիշի, ՅՄԱԳ-2005-ի արդյունքների համաձայն 6-59 ամսական երեխաների 37 տոկոսն ունեցել է սակավարյունության որևէ մակարդակ: Այս նշանակալի աճն առավել զարմանալի է, քանզի դաշտային աշխատանքները տեղի են ունեցել սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին, այսինքն բերքառատ ժամանակաշրջանում, երբ ակնկալվում է սակավարյունության առավել թեթև մակարդակ, քան տարվա մյուս ժամանակահատվածներում: 2000 և 2005թ-ի ցուցանիշների միջև ամենամեծ տատանումը գրանցվել է Երևանում և Գեղարքունիքում: Օրինակ՝ Երևանում սակավարյունության որևէ մակարդակ ունեցող երեխաների մասնաբաժինը հինգ տարիների ընթացքում եռապատկվել է՝ 13 տոկոսից (2000թ) մինչև 45 տոկոս (2005թ): Նմանապես Գեղարքունիքում, սակավարյունության որևէ մակարդակ ունեցող երեխաների մասնաբաժինը կրկնապատկվել է՝ 32 տոկոսից մինչև 63 տոկոս: Նման մեծ տատանումներն անհավանական են: Անշուշտ, հնարավոր է տատանումը բացատրել աղքատության բևեռացմամբ և առավել աղքատ տնային տնտեսությունների տեղափոխությամբ այնպիսի մեծ մարզեր, ինչպիսիք են Երևանը և Գեղարքունիքը: Ինչպես նաև հնարավոր է սխալներ են տեղ գտել տվյալների հավաքագրման ընթացքում և սխալ են օգտագործվել սակավարյունության որոշման սարքերը կամ նշտարները: Երբ աղյուսակից բացառվում են Երևան և Գեղարքունիք մարզերը, ապա չի նկատվում ոչ մի էական փոփոխություն վերջին հինգ տարիների ընթացքում, ինչպես նաև հավանական է դառնում մոր կրթական մակարդակի և երեխայի սակավարյունության որևէ մակարդակ ունենալու կախվածությունը, այսինքն սակավարյունությունն առավել տարածված է ցածր կրթությամբ մայր ունեցող երեխաների շրջանում:

Աղյուսակ 12.8 Սակավարյունության տարածվածությունը երեխաների շրջանում

6-59 ամսական երեխաների տոկոսը, ովքեր ունեն սակավարյունություն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Սակավարյունության կարգավիճակն ըստ հեմոգլոբինի մակարդակի՝				Երեխաների թվաքանակ
	Որևէ սակավարյունություն (<11 g/dl)	Ցածր (10.0-10.9 g/dl)	Միջին (7.0-9.9 g/dl)	Ծանր (ցածր 7.0 g/dl)	
Տարիքն ամիսներով					
6-8	(77.3)	(45.6)	(27.5)	(4.2)	49
9-11	67.9	20.9	39.5	7.5	71
12-17	52.6	20.6	30.5	1.5	123
18-23	37.7	18.4	18.4	1.0	127
24-35	32.4	14.4	17.6	0.3	267
36-47	22.5	10.6	11.0	0.9	243
48-59	28.2	14.5	13.7	0.0	225
Սեռ					
Արական	35.6	14.3	19.8	1.6	616
Իգական	37.6	19.4	17.4	0.7	490
Հարցված կանանց երեխաներ	36.7	16.7	18.7	1.2	1,094
Բնակավայր					
Քաղաքային	37.8	14.0	22.6	1.2	666
Գյուղական	34.6	20.4	12.9	1.2	440
Մարզ					
Երևան	44.7	11.7	31.5	1.4	403
Արագածոտն	26.5	16.3	3.1	7.1	43
Արարատ	30.6	27.9	2.7	0.0	107
Արմավիր	43.6	23.1	20.5	0.0	95
Գեղարքունիք	62.5	26.2	32.3	4.0	93
Լոռի	17.9	8.6	9.3	0.0	77
Կոտայք	31.2	21.1	10.1	0.0	81
Շիրակ	17.9	12.8	4.2	0.9	74
Սյունիք	24.8	16.7	8.1	0.0	53
Վայոց ձոր	(6.9)	(4.9)	(0.0)	(2.0)	10
Տավուշ	19.6	14.4	5.3	0.0	70
Սոր կրթություն¹					
Հիմնական ընդհանուր	30.0	17.6	11.4	1.1	115
Միջնակարգ ընդհանուր	37.9	15.8	20.9	1.2	423
Միջին մասնագիտական	32.3	18.5	13.5	0.3	325
Բարձրագույն	43.6	15.0	25.9	2.7	239
Բարեկեցության մակարդակ					
Ամենացածր	32.0	17.6	11.8	2.6	218
Ցածր	33.2	19.5	13.4	0.3	208
Միջին	29.3	15.9	13.2	0.1	234
Բարձր	40.6	18.6	21.6	0.4	233
Ամենաբարձր	47.7	11.1	34.0	2.7	214
Ընդամենը	36.5	16.5	18.7	1.2	1,106

Նշում՝ Աղյուսակը հիմնված է հարցմանը նախորդող զիշերն այդ SS-ում զիշերած երեխաների վրա: Տարածվածությունը հաշվարկվել է հաշվի առնելով բարձրությունը՝ հատուկ բանաձևով, 1998թ: Հեմոգլոբինը ներկայացվել է g/dl-ով (գրամ/դեցիլիտր): Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: ¹Հարցված կանանց համար, տեղեկատվությունը վերցվել է SS հարցաթերթից: Բացառվել են այն երեխաները, որոնց մայրերը չեն ցուցակագրվել SS հարցաթերթում:

12.4 ՄԻԿՐՈՍՆՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Միկրոսննդարար նյութերի պակասը հանդիսանում է երեխաների հիվանդացության և մահացության հիմնական պատճառներից մեկը: Աղյուսակ 12.9-ը ցույց է տալիս, մի քանի կարևորագույն միկրոսննդանյութերի՝ A վիտամինի, երկաթի և յոդի վերաբերյալ տեղեկատվություն: A վիտամինով հարուստ մրգերի և բանջարեղենի օգտագործումը կանխարգելում է A վիտամինի դեֆիցիտը, որը բարձրացնում է սուր հիվանդացության ռիսկը և կարող է տեսողության վատթարացման պատճառ հանդիսանալ:

6-35 ամսական երեխաների 56 տոկոսը հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում կերել է A վիտամինով հարուստ մրգեր և բանջարեղեն: A և C վիտամիններով հարուստ մրգերից և բանջարեղենից բացի անհրաժեշտ է նաև օգտագործել երկաթ պարունակող սնունդ, որը կանխարգելում է սակավարյունության առաջացման ռիսկը: 6-35 ամսական չորս երեխաներից երեքը հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում կերել են երկաթ պարունակող սնունդ: Ի տարբերություն կրծքով կերակրվող երեխաների, կրծքով չկերակրվող երեխաներն ավելի շատ են ստացել A վիտամինով ու երկաթով հարուստ սնունդ: Հավանականությունը, որ երեխան կստանա կարևորագույն միկրոսննդարար նյութեր պարունակող սնունդ, դրականորեն կապված է մոր կրթական և բարեկեցության մակարդակների հետ: Հետազոտության արդյունքները վկայում են, որ A վիտամինով ու երկաթով հարուստ սնունդ ամենաքիչը ստացել են Արարատի և Շիրակի մարզերի երեխաները, իսկ ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Արագածոտնում և Վայոց ձորում: Որոշ մարզերում երեխաների փոքր թվաքանակը խոչնդոտել է ճշգրիտ վերլուծության կատարմանը:

Աղիքային ճիճուները կարող են սակավարյունության և A վիտամինի պակասի պատճառ հանդիսանալ: 6-59 ամսական երեխաների մայրերին տրվել է հարց, թե արդյոք վերջին վեց ամիսների ընթացքում նրանց երեխան ընդունել է երկաթ պարունակող հավելումներ կամ հակաճիճվային դեղորայք: Հարցմանը նախորդող 6 ամիսների ընթացքում երեխաների 2 տոկոսին տրվել է երկաթ պարունակող հավելումներ, իսկ 18 տոկոսին՝ հակաճիճվային դեղորայք (Աղյուսակ 12.9):

Սննդի մեջ յոդի պարունակության անբավարար քանակը կարող է առաջացնել առողջական լուրջ խնդիրներ: Օգտագործելով Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գրասենյակի կողմից տրամադրված հատուկ թեստերը՝ հետազոտության ընթացքում տնային տնտեսություններում ստուգվել է կերակրի աղում յոդի պարունակությունը: Աղը համարվում է բավարար յոդացված, եթե դրանում յոդի պարունակությունը կազմում է ամենաքիչը մեկ միլիոնի 15-րդ մասը (15 ppm): Աղյուսակ 12.9-ը ցույց է տալիս, որ Հայաստանի գրեթե բոլոր երեխաները բնակվում են բավարար յոդացված աղ ունեցող տնային տնտեսություններում (98 տոկոս): Բացառություն են կազմում միայն Լոռու մարզի երեխաները, որոնց տնային տնտեսությունների միայն 84 տոկոսի աղն է եղել համապատասխան յոդացվածության աստիճանի:

Հետազոտության ընթացքում աղը ստուգվել է գրեթե բոլոր տնային տնտեսություններում: Աղյուսակ 12.10-ը ցույց է տալիս, որ Հայաստանի գրեթե բոլոր տնային տնտեսությունների աղն եղել է համապատասխան յոդացվածության աստիճանի (97 տոկոս): Տվյալները վկայում են, որ ՀԺԱՀ-2000-ի համենատարածք, երբ յոդացված աղ ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 84 տոկոս, այս ոլորտում տեղի է ունեցել կտրուկ բարելավում: Ըստ ՀԺԱՀ-2005-ի մարզերի մեծամասնությունում յոդացված աղ ունեցող տնային տնտեսությունները կազմել են 99-100 տոկոս: Լոռու մարզում արձանագրվել է ամենացածր ցուցանիշը՝ 82 տոկոս:

Աղյուսակ 12.9 Միկրունդարար նյութերի օգտագործումը երեխաների շրջանում

Մոր հետ բնակվող 6-35 ամսական ամենափոքր տարիքի երեխաների տոկոսը, ովքեր ստացել են վիտամին A-ով հարուստ, և երկաթ պարունակող սնունդ, հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում, և 6-59 ամսական երեխաների տոկոսը, ովքեր հարցման պահին ստացել են երկաթ պարունակող հաբեր, ովքեր ստացել են հակաճիճվային դեղորայք, հարցմանը նախորդող վեց ամսվա ընթացքում և ովքեր ապրում են համապատասխան յոդացվածության աստիճանի աղ ունեցող SS-ներում, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	6-35 ամսական ամենավերջին երեխայի համար ¹			6-59 ամսական երեխայի համար ²			6-59 ամսական երեխաների շրջանում յոդացված աղ ունեցող SS	
	Նախորդ 24 ժամվա ընթացքում վիտամին A-ով հարուստ սնունդի ստացածների տոկոս ¹	Նախորդ 24 ժամվա ընթացքում երկաթով հարուստ սնունդի ստացածների տոկոս ²	Երեխաների թվաքանակ	Հարցման պահին երկաթ պարունակող հաբեր ստացողների տոկոս	Նախորդ վեց ամսվա ընթացքում հակաճիճվային դեղորայք ստացածների տոկոս ³	Երեխաների թվաքանակ	Համապատասխան յոդացվածության աղ ունեցող SS-ում ապրող երեխաների տոկոս ⁴	Երեխաների թվաքանակ
	Տարիքն ամիսներով							
6-8	34.4	25.1	73	1.9	22.1	73	100.0	71
9-11	61.5	62.6	87	5.5	21.3	89	100.0	89
12-17	44.1	75.5	128	0.7	27.1	134	96.9	134
18-23	56.0	83.7	147	1.2	18.6	168	100.0	167
24-35	67.7	89.3	241	1.7	20.4	311	97.5	309
36-47	42	42	42	2.4	13.7	275	97.7	275
48-59	42	42	42	2.0	13.7	257	98.9	256
Սեռ								
Արական	58.2	72.7	392	1.3	19.0	729	98.4	727
Իգական	53.7	78.4	284	2.9	17.4	578	98.4	573
Կրծքով կերակրման կարգավիճակ								
Կերակրվում է կրծքով	43.6	57.2	178	2.9	19.5	186	99.4	185
Չի կերակրվում կրծքով	60.7	81.4	495	1.9	18.3	1,106	98.2	1,101
Մոր տարիքը ծննդաբերության ժամանակ								
<20	46.2	78.7	70	2.9	13.4	179	97.6	177
20-24	58.6	76.7	315	2.1	17.2	630	97.9	628
25-29	54.1	70.5	187	1.8	20.3	317	98.8	316
30-34	54.3	75.4	63	1.5	20.0	107	100.0	107
35-49	(69.2)	(77.2)	42	0.7	28.5	73	100.0	73
Բնակավայր								
Քաղաքային	60.1	78.5	422	2.4	19.2	798	97.9	796
Գյուղական	50.0	69.5	254	1.3	16.9	509	99.2	504
Սարգ								
Երևան	64.8	83.3	269	2.1	21.1	500	98.4	500
Արագածոտն	73.4	84.5	42	2.0	13.3	76	99.9	75
Արարատ	23.1	60.5	55	1.0	14.8	101	100.0	101
Արմավիր	48.4	67.3	56	0.0	20.5	113	100.0	113
Գեղարքունիք	46.2	70.4	49	3.8	15.3	109	100.0	106
Լոռի	(64.6)	(71.3)	40	5.2	25.2	78	83.9	76
Կոտայք	62.4	71.8	56	0.9	21.6	104	99.3	104
Շիրակ	(31.4)	(48.5)	40	2.0	9.5	82	100.0	81
Սյունիք	45.7	74.5	29	2.4	13.0	57	100.0	57
Վայոց ձոր	(68.7)	(89.2)	7	5.6	8.7	18	100.0	18
Տավուշ	66.7	81.2	31	0.4	14.3	70	100.0	70
Մոր կրթություն								
Հիմնական ընդհանուր	(36.6)	(75.9)	52	0.0	10.9	122	100.0	118
Միջնակարգ ընդհանուր	50.7	73.2	246	2.1	18.6	501	97.4	500
Միջին մասնագիտական	59.7	73.3	214	1.8	19.6	384	99.7	383
Բարձրագույն	66.6	79.9	164	2.9	19.2	299	97.6	299
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	48.5	68.0	121	1.8	18.2	251	99.1	245
Ցածր	48.2	75.0	138	3.5	15.0	252	98.2	252
Միջին	55.9	63.7	131	1.7	17.2	252	98.4	252
Բարձր	54.9	81.3	155	1.5	12.3	283	100.0	283
Ամենաբարձր	74.3	85.9	130	1.6	28.7	269	96.2	269
Ընդամենը	56.3	75.1	676	2.0	18.3	1,307	98.4	1,301

Նշում՝ Վիտամին A-ով և երկաթով հարուստ հավելումների ու հակաճիճվային դեղորայքի ընդունման վերաբերյալ տվյալները հիմնված են մոր պատասխանների վրա: Ընդամենում ներառված է կրծքով կերակրման կարգավիճակի վերաբերյալ բացակայող տվյալների 14 դեպք: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

¹ ՎԿ = Կիրառելի չէ
² Ներառված են դուրսը, գազարը, քաղցր կարտոֆիլը, մուգ կանաչ, տերևախիտ բանջարեղեն, մանգո և այլ ներսից դեղին կամ նարնջագույն վիտամին A-ով հարուստ պտուղներ

³ Միս (նաև ներքին օրգանների միս՝ լյարդ, թոք և այլն), թռչնամիս, ձուկ, ձկնամթերք և ձու

⁴ Աղիքային բակտերիաների դեմ հակաճիճվային դեղորայքի ընդունումը կանխում է ճիճուների առաջացումը:

⁵ Աղում պարունակվել է 15ppm (բաժինը մեկ միլիոնի հաշվով) կամ ավելի: Բացառվել են այն երեխաները, որոնց SS-ներում չի կատարվել աղի թեստ:

Աղյուսակ 12.10 Յողացված աղի առկայությունը ՏՏ-ում

ՏՏային տնտեսությունների տոկոսային բաշխումն ըստ աղի յողացվածության աստիճանի (բաժինը մեկ միլիոնի հաշվով) և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Աղի յողացվածության աստիճան՝			Ընդամենը	Աղի թեսթ կատարված ՏՏ թիվ
	Չկա (0 ppm)	Անբավարար (<15 ppm)	Բավարար (15+ ppm)		
Բնակավայր					
Քաղաքային	0.2	2.8	97.0	100.0	4,399
Գյուղական	0.6	1.9	97.5	100.0	2,257
Մարզ					
Երևան	0.2	1.8	98.1	100.0	2,530
Արագածոտն	1.4	1.9	96.7	100.0	248
Արարատ	0.0	0.0	100.0	100.0	491
Արմավիր	0.5	0.0	99.5	100.0	533
Գեղարքունիք	0.4	0.3	99.3	100.0	391
Լոռի	1.4	16.5	82.0	100.0	595
Կոտայք	0.8	1.8	97.4	100.0	501
Շիրակ	0.0	0.4	99.6	100.0	608
Սյունիք	0.0	0.0	100.0	100.0	319
Վայոց ձոր	0.0	0.0	100.0	100.0	115
Տավուշ	0.1	1.3	98.6	100.0	325
Բարեկեցության մակարդակ					
Ամենացածր	0.7	2.6	96.7	100.0	1,300
Ցածր	0.3	3.1	96.7	100.0	1,375
Միջին	0.6	3.1	96.3	100.0	1,442
Բարձր	0.2	1.6	98.2	100.0	1,324
Ամենաբարձր	0.1	1.9	98.0	100.0	1,216
Ընդամենը	0.4	2.5	97.1	100.0	6,656

Նշում՝ Ընդամենում ներառված չեն 51 ՏՏ, որտեղ աղ չի եղել ppm = բաժինը մեկ միլիոնի հաշվով

12.5 ԿԱՆԱՆՑ ՍՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

ՀԺԱՀ-ի ընթացքում, 15-49 տարեկան կանանց շրջանում կատարվել են անտրոպոմետրիկ չափումներ: Կանանց սնուցման կարգավիճակը կարևոր է և՛ որպես ընդհանուր առողջության բնութագրիչ, և՛ որպես հղիության ելքի վրա ազդող գործոն՝ թե՛ մոր, թե՛ մանկան տեսանկյունից: Կնոջ սնուցման կարգավիճակը բնորոշող երկու ցուցանիշները՝ հասակը և մարմնի զանգվածի ցուցանիշը (ՄՁՑ), ներկայացված են աղյուսակ 12.11-ում:

Մոր հասակը հանդիսանում է անցյալում սնուցման կարգավիճակի չափանիշ և մասնակիորեն արտացոլում է սոցիալ-տնտեսական վիճակի գումարային ազդեցությունն ու մանկության ընթացքում սննդի մատչելիությունը: Այն կարող է օգտագործվել՝ ծննդաբերությունների հետ կապված բարձր ռիսկը կանխատեսելու համար, քանի որ կարճ հասակը հաճախ ենթադրում է կոնքի փոքր չափեր, որի դեպքում էլ մեծանում է բարձր ծննդաբերության հավանականությունը: Կարճ հասակը կապված է նաև նորածնի ծննդյան ցածր քաշի, մեռելածնության բարձր ռիսկի և վիժման բարձր ցուցանիշների հետ: Հասակը, որից ցածր գտնվելը համարվում է սնուցման ռիսկ, տատանվում է 140-150 սմ-ի միջակայքում: ՀԺԱՀ-2005-ի ընթացքում հարցման ենթակա կանանց 93 տոկոսին կատարվել են չափումներ: Հայաստանի կանանց միայն 1 տոկոսն է եղել 145 սմ-ից ցածր: Նկատելի է ցուցանիշի աննշան տատանումն ըստ հիմնական բնութագրիչների:

Աղյուսակ 12.11 Կանանց սնուցման կարգավիճակն ըստ հիմնական բնութագրիչների

15-49 տարեկան կանանց շրջանում մինչև 145սմ հասակ ունեցողների տոկոսը, ՄՁՑ-ի միջինը և ՄՁՑ-ի հատուկ մակարդակներում գտնվողների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Հասակ		Մարմնի Չանգվածի Ցուցանիշ ՄՁՑ ¹ (կգ/մ ²)									
	Մինչև 145սմ հասակ ունեցողների տոկոս	145սմ հասակ բնութագրիչներ	Միջին ՄՁՑ	Նորմալ		Նիհար		Գերքաշ կամ գեր				
				18.5-24.9 (Ընդամենը (Ընդամենը նորմալ)	<18.5 (Ընդամենը (Ընդամենը նիհար)	17.0-18.4 (Ոչ շատ նիհար)	<17.0 (Միջին և շատ նիհար)	≥25.0 (Գերքաշ/ գեր)	25.0-29.9 (Գերքաշ)	30.0 կամ ավելի (Գեր)	Կանանց թվաքանակ	
Տարիք												
15-19	0.9	1,068	21.6	77.8	10.2	7.4	1.3	12.0	10.4	1.6	1,040	
20-29	0.9	1,956	22.9	68.1	8.8	6.7	0.4	23.1	17.2	5.9	1,775	
30-39	0.8	1,409	25.8	47.0	2.0	1.4	0.1	51.0	35.4	15.6	1,380	
40-49	1.1	1,833	28.4	26.6	1.2	1.0	0.0	72.2	39.5	32.6	1,821	
Բնակավայր												
Քաղաքային	0.7	3,969	24.9	53.7	5.5	4.4	0.3	40.8	25.2	15.6	3,801	
Գյուղական	1.3	2,295	25.2	50.3	4.6	3.0	0.4	45.2	29.9	15.3	2,215	
Մարզ												
Երևան	0.3	2,281	24.4	56.0	6.7	5.6	0.4	37.3	24.2	13.1	2,181	
Արագածոտն	1.0	284	25.4	48.9	4.1	2.7	0.0	47.1	28.1	18.9	276	
Արարատ	1.0	448	25.5	51.5	6.2	3.5	0.6	42.3	24.6	17.7	429	
Արմավիր	0.4	557	25.6	51.9	3.2	2.0	0.4	44.9	25.0	19.9	537	
Գեղարքունիք	1.8	416	24.3	57.4	4.3	2.4	0.6	38.3	30.3	8.0	405	
Լոռի	2.2	526	25.8	47.6	4.0	3.6	0.2	48.4	26.1	22.3	501	
Կոտայք	2.5	532	25.8	47.5	4.5	3.5	0.4	48.0	25.7	22.3	508	
Շիրակ	0.0	561	24.5	50.9	3.4	1.8	0.5	45.8	41.1	4.7	535	
Սյունիք	1.1	278	25.7	46.0	5.7	4.7	0.2	48.3	27.5	20.9	269	
Վայոց ձոր	0.9	100	24.1	63.1	3.4	2.1	1.1	33.5	24.0	9.5	96	
Տավուշ	1.9	283	26.3	46.1	4.7	3.2	0.0	49.2	26.5	22.8	278	
Կրթություն												
Հիմնական ընդհանուր	1.9	512	24.3	53.6	9.0	5.3	1.3	37.3	23.9	13.4	491	
Միջնակարգ ընդհանուր	0.9	2,351	25.2	50.9	4.1	3.0	0.5	45.0	28.1	16.9	2,249	
Միջին մասնագիտական	1.2	1,906	25.8	46.7	4.3	3.2	0.2	49.0	30.0	19.1	1,838	
Բարձրագույն	0.3	1,495	23.9	61.8	6.6	5.8	0.2	31.6	22.2	9.4	1,439	
Բարեկեցության մակարդակ												
Ամենացածր	1.6	1,136	24.7	53.3	4.5	2.9	0.6	42.2	30.3	11.9	1,095	
Ցածր	1.1	1,251	25.4	50.8	4.0	2.8	0.2	45.1	27.2	17.9	1,203	
Միջին	1.3	1,247	25.6	52.7	3.6	3.0	0.1	43.8	25.7	18.1	1,190	
Բարձր	0.7	1,279	25.1	51.0	5.6	3.9	0.8	43.5	25.3	18.1	1,223	
Ամենաբարձր	0.2	1,352	24.2	54.3	7.9	6.6	0.2	37.8	26.5	11.3	1,305	
Ընդամենը	0.9	6,265	25.0	52.4	5.2	3.9	0.4	42.4	26.9	15.5	6,016	

Նշում՝ Մարմնի Չանգվածի Ցուցանիշը (ՄՁՑ) արտահայտվում է որպես քաշի (կգ) հարաբերությունը հասակի (մ) քառակուսուն (կգ/մ²):

¹ Բացառվել են հղի և հարցմանը նախորդող 2 ամսվա ընթացքում ծննդաբերած կանայք

ՄՁՑ-ն, որն իր մեջ ներառում է հասակը և քաշը, հնարավորություն է տալիս ավելի լավ գնահատել նիհարությունը և գերքաշությունը, քան միայն քաշը: Այն հաշվարկվում է քաշը (կիլոգրամներով) բաժանելով հասակի (մետրերով) քառակուսուն (կգ/մ²): Ոչ հղի կանանց շրջանում ՄՁՑ-ի 18.5-ից ցածր ցուցանիշը սահմանվում է որպես կալորիականության քրոնիկական պակաս: Կանանց սնուցման կարգավիճակի գնահատման ժամանակ սխալներից խուսափելու նպատակով, հղի և հարցմանը նախորդող երկու ամիսների ընթացքում ծննդաբերած կանայք չեն ընդգրկվել քաշի և մարմնի Չանգվածի ցուցանիշների

հաշվարկման մեջ: Աղյուսակ 12.11-ը ցույց է տալիս, որ Հայաստանի կանանց 5 տոկոսը թերսնված է կամ ունի 18.5-ից ցածր ՄՁՑ, ինչն ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ին արձանագրված 4 տոկոս ցուցանիշի, փոքր-ինչ աճել է: Առավել հատկանշական է դեռահասների շրջանում 18.5-ից ցածր ՄՁՑ ունեցողների աճը 2000թ-ի 6 տոկոսից, մինչև 2005թ-ի՝ 10 տոկոսը:

ՄՁՑ-ն կարող է օգտագործվել նաև գերքաշ կամ գեր կանանց տեսակար կշիռը որոշելու նպատակով: 25.0-ն առաջարկվել է որպես սահմանային ցուցանիշ՝ «գերքաշությունը» բնորոշելու համար: 30.0-ից բարձր ցուցանիշը սահմանվել է որպես «գերություն»: Ըստ ՀԺԱՀ-2005թ-ի արդյունքների Հայաստանում 10 կանանցից մոտավորապես 4-ի քաշն ավելի է 25.0 ՄՁՑ-ից, ընդ որում՝ 27 տոկոսը գերքաշ է, 16 տոկոսը՝ գեր: Նկատվել է գերության չնչին աճ ՀԺԱՀ-2000-ի համեմատությամբ: 2000թ-ին եղել են նույն չափով՝ 27 տոկոս, գերքաշ կանայք, սակայն գեր կանանց տոկոսն աճել է 14-ից մինչև 16 տոկոս: Գերքաշության և գերության ցուցանիշները խիստ կախված են տարիքից: Օրինակ՝ ի տարբերություն 40-49 տարեկան կանանց մեկ երրորդի (33 տոկոս), 15-19 տարեկան կանանց միայն 2 տոկոսն է գեր: Չնայած քաղաքաբնակ և գյուղաբնակ կանայք հավասարապես են հակված գերության, այնուամենայնիվ, գյուղական բնակավայրերում նկատվել է գերքաշ կանանց չնչին առավելություն:

12.6. ԿԱՆԱՆՑ ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Թուլության, շուտ հոգնածության և հիվանդությունների հանդեպ ցածր դիմադրողականություն ունենալուց բացի, սակավարյունությունը նաև լուրջ խնդիր կարող է հանդիսանալ հղի կանանց համար՝ հանգեցնելով վաղաժամ ծննդաբերության և նորածնի ցածր քաշի: ՀԺԱՀ-2005-ի ընտրանքով ընդգրկված տնային տնտեսությունների 15-49 տարեկան բոլոր կանանց առաջարկվել է սակավարյունության ստուգման թեստ: Մինչև հետազոտվելը յուրաքանչյուր հարցվող կարողացել և տեղեկացել է սակավարյունության ստուգմանը չմասնակցելու իր իրավունքի մասին, ապա ստորագրել համաձայնության ձև, որով թույլատրել է արյուն վերցնել իրենից և իր մինչև հինգ տարեկան երեխայից: Հարցման ենթակա կանանց 91 տոկոսը մասնակցել է արյան մեջ հեմոգլոբինի մակարդակի չափմանը:

Աղյուսակ 12.12-ը ներկայացնում է կանանց շրջանում սակավարյունության ցուցանիշները: Հայաստանի կանանց 25 տոկոսն ունի սակավարյունության որևէ աստիճան՝ նրանց մեծամասնությունը (21 տոկոս) ունի ցածր սակավարյունություն, 3 տոկոսը՝ միջին սակավարյունություն և ավելի քիչ քան 1 տոկոսը՝ ծանր սակավարյունություն: Սակավարյունության ցուցանիշներն աճում են տարիքին զուգընթաց: Ի տարբերություն երիտասարդ կանանց, տարիքով մեծ կանանց շրջանում գրանցվել է սակավարյունության ավելի բարձր ցուցանիշ: Ըստ համարժեքության, երեխա չունեցող կանայք առավել քիչ են հակված սակավարյունություն ունենալուն, քան վեց և ավելի ծնունդ ունեցող կանայք: Ի տարբերություն գյուղաբնակների, սակավարյունության ցուցանիշներն ավելի բարձր են քաղաքաբնակ կանանց շրջանում: Սակավարյունության տարածվածությունն ըստ մարզերի տատանվում է ամենացածրը Տավուշում 14 տոկոսից, մինչև ամենաբարձրը Գեղարքունիքում՝ 33 տոկոս:

Վերջին հինգ տարիների ընթացքում, կանանց շրջանում տեղի է ունեցել սակավարյունության ցուցանիշի կրկնակի աճ՝ 12 տոկոսից (2000թ) մինչև 25 տոկոս (2005թ), որը հիմնականում պայմանավորված է սակավարյունության ցածր մակարդակի բարձրացմամբ: Չնայած նկատելի է սակավարյունության մակարդակի աճ բոլոր մարզերում, սակայն առավել ակնառու է աճը Երևանում և Գեղարքունիքում, նույն այն մարզերում, որտեղ գրանցվել է նաև սակավարյունության մակարդակի աճ երեխաների շրջանում: Եթե դիտարկվում է աղյուսակն առանց այդ երկու մարզերի, ապա ցուցանիշի տարբերությունը ՀԺԱՀ 2000 և 2005-ի միջև կազմում է ընդամենը 5 տոկոս (16 տոկոս՝ 2000թ-ին, և 21 տոկոս՝ 2005թ-ին): Հնարավոր է, որ կանանց շրջանում ցուցանիշների նման տատանման պատճառը

Երևանում և Գեղարքունիքում օգտագործված սակավարյունության մակարդակի չափման գործիքների անսարքությունն է:

Աղյուսակ 12.12 Սակավարյունության տարածվածությունը կանանց շրջանում
 15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր ունեն սակավարյունություն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Սակավարյունության կարգավիճակն ըստ հեմոգլոբինի մակարդակի ¹				
	Որև սակավարյունություն (<12 g/dl) ¹	Թույլ (11.9 g/dl) ²	Միջին (7.0-9.9 g/dl)	Սուր (Ցածր 7.0 g/dl)	Կանանց թվաքանակ
Տարիք					
15-19	21.4	17.3	3.3	0.7	1,025
20-29	22.6	19.9	2.3	0.4	1,884
30-39	25.2	21.3	3.4	0.5	1,371
40-49	28.0	23.2	4.2	0.6	1,800
Երբևէ ծնված երեխաների թվաքանակ³					
0	21.2	18.2	2.6	0.4	2,091
1	28.0	23.1	3.7	1.2	682
2-3	25.6	21.9	3.3	0.5	2,887
4-5	27.9	21.4	6.4	0.2	385
6+	34.6	29.5	1.6	3.5	34
Մայրական կարգավիճակ³					
Հղի	38.6	26.5	11.6	0.6	176
Կրծքով կերակրող	23.9	20.7	3.0	0.2	294
Ոչ մեկը	24.2	20.6	3.0	0.6	5,609
Օգտագործում է ՆԱՍ³					
Այո	29.8	25.5	3.8	0.5	367
Ոչ	24.2	20.5	3.2	0.5	5,713
Բնակավայր					
Քաղաքային	26.9	23.1	3.3	0.6	3,851
Գյուղական	20.5	16.7	3.2	0.5	2,229
Մարզ					
Երևան	28.8	25.0	3.3	0.5	2,192
Արագածոտն	17.3	11.9	4.4	1.1	253
Արարատ	21.7	18.8	2.4	0.4	434
Արմավիր	22.2	16.8	4.9	0.5	554
Գեղարքունիք	33.1	28.4	4.4	0.3	413
Լոռի	19.0	15.2	3.6	0.2	527
Կոտայք	21.0	17.5	3.1	0.3	518
Շիրակ	26.5	24.6	1.0	0.9	547
Սյունիք	20.6	15.5	4.2	0.9	277
Վայոց ձոր	17.8	14.7	1.2	2.0	81
Տավուշ	14.1	11.4	2.6	0.1	283
Կրթություն⁴					
Հիմնական ընդհանուր	20.4	16.6	3.1	0.7	498
Միջնակարգ ընդհանուր	25.2	21.3	3.2	0.7	2,291
Միջին մասնագիտական	24.9	21.1	3.2	0.5	1,858
Բարձրագույն	24.7	20.8	3.6	0.2	1,433
Բարեկեցության կարգավիճակ					
Ամենացածր	21.9	17.3	4.2	0.4	1,101
Ցածր	23.0	19.1	3.1	0.7	1,220
Միջին	24.6	20.8	2.8	0.9	1,223
Բարձր	25.8	23.4	2.0	0.4	1,249
Ամենաբարձր	27.2	22.6	4.3	0.3	1,287
Ընդամենը	24.6	20.8	3.3	0.5	6,080

Նշում՝ Աղյուսակը հիմնված է հարցմանը նախորդող գիշերն այդ ՏՏ-ում գիշերած կականց վրա: Տարածվածությունը որոշվել է բարձրության և ծխելու կարգավիճակի համար հատուկ (CDC) բանաձևով, 1998: Հեմոգլոբինի մակարդակն արտահայտված է g/dl-ով (գրամ/դեցիլիտր):
¹Հղի կանանց համար հեմոգլոբինի մակարդակն է <11.0 g/dl
²Հղի կանանց համար հեմոգլոբինի մակարդակն է 10-10.9 g/dl
³Չեն ներառվել հարցմանը չմասնակցած կանայք
⁴Չհարցված կանանց դեպքում տեղեկատվությունը վերցվել է ՏՏ հարցաթերթից:

12.7 ՄԻԿՐՈՍՆՆԴԱՐԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՅՐԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հղիության ընթացքում մոր սնուցման կարգավիճակը կարևոր է ինչպես երեխայի ներարգանդային զարգացման, այնպես էլ մայրական հիվանդացությունից ու մահացությունից պաշտպանվելու համար: Հավկուրությունը, որին առավել հակված են հղի կանայք, վկայում է A վիտամինի սուր պակասի մասին: Աղյուսակ 12.13-ը ցույց է տալիս, որ հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած վերջին երեխայի հղիության ընթացքում կանանց երեք տոկոսն ունեցել է հավկուրություն: Վերլուծելով նաև օրվա ընթացքում տեսողության հետ կապված խնդիրներ ունեցող կանանց տվյալները, պարզվել է,

Աղյուսակ 12.13 Միկրոսնդարար նյութերի օգտագործումը մայրերի շրջանում

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում ծնված վերջին երեխայի հղիության ընթացքում ունեցել են հավկուրություն, և ըստ նշված օրերի թվի երկաթ պարունակող հաբ կամ օշարակ ընդունած կանանց տոկոսը, համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Նախորդ 5 տարիների ընթացքում ծնված վերջին երեխայի համար							Կանանց թվաքանակ
	Կանանց տոկոսը, ովքեր հղիության ընթացքում ունեցել են հավկուրություն		Հղիության ընթացքում կնոջ կողմից երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ ընդունելու օրերի թիվը					
	Գրանցված	Բացահայտված ¹	Ոչ մեկը	<60	60-89	90+	Չգիտի/Տվյալ չկա	
Տարիք								
15-19	*	*	*	*	*	*	*	27
20-29	2.3	0.6	79.9	13.9	0.2	1.0	4.9	846
30-39	4.1	0.4	76.2	12.6	1.7	2.7	6.8	257
40-49	(15.0)	(11.5)	(89.3)	(0.8)	(3.6)	(0.0)	(6.3)	46
Բնակավայր								
Քաղաքային	3.6	1.3	76.8	14.8	1.1	1.9	5.3	736
Գյուղական	2.6	0.5	84.4	10.2	0.0	0.3	5.2	440
Մարզ								
Երևան	3.7	1.2	74.3	14.8	1.6	2.7	6.6	456
Արագածոտն	9.5	2.2	78.3	16.5	0.0	0.2	4.9	59
Արարատ	0.7	0.4	83.2	6.2	0.0	0.0	10.7	102
Արմավիր	1.0	0.0	88.1	8.4	0.0	0.0	3.4	95
Գեղարքունիք	4.3	0.0	86.4	7.6	0.0	0.0	6.0	87
Լոռի	3.6	2.4	67.9	29.6	0.9	1.6	0.0	76
Կոտայք	2.9	0.0	80.1	11.8	0.0	1.2	7.0	104
Շիրակ	0.0	0.0	90.0	8.1	0.0	0.0	1.8	72
Սյունիք	3.9	3.0	91.4	7.7	0.0	0.0	0.9	50
Վայոց ձոր	2.1	0.0	82.7	17.3	0.0	0.0	0.0	16
Տավուշ	3.0	2.1	84.1	14.3	0.0	0.6	1.0	61
Կրթություն								
Հիմնական ընդհանուր	0.8	0.3	84.8	4.0	0.0	0.0	11.2	99
Միջնակարգ ընդհանուր	4.2	2.0	84.6	10.4	0.4	0.0	4.6	442
Միջին մասնագիտական	1.0	0.5	82.2	13.0	0.0	1.9	2.9	359
Բարձրագույն	5.4	0.2	66.6	20.7	2.2	3.1	7.4	276
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	4.9	1.6	82.6	8.9	0.0	0.0	8.5	212
Ցածր	0.3	0.0	85.7	12.9	0.0	0.7	0.8	229
Միջին	5.0	1.0	80.7	14.7	0.0	0.6	4.0	224
Բարձր	3.9	2.2	80.6	11.3	1.0	1.0	6.1	265
Ամենաբարձր	2.1	0.0	69.6	17.4	2.2	3.9	6.9	245
Ընդամենը	3.2	1.0	79.7	13.1	0.7	1.3	5.3	1,176

Նշում՝ Վերջին հինգ տարիների ընթացքում երկու և ավելի կենդանի ծնունդ ունեցած կանանց տվյալները ներկայացվել են վերջին երեխայի համար: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են մինչև 25 չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

¹Կանայք, ովքեր գրանցել են հավկուրության առկայության մասին, սակայն նշել են, որ չեն ունենում տեսողության անկում օրվա ընթացքում:

որ նրանց մեկ տոկոսն ունեցել է հավկուրություն և այդ ցուցանիշը չի փոխվել 2000թ-ից ի վեր: Փոքր տոկոսները թույլ չեն տալիս այս խնդրի շուրջ վերլուծություն կատարել Հայաստանի բնակչության ենթախմբերի միջև առկա տարբերությունների վերաբերյալ:

Երկաթ-դեֆիցիտով պայմանավորված սակավարյունությունը հանդիսանում է մայրական առողջության հիմնական վտանգը: Այն հանգեցնում է ցածր քաշով երեխաների ծնունդների, վարակների նկատմամբ ցածր դիմադրողականության, նորածնի թերի մտավոր զարգացման և մոր աշխատունակության անկման: Հետազայում, սակավարյունությունը նաև բարձրացնում է հիվանդացությունը վարակներից, քանի որ այն իր վատ ազդեցությունն է թողնում ինունային համակարգի վրա: Հետազոտության ժամանակ հարցմանը նախորդող 5 տարիների ընթացքում ծննդաբերած կանանց տրվել է հարց, թե արդյոք նրանք իրենց վերջին հղիության ընթացքում ստացել կամ զմեկ են երկաթ պարունակող հաբեր: Դրական պատասխանի դեպքում, կանանց խնդրել են նշել տվյալ հղիության ընթացքում հաբեր ընդունած օրերի թիվը:

Աղյուսակ 12.13-ը ցույց է տալիս, որ հետազոտությանը նախորդող հինգ տարիների վերջին հղիության ժամանակ կանանց 80 տոկոսը չի ընդունել երկաթ պարունակող հաբեր կամ օշարակ: Կանանց միայն մեկ տոկոսն է նշել, որ վերջին հղիության ընթացքում առնվազն 90 օր ընդունել է երկաթ պարունակող հավելումներ, որն էլ հանդիսանում է ընդունված նվազագույն չափորոշիչ: Հարկ է նշել, որ հնարավոր է հղի կանայք ստացել են պոլիվիտամիններ, որոնք պարունակում են երկաթ, սակայն հետազոտության ժամանակ չեն նշել այն, որպես երկաթի հավելում: Այս ցուցանիշը նույնն է, ինչ արձանագրվել է 2000թ-ին:

ՄԻԱՎ/ՉԻԱՐ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՅՈՎ 13 ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՅԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարդու ինունային անբավարարության վիրուսը (ՄԻԱՎ) հանդիսանում է ձեռքբերովի ինունային անբավարարության համախտանիշի (ՉԻԱՐ) պատճառ և թուլացնում է ինունային համակարգը, ինչի արդյունքում օրգանիզմն ընկալունակ է դառնում այլ հիվանդությունների նկատմամբ, և հիվանդանալուց հետո մարդն այլևս չի կարողանում ապաքինվել: ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ը պանդեմիա է, որի մասին, ըստ էության, հաղորդում են բոլոր երկրները: Ըստ Միավորված Ազգերի Կազմակերպության ՄԻԱՎ (ՄԱԿ/ՄԻԱՎ) ծրագրի աշխարհում ՄԻԱՎ-ով վարակված մարդկանց թիվը 2005թ-ին հասել է 38.6 միլիոնի: Վերջին տարիներին ՄԻԱՎ-ով վարակվել է 4.1 միլիոն մարդ և մոտ 2.8 միլիոն մարդ մահացել է ՉԻԱՐ-ից (ՄԱԿ/ՄԻԱՎ, 2006):

1988 թվականից մինչև 2006 թվականի օգոստոսի 31-ը Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է 436 ՄԻԱՎ վարակակիր, որոնցից 415-ը ՀՀ քաղաքացիներ են: Գրանցված ՄԻԱՎ վարակակիրների մեծամասնությունը (77 տոկոս) տղամարդիկ են, իսկ կանայք կազմել են ընդամենը 23 տոկոս: Գրանցված վարակակիրներից ութը՝ երեխաներ են (2 տոկոս): Գրանցված ՄԻԱՎ վարակակիրների ճնշող մեծամասնությունը (75 տոկոս) գտնվում են 20-39 տարիքային խմբում: Գրանցված ՄԻԱՎ վարակակիրների կեսը մայրաքաղաք Երևանից են: Հաջորդ բարձր ցուցանիշը գրանցվել է Շիրակի մարզում, որտեղ ցուցանիշը կազմել է բոլոր գրանցված դեպքերի 9 տոկոսը (NCAP, 2006):

ՄԻԱՎ դեպքերի մեծամասնությունը գրանցվել է վերջին տարիներին: Օրինակ՝ 2005թ-ին գրանցվել է ՄԻԱՎ-ի 78 դեպք, իսկ 2006թ-ի օգոստոսի դրությամբ գրանցվել է 54 նոր դեպք: Հայաստանի Հանրապետությունում վարակի փոխանցման ամենատարածված պատճառներն են ներերակային թմրադեղերի օգտագործումը (53 տոկոս) և հետերոսեքսուալ հարաբերությունները (39 տոկոս):

Հայաստանում ընդամենը 145 մարդու մոտ է ախտորոշվել ՉԻԱՐ, որոնցից 25-ը կանայք են և 4-ը՝ երեխաներ: Գրանցված դեպքերից 41-ն ախտորոշվել են 2005թ-ին, և 40-ը՝ մինչև 2006թ-ի օգոստոսը: Ընդհանուր առմամբ, Հայաստանում գրանցվել է ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ով հիվանդ մարդկանց մահվան 92 դեպք, որոնցից 18 կին և 3 երեխա (NCAP, 2006): «Այլ հետխորհրդային երկրների համեմատ, ինչպիսիք են Ռուսաստանը և Ուկրաինան, ՄԻԱՎ-ի մակարդակը Հայաստանում բարձր չէ: 1988թ-ից մինչև 2005թ-ի մարտ ամիսը գրանցել է 317 ՄԻԱՎ-ով հիվանդ: Ինչպես և մյուս հետխորհրդային երկրներում, Հայաստանում նույնպես ՄԻԱՎ-ը տարածվել է ներերակային թմրադեղերի օգտագործման միջոցով:» (Մարկոսյան, 2005):

ՀԺԱՀ-2005-ի ընթացքում կանանցից և տղամարդկանցից հավաքագրվել է տեղեկատվություն ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ով և այլ սեռական ճանապարհով փոխանցվող (ՍՃՓ) հիվանդությունների (սիֆիլիս, զոնորեա, խլամիդիոզ) վերաբերյալ: Այս գլուխն ամփոփում է ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի գիտելիքների, իմացության և վարքագծի վերաբերյալ տեղեկացվածությունն ազգային մակարդակով, այդ թվում՝ ըստ բնակչության աշխարհագրական և սոցիալ-տնտեսական ենթախմբերի:

13.1 ՄԻԱՎ/ՉԻԱՐ-Ի ԵՎ ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Աղյուսակ 13.1-ը ցույց է տալիս ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի մասին երբևէ լսած 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ հիմնական բնութագրիչների: ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի մասին իրազեկությունը Հայաստանում չափազանց բարձր է. ՀԺԱՀ-2005-ի ընթացքում կանանց 95 և տղամարդկանց 92 տոկոսը նշել են, որ երբևէ լսել են ՄԻԱՎ/ՉԻԱՐ-ի մասին:

Աղյուսակ 13.1 Գիտելիքներ ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի մասին

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր լսել են ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի մասին ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք		Տղամարդիկ	
	Լսել է ՉԻԱՅ-ի մասին	Կանանց թվաքանակ	Լսել է ՉԻԱՅ-ի մասին	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք				
15-19	90.8	1,123	81.6	292
20-24	95.9	1,131	94.4	237
25-29	97.5	929	96.3	202
30-39	97.5	1,460	94.8	306
40-49	95.3	1,922	94.9	410
15-24	93.4	2,254	87.3	529
Ամուսնական կարգավիճակ				
Երբևէ չամուսնացած	92.9	2,043	88.2	615
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	*	25	95.4	280
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	92.8	2,017	82.1	336
Հարցման պահին ամուսնացած	96.6	4,044	95.7	815
Նախկինում ամուսնացած	96.3	479	*	17
Բնակավայր				
Քաղաքային	97.6	4,194	92.8	913
Գյուղական	91.6	2,372	91.5	534
Մարզ				
Երևան	99.1	2,468	92.6	547
Արագածոտն	87.2	292	99.8	71
Արարատ	93.0	462	99.6	110
Արմավիր	92.4	567	97.4	139
Գեղարքունիք	94.2	443	90.2	81
Լոռի	96.6	537	92.4	87
Կոտայք	92.9	563	97.9	151
Շիրակ	90.3	563	79.4	98
Սյունիք	96.7	281	69.8	67
Վայոց ձոր	98.8	107	89.6	31
Տավուշ	94.6	285	91.9	64
Կրթություն				
Հիմնական ընդհանուր	80.0	529	80.0	205
Միջնակարգ ընդհանուր	94.1	2,440	92.5	586
Միջին մասնագիտական	98.0	1,997	94.1	310
Բարձրագույն	99.4	1,600	97.5	346
Բարեկեցության մակարդակ				
Ամենացածր	87.5	1,164	88.6	261
Ցածր	93.8	1,284	89.5	264
Միջին	97.1	1,303	93.8	326
Բարձր	97.9	1,375	93.5	316
Ամենաբարձր	99.5	1,440	95.3	280
Ընդամենը	95.4	6,566	92.3	1,447

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությանը (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

Այս ցուցանիշներն ՀԺԱՀ-2000-ի արդյունքում կազմել են համապատասխանաբար՝ 94 և 97 տոկոս: Ըստ բոլոր հիմնական բնութագրիչների կանանց և տղամարդկանց առնվազն 85 տոկոսը լսել է ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մասին՝ բացառությամբ հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց և տղամարդկանց (80 տոկոս), 15-19 տարեկան տղամարդկանց (82 տոկոս), ինչպես նաև Շիրակի (79 տոկոս) և Սյունիքի (70 տոկոս) մարզերի տղամարդկանց:


ՄԻԱՎ-ի կանխարգելման ծրագրերն իրենց նպատակները և ջանքերը կենտրոնացնում են վարքագծի երեք կարևոր գործոնների վրա՝ պահպանակի օգտագործում, սեռական զուգընկերների թվաքանակի սահմանափակում կամ հավատարմություն մեկ զուգընկերոջը և սեռական հարաբերությունների զսպվածություն: Աղյուսակ 13.2-ը և Գծապատկեր 13.1-ը ցույց են տալիս այն կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ից խուսափելու ուղիներ: Ընդհանուր առմամբ, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ից խուսափելու ամենատարածված պատասխանը եղել է միայն մեկ զուգընկերոջ հետ սեռական հարաբերություններ ունենալը, ով վարակված չէ ՄԻԱՎ-ով (կանանց 80 և տղամարդկանց 86 տոկոս): Սեռական հարաբերություններից խուսափելը, որպես մեթոդ նշել են կանանց և տղամարդկանց գրեթե նույն համասանությունը (տասից ութ հարցվող), իսկ պահպանակի օգտագործման վերաբերյալ նշել են կանանց 72 և տղամարդկանց 81 տոկոսը: Կանանց երկու երրորդը և տղամարդկանց երեք քառորդից ավելին (78 տոկոս) նշել են պահպանակի օգտագործման և մեկ չվարակված սեռական զուգընկերոջով սահմանափակվելու մասին:

Ի տարբերություն տարիքով ավելի մեծ և երբևէ ամուսնացած հարցվողների, երիտասարդ և երբևէ չամուսնացած հարցվողները, մասնավորապես, սեռական հարաբերություն չունեցած տղամարդիկ, ավելի քիչ են տեղեկացված ՄԻԱՎ-ից պաշտպանվելու մեթոդների մասին: Քաղաքաբնակ կանայք առավել տեղյակ են ապահով սեռական հարաբերությունների մասին, քան գյուղաբնակ կանայք: Խիստ դրական կապ է նկատվում հարցվողի կրթական և բարեկեցության մակարդակների ու ՄԻԱՎ-ից խուսափելու ուղիների վերաբերյալ նրա ունեցած գիտելիքների միջև:

Օրինակ՝ սեռական հարաբերություններից հրաժարումը, որպես ՄԻԱՎ-ից խուսափելու մեթոդ, նշել են հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց 54 տոկոսը, իսկ միջնակարգ ընդհանուր կրթական մակարդակից բարձր կրթություն ունեցող կանանց՝ 90 տոկոսը:

Հիմնական ընդհանուր կրթություն ունեցող տղամարդկանց գրեթե երկու երրորդը, որպես ՄԻԱՎ-ից խուսափելու մեթոդ, նշել է պահպանակի օգտագործումը, մինչդեռ նույն ցուցանիշը միջնակարգ ընդհանուր կրթական մակարդակից բարձր կրթություն ունեցող տղամարդկանց շրջանում կազմել է 90 տոկոսից ավելի:

Գծապատկեր 13.1. 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ից խուսափելու հատուկ մեթոդների մասին իմացություն



Աղյուսակ 13.2 Գիտելիքներ ՄԻԱՎ/ՉԻԱԳ-ի կանխարգելման մեթոդների վերաբերյալ

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր իրավասու են եղել պատասխանել հարցերին և նշել են, որ մարդիկ կարող են նվազեցնել ՄԻԱՎ/ՉԻԱԳ-ով վարակվելու ռիսկը, եթե յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ օգտագործեն պահպանակ, ունենան միայն մեկ չվարակված զուգընկեր, որը չունի այլ զուգընկերներ և խուսափեն սեռական հարաբերություններից, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք					Տղամարդիկ				
	Օգտագործել պահպանակ	Ունենալ միայն մեկ չվարակված սեռական զուգընկեր ²	Օգտագործել պահպանակ և ունենալ միայն մեկ չվարակված սեռական զուգընկեր	Խուսափել սեռական հարաբ.	Կանանց Օգտագործել ունենալուց քվադրանկային պահպանակ զուգընկեր	Ունենալ միայն մեկ չվարակված սեռական զուգընկեր ²	Օգտագործել պահպանակ և ունենալ միայն մեկ չվարակված սեռական զուգընկեր	Խուսափել սեռական հարաբ.	Տղամարդկանց Օգտագործել ունենալուց քվադրանկային պահպանակ զուգընկեր	
Տարիք										
15-19	55.1	65.4	50.4	65.4	1,123	64.2	69.6	59.9	65.7	292
20-24	72.9	80.8	67.3	80.4	1,131	81.3	87.0	78.8	80.1	237
25-29	78.3	85.7	74.5	81.9	929	88.3	91.4	84.6	76.1	202
30-39	76.3	85.2	71.8	84.8	1,460	87.4	91.3	84.7	81.2	306
40-49	74.4	80.9	69.5	80.8	1,922	84.2	89.8	81.8	82.3	410
15-24	64.1	73.1	58.9	72.9	2,254	71.9	77.4	68.4	72.1	529
Ամուսնական կարգավիճակ										
Երբևէ ամուսնացած	64.4	73.4	59.2	73.1	2,043	74.4	79.2	70.5	72.4	615
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	*	*	*	*	25	90.4	91.1	87.4	80.4	280
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	64.2	73.1	58.9	72.7	2,017	61.2	69.3	56.5	65.8	336
Հարցման պահին ամուսնացած	75.7	82.8	70.9	81.9	4,044	86.0	90.9	83.5	81.8	815
Նախկինում ամուսնացած	70.8	82.5	68.6	82.2	479	*	*	*	*	17
Բնակավայր										
Քաղաքային	76.2	85.2	71.6	83.5	4,194	80.9	87.6	78.8	75.6	913
Գյուղական	64.1	70.4	59.0	71.4	2,372	81.0	82.8	76.3	80.8	534
Մարզ										
Երևան	78.3	89.9	74.0	86.7	2,468	83.6	88.0	81.2	73.0	547
Արագածոտն	58.6	62.2	48.9	70.2	292	83.3	95.8	81.6	90.5	71
Արարատ	69.5	70.3	65.3	76.9	462	95.1	94.0	92.9	88.7	110
Արմավիր	72.5	76.8	69.2	76.5	567	96.5	97.4	96.5	97.0	139
Գեղարքունիք	72.7	79.2	68.4	70.6	443	85.7	83.4	79.9	85.4	81
Լոռի	61.4	68.2	50.5	71.0	537	84.2	86.4	80.2	85.9	87
Կոտայք	58.8	69.8	53.6	68.8	563	83.2	83.2	73.4	79.7	151
Շիրակ	73.6	80.8	73.1	80.7	563	31.1	66.8	31.1	45.1	98
Սյունիք	84.4	88.4	81.6	90.1	281	57.1	60.8	56.4	57.8	67
Վայոց ձոր	85.6	89.2	82.1	85.1	107	68.6	71.2	66.3	69.4	31
Տավուշ	54.7	62.1	48.0	64.2	285	88.3	87.3	84.1	87.3	64
Կրթություն										
Հիմնական	46.2	51.8	42.1	54.0	529	65.0	68.9	60.6	63.6	205
ընդհանուր	64.6	73.5	58.6	74.7	2,440	79.2	85.2	75.3	81.4	586
Միջնակարգ	77.1	85.3	72.6	83.0	1,997	82.5	86.6	79.7	82.2	310
ընդհանուր	84.7	92.1	81.3	89.5	1,600	91.9	96.1	90.9	75.0	346
մասնագիտական										
Բարձրագույն	81.8	89.6	77.9	86.4	1,440	89.8	94.9	89.7	71.8	280
Բարեկեցության մակարդակ										
Ամենացածր	57.9	63.5	52.2	66.3	1,164	70.2	78.3	66.1	76.1	261
Ցածր	66.5	74.9	62.1	74.2	1,284	76.2	81.6	72.7	76.9	264
Միջին	73.4	80.9	67.4	81.7	1,303	81.8	84.7	77.1	82.0	326
Բարձր	76.6	87.1	72.6	84.6	1,375	85.0	88.5	82.3	79.5	316
Ամենաբարձր	81.8	89.6	77.9	86.4	1,440	89.8	94.9	89.7	71.8	280
Ընդամենը	71.8	79.9	67.1	79.1	6,566	80.9	85.8	77.9	77.5	1,447

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությամբ (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

³ Յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ

² Ովքեր չունեն այլ զուգընկեր

13.2 ՄԻԱՎ-Ի ՓՈԽԱՆՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՅՈՒՐ ԿԱՐԾԻՔԻ ՇՏԿՈՒՄ ԵՎ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՄԻԱՎ-Ի ՄԱՍԻՆ

ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ից խուսափելու արդյունավետ ուղիների մասին տեղյակ լինելուց բացի, անհրաժեշտ է նաև բացահայտել ՄԻԱՎ-ի վերաբերյալ թյուր կարծիքները՝ դրանք շտկելու նպատակով: ՄԻԱՎ-ի տարածման վերաբերյալ ամենատարածված թյուր կարծիքներն են՝ վարակակիրների հիվանդ տեսք ունենալը, հազի միջոցով կամ մոծակի խայթոցից վարակվելու հնարավորությունը, վարակակրի հետ կերակուր կիսելը, ինչպես նաև կախարդանքի միջոցով վարակի փոխանցումը: ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին երբևէ լսած հարցվողներին տրվել է հարց վերոնշյալ թյուր կարծիքների վերաբերյալ¹: Ստացված արդյունքները ներկայացված են 13.3.1 և 13.3.2 աղյուսակներում:

Կանանց 63 և տղամարդկանց 64 տոկոսը նշել է, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է հանդիսանալ ՄԻԱՎ վարակակիր: Նույն ցուցանիշը 2000թ. կազմել է համապատասխանաբար՝ 56 և 58 տոկոս: Կանանց 63 տոկոսը նշել է, որ հնարավոր չէ վարակվել ՄԻԱՎ-ով հազի կամ վարակակրի հետ կերակուրը կիսելու միջոցով: Այս հարցի շուրջ տղամարդկանց ավելի փոքր տոկոսն է համակարծիք կանանց հետ: Հարցված կանանց գրեթե կեսը և տղամարդկանց մեկ երրորդը նշել է, որ ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել մոծակի խայթոցով: Ընդհանուր առմամբ, երիտասարդ, գյուղաբնակ, երբևէ սեռական հարաբերություն չունեցած հարցվողներն ավելի հազվադեպ են հերքում այս թյուր կարծիքները: Ցուցանիշներն առավել արտահայտիչ են մարզային կտրվածքով: Օրինակ՝ Սյունիքի մարզի կանանց 74 տոկոսը նշել է, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է հանդիսանալ ՄԻԱՎ վարակակիր, մինչդեռ Արարատի մարզի կանանց միայն 23 տոկոսն է այս կարծիքին: Ի տարբերություն Շիրակի մարզի 16 տոկոսի, Տավուշի մարզի տղամարդկանց 80 տոկոսը նշել է, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է հանդիսանալ ՄԻԱՎ վարակակիր:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ կանանց և տղամարդկանց ամբողջական գիտելիքների ցուցանիշները ներկայացված են 13.3.1 և 13.3.2 աղյուսակներում: Աղյուսակում ներառվել են այն հարցվողները, ովքեր նշել են, որ յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը և մեկ հավատարիմ չվարակված զուգընկեր ունենալը նվազեցնում է ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել վարակակիր, ինչպես նաև հերքել են ՄԻԱՎ-ի վերաբերյալ երկու ամենատարածված թյուր կարծիքները: Հայաստանում տարածված երկու թյուր կարծիքներն են՝ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի փոխանցումը մոծակի խայթոցով և վարակակրի հետ կերակուր կիսելը: Հարցված կանանց 26 և տղամարդկանց 24 տոկոսն են ունեցել ամբողջական գիտելիքներ ՄԻԱՎ-ի վերաբերյալ: Այս ցուցանիշը տատանվում է ըստ հարցվողների հիմնական բնութագրիչների: Ինչպես ՄԻԱՎ-ի փոխանցման վերաբերյալ այլ անհատական հարցերի ժամանակ, այստեղ ևս երիտասարդ, երբևէ չամուսնացած, ցածր կրթական և բարեկեցության մակարդակ ունեցող կանայք ավելի քիչ են տեղեկացված ՄԻԱՎ-ի մասին: ՄԻԱՎ-ի մասին բազմակողմանի գիտելիքներ ունենալու խիստ տատանում է նկատվում նաև մարզային կտրվածքով: Այս ցուցանիշը Սյունիքի մարզի կանանց շրջանում կազմել է 43 տոկոս, իսկ Արարատի մարզում՝ 12 տոկոս: Աղյուսակ 13.3.2-ում, տղամարդկանց շրջանում մարզային կտրվածքով նկատվել է այս ցուցանիշի շատ ավելի խիստ տատանումներ: Տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ-ի մասին բազմակողմանի գիտելիքները տատանվել են Վայոց ձորի մարզում 48 տոկոս ցուցանիշից մինչև Շիրակի մարզում 4 տոկոս ցուցանիշը:

¹ Աղյուսակ 13.3.1 և 13.3.2-ում ներառված չեն կախարդանքի կամ այլ գերբնական ուժերի միջոցով վարակման թյուր կարծիքի վերաբերյալ տվյալները, քանի որ կանանց 1 տոկոսը, իսկ տղամարդկանց մեկից էլ փոքր տոկոսն է նշել, որ հնարավոր է այդ ճանապարհով վարակվել ՁԻԱՅ-ով:

Աղյուսակ 13.3.1 ՄԻԱՎ/ՁԻԱՂ-ի մասին թյուր կարծիքները և ամբողջական գիտելիքները, Կանաչք

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՄԻԱՎ վարակակիր, ովքեր իրավասու են եղել պատասխանել հարցերին և իրավացիորեն հերքել են ՁԻԱՂ-ի վերաբերյալ բոլոր թյուր կարծիքները, ովքեր ունեցել են ՁԻԱՂ-ի վերաբերյալ ամբողջական գիտելիքներ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ՝				Տոկոսը, ովքեր նշել են, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՄԻԱՎ վարակակիր և մերժել են ՄԻԱՎ-ի ամենատարածված 2 թյուր կարծիքները ¹			Կանանց թվաքանակ
	Առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՁԻԱՂ վարակակիր	ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել մոտակի խայթոցով	ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել հագի միջոցով	ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել կիսելու միջոցով	ՄԻԱՎ վարակակիր վերաբերյալ ամենատարածված 2 թյուր կարծիքները ²	ՄԻԱՎ-ի ամենատարածված 2 թյուր կարծիքները ²		
Տարիք								
15-19	56.0	40.3	52.9	50.9	23.8	19.3	1,123	
20-24	62.4	50.0	61.4	62.4	30.4	26.0	1,131	
25-29	68.6	52.2	65.5	63.5	29.5	26.9	929	
30-39	67.7	49.2	66.1	66.6	33.1	29.4	1,460	
40-49	62.6	47.5	62.6	63.1	28.8	25.9	1,922	
15-24	59.2	45.2	57.2	56.7	27.1	22.6	2,254	
Ամուսնական կարգավիճակ								
Երբևէ չամուսնացած	61.7	45.2	59.5	59.3	28.4	23.6	2,043	
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	*	*	*	*	*	*	25	
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	61.4	45.1	59.3	59.0	28.4	23.5	2,017	
Հարցման պահին ամուսնացած	63.8	49.7	63.7	63.2	30.0	27.0	4,044	
Նախկինում ամուսնացած	67.4	41.8	57.1	59.6	27.0	23.1	479	
Բնակավայր								
Քաղաքային	69.2	48.5	66.4	65.9	32.7	28.9	4,194	
Գյուղական	53.3	46.4	54.0	54.4	23.3	20.0	2,372	
Մարզ								
Երևան	70.8	49.1	67.3	66.3	33.4	29.8	2,468	
Արագածոտն	55.7	49.9	55.7	48.1	23.9	17.6	292	
Արարատ	23.1	74.3	67.6	70.7	14.3	11.8	462	
Արմավիր	64.9	47.2	55.0	63.2	32.4	30.2	567	
Գեղարքունիք	61.5	52.2	56.5	58.4	32.9	30.2	443	
Լոռի	69.4	38.3	57.3	52.9	22.6	16.0	537	
Կոտայք	61.0	31.3	46.4	43.8	18.1	13.4	563	
Շիրակ	66.1	46.2	70.7	72.7	38.7	36.4	563	
Սյունիք	74.4	58.8	74.9	71.3	44.3	42.8	281	
Վայոց ձոր	48.0	29.5	56.2	58.4	16.2	15.4	107	
Տավուշ	56.7	33.8	46.0	45.5	18.1	13.7	285	
Կրթություն								
Հիմնական ընդհանուր	36.1	30.0	37.6	38.7	13.8	10.5	529	
Միջնակարգ ընդհանուր	54.6	40.8	54.5	52.5	20.1	17.0	2,440	
Միջին մասնագիտական	66.6	52.4	64.8	65.1	32.1	29.0	1,997	
Բարձրագույն	82.0	58.3	77.7	79.2	45.0	39.9	1,600	
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	47.6	38.2	44.7	46.8	19.0	15.8	1,164	
Ցածր	58.0	47.2	58.5	59.2	26.4	22.9	1,284	
Միջին	63.4	49.3	67.0	62.8	29.0	25.2	1,303	
Բարձր	70.6	47.7	65.4	65.8	30.6	27.4	1,375	
Ամենաբարձր	74.3	54.4	71.0	71.1	39.2	35.1	1,440	
Ընդամենը	63.4	47.7	61.9	61.7	29.3	25.7	6,566	

Նշում՝ Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությամբ բնակվողները (համատեղ բնակվող): Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

¹ՄԻԱՎ-ի փոխանցման վերաբերյալ ամենատարածված 2 թյուր կարծիքներն են՝ վարակի փոխանցումը մոտակի խայթոցով և կերակուրը կիսելով:

²Ամբողջական գիտելիքներ ունեն այն հարցվողները, ովքեր նշել են, որ մարդիկ կարող են նվազեցնել ՁԻԱՂ-ով վարակման իրենց ռիսկը, եթե յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ օգտագործեն պահպանակ, ունենան միայն մեկ չվարակված գուգրնկեր, որը չունի այլ զուգրնկերներ, ինչպես նաև գիտեն, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՄԻԱՎ վարակակիր, և մերժել են 2 ամենատարածված թյուր կարծիքները (ՄԻԱՎ-ի փոխանցումը մոտակի խայթոցով և կերակուրը կիսելով):

Աղյուսակ 13.3.2 ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի մասին թյուր կարծիքները և ամբողջական գիտելիքները, Տղամարդիկ

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՉԻԱՅ վարակակիր, ովքեր իրավասու են եղել պատասխանել հարցերին և իրավացիորեն հերքել են ՉԻԱՅ-ի վերաբերյալ բոլոր թյուր կարծիքները, ովքեր ՄԻԱՎ/ՉԻԱՅ-ի վերաբերյալ ունեն ամբողջական գիտելիքներ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են, որ՝				Տոկոսը, ովքեր նշել են, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՄԻԱՎ վարակակիր և մերժել են ամենատարածված 2 թյուր կարծիքները ¹			ՄԻԱՎ-ի վերաբերյալ ամբողջական գիտելիքների ունեցողների տոկոսը ²	Տղամարդկանց թվաքանակ
	Առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՉԻԱՅ վարակակիր	ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել մոտակի խայթոցով	ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել հազի միջոցով	ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել կերակուրը կիսելու միջոցով	ՄԻԱՎ վարակակիր ամենատարածված 2 թյուր կարծիքները ¹	ՄԻԱՎ-ի վերաբերյալ ամբողջական գիտելիքների ունեցողների տոկոսը ²			
Տարիք									
15-19	44.1	18.5	39.3	30.2	7.1	6.7	292		
20-24	69.9	32.8	52.6	53.4	25.6	25.4	237		
25-29	72.5	41.3	64.8	59.4	31.3	31.1	202		
30-39	70.0	43.3	60.5	53.8	29.9	29.1	306		
40-49	66.5	37.8	57.5	55.1	30.1	29.3	410		
15-24	55.6	24.9	45.3	40.6	15.4	15.1	529		
Ամուսնական կարգավիճակ									
Երբևէ չամուսնացած	57.0	28.1	47.0	42.5	17.5	17.2	615		
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	74.6	38.1	56.3	50.4	27.0	26.9	280		
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	42.3	19.7	39.2	36.0	9.6	9.1	336		
Հարցման պահին ամուսնացած	69.5	39.8	60.4	55.7	30.3	29.5	815		
Նախկինում ամուսնացած	*	*	*	*	*	*	17		
Բնակավայր									
Քաղաքային	66.4	35.7	58.0	52.5	25.6	25.0	913		
Գյուղական	60.2	33.2	48.9	46.0	23.7	23.2	534		
Մարզ									
Երևան	70.1	38.0	60.1	53.1	29.4	28.8	547		
Արագածոտն	73.8	65.5	83.2	79.4	49.7	47.3	71		
Արարատ	51.4	28.4	32.4	30.2	19.1	18.7	110		
Արմավիր	79.1	39.7	53.1	44.9	30.7	29.8	139		
Գեղարքունիք	50.7	39.6	45.7	44.0	21.2	21.2	81		
Լոռի	61.3	26.4	46.6	48.5	11.0	11.0	87		
Կոտայք	68.6	32.5	40.1	42.6	17.3	16.6	151		
Շիրակ	16.0	5.6	60.8	51.3	3.9	3.9	98		
Սյունիք	58.0	21.0	33.7	35.0	16.7	16.7	67		
Վայոց ձոր	69.8	55.8	57.7	66.8	49.8	48.3	31		
Տավուշ	79.5	32.3	86.8	71.6	25.9	25.9	64		
Կրթություն									
Հիմնական ընդհանուր	51.3	23.7	42.4	38.3	14.9	13.3	205		
Միջնակարգ ընդհանուր	60.4	27.9	46.4	39.9	18.4	18.2	586		
Միջին մասնագիտական	65.2	38.1	55.3	55.5	29.0	27.8	310		
Բարձրագույն	77.0	49.8	75.3	69.4	38.0	37.9	346		
Բարեկեցության մակարդակ									
Ամենացածր	52.9	28.2	47.7	45.1	19.6	18.9	261		
Ցածր	56.5	27.8	52.8	45.8	19.2	18.5	264		
Միջին	62.1	32.8	48.2	48.9	21.2	20.9	326		
Բարձր	68.8	39.1	58.4	51.4	29.1	28.5	316		
Ամենաբարձր	78.9	44.8	66.2	58.8	34.6	34.1	280		
Ընդամենը	64.1	34.7	54.7	50.1	24.9	24.3	1,447		

Նշում՝ Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությամբ բնակվողները (համատեղ բնակվող)։ Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծված, առանձին բնակվող և ամուսնի տղամարդիկ։ Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են։

¹ՄԻԱՎ-ի փոխանցման վերաբերյալ ամենատարածված 2 թյուր կարծիքներն են՝ վարակի փոխանցումը մոտակի խայթոցով և կերակուրը կիսելով։
²Ամբողջական գիտելիքներ ունեն այն հարցվողները ովքեր նշել են, որ մարդիկ կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկը, եթե յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ օգտագործեն պահպանակ, ունենան միայն մեկ չվարակված զուգընկեր, որը չունի այլ զուգընկերներ, ինչպես նաև գիտեն, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՉԻԱՅ վարակակիր և մերժել են 2 ամենատարածված թյուր կարծիքները (ՄԻԱՎ-ի փոխանցումը մոտակի խայթոցով և կերակուրը կիսելով)։

Հասարակությունը բացասաբար է տրամադրված ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով հիվանդ մարդկանց նկատմամբ: Ձևավորված բացասական կարծիքը կապված է հասարակության կողմից ՄԻԱՎ/ՁԻԱՅ վարակակիրներին որպես մեկուսացված խմբերի ընկալում, ինչպիսիք են ներերակային թմրադեղեր օգտագործները, մարմնավաճառներն ու հոմոսեքսուալները: Քննադատությունը երբեմն արտահայտվում է անթաքույց խտրականությամբ, ինչն արժանի է հետաքրքրության, քանի որ այն բացասական ազդեցություն է ունենում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի կանխմանն ուղղված ջանքերի վրա: Հատկանշական է, որ քննադատությունը կարող է նպաստել ՄԻԱՎ-ով հիվանդներին թաքցնել հիվանդությունը և գտնվել հասարակության ստվերում:

ՀԺԱՅ-2005-ի ընթացքում ՄԻԱՎ-ի հետ կապված բացասական վերաբերմունքի պարզաբանման նպատակով, ՁԻԱՅ/ՄԻԱՎ-ի մասին երբևէ լսած հարցվողներին տրվել է հարց, թե նրանք ինչպես են վերաբերվում ՄԻԱՎ վարակակիրներին: Այդ հարցերից են, թե արդյոք նրանք կցանկանան խնամել ՁԻԱՅ/ՄԻԱՎ-ով վարակված իրենց ընտանիքի անդամին տանը, կգնեն արդյոք թարմ մրգեր և բանջարեղեն վարակակիր վաճառողից, և թե արդյոք նրանք ընդունում են, որ վարակակիր կին ուսուցչուհին իրավունք ունի շարունակել դպրոցում դասավանդումը:

Աղյուսակ 13.4.1-ը ցույց է տալիս, որ կանանց 15 տոկոսը նշել է, որ ՄԻԱՎ-ով հիվանդ իրենց ընտանիքի անդամին կխնամեն տանը: Կանանց 7 տոկոսը նշել է, որ կգնեն թարմ մրգեր և բանջարեղեն ՄԻԱՎ-ով հիվանդ վաճառողից: Ինչպես ՀԺԱՅ-2000-ին, այնպես էլ այս հետազոտության արդյունքում կանանց 9 տոկոսը նշել է, որ ՄԻԱՎ վարակակիր ուսուցչուհին պետք է շարունակի դասավանդումը: Ընդհանուր առմամբ, կանանց 35 տոկոսը չեն ցանկացել գաղտնի պահել իրենց ընտանիքի անդամի ՄԻԱՎ վարակակիր լինելու փաստը: Նկատելի է այս ցուցանիշի զգալի անկում, ՀԺԱՅ-2000-ի արդյունքում գրանցված 75 տոկոս ցուցանիշի նկատմամբ: Հաշվի առնելով ՄԻԱՎ-ով վարակված մարդու նկատմամբ կիրառվող բոլոր չորս հիմնական բացասական դիրքորոշումները, հարկ է նշել, որ կանանց միայն մեկ տոկոսն է ընդունում բոլոր վերոնշյալ դիրքորոշումները:

ՄԻԱՎ վարակակիրների նկատմամբ կանանց վերաբերմունքը տատանվում է ըստ ենթախմբերի: Ընդհանուր առմամբ, ի տարբերություն մնացած կանանց, բարձր կրթական մակարդակ ունեցող կանայք, բարձր բարեկեցության խմբի կանայք և քաղաքաբնակ կանայք առավել հակված են ընդունելու բոլոր չորս դիրքորոշումները: Մարզային կտրվածքով նկատելի է, որ Լոռու մարզի կանայք ամենաշատն են հակված այն կարծիքին, որ ՄԻԱՎ/ՁԻԱՅ վարակակիր ընտանիքի անդամին կխնամեն տանը: Երևանաբնակ կանայք ամենաշատն են հակված այն կարծիքին, որ ընտանիքի անդամի ՄԻԱՎ վարակակիր լինելու մասին փաստը անհրաժեշտ չէ գաղտնի պահել: Մյուս կողմից, Արարատի մարզի կանայք ամենաքիչն են հակված ՄԻԱՎ/ՁԻԱՅ վարակակիր անձանց ընդունելուն:

Աղյուսակ 13.4.2-ը ցույց է տալիս նույն ցուցանիշները տղամարդկանց կտրվածքով: Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց 15 տոկոսը նշել է, որ նրանք կցանկանան խնամել ՄԻԱՎ վարակակիր իրենց ընտանիքի անդամին տանը, և 6 տոկոսը՝ կգնեն թարմ բանջարեղեն ՄԻԱՎ վարակակիր վաճառողից: Մյուս երկու դիրքորոշումներին վերաբերող հարցերում տղամարդկանց տոկոսներն ավելի փոքր են: Տղամարդկանց միայն 6 տոկոսն է նշել, որ ՄԻԱՎ վարակակիր ուսուցչուհին պետք է շարունակի դասավանդումը, ինչպես նաև տղամարդկանց 30 տոկոսը չի ցանկացել գաղտնի պահել իրենց ընտանիքի անդամի ՄԻԱՎ-ով վարակված լինելու փաստը, ինչը վկայում է, որ վերջին հինգ տարիների ընթացքում այս ցուցանիշները նվազել են: ՀԺԱՅ-2000-ի արդյունքում այս ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 13 և 65 տոկոս:

Աղյուսակ 13.4.1 ՄԻԱՎ վարակակիրների նկատմամբ վերաբերմունքն արտահայտող իրավիճակներ, Կանայք 15-49 տարեկան կանանց շրջանում ՄԻԱՎ-ի մասին երբևէ լսած կանանց տոկոսը, ուլբեր ըստ նշված իրավիճակների ցույց են տվել իրենց վերաբերմունքը ՄԻԱՎ վարակակրի հանդեպ, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանանց տոկոսը, ուլբեր`					
	Համաձայն են խնամել ՏՏ-ում ՄԻԱՎ-ով հիվանդ իրենց բարեկամին	Նշել են, որ կզենն թարմ բանջարեղեն ՄԻԱՎ-ով հիվանդ վաճառողից	Նշել են, որ ՄԻԱՎ վարակակիր ուսուցչուհուն թույլատրելի է դասավանդել դպրոցում, եթե նա ի վիճակի է	Նշել են, որ չեն ցանկանա գաղտնի պահել, եթե իրենց ՏՏ անդամը հիվանդ լինի ՄԻԱՎ-ով	Նշված բոլոր 4 իրավիճակների հանդեպ դրական վերաբերմունք ունեցողների տոկոս	ՄԻԱՎ-ի մասին լսած կանանց թվաքանակ
Տարիք						
15-19	15.2	6.7	12.0	34.8	1.0	1,020
20-24	15.0	7.1	9.8	36.3	1.8	1,084
25-29	15.1	6.8	9.8	37.2	1.7	906
30-39	15.9	7.8	9.4	34.9	1.2	1,423
40-49	12.6	5.2	7.5	32.9	1.4	1,833
15-24	15.1	6.9	10.9	35.6	1.4	2,105
Ամուսնական կարգավիճակ						
Երբևէ չամուսնացած	17.6	7.9	13.1	38.0	1.6	1,898
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	*	*	*	*	*	25
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	17.4	7.8	12.9	37.9	1.7	1,872
Հարցման պահին ամուսնացած	13.0	5.9	7.5	33.4	1.2	3,907
Նախկինում ամուսնացած	15.5	6.7	10.1	34.1	1.7	462
Բնակավայր						
Մաղաքային	16.7	7.5	10.8	38.1	1.6	4,093
Գյուղական	10.6	4.9	6.7	28.8	1.0	2,174
Մարզ						
Երևան	19.3	7.6	12.2	44.3	2.1	2,446
Արագածոտն	9.7	1.3	5.3	25.3	0.1	255
Արարատ	1.6	1.5	1.6	32.8	0.0	430
Արմավիր	14.8	5.4	8.5	23.3	0.3	524
Գեղարքունիք	11.3	13.0	16.0	33.8	2.8	417
Լոռի	24.9	10.5	9.7	39.2	1.4	518
Կոտայք	12.3	8.5	9.5	32.3	1.9	523
Շիրակ	6.3	1.9	2.9	30.7	0.0	509
Սյունիք	3.9	3.8	5.8	3.0	0.0	271
Վայոց ձոր	16.2	0.8	1.5	7.3	0.0	105
Տավուշ	12.2	6.2	10.5	33.7	1.6	269
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	10.8	3.9	6.4	26.3	0.0	424
Միջնակարգ ընդհանուր	11.2	4.1	6.2	31.8	1.0	2,295
Միջին մասնագիտական	13.4	6.1	8.4	33.4	1.0	1,957
Բարձրագույն	21.9	11.6	16.1	43.5	2.8	1,591
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	10.4	5.1	5.3	27.8	0.6	1,019
Ցածր	11.0	3.7	6.5	29.8	0.5	1,204
Միջին	15.8	7.1	10.8	39.7	1.8	1,266
Բարձր	14.8	7.1	8.9	35.4	1.7	1,346
Ամենաբարձր	19.3	9.2	14.0	39.5	2.0	1,432
Ընդամենը	14.6	6.6	9.4	34.9	1.4	6,267

Նշում` Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությամբ բնակվողները (համատեղ բնակվող): Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

Աղյուսակ 13.4.2 ՄԻԱՎ վարակակիրների նկատմամբ վերաբերմունքն արտահայտող իրավիճակներ, Տղամարդիկ

15-49 տարեկան տղամարդկանց շրջանում ՄԻԱՎ-ի մասին երբևէ լսած տղամարդկանց տոկոսը, ովքեր ըստ նշված իրավիճակների ցույց են տվել իրենց վերաբերմունքը ՄԻԱՎ վարակակրի հանդեպ, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Տղամարդկանց տոկոսը, ովքեր՝					
	Համաձայն են խնամել SS-ում ՄԻԱՎ-ով հիվանդ իրենց բարեկամին	Նշել են, որ կգնեն թարմ բանջարեղեն ՄԻԱՎ-ով հիվանդ վաճառողից	Նշել են, որ ՄԻԱՎ վարակակիր ուսուցչուհուն թույլատրելի է դասավանդել դպրոցում, եթե նա ի վիճակի է	Նշել են, որ չեն ցանկանա գաղտնի պահել, եթե իրենց SS անդամը հիվանդ լինի ՄԻԱՎ-ով	Նշված բոլոր 4 իրավիճակների հանդեպ դրական վերաբերմունք ունեցողների տոկոս	ՄԻԱՎ-ի մասին լսած տղամարդկանց թվաքանակ
Տարիք						
15-19	14.0	4.0	5.2	37.1	0.9	238
20-24	16.9	6.3	7.0	28.3	0.3	223
25-29	14.5	4.1	2.9	25.4	0.2	195
30-39	17.5	4.2	3.7	24.7	0.0	290
40-49	13.6	9.7	8.9	31.3	1.3	389
15-24	15.4	5.1	6.1	32.8	0.6	462
Ամուսնական կարգավիճակ						
Երբևէ չամուսնացած	17.3	5.1	5.1	30.4	0.5	543
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	22.4	5.2	4.5	28.7	0.1	267
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	12.4	5.0	5.8	32.0	0.8	276
Հարցման պահին ամուսնացած	13.6	6.6	6.3	28.8	0.7	780
Նախկինում ամուսնացած *	*	*	*	*	*	13
Բնակավայր						
Քաղաքային	17.3	7.1	5.9	29.0	0.5	847
Գյուղական	11.6	4.4	6.0	30.4	0.8	489
Մարզ						
Երևան	22.1	7.5	5.9	26.2	0.4	506
Արագածոտն	21.8	4.5	10.8	16.4	0.3	71
Արարատ	1.0	0.0	2.4	1.0	0.0	110
Արմավիր	2.5	1.9	0.9	65.4	0.9	136
Գեղարքունիք	9.3	10.3	12.1	30.4	0.7	73
Լոռի	13.5	8.7	2.1	80.0	2.1	81
Կոտայք	19.6	4.5	7.8	28.2	0.0	148
Շիրակ	0.0	8.8	1.1	13.9	0.0	78
Սյունիք	6.1	6.4	1.0	7.5	0.0	47
Վայոց ձոր	4.9	3.2	2.6	6.0	0.8	28
Տավուշ	35.0	10.3	22.9	26.8	4.3	59
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	13.9	4.5	4.4	30.1	0.0	164
Միջնակարգ ընդհանուր	12.8	4.6	5.0	30.0	0.8	542
Միջին մասնագիտական	14.6	6.5	9.2	29.0	0.7	292
Բարձրագույն	20.2	8.9	5.2	28.9	0.6	338
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	11.5	3.4	3.3	30.8	0.1	231
Ցածր	12.2	7.3	9.8	27.2	1.4	236
Միջին	13.6	4.9	8.0	31.0	0.8	306
Բարձր	14.3	7.4	4.6	30.2	0.1	295
Ամենաբարձր	24.0	7.2	3.7	28.0	0.8	267
Ընդամենը	15.2	6.1	5.9	29.5	0.6	1,336

Նշում՝ Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությամբ բնակվողները (համատեղ բնակվող)։ Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծված, առանձին բնակվող և ամուրի տղամարդիկ։ Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են։

Բարձր կրթական մակարդակ ունեցող, բարեկեցության բարձր խմբի տղամարդիկ փոքր-ինչ ավելի են հակված ընդունելու ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ով վարակակիր անձանց, քան մնացած ենթախմբերի տղամարդիկ: Ի տարբերություն մյուս մարզերի տղամարդկանց, Արարատի մարզի տղամարդիկ ավելի քիչ են հակված ՄԻԱՎ/ՁԻԱՅ վարակակիր անձանց ընդունելուն: Այնուամենայնիվ, որոշ մարզերի տղամարդիկ շատ ավելի են հակված իրենց ընտանիքի անդամի վարակված լինելու փաստը գաղտնի չպահելուն, քան կանայք: Լոռու մարզի 80 և Արմավիրի մարզի 65 տոկոս տղամարդիկ չեն ցանկանում գաղտնի պահել ընտանիքի անդամի ՄԻԱՎ-ով հիվանդ լինելու փաստը, ինչը կրկնակի անգամ գերազանցում է կանանց շրջանում արձանագրված նույն ցուցանիշը:

13.3 ԲԱԶՄԱԹԻՎ ՍԵՌՎԱՍՆ ԶՈՒԳՆԿԵՐՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՎ/ՁԻԱՅ և սեռական ճանապարհով փոխանցվող (ՍՃՓ) այլ հիվանդությունների դեմ պայքարի միջոցներից մեկն է սեռական զուգընկերների թվաքանակի սահմանափակումը և ապահով սեռական հարաբերություններ ունենալը: Պահպանակի օգտագործումը շատ կարևոր է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի տարածման նվազեցման համար: Չնայած արդյունավետ ապահովության համար անհրաժեշտ է կիրառել պահպանակ յուրաքանչյուր պատահական սեռական հարաբերության ժամանակ, սակայն այն կիրառելը խիստ անհրաժեշտ է «բարձր ռիսկային» խմբին պատկանող պատահական զուգընկերների հետ սեռական հարաբերությունների ժամանակ: ՀԺԱՅ-ի ընթացքում, երբևէ սեռական հարաբերություն ունեցած կանանց և տղամարդկանց տրվել են հարցեր հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցած սեռական զուգընկերների թվաքանակի, զուգընկերոջ կարգավիճակի, որի հետ հարցվողն ունեցել է սեռական հարաբերություն և ամբողջ կյանքի ընթացքում ունեցած զուգընկերների թվաքանակի վերաբերյալ: Այս հետազոտության ընթացքում, որպես բարձր ռիսկային խումբ դիտարկվել են հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում չամուսնացած, համատեղ չբնակվող զուգընկերները:

13.5.1 և 13.5.2 աղյուսակները ցույց են տալիս հետազոտությանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած կանանց և տղամարդկանց տոկոսները, ինչպես նաև հետազոտությանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում մեկից ավելի զուգընկերներ ունեցած կանանց և տղամարդկանց տոկոսները: Հետազոտությանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած կանանցից գրեթե ոչ մեկը չի նշել նույն ժամանակահատվածում երկու և ավելի սեռական զուգընկերների առկայության մասին և շատ քչերն են ունեցել սեռական հարաբերություն բարձր ռիսկային խմբի անձանց հետ: Կանանց մեկ տոկոսից քիչն է ունեցել երկու կամ ավելի սեռական զուգընկեր հարցմանը նախորդող վերջին տարվա ընթացքում, մինչդեռ նույն ցուցանիշը տղամարդկանց շրջանում կազմել է 12 տոկոս: Ի տարբերություն տղամարդկանց 28 տոկոսի, կանանց միայն մեկ տոկոսն է նշել, որ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել է բարձր ռիսկային սեռական հարաբերություն:

Հարցմանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած մինչև 25 տարեկան տղամարդկանց շրջանում բարձր ռիսկայնության սեռական հարաբերություններն ամենատարածվածն են (Աղյուսակ 13.5.2): Օրինակ՝ 20-24 տարիքային խմբի տաս տղամարդկանցից չորսը հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել են 2 և ավելի սեռական զուգընկերներ և սեռական հարաբերությունների 73 տոկոսը եղել է բարձր ռիսկայնության: Վերջին 12 ամիսների ընթացքում բազմաթիվ սեռական զուգընկերներ ունեցած տղամարդկանց տոկոսն աճում է բարեկեցության մակարդակին զուգընթաց՝ հասնելով գազաթնակետին բարեկեցության միջին մակարդակում: Բարձր ռիսկայնության սեռական հարաբերությունները կապված են տղամարդկանց ամուսնական կարգավիճակի հետ: Վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած երբևէ չամուսնացած տղամարդիկ առավել հակված են շատ զուգընկերներ ունենալուն (34 տոկոս) և գրեթե բոլոր զուգընկերները եղել են բարձր ռիսկային խմբի անձինք (98 տոկոս): Զարմանալի է, սակայն վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած

Երբևէ չամուսնացած տղամարդիկ նշել են, որ ունեցել են սեռական հարաբերություն իրենց ոչ ամուսնական զուգընկերոջ հետ և վերջին ցուցանիշը 100 տոկոս չէ միայն այն պատճառով, որ մի քանի տղամարդիկ նշել են, որ իրենց սեռական զուգընկերը եղել է իրենց կինը կամ համատեղ բնակվող զուգընկերը:

Տղամարդկանց 76 տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել են բարձր ռիսկայնության պատահական սեռական հարաբերություն նշել են, որ օգտագործել են պահպանակ այդ հարաբերության ժամանակ: Ի տարբերություն 3ԺԱԳ-2000-ի ընթացքում արձանագրված 43 տոկոսի, այս ցուցանիշն աճել է: Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում տեղի ունեցած վերջին բարձր ռիսկայնության ապահով սեռական հարաբերությունն ամենաքիչը տեղի է ունեցել 25-29 տարիքային խմբի և միջին մասնագիտական կրթություն ունեցող տղամարդկանց շրջանում: Նրանց երկու երրորդից քիչն է պահպանակ օգտագործել վերջին բարձր ռիսկայնության սեռական հարաբերության ժամանակ:

Երբևէ սեռական հարաբերություն ունեցած հարցվողների շրջանում, կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակը կանանց համար կազմել է 1.0, իսկ տղամարդկանց համար՝ 5.6: Անգամ 15-19 տարիքային խմբի տղամարդիկ նշել են, որ իրենց կյանքի ընթացքում ունեցել են միջինում 5.5 սեռական զուգընկեր: Կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակն աճում է կրթական մակարդակին զուգընթաց՝ 4.6-ից՝ հիմնական ընդհանուր կրթություն ունեցող տղամարդկանց շրջանում մինչև 6.4՝ միջին մասնագիտական կրթական մակարդակից բարձր կրթություն ունեցող տղամարդկանց համար: Ամենաբարձր բարեկեցության խմբի տղամարդկանց շրջանում, կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակը ամենաբարձրն է, սակայն այս կապը հստակ չէ: Ըստ մարզերի, կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակն ամենաբարձրն է Արմավիրի մարզի տղամարդկանց շրջանում՝ 8.8, իսկ ամենացածրը Շիրակի մարզի տղամարդկանց շրջանում՝ 1.0:

Աղյուսակ 13.5.1 Բազմաթիվ սեռական զուգընկերներ և բարձր ռիսկայնության սեռական հարաբերություններ, Կանադա

Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած 15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել են մեկից ավելի սեռական զուգընկեր և բարձր ռիսկայնության սեռական հարաբերություն, ինչպես նաև երբևէ սեռական հարաբերություն ունեցած կանանց շրջանում կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թվաքանակն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Նախորդ 12 ամիսների ընթացքում բազմակի սեռ. զուգընկերներ և բարձր ռիսկայնության սեռ. հարաբ.		Կյանքի ընթացքում ունեցած սեռ. զուգընկերների միջին թիվ		
	2+ զուգընկեր ունեցողների տոկոսը նախորդ 12 ամիսների ընթացքում	Նախորդ 12 ամիսների ընթացքում բարձր ռիսկայնության սեռ. հարաբ. ունեցածների ¹ տոկոսը	Սեռական հարաբ. ունեցած կանանց թվաքանակ	Միջին թիվ	Երբևէ սեռ. հարաբ. ունեցած կանանց թվաքանակ
Տարիք					
15-19	0.0	0.0	78	1.0	79
20-24	0.0	0.4	505	1.0	518
25-29	0.0	1.3	694	1.0	737
30-39	0.2	1.9	1,180	1.1	1,366
40-49	0.0	1.4	1,473	1.0	1,834
15-24	0.0	0.4	583	1.0	597
Ամուսնական կարգավիճակ					
Երբևէ չամուսնացած, սեռական հարաբերություններ ունեցած	*	*	19	*	25
Հարցման պահին ամուսնացած	0.0	0.1	3,848	1.0	4,033
Նախկինում ամուսնացած	3.3	50.7	64	1.3	476
Բնակավայր					
Քաղաքային	0.1	2.2	2,375	1.1	2,818
Գյուղական	0.0	0.2	1,555	1.0	1,717
Մարզ					
Երևան	0.2	2.8	1,341	1.1	1,623
Արագածոտն	0.0	0.0	190	1.0	207
Արարատ	0.0	0.4	288	1.0	337
Արմավիր	0.0	0.7	361	1.0	414
Գեղարքունիք	0.0	0.1	297	1.0	324
Լոռի	0.0	0.0	328	1.0	369
Կոտայք	0.0	2.2	357	1.0	395
Շիրակ	0.0	0.8	341	1.0	384
Սյունիք	0.0	0.0	184	1.0	203
Վայոց ձոր	0.0	0.8	62	1.0	71
Տավուշ	0.0	0.7	181	1.1	208
Կրթություն					
Հիմնական ընդհանուր	0.0	0.9	234	1.1	277
Միջնակարգ ընդհանուր	0.0	1.5	1,575	1.1	1,794
Միջին մասնագիտական	0.2	1.2	1,315	1.0	1,522
Բարձրագույն	0.0	1.6	807	1.1	941
Բարեկեցության մակարդակ					
Ամենացածր	0.0	1.1	747	1.0	857
Ցածր	0.0	1.5	781	1.0	897
Միջին	0.0	1.6	775	1.1	917
Բարձր	0.0	1.4	806	1.0	950
Ամենաբարձր	0.3	1.2	822	1.0	913
Ընդամենը	0.1	1.4	3,931	1.0	4,534

Նշում՝ Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությանը բնակվողները (համատեղ բնակվող): Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

¹ Սեռական հարաբերություն հարցվողի հետ չբնակվող զուգընկերոջ հետ

Աղյուսակ 13.5.2 Բազմաթիվ սեռական զուգընկերներ և բարձր ռիսկայնության սեռական հարաբերություն, Տղամարդիկ

Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած 15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել են մեկից ավելի սեռական զուգընկեր և բարձր ռիսկայնության սեռական հարաբերություն, ինչպես նաև բարձր ռիսկայնության սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց շրջանում, վերջին ռիսկային սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած տղամարդկանց տոկոսը և երբևէ սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց շրջանում, կյանքի ընթացքում ունեցած սեռական զուգընկերների միջին թիվը ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Նախորդող 12 ամիսների ընթացքում բազմաթիվ սեռական զուգընկերներ և բարձր ռիսկայնության սեռ. հարաբ.			Նախորդող 12 ամիսների ընթացքում պահպանակի օգտագործում վերջին բարձր ռիսկայնության սեռ. հարաբ. ժամանակ		Սեռական զուգընկերների միջին թիվ	
	2+ զուգընկեր ունեցողների տոկոսը նախորդ 12 ամիսների ընթացքում	Նախորդ 12 ամիսների ընթացքում բարձր ռիսկայնության սեռ. հարաբ. ունեցածների տոկոսը ¹		Պահպանակի օգտագործում բարձր ռիսկայնության սեռ. վերջին սեռ. հարաբ. ժամանակ	Բարձր ռիսկայնության ունեցած տղամարդկանց թվաքանակ	Միջին թիվ	Երբևէ սեռ. հարաբ. ունեցած տղամարդկանց թվաքանակ
		Սեռական հարաբ. ունեցած տղամարդկանց թվաքանակ	Սեռական հարաբ. ունեցածների տոկոսը				
Տարիք							
15-19	(17.3)	(100.0)	36	(84.2)	36	(5.5)	39
20-24	38.8	73.0	155	87.1	113	5.8	168
25-29	16.0	35.2	179	64.6	63	5.0	182
30-39	7.7	17.7	300	(80.4)	53	4.8	283
40-49	3.5	6.9	389	*	27	6.4	368
15-24	34.8	78.1	191	86.4	149	5.8	208
Ամուսնական կարգավիճակ							
Երբևէ չամուսնացած	33.5	98.2	242	77.8	238	6.7	267
Հարցման պահին ամուսնացած	6.3	6.0	804	(72.0)	48	5.2	758
Նախկինում ամուսնացած *		*	12	*	6	*	16
Բնակավայր							
Քաղաքային	13.2	31.1	690	78.1	215	6.0	668
Գյուղական	11.1	20.9	368	71.8	77	4.9	374
Մարզ							
Երևան	13.4	35.3	433	80.8	153	6.6	424
Արագածոտն	1.4	12.5	53	*	7	4.0	53
Արարատ	5.9	26.4	79	*	21	5.7	78
Արմավիր	18.9	31.7	108	(68.6)	34	8.8	94
Գեղարքունիք	15.6	23.4	58	*	14	4.4	60
Լոռի	(5.4)	(9.1)	57	*	5	(7.0)	57
Կոտայք	31.1	44.8	106	70.0	48	4.8	106
Շիրակ	0.0	0.0	55	ԿԶ	0	1.0	57
Սյունիք	0.0	10.0	44	*	4	2.7	45
Վայոց ձոր	2.1	10.9	21	*	2	4.9	21
Տավուշ	4.5	9.5	45	*	4	2.3	46
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	10.5	38.0	115	67.9	44	4.6	117
Միջնակարգ ընդհանուր	13.0	30.1	390	82.0	117	5.2	390
Միջին մասնագիտական	8.3	18.5	280	(62.5)	52	5.8	261
Բարձրագույն	16.7	28.9	273	82.0	79	6.4	274
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	4.9	11.3	183	*	21	5.0	187
Ցածր	8.9	18.6	183	(79.9)	34	5.4	183
Միջին	20.1	40.2	230	72.7	92	5.9	223
Բարձր	12.7	33.4	226	81.5	75	5.2	216
Ամենաբարձր	13.2	29.3	236	82.1	69	6.4	232
Ընդամենը	12.4	27.6	1,058	76.4	292	5.6	1,042

Նշում՝ Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությամբ բնակվողները (համատեղ բնակվող)։ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա։ Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սղմվել են։

ԿԶ – Կիրառելի չէ

¹Սեռական հարաբերություն հարցվողի հետ չբնակվող զուգընկերոջ հետ

13.4 ՎՃԱՐՈՎԻ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԺԱՀ-2005-ի ընթացքում տղամարդկանց տրվել է հարց, թե արդյոք հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում նրանք վճարել են սեռական հարաբերության համար: Արդյունքներն ամփոփված են աղյուսակ 13.6-ում: 15-49 տարեկան տղամարդկանց 2 տոկոսը նշել է, որ վճարել է սեռական հարաբերության համար: Չկա ակնհայտ կախվածություն ըստ տարիքի և կրթական մակարդակի: Ինչևէ, 20-24 տարիքային խմբի և հիմնական ընդհանուր կրթություն ունեցող տղամարդիկ առավել հաճախ են ունեցել սեռական հարաբերություն մարմնավաճառի հետ (4 տոկոս): Ցուցանիշներն ըստ մարզերի վկայում են, որ Արագածոտնի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի տղամարդկանց 4 տոկոսը վճարել է վերջին 12 ամիսների ընթացքում ունեցած սեռական հարաբերության համար: Լոռու, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի տղամարդիկ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում չեն ունեցել վճարովի սեռական հարաբերություն: Բարեկեցության կարգավիճակի և վճարվող սեռական հարաբերություններ ունենալու միջև կապը բացատրելի չէ:

13.5 ՍԵՌԱԿԱՆ ԾԱՆԱՊԱՐՅՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Տղամարդկանց և կանանց տրվել է հարց հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցած սեռական ճանապարհով փոխանցվող (ՍՃՓ) վարակների կամ դրանց ախտանիշների վերաբերյալ: Հարկ է նշել, որ մի քանի պատճառներով հնարավոր է ՍՃՓ վարակների մասին տվյալների թերգրանցում: Նախ, եթե ախտանիշները թույլ արտահայտված են, ապա հնարավոր է հարցվողի կողմից այն չդիտարկվի որպես ՍՃՓ վարակ: Ավելին, հնարավոր է չկատարվի ՍՃՓ-ի հիվանդության բուժում, որովհետև այն կգտնվի անհետևողական վիճակում կամ նման հիվանդություններից ամաչելով, նրանք կմնան առանց ախտորոշման: Անգամ եթե հարցվողը գիտի իր մոտ առկա ՍՃՓ հիվանդության մասին, հնարավոր է նա չնշի այդ մասին հետազոտության ժամանակ:

Աղյուսակ 13.6 Վճարովի սեռական հարաբերություն

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր նշել են, որ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում վճարել են ունեցած սեռական հարաբերության համար ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Վերջին 12 ամիսների ընթացքում մարմնավաճառի հետ սեռ. հարաբ. մասին նշած անձանց տոկոս	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք		
15-19	2.2	292
20-24	4.3	237
25-29	2.3	202
30-39	0.1	306
40-49	0.4	410
15-24	3.2	529
Ամուսնական կարգավիճակ		
Երբևէ չամուսնացած	3.4	615
Հարցման պահին ամուսնացած	0.3	815
Բնակավայր		
Քաղաքային	1.3	913
Գյուղական	2.1	534
Մարզ		
Երևան	0.8	547
Արագածոտն	0.6	71
Արարատ	4.5	110
Արմավիր	2.1	139
Գեղարքունիք	4.4	81
Լոռի	0.0	87
Կոտայք	4.2	151
Շիրակ	0.0	98
Սյունիք	0.6	67
Վայոց ձոր	0.0	31
Տավուշ	0.0	64
Կրթություն		
Հիմնական ընդհանուր	3.9	205
Միջնակարգ ընդհանուր	1.2	586
Միջին մասնագիտական	0.1	310
Բարձրագույն	2.3	346
Բարեկեցության մակարդակ		
Ամենացածր	1.1	261
Ցածր	2.0	264
Միջին	2.4	326
Բարձր	0.1	316
Ամենաբարձր	2.4	280
Ընդամենը	1.6	1,447

Աղյուսակ 13.7-ը ցույց է տալիս, որ ինչպես 2000թ-ին, այնպես էլ 2005թ-ին կանանց և տղամարդկանց մեկ տոկոսից քիչն է նշել, որ վերջին 12 ամիսների ընթացքում ունեցել է ՍՃՓ հիվանդություն: Արդյունքում, ՍՃՓ-ի վերաբերյալ տվյալներում առկա է թերգրանցում: Այնուամենայնիվ, երբ տրվել է հարց վերջին 12 ամիսների ընթացքում սեռական օրգաններից ունեցած գարշահոտով արտադրության մասին, կանանց 7 տոկոսը նշել է, որ ունեցել է նման արտադրություն: Հաշվի առնելով, որ կանայք հնարավոր է չտարբերեն իրենց ունեցած արտադրության տեսակը, այս ցուցանիշը կարող է մեծացնել վտանգավոր ՍՃՓ հիվանդություն ունեցողների իրական պատկերը: Կանանց մեկ տոկոսը նշել է սեռական օրգանների խոցոտման կամ խոցի մասին, ինչը, անկախ այն հանգամանքից ՍՃՓ հիվանդության հետևանք է, թե՛ ոչ, վկայում է այն մասին, որ դրա առկայությունը և այն բուժելու անհետևողականությունը, կարող է նպաստել ՄԻԱՎ-ով վարակմանը: Ընդհանուր առմամբ, կանանց 8 տոկոսը նշել է, որ ունեցել է ՍՃՓ հիվանդություն կամ սեռական օրգաններից գարշահոտով արտադրություն կամ սեռական օրգանների խոցոտում, խոց: Այս ցուցանիշը 2000թ-ի նկատմամբ զգալիորեն նվազել է: 2000թ-ին երբևէ սեռական հարաբերություն ունեցած կանանց մեկ քառորդն ունեցել է ՍՃՓ հիվանդություն կամ դրա ախտանիշեր: Ազգային մակարդակով ՍՃՓ հիվանդությունների և դրա ախտանիշերի տարածվածությունը կրկնակի անգամ բարձր է ամենացածր կրթական մակարդակ ունեցող կանանց շրջանում: Ի տարբերություն մյուս կանանց, տարածվածությունը բարձր է նաև գյուղաբնակ և աղքատ կանանց շրջանում: Հետազոտության արդյունքները վկայում են ՍՃՓ հիվանդություն կամ դրա ախտանիշեր ունեցողների նշանակալի տարբերություն ըստ մարզերի՝ ամենացածրը 1 տոկոս Շիրակի մարզում, մինչև ամենաբարձրը 20 տոկոս՝ Գեղարքունիքի մարզում:

Աղյուսակ 13.7 Անուղղակի կերպով նշված սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդության (ՍՃՓՀ) կամ դրա ախտանիշերի տարածվածությունը

Երբևէ սեռական հարաբերություն ունեցած 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում նրանց տոկոսը, ովքեր անուղղակի կերպով նշել են, որ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել են ՍՃՓՀ կամ ՍՃՓՀ-ի ախտանիշեր ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք					Տղամարդիկ				
	ՍՃՓՀ ունեցողների տոկոս	Սեռական օրգաններից զարշահողություն արտադրողների տոկոս	Սեռական օրգանների խոց կամ խոցոտում ունեցողների տոկոս	ՍՃՓՀ/ խոց/ խոցոտում ունեցողների տոկոս	Երբևէ սեռական հարաբ. ունեցած կանանց թվաքանակ	ՍՃՓՀ ունեցողների տոկոս	Սեռական օրգաններից զարշահողություն արտադրողների տոկոս	Սեռական օրգանների խոց կամ խոցոտում ունեցողների տոկոս	ՍՃՓՀ/ խոց/ խոցոտում ունեցողների տոկոս	Երբևէ սեռական հարաբ. ունեցած տղամարդկանց թվաքանակ
Տարիք										
15-19	0.0	12.8	0.0	12.8	79	(0.0)	(2.9)	(0.0)	(2.9)	39
20-24	0.6	9.0	1.6	9.4	518	0.0	0.0	0.0	0.0	174
25-29	2.0	10.9	1.0	11.5	740	0.6	0.6	0.1	0.6	186
30-39	1.4	7.7	1.4	8.1	1,367	0.0	0.0	0.0	0.0	303
40-49	0.2	4.7	1.3	5.7	1,844	0.0	0.0	1.4	1.4	409
15-24	0.6	9.5	1.3	9.8	598	0.0	0.5	0.0	0.5	213
Ամուսնական կարգավիճակ										
Երբևէ չամուսնացած	*	*	*	*	25	0.0	0.4	0.0	0.4	280
Հարցման պահին ամուսնացած	0.8	7.5	1.4	8.2	4,044	0.1	0.1	0.7	0.8	815
Նախկինում ամուսնացած	0.9	4.9	0.4	5.1	479	*	*	*	*	17
Բնակավայր										
Քաղաքային	1.2	6.5	1.3	7.2	2,830	0.1	0.3	0.6	0.9	723
Գյուղական	0.5	8.5	1.3	9.1	1,719	0.0	0.0	0.4	0.4	388
Մարզ										
Երևան	1.8	7.1	1.0	7.7	1,630	0.0	0.0	0.0	0.0	452
Արագածոտն	0.1	6.3	2.2	7.5	207	0.0	0.0	0.3	0.3	58
Արարատ	0.0	0.4	0.7	1.1	337	0.0	0.0	0.0	0.0	80
Արմավիր	0.7	7.6	1.8	7.9	414	0.0	0.0	0.0	0.0	111
Գեղարքունիք	1.2	18.6	1.7	19.8	324	0.0	0.0	0.0	0.0	63
Լոռի	0.0	8.9	1.5	8.9	371	(0.0)	(0.0)	(8.9)	(8.9)	62
Կոտայք	1.0	9.3	3.9	11.9	397	0.9	1.9	0.0	1.9	113
Շիրակ	0.0	0.3	0.0	0.3	386	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	57
Սյունիք	0.0	3.3	0.0	3.3	204	0.0	0.0	0.0	0.0	46
Վայոց ձոր	0.7	1.0	0.1	1.9	71	0.0	0.0	0.0	0.0	21
Տավուշ	0.0	14.0	0.1	14.0	208	0.0	0.0	0.0	0.0	46
Կրթություն										
Հիմնական ընդհանուր	1.9	15.2	0.0	15.2	278	0.0	0.0	0.0	0.0	126
Սիջնակարգ ընդհանուր	0.9	8.4	1.1	8.8	1,800	0.3	0.3	0.3	0.5	412
Սիջին մասնագիտական	0.9	5.9	1.6	6.7	1,527	0.0	0.0	1.2	1.2	287
Բարձրագույն	0.4	5.1	1.4	6.0	944	0.0	0.4	0.4	0.8	287
Բարեկեցության մակարդակ										
Ամենացածր	0.7	9.9	2.0	10.2	860	0.0	0.0	0.1	0.1	194
Ցածր	0.9	8.8	1.0	9.5	898	0.0	0.0	0.9	0.9	192
Միջին	0.7	8.9	1.1	9.3	917	0.0	0.0	0.0	0.0	242
Բարձր	1.5	4.7	1.1	5.4	954	0.4	0.4	0.0	0.4	239
Ամենաբարձր	0.6	4.3	1.2	5.4	919	0.0	0.5	1.6	2.0	243
Ընդամենը	0.9	7.3	1.3	7.9	4,549	0.1	0.2	0.5	0.7	1,111

Նշում՝ Հարցման պահին ամուսնացածների խմբում ներառված են քաղաքացիական ամուսնությամբ բնակվողները (համատեղ բնակվող): Նախկինում ամուսնացածների խմբում ներառված են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները/ամուրիները: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

Ինչպես ՀԺԱՀ-2000-ի, այնպես էլ ՀԺԱՀ-2005-ի ընթացքում գրեթե ոչ մի հարցված տղամարդ չի նշել ՍՃՓ հիվանդության, սեռական օրգանների զարշահոտով արտադրության կամ խոցոտման, խոցի մասին:

Եթե հարցվողը նշել է հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ՍՃՓ հիվանդություն կամ դրա ախտանիշների (արտադրություն կամ խոց, խոցոտում) առկայության մասին նրանց տրվել են հարցեր հիվանդության բուժման նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: ՍՃՓ հիվանդության և ախտանիշի առկայության մասին նշած տղամարդկանց փոքր թվաքանակից ելնելով՝ Գծապատկեր 13.2-ում ներկայացված են միայն կանանց տվյալները: Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ՍՃՓ հիվանդության կամ ախտանիշի մասին նշած կանանց կեսից փոքր-ինչ ավելին (52 տոկոս) դիմել են բժշկի՝ խորհրդի կամ բուժման նպատակով: Բուժվել ցանկացող գրեթե բոլոր կանայք դիմել են բուժհաստատություն կամ բուժաշխատողի: Այնուամենայնիվ, ՍՃՓ հիվանդություն կամ ախտանիշ ունեցած կանանց 35 տոկոսը չի ստացել համապատասխան բժշկական խորհուրդ կամ բուժում (տվյալները ներկայացված չեն աղյուսակում):

13.6 ՆԵՐԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀԺԱՀ-2005-ի ընթացքում հարցվողները պատասխանել են հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում բժշկի, բուժքրոջ, դեղագործի, ատամնաբույժի կամ այլ բուժաշխատողի կողմից նրանց կատարված ներարկումների մասին, դրական պատասխանի դեպքում, նրանց տրվել է հարց, թե քանի բժշկական ներարկում են նրանք ստացել այդ ժամանակահատվածում և ում կողմից է կատարվել վերջին ներարկումը: Հարկ է նշել, որ բժշկական նպատակով (ինսուլին, շաքարախտով հիվանդների դեպքում), սակայն ինքնուրույն կատարված ներարկումները չեն ընդունվել, որպես բժշկական ներարկում:

Աղյուսակ 13.8-ը ցույց է տալիս բժշկական ներարկում ստացած 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը: Աղյուսակը ցույց է տալիս նաև, թե արդյոք օգտագործված ներարկիչն ու ասեղը վերցվել են չբացված փաթեթից: Ըստ ստացված արդյունքների, կանանց 13 և տղամարդկանց 9 տոկոսին կատարվել են բժշկական ներարկումներ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, որոնցից միջինում 1.9 ներարկում ստացել են կանայք և 1.8՝ տղամարդիկ: Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, ի տարբերություն երիտասարդ կանանց, տարիքով ավելի մեծ կանայք առավել շատ են նշել ստացած ներարկումների մասին (միջինում 2.6): Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի և Տավուշի մարզերի կանայք ավելի շատ են ստացել ներարկումներ (միջինում 2.7-3.1), քան այլ մարզերի կանայք:

Կանանց 98 տոկոսը պատասխանել է, որ վերջին ներարկման ժամանակ օգտագործված ներարկիչն ու ասեղը վերցվել են փակ փաթեթից: Ըստ բնակչության ենթախմբերի առկա է չնչին տարբերություն: Ընդհանուր առմամբ, տղամարդկանց 97 տոկոսը նշել է, որ վերջին ներարկման ժամանակ օգտագործված ներարկիչն ու ասեղը վերցվել են նոր, փակ փաթեթից (դեպքերի քանակի սակավության պատճառով տվյալները ներկայացված չեն):

Աղյուսակ 13.8 Բժշկական ներարկումների տարածվածությունը

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ստացել են առնվազն մեկ բժշկական ներարկում, վերջին 12 ամիսների ընթացքում ստացած բժշկական ներարկումների միջին թիվը՝ մեկ անձի հաշվով, և կանանց տոկոսը, որոնց վերջին բժշկական ներարկման ժամանակ օգտագործված ասեղը և ներարկիչը վերցվել է նոր, փակ փաթեթից ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք				Տղամարդիկ			
	Վերջին 12 ամիսների ընթացքում բժշկական ներարկում ստացածների տոկոս	Վերջին 12 ամիսների ընթացքում ստացած բժշկական ներարկումների միջին թիվը մեկ անձի հաշվով	Կանանց թվաքանակ	Վերջին բժշկական ներարկման ժամանակ օգտագործված ասեղը և ներարկիչը վերցվել է նոր, փակ փաթեթից	Վերջին 12 ամիսների ընթացքում բժշկական ներարկում ստացած կանանց թվաքանակ	Վերջին 12 ամիսների ընթացքում բժշկական ներարկում ստացածների տոկոս	Վերջին 12 ամիսների ընթացքում բժշկական ներարկումների միջին թիվը մեկ անձի հաշվով	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք								
15-19	6.4	0.5	1,123	98.6	72	7.9	0.5	292
20-24	12.2	1.1	1,131	94.0	138	9.0	2.8	237
25-29	15.3	2.1	929	100.0	142	5.5	0.8	202
30-39	16.3	2.6	1,460	99.1	237	6.5	1.1	306
40-49	14.8	2.6	1,922	98.9	285	12.7	3.2	410
15-24	9.3	0.8	2,254	95.5	210	8.4	1.5	529
Բնակավայր								
Քաղաքային	12.6	1.7	4,194	98.8	527	7.1	1.2	913
Գյուղական	14.7	2.3	2,372	97.6	348	11.7	2.8	534
Մարզ								
Երևան	11.8	1.4	2,468	98.4	291	3.7	0.8	547
Արագածոտն	14.9	1.9	292	96.5	43	16.1	1.9	71
Արարատ	8.3	0.9	462	100.0	38	2.4	2.0	110
Արմավիր	18.7	2.8	567	97.4	106	14.9	2.7	139
Գեղարքունիք	11.9	3.1	443	95.2	53	6.8	1.1	81
Լոռի	12.9	2.8	537	96.9	69	21.6	5.4	87
Կոտայք	21.7	2.7	563	99.3	122	24.1	4.4	151
Շիրակ	10.7	1.3	563	100.0	60	4.6	0.3	98
Սյունիք	8.4	1.4	281	(100.0)	24	2.2	0.4	67
Վայոց ձոր	8.8	1.4	107	(98.0)	9	3.7	1.6	31
Տավուշ	20.7	3.1	285	99.6	59	7.1	2.0	64
Կրթություն								
Հիմնական ընդհանուր	12.7	1.2	529	98.8	67	8.7	1.5	205
Միջնակարգ ընդհանուր	14.3	2.4	2,440	98.3	349	7.8	1.5	586
Միջին մասնագիտական	14.9	2.2	1,997	98.8	298	13.2	3.8	310
Բարձրագույն	10.0	1.1	1,600	97.2	160	6.8	0.7	346
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	14.2	2.6	1,164	97.8	165	8.3	1.5	261
Ցածր	14.7	2.0	1,284	97.7	189	9.6	1.8	264
Միջին	12.8	1.8	1,303	100.0	167	11.5	3.3	326
Բարձր	13.4	1.9	1,375	97.3	184	6.9	1.5	316
Ամենաբարձր	11.8	1.4	1,440	98.9	170	7.6	0.7	280
Ընդամենը	13.3	1.9	6,566	98.3	875	8.8	1.8	1,447

Նշում՝ Բժշկական ներարկումները, դրանք բժշկի, բուժքրոջ, դեղագործի, ատամնաբույժի կամ այլ բուժաշխատողի կողմից իրականացված ներարկումներն են: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

13.7 ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ՄԱՍԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՍԵՌԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս բաժինը վերաբերվում է 15-24 տարեկանների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի, դրա հետ կապված գիտելիքների և համապատասխան սեռական վարքագծի ուսումնասիրությանը: Այս տարիքային խումբը գտնվում է ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի վերաբերյալ ծրագրերի ուշադրության կենտրոնում: Սեռական կյանքը սկսելու և ամուսնության միջև ընկած ժամանակահատվածը հանդիսանում է սեռական փորձությունների ժամանակահատված, և այն կարող է կրել ռիսկային բնույթ: Այս բաժնում վերլուծված է երիտասարդների շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի ձեռքբերման, կանխարգելման, ինչպես նաև պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին գիտելիքների վերաբերյալ տեղեկատվությունը: Դիտարկվել են նաև ինքնազսպումը, առաջին սեռական հարաբերության ժամանակ տարիքը, զուգընկերների միջև տարիքային տարբերությունը և պահպանակի օգտագործումը: ՀՄԱՀ-2005-ի ընթացքում, ինչպես մեծահասակներին, այնպես էլ երիտասարդներին տրվել են հարցեր, թե արդյո՞ք պահպանակի օգտագործումը և մեկ չվարակված զուգընկեր ունենալը կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը, ինչպես նաև արդյո՞ք առողջ տեսք ունեցող մարդը կարող է վարակակիր լինել (Աղյուսակներ 13.3.1 և 13.3.2):

Աղյուսակ 13.9-ը ցույց է տալիս երիտասարդների շրջանում բազմակողմանի գիտելիքների առկայության վերաբերյալ տվյալներ, մասնավորապես՝ նրանց մասնաբաժինը, ովքեր նշել են, որ մեկ չվարակված զուգընկերոջը հավատարիմ լինելը, յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակվելու հավանականությունը, ինչպես նաև, որ առողջ տեսք ունեցող անձը կարող է վարակակիր լինել, որ մոծակի խայթոցից կամ վարակակիր անձի հետ կերակուրը կիսելով անհնար է վարակվել ՄԻԱՎ-ով:

Երիտասարդ կանանց 23 և տղամարդկանց 15 տոկոսն է ունեցել բազմակողմանի գիտելիքներ ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին: Այնուամենայնիվ, 20-24 տարիքային խմբի կանանց և տղամարդկանց գիտելիքները ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին գրեթե նույնն են: Գիտելիքների մակարդակն աճում են կրթական մակարդակին զուգընթաց: Ի տարբերություն գյուղաբնակ երիտասարդ կանանց, ՄԻԱՎ-ի մասին ամբողջական գիտելիքները քաղաքաբնակ երիտասարդ կանանց շրջանում ավելի շատ են, սակայն երիտասարդ տղամարդկանց շրջանում բնակավայրերի միջև նման տարբերություն չի նկատվում: Հետաքրքիր է, որ երբևէ ամուսնացած և չամուսնացած կանանց ամբողջական գիտելիքները ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին նույնն են: Երբևէ սեռական հարաբերություն չունեցած 15-24 տարիքային խմբի երիտասարդ տղամարդիկ ամբողջական ավելի քիչ գիտելիքներ ունեն ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին: Տարբերություն գրեթե չի նկատվում երբևէ սեռական հարաբերություն ունեցած, սակայն երբևէ չամուսնացած երիտասարդ տղամարդկանց և ամուսնացած երիտասարդ տղամարդկանց գիտելիքների միջև: Երիտասարդ կանանց շրջանում, մարզային կտրվածքով տարբերությունները նշանակալի են և տատանվում են 9 տոկոսից՝ Տավուշի մարզում, մինչև 34 տոկոս՝ Սյունիքի մարզում: Երիտասարդ կանանց շրջանում ՄԻԱՎ/ՁԻԱՅ-ի մասին ամբողջական գիտելիքներն ավելի արտահայտված են, քան տղամարդկանց մոտ:

Երիտասարդ կանանց 69 և տղամարդկանց 62 տոկոսը, տեղյակ են պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին: Ի տարբերություն 15-19 տարիքային խմբի կանանց, 20-24 տարիքային խմբի կանայք առավել տեղեկացված են պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին: Երիտասարդ տղամարդկանց շրջանում գոյություն ունի հակադարձ համեմատական կապ տարիքի և պահպանակի ձեռքբերման աղբյուրի իմացության միջև: Ի տարբերություն 20-24 տարիքային խմբի տղամարդկանց 51 տոկոսի, ավելի երիտասարդ տաս տղամարդկանցից յոթը գիտեն պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին:

Աղյուսակ 13.9 Երիտասարդների շրջանում պահպանակի ձեռքբերման աղբյուրի և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի մասին ամբողջական գիտելիքներ

Պահպանակի աղբյուրի մասին տեղյակ և ՄԻԱՎ-ի մասին ամբողջական գիտելիքներ ունեցող 15-24 տարեկան երիտասարդ կանանց ու տղամարդկանց տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	15-24 տարեկան կանայք			15-24 տարեկան տղամարդիկ		
	ՄԻԱՎ-ի մասին ամբողջական գիտելիքներ ունեցողների տոկոս ¹	Պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին տեղյակ անձանց ² տոկոս ²	Կանանց թվաքանակ	ՄԻԱՎ-ի մասին ամբողջական գիտելիքներ ունեցողների տոկոս ¹	Պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին տեղյակ անձանց ² տոկոս ²	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք						
15-19	19.3	56.7	1,123	6.7	71.6	292
15-17	15.7	46.8	683	7.0	73.1	220
18-19	24.8	72.0	440	5.9	67.0	72
20-24	26.0	81.1	1,131	25.4	51.0	237
20-22	24.1	78.4	735	26.5	53.5	151
23-24	29.5	86.0	396	23.5	46.5	86
Ամուսնական կարգավիճակ						
Երբևէ չամուսնացած	22.7	65.3	1,657	13.9	60.4	479
Երբևէ ունեցել է սեռական հարաբերություն	42	42	0	25.0	19.3	164
Երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն	22.7	65.3	1,656	8.1	81.7	315
Հարցման պահին ամուսնացած	22.7	79.4	582	(26.5)	(82.1)	50
Բնակավայր						
Քաղաքային	25.7	80.3	1,433	14.4	62.1	311
Գյուղական	17.3	49.1	821	16.1	62.8	217
Մարզ						
Երևան	27.1	87.9	857	13.0	60.2	180
Արագածոտն	18.7	32.0	100	43.9	54.8	22
Արարատ	11.8	51.7	152	15.7	70.7	55
Արմավիր	26.3	65.9	196	18.0	73.0	55
Գեղարքունիք	27.2	37.4	158	(14.4)	(67.8)	29
Լոռի	10.6	69.2	194	*	*	34
Կոտայք	12.1	67.2	201	15.8	60.1	64
Շիրակ	31.4	61.3	190	(0.0)	(44.1)	37
Սյունիք	34.0	58.4	82	(13.7)	(54.5)	21
Վայոց ձոր	16.4	60.4	38	(20.8)	(85.2)	12
Տավուշ	9.4	51.4	85	(19.6)	(82.0)	19
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	8.8	42.8	292	9.0	57.5	115
Միջնակարգ ընդհանուր	16.6	56.7	828	14.9	65.9	265
Միջին մասնագիտական	26.5	81.3	529	12.1	55.7	41
Բարձրագույն	34.2	87.4	606	23.2	61.6	108
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	11.9	36.4	377	15.9	63.9	87
Ցածր	21.9	60.8	436	8.1	64.4	96
Միջին	26.0	75.0	460	13.9	63.6	138
Բարձր	21.1	75.5	451	18.1	62.7	123
Ամենաբարձր	29.3	87.9	530	19.6	56.2	84
Ընդամենը 15-24	22.6	68.9	2,254	15.1	62.4	529

Նշում՝ Ընդամենում ներառվել են ամուսնալուծված, առանձին բնակվող կամ այրի 15 կանայք: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

ԿԶ – Կիրառելի չէ
¹Բազմակողմանի իմացության մեջ ներառված են գիտելիքներն այն մասին, որ մարդիկ կարող են նվազեցնել ՄԻԱՎ-ով վարակման իրենց ռիսկը, եթե յուրաքանչյուր սեռական հարաբերության ժամանակ օգտագործեն պահպանակ, ունենան միայն մեկ չվարակված զուգընկեր, որը չունի այլ զուգընկերներ, ինչպես նաև գիտեն, որ առողջ տեսք ունեցող մարդը կարող է լինել ՉԻԱՀ վարակակիր և մերժել են 2 ամենատարածված թյուր կարծիքները (ՄԻԱՎ-ի փոխանցումը մոծակի խայթոցի և կերակուրը կիսելու միջոցով): Ամբողջական գիտելիքների մանրամասն վերլուծությունը ներկայացված է Աղյուսակներ 13.4.1 և 13.4.2-ում:

² Այս աղյուսակում՝ ընկերներ, ընտանիքի անդամներ և տուն ենթախմբերը չեն համարվել որպես պահպանակի աղբյուր:

Քաղաքաբնակ երիտասարդ կանայք ավելի շատ են հակված պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին տեղեկացված լինելուն, քան գյուղաբնակները, սակայն նման կախվածություն չի նկատվում երիտասարդ տղամարդկանց շրջանում: Կանանց շրջանում, պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին գիտելիքներն աճում են կրթության և բարեկեցության մակարդակներին զուգահեռ, սակայն տղամարդկանց շրջանում նման կապը այդքան էլ տեսանելի չէ: Պահպանակի ձեռքբերման աղբյուրի իմացության մարզային տատանումներն ավելի նկատելի են կանանց, քան տղամարդկանց շրջանում՝ կազմելով կանանց համար 32-88 տոկոս, իսկ տղամարդկանց համար՝ 44-85 տոկոս:

13.8 ՏԱՐԻՔՆ ԱՌԱՋԻՆ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՊԱՅՊԱՆԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Այս բաժնում քննարկվել են երիտասարդ կանանց և տղամարդկանց շրջանում պահպանակի օգտագործումը, սեռական հարաբերությունների սկիզբը, մինչամուսնական և այլ բարձր ռիսկային սեռական հարաբերությունները: Ընդհանուր առմամբ, 15-24 տարիքային խմբի կանանց և տղամարդկանց չնչին մասնաբաժինն է սեռական հարաբերություն ունեցել մինչև 15 տարեկանը (Աղյուսակ 13.10): Այնուամենայնիվ, մինչև 18 տարեկան հասակը, կանանց 9 և տղամարդկանց 28 տոկոսը սկսել են իրենց սեռական կյանքը: Երբևէ չամուսնացած երիտասարդ կանայք նշել են, որ չեն ունեցել որևէ սեռական հարաբերություն: Սեռական հարաբերություն ունենալու ցուցանիշը փոփոխվում է ըստ հարցվողի կրթական, բարեկեցության մակարդակների և բնակավայրի: Ի տարբերություն այլ կանանց, առավել ցածր կրթական մակարդակ ունեցող և ցածր բարեկեցության խմբի կանանց շրջանում վաղ հասակում սեռական հարաբերություններ ունենալն ավելի տարածված է: Օրինակ՝ հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց 32 տոկոսը սկսել են իրենց սեռական կյանքը մինչև 18 տարեկանը, ի տարբերություն բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող 3 տոկոս կանանց: Մարզային կտրվածքով, սեռական կյանքն ամենավաղ հասակում սկսել են Գեղարքունիքի մարզի կանայք: Այստեղ, 15-24 տարիքային խմբի կանանց 20 տոկոսը սկսել է սեռական կյանքը մինչև 18 տարեկանը: Մյուս կողմից, Արագածոտնի մարզի 5 տոկոս, Արմավիրի և Վայոց ձորի մարզերի 6 տոկոս կանայք իրենց սեռական կյանքը սկսել են մինչև 18 տարեկան հասակը:

Ի տարբերություն կանանց, տղամարդկանց շրջանում տվյալները քիչ են տատանվում: Կրթական և բարեկեցության մակարդակների միջև տատանումները ցույց են տալիս մի քանի հստակ օրինակներ: Մարզային տատանումները նույնպես քիչ ակներև են: Սա մասնավորապես պայմանավորված է նշված տարիքում սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց փոքր թվաքանակով:

Հարկ է նշել, որ պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին տեղյակ կանանց և տղամարդկանց շրջանում վաղ հասակում սեռական հարաբերություններ սկսելու ցուցանիշն ավելի ցածր է: Տարբերություններն առավել արտահայտիչ են երիտասարդ տղամարդկանց շրջանում: Պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին անտեղյակ տղամարդկանց՝ մինչև 18 տարեկան հասակը սեռական կյանքը սկսելու ցուցանիշը չորս անգամ գերազանցում է պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին տեղյակ տղամարդկանց նույն ցուցանիշին:

Աղյուսակ 13.11-ը ցույց է տալիս երբևէ սեռական հարաբերություն ունեցած 15-24 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր իրենց առաջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել են պահպանակ: Գրեթե ոչ մի կին չի նշել առաջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման մասին: Տղամարդկանց 55 տոկոսը նշել է, որ առաջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել է պահպանակ:

Աղյուսակ 13.10 Տարիքն առաջին սեռական հարաբերության ժամանակ երիտասարդ կանանց և տղամարդկանց շրջանում

15-24 տարեկան կանանց և տղամարդկանց տոկոսը, ովքեր ունեցել են սեռական հարաբերություն մինչև 15 և 18 տարեկան հասակում ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	15-24 տարեկան կանայք		18-24 տարեկան կանայք		15-24 տարեկան տղամարդիկ		18-24 տարեկան տղամարդիկ	
	Մինչև 15 տարեկան հասակը սեռական հարաբերություն ունեցածների տոկոս	Կանանց բնութագրիչ	Մինչև 18 տարեկան հասակը սեռական հարաբերություն ունեցածների տոկոս	Կանանց բնութագրիչ	Մինչև 15 տարեկան հասակը սեռական հարաբերություն ունեցածների տոկոս	Տղամարդկանց բնութագրիչ	Մինչև 18 տարեկան հասակը սեռական հարաբերություն ունեցածների տոկոս	Տղամարդկանց բնութագրիչ
Տարիք								
15-19	0.3	1,123	4.2	4.2	2.6	292	4.2	4.2
15-17	0.0	683	4.2	4.2	2.3	220	4.2	4.2
18-19	0.7	440	7.2	4.4	3.3	72	21.4	7.2
20-24	0.2	1,131	9.0	1,131	3.0	237	29.5	237
20-22	0.3	735	9.7	735	2.9	151	30.6	151
23-24	0.1	396	7.8	396	3.2	86	27.5	86
Ամուսնական կարգավիճակ								
Երբևէ չամուսնացած	0.0	1,657	0.0	990	2.8	479	26.0	259
Հարցման պահին ամուսնացած	0.9	582	22.7	566	(2.3)	50	(35.9)	50
Նախկինում ամուսնացած*		15	*	15	7.2	0	7.2	0
Գիտի պահպանակի աղբյուր¹								
Այո	0.1	1,554	8.0	1,234	0.6	330	12.1	169
Ոչ	0.5	700	10.6	337	6.3	199	46.4	140
Բնակավայր								
Քաղաքային	0.1	1,433	6.5	1,026	2.6	311	27.3	191
Գյուղական	0.5	821	12.3	545	3.0	217	28.1	117
Մարզ								
Երևան	0.0	857	6.6	628	3.7	180	32.9	117
Արագածոտն	0.0	100	5.4	62	9.8	22	(37.0)	11
Արարատ	0.0	152	8.7	113	0.0	55	(44.9)	30
Արմավիր	0.2	196	6.0	126	0.0	55	(30.8)	30
Գեղարքունիք	0.9	158	19.5	109	(4.0)	29	(19.6)	18
Լոռի	0.0	194	8.0	133	*	34	*	19
Կոտայք	0.7	201	10.9	142	6.8	64	(23.9)	41
Շիրակ	0.7	190	8.0	121	(0.0)	37	*	17
Սյունիք	0.7	82	11.4	53	(0.0)	21	16.5	12
Վայոց ձոր	0.0	38	6.0	27	(0.0)	12	*	7
Կավուշ	0.3	85	12.1	57	(1.2)	19	*	7
Կրթություն								
Հիմնական ընդհանուր	1.3	292	32.0	102	2.5	115	19.1	58
Միջնակարգ ընդհանուր	0.2	828	13.5	476	2.9	265	33.8	125
Միջին մասնագիտական	0.0	529	5.0	478	6.6	41	(38.7)	31
Բարձրագույն	0.0	606	2.5	515	1.2	108	20.8	94
Բարեկեցության մակարդակ								
Ամենացածր	0.3	377	15.2	238	2.3	87	17.0	46
Ցածր	0.4	436	8.4	302	3.0	96	30.3	41
Միջին	0.5	460	10.6	328	3.1	138	21.0	90
Բարձր	0.0	451	5.1	317	0.0	123	38.4	77
Ամենաբարձր	0.0	530	5.5	385	6.3	84	(30.1)	55
Ընդամենը	0.2	2,254	8.5	1,571	2.8	529	27.6	308

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

ԿԶ – Կիրառելի չէ

7.2 - Դեպք չկա

¹Այս աղյուսակում՝ ընկերներ, ընտանիքի անդամներ և տուն ենթախմբերը չեն համարվել, որպես պահպանակի աղբյուր:

Աղյուսակ 13.11 Առաջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործումը երիտասարդների շրջանում

Երբևէ սեռական հարաբերություն ունեցած 15-24 տարեկան երիտասարդ կանանց և տղամարդկանց շրջանում առաջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործողների տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	15-24 տարեկան կանայք		15-24 տարեկան տղամարդիկ	
	Առաջին սեռ. հարաբ. ժամանակ պահպանակ օգտագործած անձանց տոկոս	Երբևէ սեռ. հարաբ. ունեցած կանանց թվաքանակ	Առաջին սեռ. հարաբ. ժամանակ պահպանակ օգտագործած անձանց տոկոս	Երբևէ սեռ. հարաբ. ունեցած տղամարդկանց թվաքանակ
Տարիք				
15-19	0.0	79	(80.1)	39
15-17	*	17	*	18
18-19	0.0	63	*	21
20-24	0.4	518	48.8	174
20-22	0.2	290	54.8	98
23-24	0.7	228	41.0	76
Ամուսնական կարգավիճակ				
Երբևէ չամուսնացած	42	0	57.9	164
Հարցման պահին ամուսնացած	0.4	582	(43.5)	50
Նախկինում ամուսնացած	*	15	42	0
Գիտի պահպանակի աղբյուր¹				
Այո	0.3	471	48.0	72
Ոչ	0.4	126	57.9	141
Բնակավայր				
Քաղաքային	0.3	335	53.3	134
Գյուղական	0.4	263	56.6	79
Կրթություն				
Հիմնական ընդհանուր	0.0	64	(46.3)	40
Միջնակարգ ընդհանուր	0.6	268	58.3	99
Միջին մասնագիտական	0.1	178	*	21
Բարձրագույն	0.4	88	(57.5)	53
Բարեկեցության մակարդակ				
Ամենացածր	0.0	118	(53.8)	26
Ցածր	0.8	120	56.6	29
Միջին	0.4	129	40.7	57
Բարձր	0.5	127	(62.5)	51
Ամենաբարձր	0.0	103	(61.2)	51
Ընդամենը 15-24	0.4	598	54.5	213

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

42 – Կիրառելի չէ

¹Այս աղյուսակում՝ ընկերներ, ընտանիքի անդամներ և տուն ենթախմբերը չեն համարվել, որպես պահպանակի աղբյուր:

Այն երիտասարդ տղամարդիկ, ովքեր իմացել են պահպանակի ձեռքբերման աղբյուրի մասին, ավելի քիչ են հակված եղել առաջին սեռական հարաբերության ժամանակ այն օգտագործելուն, քան նրանք, ովքեր չեն իմացել պահպանակի ձեռքբերման որևէ աղբյուր: Առաջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած քաղաքաբնակ և գյուղաբնակ տղամարդկանց տոկոսները գրեթե նույնն են: Դեպքերի փոքր քանակը թույլ չի տալիս առավել մանրամասն վերլուծել առաջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակի օգտագործման տվյալները:

Շատ երկրներում ՄԻԱՎ-ի փոխանցման հիմնական պատճառը վարակակիր անձի հետ ազատ սեռական հարաբերություններն են: ՄԻԱՎ-ի փոխանցման կանխման նպատակով կարևոր է, որ երիտասարդները սեռական հարաբերության ժամանակ հետևեն “ABC” կանոններին, որոնք իրենց մեջ ներառում են՝ ինքնազսպումը, չվարակված միակ զուգընկերոջ հանդեպ հավատարմությունը և պահպանակի օգտագործումը:

Աղյուսակ 13.12-ում ներառված են միայն 15-24 տարիքային խմբի երիտասարդ տղամարդկանց տվյալները, քանզի այդ տարիքային խմբի կանայք, ինչպես նշվել է նախկինում, նշել են միայն ամուսնությունից հետո ունեցած սեռական հարաբերությունների մասին (Աղյուսակ 13.11): Աղյուսակ 13.12-ը ցույց է տալիս երբևէ սեռական հարաբերություն չունեցած, հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցած, ինչպես նաև վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած երբևէ չամուսնացած երիտասարդ տղամարդկանց տոկոսային բաշխումը: Ընդհանուր առմամբ, 15-24 տարեկան երբևէ չամուսնացած տղամարդկանց 66 տոկոսը նշել է, որ երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն, 30 տոկոսը՝ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում ունեցել է սեռական հարաբերություն, որոնց 88 տոկոսը վերջին սեռական հարաբերության ժամանակ օգտագործել է պահպանակ: Երբևէ սեռական հարաբերություն չունեցած և երբևէ չամուսնացած տղամարդկանց թվաքանակը կտրուկ նվազում է տարիքի և կրթական մակարդակի աճին զուգընթաց: Օրինակ՝ ի տարբերություն 23-24 տարեկան տղամարդկանց 17 տոկոսի, 15-17 տարեկան չամուսնացած տղամարդկանց 92 տոկոսը երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն: Երիտասարդ տղամարդկանց շրջանում բարեկեցության մակարդակի և սեռական ակտիվության միջև կապը նման է իրենց կրթական մակարդակի և սեռական հարաբերությունները սկսելու միջև փոխկապակցվածությանը: Ի տարբերություն բարեկեցության ամենացածր խմբի տղամարդկանց 77 տոկոսի, բարեկեցության ամենաբարձր խմբի երիտասարդ տղամարդկանց միայն 47 տոկոսը երբևէ չի ունեցել սեռական հարաբերություն:

Աղյուսակ 13.12 Մինչամուսնական սեռական հարաբերություններ և պահպանակի օգտագործումը տղամարդկանց շրջանում

15-24 տարեկան երբևէ չամուսնացած տղամարդկանց շրջանում՝ երբևէ սեռական հարաբերություն չունեցածների տոկոսը, վերջին 12 ամիսների ընթացքում սեռական հարաբերություն ունեցածների տոկոսը, և մինչամուսնական սեռական հարաբերություն ունեցած տղամարդկանց շրջանում, հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, վերջին սեռական հարաբերության ժամանակ պահպանակ օգտագործած անձանց տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Երբևէ սեռ. հարաբ. չունեցած անձանց տոկոս	Վերջին 12 ամիսների ընթացքում սեռ. հարաբ. ունեցածների տոկոս	Երբևէ չամուսնացած տղամարդկանց թվաքանակ	Վերջին սեռ. հարաբ. ժամանակ պահպանակ օգտագործած անձանց տոկոս	Վերջին 12 ամիսների ընթացքում սեռ. հարաբ. ունեցած տղամարդկանց թվաքանակ
Տարիք					
15-19	86.6	12.3	292	(84.2)	36
15-17	91.6	7.6	220	*	17
18-19	71.1	26.5	72	*	19
20-24	33.4	56.3	187	88.7	105
20-22	40.5	48.1	130	87.3	63
23-24	17.0	75.3	57	(90.9)	43
Գիտի պահպանակի աղբյուր¹					
Այո	89.1	5.5	289	*	16
Ոչ	30.5	66.0	190	98.7	125
Բնակավայր					
Քաղաքային	61.0	35.6	291	89.1	104
Գյուղական	73.4	19.9	188	(83.3)	38
Կրթություն					
Հիմնական ընդհանուր	73.3	23.6	102	*	24
Միջնակարգ ընդհանուր	66.6	27.4	248	85.0	68
Միջին մասնագիտական	(60.2)	(34.6)	34	*	12
Բարձրագույն	57.7	39.5	94	(88.9)	37
Բարեկեցության մակարդակ					
Ամենացածր	76.9	15.1	80	*	12
Ցածր	78.7	18.8	84	*	16
Միջին	64.5	31.5	126	(84.1)	40
Բարձր	62.1	32.5	116	(92.8)	38
Ամենաբարձր	46.7	49.6	72	(89.7)	36
Ընդամենը	65.8	29.5	479	87.6	141

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ դեպքերի վրա և սեղմվել են:

¹Այս աղյուսակում՝ ընկերներ, ընտանիքի անդամներ և տուն ենթախմբերը չեն համարվել, որպես պահպանակի աղբյուր:

ՉԱՓԱՐԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Համաճարակաբանական տեսանկյունից, Հայաստանն ունի առանձնահատկություններ, որոնք բնորոշ են, թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներին: Հայաստանում ծնված անձանց կյանքի միջին սպասվելիք տևողությունը 2003 թվականին կազմել է 68 տարի, 72 տարի կանանց և 65 տարի՝ տղամարդկանց համար (ԱՀԿ, 2005): Ըստ ՀՀ ԱՎԾ-ի տվյալների նույն ցուցանիշը կազմել է 72.9 տարի, 75.8 տարի կանանց և 69.9 տարի՝ տղամարդկանց համար: Ինչպես զարգացած երկրներում, այնպես էլ Հայաստանում, մահացության հիմնական պատճառ են հանդիսանում սիրտ-անոթային համակարգի և ուռուցքային հիվանդությունները, դժբախտ պատահարները: Միաժամանակ նկատվում է որոշ վարակային հիվանդությունների աճ, ինչպիսին է օրինակ, տուբերկուլյոզը: Այս գլխում ներկայացված տեղեկատվության միջոցով Հայաստանում չափահասների առողջությունը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, ինչպիսիք են՝ առողջապահական ծառայությունների մատչելիությունը և այդ ծառայություններից օգտվելու խոչընդոտները, ակնաբույժին այցելությունները, ծխելը, տուբերկուլյոզի մասին գիտելիքները և հիպերտոնիայի տարածվածությունը:

14.1 ԱՌՈՂՋԱՊԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼԸ

Այցելություններ բուժհաստատություն և խորհրդատվություն

Հայաստանում, 90-ականների ընթացքում, առողջապահական ծառայությունների մատչելիությունը նվազել էր: ՀԺԱՀ-2005-ը նպատակ էր հետապնդում նաև պարզել, թե Հայաստանի բնակչությունը որքանով է օգտվում առողջապահական ծառայություններից և այդ ծառայությունների մատչելիության հաղթահարման հետ կապված ինչ խոչընդոտներ կան բնակչության համար: Այդ նպատակով ՀԺԱՀ-2005-ի ընթացքում 15-49 տարեկան բոլոր հարցվողներին տրվել են հարցեր, հարցմանը նախորդող երեք ամիսների ընթացքում, առողջապահական ծառայություններից օգտվելու իրենց փորձի վերաբերյալ: Նախ ճշտվել է, թե արդյո՞ք հարցվողն ունեցել է որևէ հիվանդություն, քրոնիկ առողջական խնդիր, կամ տեղի՞ է ունեցել արդյոք պատահար, որի արդյունքում հարցվողը կարող էր ունենալ առողջական խնդիր, հարցմանը նախորդող երեք ամիսների ընթացքում: Այն հարցվողներին, ովքեր նշել են, որ ունեցել են այդպիսի խնդիր, տրվել է հարց, թե դիմե՞լ են արդյոք նրանք բուժհաստատություն կամ բժշկի խորհրդատվության: Այս հարցին բացասական պատասխան տված հարցվողներին տրվել է հարց, թե ինչու՞ նրանք չեն դիմել բուժհաստատություն կամ բժշկի խորհրդատվության:

Այդուսակ 14.1-ը ցույց է տալիս, որ համաձայն հարցվողների պատասխանների, յուրաքանչյուր տաս կանանցից, տղամարդկանցից, և մինչև հինգ տարեկան երեխաներից մեկը և ավելին, հետազոտությանը նախորդող երեք ամիսների ընթացքում ունեցել է առողջական խնդիր: Այնուամենայնիվ, առողջական խնդիր ունենալու մասին նշած ոչ բոլոր հարցվողներն են դիմել բուժհաստատություն կամ բժշկի խորհրդատվության: Կանանց՝ 8, մինչև հինգ տարեկան երեխաների՝ 10, և տղամարդկանց 6 տոկոսը դիմել են բուժհաստատություն կամ ստացել են բժշկական խորհրդատվություն հետազոտությանը նախորդող երեք ամիսների ընթացքում: Հարցվողների 1-ից փոքր տոկոսը նշել է, որ հետազոտությանը նախորդող երեք ամիսների ընթացքում վիրահատվել է (տվյալները ներկայացված չեն): Քաղաքային և գյուղական բնակավայրերում գրանցված ցուցանիշների միջև գոյություն ունեն աննշան տարբերություններ:

Աղյուսակ 14.1. Առողջապահական համակարգի մատչելիություն

15-49 տարեկան կանանց և տղամարդկանց, մինչև հինգ տարեկան երեխաների տոկոսային բաշխվածությունը, ովքեր հարցմանը նախորդող երեք ամիսների ընթացքում հիվանդացել են, ունեցել են քրոնիկ հիվանդություն, ինչպես նաև նույն ժամանակահատվածում բուժհաստատություն այցելած կամ բուժաշխատողի կողմից խորհրդատվություն ստացած անձանց տոկոսը, կանանց, տղամարդկանց, մինչև հինգ տարեկան երեխաների տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող 1 տարվա ընթացքում հոսպիտալացվել են, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Նախորդ 3 ամիսների ընթացքում առողջական խնդիր ունեցողների տոկոս	Նախորդ 3 ամիսների ընթացքում բժշկական խորհրդատվության դիմածների տոկոս	Հարցմանը նախորդող մեկ տարվա ընթացքում հոսպիտալացվածների տոկոս¹	Թվաքանակ
ԿԱՆԱՅՔ				
Բնակավայր				
Քաղաքային	13.6	8.0	2.2	4,194
Գյուղական	14.0	7.4	2.5	2,372
Կրթություն				
Հիմնական ընդհանուր	14.3	6.2	2.0	529
Միջնակարգ ընդհանուր	14.1	8.1	2.2	2,440
Միջին մասնագիտական	15.4	8.8	2.6	1,997
Բարձրագույն	11.1	6.4	2.3	1,600
Ընդամենը	13.8	7.8	2.3	6,566
ՏՂԱՄԱՐԴԻԿ				
Բնակավայր				
Քաղաքային	10.3	5.6	2.4	913
Գյուղական	12.7	6.7	2.8	534
Կրթություն				
Հիմնական ընդհանուր	16.8	7.3	1.7	205
Միջնակարգ ընդհանուր	8.3	3.9	2.0	586
Միջին մասնագիտական	18.6	11.3	4.3	310
Բարձրագույն	6.1	4.0	2.5	346
Ընդամենը	11.2	6.0	2.6	1,447
ԵՐԵՒԱՆԵՐ				
Բնակավայր				
Քաղաքային	12.7	9.8	6.9	908
Գյուղական	14.6	10.0	5.1	562
Մոր կրթություն				
Հիմնական ընդհանուր	9.0	4.6	2.2	135
Միջնակարգ ընդհանուր	12.6	8.3	7.4	563
Միջին մասնագիտական	14.8	12.0	5.9	436
Բարձրագույն	14.7	11.8	6.2	335
Ընդամենը	13.4	9.9	6.2	1,470

¹ Բացառում է ծննդաբերության նպատակով հոսպիտալացումը


Աղյուսակ 14.1-ում տեղ են գտել նաև հոսպիտալացման վերաբերյալ տվյալներ, հետազոտությանը նախորդող մեկ տարվա ընթացքում: Կանանց 2 տոկոսը (բացառությամբ ծննդաբերությունների), տղամարդկանց 3 տոկոսը և մինչև հինգ տարեկան երեխաների 6 տոկոսը, հետազոտությանը նախորդող մեկ տարվա ընթացքում բուժում են ստացել հիվանդանոցային պայմաններում: Հոսպիտալացված կանանց, տղամարդկանց և մինչև հինգ տարեկան երեխաների վերաբերյալ փոքրաթիվ տվյալների պատճառով չի կատարվել վերլուծություն ըստ հիմնական բնութագրիչների:

Տեսողության խնդիրներ

Կյանքի որակի պահպանման ինչպես նաև արդյունավետ աշխատանքի ապահովման համար, տարիքի հետ ավելանում է նաև տեսողության կարևորությունը: Գլաուկոմայի, կատարախտի, ցանցաթաղանթի խանգարումների և շաքարախտով պայմանավորված տեսողական բարդությունների վաղ կանխարգելումը կենսական նշանակություն ունի լավ տեսողության պահպանման համար: ՀժԱՀ-ի շրջանակներում հարցմանը մասնակցած բոլոր կանանց և տղամարդկանց տրվել են հարցեր, թե դիմե՞լ են արդյոք երբևէ ակնաբույժի, եթե այո, ապա ի՞նչ պատճառով, և ի՞նչ օխտորոշում է տրվել, եթե այդպիսին եղել է:

Տաս հարցվողներից ութը երբևէ չեն դիմել ակնաբույժի (Գծապատկեր 14.1): Հարցմանը նախորդող երկու տարիների ընթացքում տաս հարցվողներից մեկից էլ փոքր թվով անձինք են դիմել ակնաբույժի խորհրդատվությանը: Խորհրդատվության դիմած հարցվողների մոտ 50 տոկոսը պատասխանել է, որ այցի պատճառը եղել է աչքի պարտադիր զննումը կամ հերթական այցը: Ի լրումն, կանանց գրեթե երեսուն և տղամարդկանց գրեթե 20 տոկոսը նշել են, որ այցելության պատճառը եղել է նոր ակնոցի անհրաժեշտությունը կամ աղոտ տեսողությունը: Այս տվյալները հաստատվում են բժիշկների կողմից, քանզի կանանց 40 տոկոսից ավելին և տղամարդկանց մոտ 20 տոկոսին նշանակվել է ակնոց՝ կարդալու կամ հեռուն լավ տեսնելու համար (Աղյուսակ 14.2):

Գծապատկեր 14.1 Խորհրդատվություն ակնաբույժի հետ



ՀժԱՀ-2005

Աղյուսակ 14.2 Ակնաբույժին այցելության արդյունքներ

Հարցմանը նախորդող հինգ տարիների ընթացքում ակնաբույժի հետ խորհրդատվություն ունեցած 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց շրջանում հետևյալ ախտորոշումները ստացած անձանց տոկոսներն ըստ կանանց հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Չի ախտորոշվել	Անբրիոպիա	Կատարակտ	Շաքարախտի ակնային բարդություն	Երջերաթաղանթի հիվանդություն	Գլաուկոմա	Ցանցեմուխանցարյուններ	Կարիք ունի հեռատեսության ակնոցի	Կարիք ունի կարդալու ակնոցի Այլ	Կանանց թվաքանակ	
Տարիք											
15-19	54.7	0.0	1.2	0.0	1.1	0.0	0.0	22.9	8.1	15.4	193
20-24	35.2	0.0	1.2	1.5	5.5	0.0	0.0	34.5	4.9	16.9	162
25-29	44.5	0.0	0.4	0.8	1.4	0.0	0.0	34.0	5.2	16.5	91
30-34	39.8	2.6	4.5	0.0	0.7	0.0	2.3	37.7	3.8	12.2	90
35-39	43.3	0.0	0.2	0.0	3.7	1.8	1.1	23.9	5.1	21.9	84
40-44	39.5	0.0	1.1	0.4	3.5	1.7	0.2	32.2	6.5	16.9	135
45-49	22.6	0.2	1.1	2.6	0.2	4.2	0.0	37.6	33.3	5.9	174
Կրթություն											
Հիմնական ընդհանուր	47.8	0.0	0.0	1.6	3.4	0.0	0.4	23.2	3.0	20.2	76
Միջնակարգ ընդհանուր	44.7	0.9	1.2	1.5	1.1	1.7	1.2	29.1	9.8	13.6	249
Միջին մասնագիտական	39.2	0.0	2.0	1.3	4.5	2.8	0.0	29.0	11.8	12.7	244
Բարձրագույն	34.6	0.1	1.2	0.0	1.3	0.0	0.0	36.9	13.1	15.1	360
Բնակավայր											
Քաղաքային	35.2	0.4	1.3	0.8	2.4	1.0	0.3	35.2	11.0	15.4	736
Գյուղական	56.2	0.0	1.3	1.3	1.8	1.9	0.5	18.1	11.2	11.1	192
Մարզ											
Երևան	29.9	0.5	1.2	0.4	2.8	1.5	0.4	38.1	11.9	17.1	484
Արագածոտն	70.1	0.0	0.5	0.0	0.0	0.0	1.2	11.3	7.9	7.6	24
Արարատ	(43.8)	(0.0)	(0.0)	(0.0)	(10.0)	(0.0)	(0.0)	(23.9)	(22.0)	(1.2)	32
Արմավիր	47.5	0.0	0.0	1.6	0.0	0.0	0.0	21.8	6.3	24.9	63
Գեղարքունիք	(41.8)	(1.7)	(1.4)	(0.9)	(11.1)	(7.1)	(0.0)	(25.5)	(1.8)	(8.8)	21
Լոռի	46.6	0.0	0.0	4.1	1.2	3.9	0.0	31.6	10.9	0.0	57
Կոտայք	55.3	0.0	2.9	2.4	1.2	0.0	0.0	23.1	9.7	10.2	109
Շիրակ	61.7	0.0	1.0	0.0	0.0	0.0	0.0	21.2	10.9	8.7	62
Սյունիք	42.1	0.0	2.8	0.0	0.0	0.0	0.0	36.9	13.2	6.2	39
Վայոց ձոր	(41.3)	(0.0)	(9.2)	(0.0)	(0.0)	(0.0)	(0.0)	(46.1)	(3.3)	(0.0)	6
Տավուշ	29.1	0.0	1.9	0.0	0.0	0.0	3.1	19.2	8.9	42.0	31
Բարեկեցության մակարդակ											
Ամենացածր	44.8	0.0	1.7	1.5	4.3	3.3	0.0	24.1	7.6	14.7	79
Ցածր	53.6	0.0	1.8	2.1	0.5	5.4	0.2	18.5	11.2	12.4	118
Միջին	47.0	0.0	1.9	0.6	1.0	0.0	0.5	35.6	6.3	9.3	185
Բարձր	31.7	1.0	0.5	0.3	3.4	0.9	0.9	31.3	11.9	20.3	235
Ամենաբարձր	34.5	0.1	1.4	0.8	2.4	0.0	0.0	36.3	14.1	13.9	312
Ընդամենը կանայք	39.6	0.3	1.3	0.9	2.3	1.2	0.4	31.6	11.0	14.5	929

ՏՂԱՍԱՐԴԻԿ

Ընդամենը տղամարդիկ	54.8	0.0	5.0	0.7	3.1	0.8	0.0	15.6	6.9	12.9	217
--------------------	------	-----	-----	-----	-----	-----	-----	------	-----	------	-----

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Հարցմանը նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում ակնաբույժի դիմած հարցվողների միայն 1 կամ ավելի փոքր տոկոսին է ախտորոշվել կատարակտ, գլաուկոմա կամ շաքարախտով պայմանավորված տեսողական որևէ բարդություն, բացառությամբ, վերջին հինգ տարիների ընթացքում ակնաբույժի դիմած տղամարդկանց 5 տոկոսի, որոնց տրվել է կատարակտի ախտորոշում: Տղամարդկանց 55 և կանանց գրեթե 40 տոկոսի մոտ, որևէ հիվանդություն չի ախտորոշվել (Աղյուսակ 14.2): Ինչպես ակնակալվում էր, հարցմանը նախորդող վերջին հինգ տարիների ընթացքում ակնաբույժի դիմած հարցվողների շրջանում, ակնոցի պահանջը առավելագույնին է հասնում 45-49 տարիքային խմբում: Այնուամենայնիվ, 15-19 տարիքային խմբի կանանց գրեթե մեկ երրորդին, կարդալու կամ հեռուն լավ տեսնելու համար, պահանջվել է ակնոց:

Առողջապահական ծառայություններից օգտվելու խոչընդոտները

ՀԺԱՀ-2005-ը ներառում էր մի շարք հարցեր կանանց առողջական խնդիրների վերաբերյալ: Այս տեղեկատվությունը մասնավորապես կարևոր է բժշկական օգնություն ստանալու և առողջապահական ծառայություններից օգտվելու նպատակով կնոջը հանդիպող հնարավոր խոչընդոտները հասկանալու և ուսումնասիրելու համար: Այս տեղեկատվության ստացման համար 15-49 տարեկան կանանց տրվել են հարցեր, թե արդյո՞ք բժշկական օգնության ստացման նպատակով նրանց համար մեծ կամ փոքր խնդիր կհանդիսանան հետևյալները՝

- թույլտվության ստացումը (SS անդամներից կամ որևէ այլ անձից)
- խորհրդատվության համար անհրաժեշտ գումարի ձեռքբերումը
- հեռավորությունը մինչև բուժհաստատություն
- տրանսպորտի արժեքը
- տրանսպորտից օգտվելու հնարավորությունը
- միայնակ չգնալու ցանկությունը
- մտավախությունը, որ այնտեղ չի լինի կին բուժաշխատող
- մտավախությունը, որ այնտեղ ընդհանրապես բուժաշխատող չի լինի
- մտավախությունը, որ այդ բուժաշխատողն անբարյացական կլինի
- մտավախությունը, որ այնտեղ չեն լինի համապատասխան դեղամիջոցներ
- մտավախությունը, որ կմատուցվի անորակ բուժօժանդություն:

Աղյուսակ 14.3-ը ցույց է տալիս կին հարցվողների այն տոկոսը, ովքեր համարում են նշված պատճառները կամ այդ պատճառներից որևէ մեկը մեծ խնդիր, ըստ հիմնական բնութագրիչների:

Կանանց մեծամասնության (89 տոկոս) համար նշված պատճառներից առնվազն մեկը մեծ խնդիր է հանդիսացել: Կանանց համար բժշկական օգնություն ստանալու և առողջապահական ծառայություններից օգտվելու հիմնական խոչընդոտ է հանդիսանում ֆինանսական միջոցների բացակայությունը: Հարցվողների 66 տոկոսը նշել է, որ իր համար մեծ խնդիր է բուժման նպատակով անհրաժեշտ գումարի ձեռքբերումը, իսկ 26 տոկոսի համար՝ տրանսպորտային ծախսերը:

Որպես բժշկական օգնություն ստանալու և առողջապահական ծառայություններից օգտվելու համար խոչընդոտ հանդիսացող որակական հատկանիշեր կանանց 58 տոկոսը նշել է, որ մեծ խնդիր է վատ սպասարկումը, 44 տոկոսը նշել է, որ բուժհաստատությունում չի լինի բարեհամբույր բուժաշխատող: Կանանց մեկ երրորդից ավելին նշել է, որ բուժաշխատողի կամ դեղերի անհասանելիությունն է իրենց համար մեծ խնդիր հանդիսանում (համապատասխանաբար՝ 36 և 35 տոկոս):

Անձնական խնդիրները նույնպես կարող են խանգարել կանանց ստանալ բժշկական օգնություն: Տասից չորս կնոջ համար խնդիր է հանդիսանում բուժհաստատություն միայնակ չգնալու ցանկությունը, մինչդեռ 24 տոկոսի մտահոգությունն է, որ այնտեղ չի լինի կին բուժաշխատող, 19 տոկոսը նշել է, որ իր համար խոչընդոտ է բուժում ստանալու նպատակով թույլատվության ստացումը:

Կանանց մասնաբաժինը, ում համար նշված պատճառներից առնվազն մեկը մեծ խնդիր է հանդիսանում, բարձր է ըստ բոլոր հիմնական բնութագրիչների: Հատկանշական են ցուցանիշի մարզային տատանումները, նվազագույնը 77 տոկոս՝ Լոռու մարզում և առավելագույնը 100 տոկոս՝ Սյունիքում:

Աղյուսակ 14.3 Բժշկական օգնություն ստանալու և առողջապահական ծառայություններից օգտվելու մատչելիության հետ կապված խնդիրներ

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ իրենց համար մեծ խնդիր է հանդիսանում բժշկական օգնություն ստանալը և առողջապահական ծառայություններից օգտվելը, ըստ խնդրի տեսակի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Բժշկական օգնության ստացման հետ կապված խնդիրներ												Նշված խնդիրներից որևէ մեկը	Կանանց թվաքանակ	
	Լյցելության համար թույլտվության ստացում	Բուժման համար գումարի ձեռքբերում	Դեռավորությունը մինչև բուժաստատություն	Տրանսպորտի պրոբլեմ	Տրանսպորտից օգտվելու հնարավորություն	Սենյակ չգնալու ցամաքային	Ստավախություն, որ այնտեղ չի լինի կին բուժաշխատող	Ստավախություն, որ այնտեղ չի լինի բուժաշխատող	Ստավախություն, որ բուժաշխատողը անբարյացակամ կլինի	Ստավախություն, որ այնտեղ չի լինի ղեղ	Ստավախություն, որ կմատուցվի անորակ բուժօժանդակություն	Ստավախություն, որ կմատուցվի անորակ բուժօժանդակություն			
Տարիք															
15-19	34.9	59.6	21.7	26.5	18.2	58.4	43.4	37.4	43.7	35.0	57.5	87.8	1,123		
20-34	20.7	62.6	18.3	23.0	15.8	42.1	24.2	36.4	44.5	35.4	60.5	89.4	2,810		
35-49	11.1	71.1	21.9	28.5	18.9	28.7	15.5	35.9	42.9	34.0	56.1	89.9	2,633		
Կենդանի երեխաների թվաքանակ															
0	25.7	60.0	19.2	23.6	16.3	49.9	34.3	35.3	42.6	33.5	57.2	87.5	2,352		
1-2	15.8	66.2	18.0	24.5	15.5	32.7	17.1	35.2	42.7	34.2	58.4	88.7	2,812		
3+	15.3	73.5	26.9	32.1	23.3	35.8	20.5	40.5	47.7	38.1	59.7	93.5	1,402		
Ամուսնական կարգավիճակ															
Երբևէ չամուսնացած	26.5	60.2	19.4	23.6	16.7	50.8	35.3	35.0	42.3	33.9	57.4	88.0	2,043		
Հարցման պահին ամուսնացած	17.3	66.6	20.7	25.7	17.1	35.8	19.5	37.3	44.9	35.6	59.6	89.9	4,044		
Նախկինում ամուսնացած 5.0	79.1	79.1	20.8	36.0	23.7	22.7	13.5	34.7	40.0	31.5	49.9	90.0	479		
Տնտեսական ակտիվության կարգավիճակ															
Չգրադված	22.7	67.0	20.5	25.8	17.6	42.9	26.3	36.8	43.9	35.7	57.5	89.8	4,645		
Վաստակում է կանխիկ	9.5	59.1	16.3	21.2	13.9	27.1	15.7	34.0	42.9	31.8	59.0	87.1	1,615		
Չի վաստակում կանխիկ	19.0	77.2	39.3	50.8	34.0	52.9	31.7	43.5	45.2	37.2	64.9	93.8	301		
Կրթություն															
Հիմնական ընդհանուր	28.6	74.8	28.2	39.1	27.7	54.2	35.0	38.7	47.6	40.7	62.5	93.3	529		
Միջնակարգ ընդհանուր	24.0	72.8	26.2	31.6	21.5	43.3	27.1	36.9	43.2	36.0	57.0	92.3	2,440		
Միջին մասնագիտական	15.3	66.8	18.8	24.8	16.0	35.7	21.8	38.4	45.1	35.4	59.3	89.0	1,997		
Բարձրագույն	13.9	49.8	10.7	13.9	9.7	33.6	18.4	32.4	41.6	30.3	57.4	84.0	1,600		
Բնակավայր															
Քաղաքային	16.7	63.5	12.6	19.8	11.2	35.5	20.6	33.7	40.7	32.3	56.1	87.9	4,194		
Գյուղական	23.9	69.2	34.1	36.5	28.4	46.5	29.9	41.1	49.1	39.3	61.9	91.9	2,372		
Մարզ															
Երևան	18.8	62.4	9.6	19.6	9.7	36.0	18.1	31.8	37.4	30.4	55.0	88.5	2,468		
Արագածոտն	37.1	57.9	42.1	44.2	42.9	49.4	40.0	52.4	50.2	41.7	57.1	94.2	292		
Արարատ	36.6	73.1	39.7	57.5	37.6	73.8	30.7	57.3	40.9	40.4	63.6	99.3	462		
Արմավիր	10.3	72.4	32.1	34.6	26.9	39.4	40.5	48.6	77.8	54.9	92.1	96.4	567		
Գեղարքունիք	32.0	58.8	29.0	26.5	22.4	43.4	30.0	42.9	56.5	46.0	78.8	90.7	443		
Լոռի	5.6	60.1	10.9	21.3	9.6	26.5	14.9	14.8	21.1	17.2	28.0	77.1	537		
Կոտայք	22.0	65.0	9.2	10.4	9.4	38.7	22.2	14.8	30.3	26.6	43.5	84.8	563		
Շիրակ	14.0	72.8	17.9	9.3	11.2	30.3	18.0	42.4	49.6	36.6	51.8	88.9	563		
Սյունիք	19.9	78.8	51.2	52.4	34.9	47.6	51.4	90.7	89.8	60.6	95.7	99.8	281		
Վայոց ձոր	12.5	84.3	72.1	79.7	55.7	37.3	26.7	52.5	53.7	62.4	64.0	95.1	107		
Տավուշ	7.2	61.7	17.6	16.0	11.0	35.7	9.9	3.5	17.6	9.7	38.4	79.6	285		
Ընդամենը	19.3	65.5	20.3	25.8	17.4	39.5	24.0	36.4	43.7	34.8	58.2	89.3	6,566		

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությամբ (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները: Ընդամենում ներառվել են նաև 4 կանայք, որոնց տնտեսական ակտիվության վերաբերյալ տվյալներ չեն գրանցվել:

խորհրդատվության արժեքը

Ինչպես արդեն նշվել է, կանանց համար առողջապահական ծառայություններից օգտվելու հիմնական խոչընդոտ է հանդիսանում անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը: ՀԺԱՀ 2005-ը ներառել է մի շարք հարցեր, վերջին անգամ բուժաշխատողին այցելության ժամանակ հարցվողների՝ իրականում ծախսած գումարի չափի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու նպատակով:

Բոլոր հարցվողներին, ովքեր հետազոտությանը նախորդող երեք ամիսների ընթացքում դիմել են բուժհաստատություն կամ բժշկի խորհրդատվության, տրվել են մի շարք հարցեր, թե վերջին այցելության ժամանակ բուժհաստատության կողմից սահմանված ընդամենը որքա՞ն գումար է վճարվել, որքա՞ն է ծախսվել հավելյալ, որքա՞ն է վճարվել փոխադրամիջոցի համար, ներառյալ բուժհաստատություն հասնելն ու վերադառնալը, ինչպես նաև, թե որքա՞ն է վճարվել այցելության արդյունքում նշանակված դեղի համար:

Հարցվողների գերակշիռ մասը կատարել է վճարումներ այցելության որոշ բաղադրիչների համար: Այցելության ընդհանուր արժեքի մեդիանը 1-5 տարեկան երեխաների այցելության դեպքում կազմել է 1497 ՀՀ դրամ (3 ԱՄՆ դոլար), կանանց այցելության դեպքում՝ 4997 ՀՀ դրամ (10 ԱՄՆ դոլար), և տղամարդկանց այցելության դեպքում՝ 6598 ՀՀ դրամ (15 ԱՄՆ դոլար): Հարցվողների գրեթե մեկ երրորդը վճարել է իր կամ իր երեխային անհրաժեշտ դեղամիջոցների համար (Աղյուսակ 14.4):

Աղյուսակ 14.4 Խորհրդատվության արժեք

15-49 տարեկան կանանց, տղամարդկանց և մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում, հարցմանը նախորդող երեք ամիսների ընթացքում բուժհաստատություն դիմած կամ բուժաշխատողի կողմից խորհրդատվություն ստացած անձինք, վճարում չկատարած անձանց տոկոսը, ինչպես նաև վճարում կատարած անձանց վճարման մեղիան գինը, Հայաստան 2005

Վճարումներ	Կանայք	Տղամարդիկ	Երեխաներ
Այցելության համար վճարված բուժհաստատության կողմից սահմանված վճար			
Վճարում չկատարած անձանց տոկոս	31.8	50.2	65.4
Գինը չգիտի/Տվյալ չկա	10.6	8.2	6.9
Մեղիան գինը ՀՀ դրամով	4,994	4,999	998
Այցելության համար վճարված հավելյալ վճար			
Վճարում չկատարած անձանց տոկոս	70.5	58.5	77.6
Գինը չգիտի/Տվյալ չկա	12.7	11.1	10.4
Մեղիան գինը ՀՀ դրամով	4,995	5,993	1,994
Տրանսպորտի գին			
Վճարում չկատարած անձանց տոկոս	46.8	64.4	69.4
Գինը չգիտի/Տվյալ չկա	1.2	0.0	0.0
Մեղիան գինը ՀՀ դրամով	250	399	200
Դեղորայքի գին			
Դեղորայքի անհրաժեշտություն չունեցողների տոկոս	70.5	67.5	48.2
Վճարում չկատարած անձանց տոկոս	2.4	3.6	15.5
Գինը չգիտի/Տվյալ չկա	2.8	1.4	3.7
Մեղիան գինը ՀՀ դրամով	250	500	200
Այցելության համար վճարված ընդհանուր արժեք			
Վճարում չկատարած անձանց տոկոս	13.5	20.3	24.9
Գինը չգիտի/Տվյալ չկա	17.5	13.5	13.5
Մեղիան գինը ՀՀ դրամով	4,997	6,598	1,497
Որևէ խորհրդատվություն ստացած հարցվողների թվաքանակ	1,104	127	485

Ընտանեկան Բժշկության վերաբերյալ գիտելիքները և վերաբերմունքը


1997թ. առողջապահության նախարարությունը սկսեց իրականացնել Ընտանեկան Բժշկության Ծրագիրը, որի հիմնական նպատակն է Հայաստանում ամրապնդել առաջնային բուժօգնությունը՝ կցելով ընտանիքի անդամներին մեկ բժշկի, ով կապահովի տարբեր տարիքի անձանց շարունակելի մասնագիտական օգնությունը և կհանդիսանա որպես առողջապահական համակարգ մուտքն ապահովող օղակ: 1999 թվականից ծրագիրը ներդրվել է նաև մարզերում և համայնքներում:

Աղյուսակ 14.5-ը ցույց է տալիս կանանց և տղամարդկանց տոկոսային բաշխումն, ովքեր լսել են ընտանեկան բժշկության ծրագրի (կամ ընտանեկան բժշկի) մասին ըստ հիմնական բնութագրիչների: Չնայած, որ հարցվողների մեծամասնությունը լսել է ծրագրի մասին, սակայն կանայք ավելի իրազեկ են, քան տղամարդիկ (համապատասխանաբար՝ 73 և 53 տոկոս): Առավել երիտասարդ հարցվողներն ավելի քիչ են տեղեկացված ընտանեկան բժշկության ծրագրի վերաբերյալ: Տոկոսային բաշխվածության նկատելի տարբերություն կա ըստ բնակավայրի և այն հատկապես արտահայտված է քաղաքային կանանց շրջանում: Հատկանշական տարբերություններ կան նաև ըստ մարզերի: Գոյություն ունի դրական կախվածություն կնոջ կրթական մակարդակի և ծրագրի իմացության միջև: Օրինակ, ի տարբերություն հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց, բարձրագույն կրթություն ունեցող կանայք երկու անգամ ավելի տեղեկացված են ծրագրի վերաբերյալ (համապատասխանաբար՝ 45 և 89 տոկոս):

Աղյուսակ 14.5 Իմացությունն ընտանեկան բժշկության ծրագրի մասին «Ընտանեկան բժշկության» կամ «ընտանեկան բժշկի» մասին լսած կանանց և տղամարդկանց տոկոսներն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005				
Հիմնական բնութագրիչներ	Կանայք		Տղամարդիկ	
	Տոկոս	Կանանց թվաքանակ	Տոկոս	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք				
15-19	57.7	1,123	28.8	292
20-24	74.0	1,131	49.3	237
25-29	78.0	929	58.8	202
30-34	77.7	749	58.8	156
35-39	77.5	711	59.9	150
40-44	73.0	965	63.3	199
45-49	76.7	958	63.7	211
Կրթություն				
Հիմնական ընդհանուր	44.7	529	31.6	205
Միջնակարգ ընդհանուր	63.8	2,440	41.1	586
Միջին մասնագիտական	78.8	1,997	61.4	310
Բարձրագույն	88.5	1,600	76.8	346
Բնակավայր				
Քաղաքային	79.2	4,194	54.5	913
Գյուղական	61.6	2,372	49.4	534
Մարզ				
Երևան	82.8	2,468	57.4	547
Արագածոտն	71.2	292	71.9	71
Արարատ	54.1	462	39.4	110
Արմավիր	66.0	567	69.4	139
Գեղարքունիք	59.1	443	33.8	81
Լոռի	85.2	537	58.4	87
Կոտայք	74.1	563	56.7	151
Շիրակ	56.3	563	28.6	98
Սյունիք	69.4	281	34.7	67
Վայոց ձոր	56.6	107	14.1	31
Տավուշ	70.1	285	57.4	64
Ընդամենը	72.8	6,566	52.6	1,447


Այն հարցվողներին, ովքեր նշել են, որ լսել են ընտանեկան բժշկության մասին, տրվել է հարց նաև դրա նշանակության վերաբերյալ (Գծապատկեր 14.2): Հարցվողների մեծամասնությունը (70 տոկոսից ավելի) նշել է, որ դա նշանակում է «մեկ բժիշկ ընտանիքի համար»: Հաջորդ առավել տարածված պատասխաններն են եղել «կանխարգելիչ բուժօգնություն» և «ավելի առողջ ընտանիք»:

Գծապատկեր 14.2 «Ընտանեկան բժշկության» նշանակությունը



Այն հարցվողների շրջանում, ովքեր լսել են ընտանեկան բժշկության մասին, կեսից ավելին նշել է, որ այն ընդունելի ծրագիր է Հայաստանի համար (Գծապատկեր 14.3): Այնուամենայնիվ, հարցվողների որոշ մասը նշել է, որ ծրագրը համարում է անընդունելի կամ չունի հստակ դիրքորոշում դրա վերաբերյալ: Ընտանեկան բժշկության ծրագրի մասին երբևէ լսած հարցվողների 6 տոկոսից փոքր մասը նշել է, որ գրանցվել է ընտանեկան բժիշկ ունենալու համար, հետազոտությանը նախորդող 36 ամիսների ընթացքում (տվյալները ներկայացված չեն):

Գծապատկեր 14.3 «Ընտանեկան բժշկության» ծրագրի ընդունում



Աղյուսակ 14.6-ում ներկայացված են ծրագրի՝ Հայաստանում անընդունելի համարվելու պատճառները: Հիմնապատճառը համոզմունքն է, որ ընտանեկան բժշկությունը թանկ համակարգ է: Տրվել են նաև այլ պատասխաններ, որոնք ամփոփում են մեկ մտահոգություն, որն է՝ մեկ բժշկի ոչ բավարար մասնագիտական գիտելիքները ընտանիքի բոլոր անդամներին բուժելու համար:

Աղյուսակ 14.6 Ընտանեկան բժշկության համակարգը չընդունելու պատճառներ

Ընտանեկան բժշկության մասին տեղյակ և այն ընդունելի չհամարող կանայք և տղամարդիկ ըստ այն ընդունելի չհամարելու հատուկ պատճառների և կանանց հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Արհեստավարժ չեն	Գիտելիքի պակաս	Չունեն նեղ տակա՛ն գիտելիքներ	Չի վստահում բժիշկներին	Նախընտրում է հին համակարգը	Թանկ է	Այլ	Չգիտի	Հարցվողների թվաքանակ
Տարիք									
15-19	7.0	9.2	12.6	15.7	7.0	53.7	1.6	5.1	131
20-24	3.9	11.5	12.0	15.5	12.4	53.0	1.9	4.7	188
25-29	5.2	12.7	11.6	18.2	14.4	51.5	0.5	3.3	151
30-34	10.4	11.5	13.1	16.5	19.3	50.9	2.2	6.0	120
35-39	6.5	9.0	14.2	14.9	16.6	63.2	0.0	0.0	127
40-44	5.1	11.2	10.5	13.1	11.4	62.8	1.2	1.7	171
45-49	7.5	14.3	12.4	9.4	14.2	60.0	1.9	0.0	191
Կրթություն									
Հիմնական ընդհանուր	(5.4)	(8.6)	(1.6)	(23.6)	(3.0)	(66.4)	(0.0)	(0.0)	35
Միջնակարգ ընդհանուր	4.0	11.9	5.1	14.5	13.4	60.5	1.4	4.2	322
Միջին մասնագիտական	7.1	9.6	12.2	12.9	9.5	64.2	1.0	1.7	352
Բարձրագույն	7.7	13.4	19.5	15.1	18.3	45.2	1.8	3.0	371
Բնակավայր									
Քաղաքային	6.9	10.2	14.1	14.7	15.1	55.9	1.6	2.5	807
Գյուղական	4.7	15.5	6.6	14.0	8.7	58.7	0.8	3.9	273
Բոլոր կանայք	6.3	11.6	12.2	14.5	13.5	56.6	1.4	2.8	1,080
Բոլոր տղամարդիկ	8.3	22.4	17.8	16.3	23.1	36.1	3.8	3.2	131

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

14.2 Ծխելու սովորութիւն

Ծխելը բացասական ազդեցություն ունի ծխողի առողջության վրա: Ծխախոտի օգտագործումը հանդիսանում է թոքի քաղցկեղի, էմֆիզեմայի և այլ ռեսպիրատոր հիվանդությունների բարձր մակարդակի պատճառ: Ինչ վերաբերվում է թոքի քաղցրեղին, այն հայ տղամարդկանց շրջանում քաղցկեղի ամենատարածված տեսակն է: Ավելին, հաստատված է, որ ծխելը նպաստում է սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների առաջացման ռիսկին (ՀՀ կառավարություն, Յունիսեֆ և «Փրկեք երեխաներին», 1999): Այն կարող է ազդեցություն թողնել նաև պասիվ ծխողների վրա: Օրինակ՝ արտաշնչած ծխի ներշնչումը կարող է վնասակար ազդեցություն ունենալ երեխայի աճի վրա, ինչպես նաև հանդիսանալ, ինչպես շնչառական, այնպես էլ այլ մանկական հիվանդությունների պատճառ:

1990-ականների կեսերից, իրականացվեցին որոշ միջոցառումներ ծխախոտի օգտագործման նկատմամբ վերահսկողություն սահմանելու նպատակով: Հայաստանում ՁԼՍ-ների միջոցով ծխախոտի գովազդն արգելվեց, սակայն չկար հսկողություն ռուսական և այլ արտասահմանյան հեռուստահաղորդումների վրա, որոնք լայն տարածում ունեին Հայաստանում: Վերջերս, Հայաստանում սկսեց վերահսկվել նաև ծխախոտի մեջ խեժի և միկոտինի պարունակության պիտակավորումը, և ծխախոտի վաճառքը մինչև 18 տարեկաններին արգելվեց: 2005 թվականից հասարակական վայրերում, կառավարական և առողջապահական հաստատություններում, ռեստորաններում, փակ սրճարաններում, հիմնարկություններում, ինչպես նաև տրանսպորտային միջոցներում (ավտոբուս, տաքսի, գնացք) ծխելն արգելվել է:

Ընդհանուր առմամբ, ՀԺԱՀ 2005-ի ընթացքում, կանանց միայն 2 տոկոսն է նշել, որ ծխում է: Հնարավոր է, որ որոշ կին հարցվողներ չեն կամեցել նշել, որ ծխում են՝ կնոջ ծխելու դեմ հայկական ավանդական արգելքի պատճառով: Այնուամենայնիվ, նույն ցուցանիշը քաղաքաբնակ, 35-49 տարիքային խմբերի, բարեկեցության ամենաբարձր մակարդակում գտնվող, կանանց շրջանում տատանվում է 3-4 տոկոսի միջև (տվյալները ներկայացված չեն):

Զնայած, այս պարագայում, կանանց ծխելու սովորությունը չի կարող դիտարկվել որպես հանրային առողջության գերխնդիր, այնուամենայնիվ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել կանանց ծխելուց զերծ պահելու և ծխելու դեպքում, այդ փաստը չթաքցնելու համար: Առողջապահական տեսանկյունից, ցանկալի է, որ Հայաստանի կանանց շրջանում ծխելը լայն տարածում չգտնի: Կանանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածության հնարավոր աճը պետք է վերահսկվի, անհրաժեշտության դեպքում, ճիշտ ժամանակին առողջության համար վնասակար հետևանքների վերաբերյալ համապատասխան առողջապահական ուսումնական ծրագրերի իրականացման միջոցով:

Ծխելու սովորությունն ավելի լայն տարածում ունի տղամարդկանց շրջանում (Աղյուսակ 14.7): Ի տարբերություն ՀԺԱՀ 2000-ի արդյունքում ստացված 67 տոկոսի, ՀԺԱՀ 2005-ի ընթացքում հարցմանը մասնակցած 15-49 տարեկան տղամարդկանց 64 տոկոսը նշել է, որ ծխում է: Հարցման պահին ծխելու սովորություն ունեցող հարցվողների 90 տոկոսից ավելին նշել է, որ վերջին 24 ժամվա ընթացքում ծխել է տաս և ավելի ծխախոտ: Ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շրջանում ծխելու սովորությունը աճում է տարիքին զուգընթաց: Ըստ բնակավայրի նշանակալի տարբերություններ չեն նկատվել:

Ծխելու սովորության տարածվածության վերաբերյալ տվյալների համեմատությունը միջազգային վիճակագրության հետ դժվար է, հրապարակված արդյունքներում տեղ գտած սահմանումների և տարիքային խմբերի միջև առկա տարբերությունների պատճառով: Սակայն հարկ է նշել, որ ՀԺԱՀ 2005-ի արդյունքում ստացված ծխախոտ ծխող տղամարդկանց 61 տոկոս ցուցանիշը, Արևմտյան և Արևելյան Եվրոպայում անցկացված ուսումնասիրությունների արդյունքում ստացված նույն ցուցանիշների համեմատությամբ բարձր է, բացառությամբ Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Բելոռուսի, որտեղ ծխելու տարածվածությունը գրեթե նույնն է, ինչ Հայաստանում (ԱՀԿ, 2005):

Աղյուսակ 14.7 Ծխախոտի օգտագործում, Տղամարդիկ

Տղամարդկանց տոկոսը, ովքեր օգտագործում են ծխախոտ կամ ծխամորժ կամ ծխախոտի այլ տեսակ և ծխողների տոկոսային բաշխումն ըստ հարցմանը նախորդող 24 ժամվա ընթացքում ծխած ծխախոտի գլանակների թվի համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Ծխախոտի օգտագործում				Տղամ. թվաք.	Ծխախոտի գլանակների թիվ						Ծխողների թվաք.
	Ծխա-խոտ	Ծխա-մորժ	Այլ ծխախոտ	Չի օգտ ծխախոտ		1-2	3-5	6-9	10+	Չգիտի/ Տվյալ չկա	Ընդամենը	
Տարիք												
15-19	15.6	0.7	0.1	84.4	292	(6.9)	(5.7)	(9.4)	(69.4)	(8.6)	(100.0)	46
20-34	69.9	0.1	2.6	30.1	594	0.2	4.1	3.2	91.8	0.8	100.0	415
35-49	73.9	1.9	4.0	26.1	561	0.1	2.3	1.6	94.0	2.1	100.0	414
Բնակավայր												
Քաղաքային	60.3	1.5	2.7	39.6	913	0.5	3.5	2.4	92.3	1.4	100.0	551
Գյուղական	60.7	0.0	2.6	39.3	534	0.5	3.0	3.3	90.7	2.5	100.0	324
Մարզ												
Երևան	61.5	1.8	3.6	38.5	547	0.6	4.0	1.0	93.3	1.2	100.0	336
Արագածոտն	64.9	0.0	0.3	34.9	71	3.4	0.7	0.7	84.7	10.5	100.0	46
Արարատ	65.4	0.3	2.5	34.6	110	0.0	3.3	3.4	93.0	0.3	100.0	72
Արմավիր	62.0	0.0	0.0	38.0	139	0.0	4.5	4.4	91.1	0.0	100.0	86
Գեղարքունիք	68.3	0.3	5.3	31.4	81	0.0	2.4	4.8	92.7	0.0	100.0	55
Լոռի	46.6	2.0	2.0	53.4	87	(0.0)	(0.0)	(6.9)	(93.1)	(0.0)	(100.0)	41
Կոտայք	57.3	0.6	0.0	42.7	151	0.0	6.2	7.2	80.6	6.0	100.0	87
Շիրակ	55.2	0.0	0.0	44.8	98	0.0	0.0	0.0	98.2	1.8	100.0	54
Սյունիք	63.8	0.0	0.0	36.2	67	1.0	3.1	1.0	95.0	0.0	100.0	43
Վայոց ձոր	52.3	0.0	32.4	47.7	31	2.9	0.0	9.0	85.4	2.7	100.0	16
Տավուշ	60.5	0.0	0.0	39.5	64	0.0	2.2	1.2	96.6	0.0	100.0	39
Կրթություն												
Հիմնական ընդհանուր	56.6	0.9	2.6	43.4	205	0.0	3.7	2.2	91.6	2.5	100.0	116
Միջնակարգ ընդհանուր	58.5	1.6	2.9	41.4	586	0.8	4.7	3.1	89.0	2.5	100.0	343
Միջին մասնագիտական	71.4	0.0	2.8	28.6	310	0.0	1.4	2.6	94.5	1.5	100.0	222
Բարձրագույն	56.3	0.7	2.2	43.6	346	0.9	2.8	2.5	93.4	0.4	100.0	195
Բարեկեցության մակարդակ												
Ամենացածր	64.8	0.0	3.2	35.2	261	0.3	1.3	4.1	91.8	2.5	100.0	169
Ցածր	59.6	0.0	4.1	40.4	264	1.0	3.1	0.7	93.3	1.9	100.0	157
Միջին	59.2	0.1	0.7	40.8	326	1.2	3.4	2.1	90.5	2.8	100.0	193
Բարձր	54.2	0.7	1.7	45.7	316	0.0	3.8	4.5	90.5	1.2	100.0	171
Ամենաբարձր	65.9	3.9	4.3	34.1	280	0.0	4.7	2.2	92.6	0.4	100.0	184
Ընդամենը	60.5	0.9	2.7	39.5	1,447	0.5	3.3	2.7	91.7	1.8	100.0	875

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Ծխելու հետ կապված բոլոր հիվանդություններից, թոքի քաղցկեղը դիտարկվում է որպես երկար ժամանակ ծխախոտ օգտագործելու մասին վկայող լավագույն ցուցիչ: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալների, Հայաստանը համարվում է ծխախոտի օգտագործմամբ պայմանավորված մահացության ցուցանիշի միջին և աճող մակարդակ ունեցող երկիր, վերջինս հիմնավորվում է տրախեայի, բրոնխների և թոքի քաղցկեղից մահացության (100.000 0-64 տարեկան կին և տղամարդ բնակչի հաշվով 53 դեպք, 2003 թվականին) ցուցանիշով: Մահացության ցուցանիշը, միայն տղամարդկանց համար, 2003 թվականին, 100.000 բնակչի հաշվով կազմել է 65 (ԱՀԿ, 2005): Ծխելու սովորությունը ձեռքբերվի է և անհատն այն ձեռք է բերում իր կամքով, ուստի, ծխախոտի օգտագործմամբ պայմանավորված բոլոր հիվանդությունները և մահացությունը կարելի է կանխարգելել: Ամբողջ կյանքի ընթացքում ծխախոտ օգտագործած և մինչև 35 տարեկան հասակը ծխախոտի օգտագործումից հրաժարված անձանց՝ կյանքի միջին սպասվելիք տևողությունների միջև նշանակալի տարբերություն չկա (Doll et al., 1994): Առողջապահական ուսումնական ծրագրերը, որոնք խրախուսում են չծխելը և ծխելու սովորույթից հրաժարվելը, հատկապես պետք է իրականացվեն տղամարդկանց շրջանում:

14.3 ՊԱԼԱՐԱԽՏ (ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈՋ)

Տուբերկուլյոզի հարուցիչ է հանդիսանում “Mycobacterium tuberculosis” կոչվող միկրոօրգանիզմը: Այս հիվանդությունը սովորաբար ազդում է թոքերի վրա՝ չնայած դեպքերի մեկ երրորդում ավտահարվում են այլ օրգաններ: Համապատասխան բուժման դեպքում դեղերի նկատմամբ ընկալունակ շտամներով հարուցված տուբերկուլյոզի բոլոր դեպքերը, ըստ էության, բուժելի են: Բուժման բացակայության դեպքում հիվանդությունը կեսից ավելի դեպքերում մինչև հինգ տարի ժամանակահատվածում կարող է մահացու ելք ունենալ: Սովորաբար հիվանդությունը փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով՝ տուբերկուլյոզով հիվանդի հազի ժամանակ:

Տուբերկուլյոզը հանդիսանում է հանրային առողջության մեծագույն խնդիրներից մեկը՝ դրանից տարեկան մահանում է շուրջ երկու միլիոն մարդ: Նախկին Խորհրդային Միության երկրների համար մեծ առողջապահական խնդիր են հանդիսանում հակատուբերկուլյոզային դեղերի, մասնավորապես իզոնիազիդի և րիֆամպիցինի, նկատմամբ կայունություն ցուցաբերող հարուցիչի շտամների աճը: Դեղակայուն տուբերկուլյոզի տարածմանը նպաստող գործոն են հանդիսանում՝ հիվանդները, որոնք խախտում են դեղերի ընդունման երկարատևությունը և պարբերականությունը, սխալ բուժում նշանակած բժիշկները և բուժաշխատողները և դեղերի անբավարար քանակությունը: Դեղակայուն տուբերկուլյոզը ենթարկվում է բուժման, որի համար անհրաժեշտ է լայնատարած քիմիոթերապիա, ինչն իր հերթին կարող է հիվանդի համար անսահման թանկ լինել և թունավտանգ:

Հայաստանում հանրային առողջության համար տուբերկուլյոզը հանդիսանում է մեծ խնդիր: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից եվրապական երկրների վերաբերյալ 2004-ին ներկայացված տվյալների, Հայաստանում տուբերկուլյոզի տարածվածության տարեկան ենթադրյալ ցուցանիշը 100.000 բնակչի հաշվով, կազմել է 52 (ԱՀԿ, 2005): Այս ցուցանիշը արտացոլում է նշանակալի աճ 1998 թվականի համեմատությամբ, երբ ենթադրյալ ցուցանիշը 100 000 բնակչի հաշվով կազմել էր 43 (ԱՀԿ, 2005): Ըստ պաշտոնական վիճակագրության, ի տարբերություն 2005թ-ին գրանցված 6455 ակտիվ տուբերկուլյոզի դեպքերի (100000 բնակչի հաշվով 200.5 դեպք) 1988թ-ին գրանցվել է 3205 դեպք (100000 բնակչի հաշվով 92.8 դեպք): Նմանապես, ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների նույն ցուցանիշը 1988թ-ին կազմել է 642 (100000 բնակչի հաշվով 18.6 դեպք) և 2005թ-ին այդ ցուցանիշն աճել է կազմելով 2006 նոր դեպք (100000 բնակչի հաշվով 62.3 դեպք) (ՀՀ ԱՆ):

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) առաջարկում է տուբերկուլյոզի դեմ պայքարի մարտավարություն, որը հայտնի է որպես «DOTS» - ուղակիորեն հսկվող, կարճաժամկետ բուժում, որը ներառում է՝

1) բուժաստատություններ ինքնակամ դիմած ավտանիշեր ունեցող անձանց դեպքերի քննություն՝ խորխի քսուկի մանրդիտակային ուսումնասիրություն,

2) ստանդարտացված կարճաժամկետ քիմիոթերապիա անուղակիորեն հսկվող բուժման հետ միասին,

3) ստանդարտացված գրանցումների և զեկույցների համակարգ, որն ուղորդում է յուրաքանչյուր հիվանդի բուժումը, ինչպես նաև հնարավորություն է տալիս տեղեկատվություն տրամադրել տուբերկուլյոզի դեմ պայքարող ծրագրերին:

2002 թվականի վերջին, Հայաստանում “DOTS” ծրագրի տարածվածությունը բնակչության շրջանում հասել է 100 տոկոսի:

ՀԺԱՀ-ի ընթացքում, տուբերկուլյոզի վերաբերյալ կանանց և տղամարդկանց գիտելիքները պարզելու նպատակով, տրվել են մի շարք հարցեր տուբերկուլյոզի ավտանիշերի, փոխանցման ուղիների և համապատասխան բուժման վերաբերյալ: Ազգային մակարդակով ամփոփված տեղեկատվությունը ներկայացված է աշխարհագրական և սոցիալ-տնտեսական ենթախմբերի կտրվածքով:

Տուբերկուլյոզի և դրա փոխանցման վերաբերյալ իմացություն

ՀԺԱՀ 2005-ի ընթացքում կանանց և տղամարդկանց տրվել են հարցեր, թե տեղյա՞կ են արդյոք տուբերկուլյոզ կոչվող հիվանդության մասին, և եթե այո, ապա ինչպե՞ս են պատկերացնում հիվանդության փոխանցումը մեկ անձից մյուսին:

Այլուսակ 14.8-ը ցույց է տալիս, որ չափահասների մեծամասնությունը լսել է տուբերկուլյոզի մասին (92 տոկոս կանայք և 87 տոկոս տղամարդիկ), սակայն ըստ հիմնական բնութագրիչների կան որոշ տարբերություններ: Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում, կրթական մակարդակին զուգընթաց տուբերկուլյոզի մասին տեղեկացվածության մակարդակն ավելանում է: Քաղաքաբնակ կանայք ավելի տեղեկացված են տուբերկուլյոզի մասին, քան գյուղաբնակ կանայք, ինչը չի կարելի ասել տղամարդկանց դեպքում: Տարբերություններն ավելի ակնառու են ըստ բնակավայրերի: Հարցմանը մասնակցած երևանաբնակ կանանց 97 տոկոսը նշել է, որ լսել է տուբերկուլյոզի մասին: Տղամարդկանց շրջանում տեղեկացվածության ամենացածր ցուցանիշը գրանցվել է Սյունիքի մարզում (40 տոկոս), այնուհետև Լոռու մարզում՝ 73 տոկոս: Արագածոտնի և Արմվիրի մարզերում բնակվող գրեթե բոլոր տղամարդիկ (99 տոկոս) լսել են տուբերկուլյոզի մասին: Ինչպես ՀԺԱՀ 2000-ին, այնպես էլ ՀԺԱՀ 2005-ին տուբերկուլյոզի մասին տեղեկացված հարցվողների կեսից ավելին կարողացել է ճշգրտորեն տարբերակել հիվանդության փոխանցման եղանակը:

Տուբերկուլյոզի փոխանցման վերաբերյալ գիտելիքների հետագա ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալները վկայում են, որ ենթախմբերի կտրվածքով, տուբերկուլյոզի և տուբերկուլյոզի փոխանցման եղանակների վերաբերյալ տեղեկացվածությունը գրեթե նույնն է: Թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում տուբերկուլյոզի տարածման եղանակի մասին տեղեկացվածությունը՝ հազի ժամանակ օդի միջոցով, աճում են կրթական մակարդակին (68 տոկոս բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների միջև) և տարիքին (61 տոկոսից ավելին 40-49 տարեկան տարիքային խմբում) զուգահեռ: Քաղաքաբնակ հարցվողներն ավելի տեղեկացված են այս հարցի վերաբերյալ, քան գյուղաբնակ հարցվողները: Հիվանդության փոխանցման եղանակի մասին տեղեկացվածությունը մարզային կտրվածքով զգալիորեն տատանվում է՝ 26-69 տոկոս կանանց և 5-91 տոկոս տղամարդկանց շրջանում: Գիտելիքների ամենացածր մակարդակը գրանցվել Արարատի և Շիրակի մարզերի տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար՝ 5 և 6 տոկոս): Կանանց 20 տոկոսից ավելին և տղամարդկանց 30 տոկոսը, երբևէ չեն լսել տուբերկուլյոզի մասին:

Աղյուսակ 14.8 Տուբերկուլոզի մասին իմացություն

Տուբերկուլոզի մասին լսած կանանց և տղամարդկանց տոկոսը և տոկոսային բաշխումն ըստ տուբերկուլոզի տարածման ուղիների, համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք							Տղամարդիկ						
	Տեղյակ է տուբերկուլոզի տարածման եղանակների մասին							Տեղյակ է տուբերկուլոզի տարածման եղանակների մասին						
	Երբևէ լսել է տուբերկուլոզի մասին	Հազի ժամանակ օրի միջոցով	Տուբերկուլոզի տարածման այլ եղանակներ նշածների	Զգիտի տուբերկուլոզի տարածման եղանակ	Երբևէ չի լսել տուբերկուլոզի մասին	Ընդամենը	Կանանց բնութագրիչ	Երբևէ լսել է տուբերկուլոզի մասին	Հազի ժամանակ օրի միջոցով	Տուբերկուլոզի տարածման այլ եղանակներ նշածների	Զգիտի տուբերկուլոզի տարածման եղանակ	Երբևէ չի լսել տուբերկուլոզի մասին	Ընդամենը	Տղամարդկանց բնութագրիչ
Տարիք														
15-19	81.6	41.4	18.5	21.7	18.4	100.0	1,123	74.1	32.4	9.9	31.8	25.9	100.0	292
20-24	92.4	52.9	22.4	17.2	7.6	100.0	1,131	89.7	53.7	17.1	18.9	10.3	100.0	237
25-29	91.6	61.3	18.6	11.7	8.4	100.0	929	87.5	59.9	14.4	13.2	12.5	100.0	202
30-34	95.4	60.5	23.5	11.3	4.6	100.0	749	91.6	68.0	9.0	14.6	8.4	100.0	156
35-39	95.0	60.0	24.6	10.4	5.0	100.0	711	87.9	59.6	19.9	8.4	12.1	100.0	150
40-44	94.2	60.8	22.9	10.4	5.8	100.0	965	91.9	56.2	20.3	15.4	8.1	100.0	199
45-49	94.9	61.2	23.4	10.4	5.1	100.0	958	93.8	63.5	18.0	12.3	6.2	100.0	211
Բնակավայր														
Քաղաքային	94.9	60.2	21.9	12.7	5.1	100.0	4,194	86.0	56.4	15.7	13.9	14.0	100.0	913
Գյուղական	86.1	48.9	21.5	15.7	13.9	100.0	2,372	89.2	50.5	14.5	24.2	10.8	100.0	534
Մարզ														
Երևան	96.9	63.6	21.3	12.0	3.1	100.0	2,468	84.4	62.9	12.3	9.2	15.6	100.0	547
Արագածոտն	89.2	56.9	13.8	18.5	10.8	100.0	292	99.0	91.0	3.7	4.3	1.0	100.0	71
Արարատ	90.4	55.6	21.8	13.0	9.6	100.0	462	94.8	4.5	34.0	56.2	5.2	100.0	110
Արմավիր	88.1	55.5	15.8	16.7	11.9	100.0	567	98.8	89.9	3.0	5.9	1.2	100.0	139
Գեղարքունիք	73.1	26.1	30.9	16.2	26.9	100.0	443	86.4	47.1	14.0	25.4	13.6	100.0	81
Լոռի	90.9	71.7	10.1	9.0	9.1	100.0	537	73.3	32.2	11.9	29.2	26.7	100.0	87
Կոտայք	94.6	54.3	19.3	21.0	5.4	100.0	563	98.1	65.7	10.7	21.7	1.9	100.0	151
Շիրակ	89.9	33.0	38.2	18.7	10.1	100.0	563	92.5	6.4	45.3	40.7	7.5	100.0	98
Սյունիք	80.9	69.3	8.2	3.4	19.1	100.0	281	39.9	30.6	3.5	5.8	60.1	100.0	67
Վայոց ձոր	94.4	54.2	33.9	6.3	5.6	100.0	107	90.4	20.5	54.7	15.2	9.6	100.0	31
Տավուշ	96.2	47.3	34.3	14.6	3.8	100.0	285	93.3	72.7	12.0	8.6	6.7	100.0	64
Կրթություն														
Հիմնական ընդհանուր	74.5	34.3	18.1	22.1	25.5	100.0	529	75.2	46.6	7.7	20.8	24.8	100.0	205
Միջնակարգ ընդհանուր	89.1	48.5	23.2	17.4	10.9	100.0	2,440	87.7	46.6	18.3	22.8	12.3	100.0	586
Միջին մասնագիտական	94.9	61.5	22.5	10.9	5.1	100.0	1,997	89.1	58.2	14.7	16.2	10.9	100.0	310
Բարձրագույն	97.3	68.3	19.9	9.1	2.7	100.0	1,600	91.6	67.9	15.0	8.6	8.4	100.0	346
Բարեկեցության մակարդակ														
Ամենացածր	82.9	41.1	22.5	19.3	17.1	100.0	1,164	89.1	51.2	14.2	23.7	10.9	100.0	261
Ցածր	89.6	52.7	21.7	15.2	10.4	100.0	1,284	89.9	43.9	22.3	23.7	10.1	100.0	264
Միջին	93.3	56.1	24.3	12.8	6.7	100.0	1,303	88.3	52.7	17.3	18.4	11.7	100.0	326
Բարձր	94.4	62.2	21.0	11.3	5.6	100.0	1,375	85.5	61.1	13.5	10.9	14.5	100.0	316
Ամենաբարձր	96.6	65.6	19.6	11.4	3.4	100.0	1,440	83.4	60.7	9.4	13.4	16.6	100.0	280
Ընդամենը	91.7	56.1	21.8	13.8	8.3	100.0	6,566	87.2	54.2	15.3	17.7	12.8	100.0	1,447

Տուբերկուլյոզի ախտանիշների վերաբերյալ գիտելիքներ

ՀԺԱՀ 2005-ի շրջանակներում, հարցվող տղամարդկանց և կանանց տրվել է հետևյալ հարցը՝ “Ինչպիսի՞ նշաններ կամ ախտանիշներ Ձեզ կստիպեն մտածել, որ մարդը հիվանդ է տուբերկուլյոզով”: Այդուսակ 14.9.1-ը և 14.9.2-ը արտացոլում են կանանց և տղամարդկանց կողմից նշված, ախտանիշների կամ նշանների վերաբերյալ, բաշխվածությունը: Կանանց կողմից նշված առավել հաճախ հանդիպող ախտանիշներն են՝ խորխոսկ հազը, ջերմությունը և գունատությունը: Այս երեք պատասխանների տոկոսային բաշխվածությունը տատանվում է 31-61 տոկոսի սահմաններում: Խորխոսկ թաց հազը, որպես տուբերկուլյոզի ախտանիշ, նշել է կանանց 29 տոկոսը, մինչդեռ արյան առկայությամբ հազը՝ 26 տոկոսը: Գիշերային տենդը և

Այդուսակ 14.9.1 Իմացություն տուբերկուլյոզի ախտանիշների մասին, Կանայք

Տուբերկուլյոզի մասին լսած կանանց շրջանում, տուբերկուլյոզին բնորոշ ախտանիշների վերաբերյալ տեղյակ անձանց տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Հազ	խորխոսկ հազ	Մի քանի շաբաթ ձգված հազ	Որևէ տիպի հազ	Տենդ	Արյուն բքում	Ախորձակի կրրուստ	Գիշերային տենդ	Ցավ կրծքախոռոչում	Դրամատություն	Քաշի կորուստ	Գունատություն	Այլ	Չգիտի	Կանանց թվաքանակ
Տարիք															
15-19	55.4	21.2	6.2	68.2	23.3	19.4	3.7	4.3	3.4	5.9	9.1	27.8	1.2	21.9	917
20-24	59.5	27.6	8.1	77.7	26.6	23.7	5.1	3.3	4.4	5.5	15.2	35.0	1.2	13.0	1,045
25-29	60.4	29.6	7.8	77.7	29.4	26.9	6.0	5.4	5.4	10.7	12.8	36.1	1.3	14.6	851
30-34	62.0	28.6	9.6	81.7	35.6	25.2	9.3	6.8	6.5	10.4	16.6	41.0	0.4	10.1	715
35-39	64.3	34.6	9.7	84.9	37.7	33.2	8.9	5.4	7.0	11.1	18.3	39.2	1.0	7.6	676
40-44	61.6	30.9	12.0	82.2	32.4	31.1	7.7	6.2	5.7	9.6	16.7	40.1	1.2	9.0	909
45-49	66.4	31.8	10.2	83.3	37.2	26.7	6.9	6.5	5.7	10.9	16.3	41.5	1.6	8.2	909
Բնակավայր															
Քաղաքային	64.7	28.6	10.3	81.9	32.2	25.3	7.2	6.2	6.3	9.8	16.9	37.2	1.3	10.4	3,979
Գյուղական	54.3	29.6	6.5	73.6	29.4	28.3	5.5	3.6	3.4	7.2	10.9	36.7	0.9	15.9	2,042
Մարզ															
Երևան	68.0	30.8	11.0	84.7	34.5	24.0	8.1	7.9	6.3	10.9	19.9	32.6	1.7	8.9	2,391
Արագածոտն	63.1	34.4	3.4	71.3	22.6	7.0	8.5	5.6	0.4	3.0	7.2	16.8	1.0	17.5	261
Արարատ	16.3	50.8	3.8	65.6	59.3	58.0	3.6	6.0	3.7	4.3	17.2	22.0	0.0	14.5	418
Արմավիր	67.7	19.7	4.4	77.0	22.9	20.1	1.8	0.3	2.0	2.0	7.2	42.9	1.1	17.1	499
Գեղարքունիք	24.5	21.4	17.8	59.7	26.6	26.8	11.4	7.1	2.0	21.1	16.8	44.5	0.0	19.0	324
Լոռի	71.0	30.9	21.3	86.6	35.5	39.6	15.4	7.2	9.1	12.8	22.3	63.1	0.0	10.7	488
Կոտայք	60.3	10.0	0.4	67.4	15.1	9.1	1.0	1.0	6.1	3.8	8.7	40.8	3.2	16.4	532
Շիրակ	61.2	32.9	5.4	74.1	24.0	42.8	4.9	4.1	10.0	6.1	9.6	43.8	0.0	18.1	507
Սյունիք	51.2	49.1	16.4	94.5	42.8	35.7	5.0	1.9	2.3	19.9	6.6	55.1	0.0	3.5	227
Վայոց ձոր	86.2	36.3	3.4	93.3	39.0	6.8	1.8	0.9	1.8	0.9	8.5	13.3	0.0	3.9	101
Տավուշ	83.3	6.5	1.5	85.3	14.8	5.9	0.6	0.0	0.7	5.3	3.7	24.7	1.9	11.7	274
Կրթություն															
Հիմնական															
ընդհանուր	45.7	21.4	7.8	63.7	20.5	15.5	4.4	1.7	3.2	7.7	7.3	27.5	1.8	27.4	394
Միջնակարգ															
ընդհանուր	58.3	24.4	6.8	74.4	27.0	22.8	5.5	4.8	4.3	6.4	11.0	33.4	1.0	16.5	2,174
Միջին															
մասնագիտական	63.2	31.7	10.7	81.8	33.9	29.6	7.6	5.9	6.1	10.6	15.4	39.3	0.7	9.4	1,896
Բարձրագույն	66.7	33.9	10.4	86.2	36.8	30.1	7.5	6.2	6.3	10.8	21.4	41.6	1.8	6.0	1,557
Բարեկեցության մակարդակ															
Ամենացածր	58.1	24.8	5.5	71.6	22.0	22.2	4.1	3.8	3.6	6.0	9.5	31.9	0.4	20.3	964
Ցածր	57.6	30.1	6.6	76.6	32.2	29.8	5.0	3.8	4.1	6.6	10.7	35.1	1.0	13.8	1,150
Միջին	57.7	29.9	10.1	77.9	31.6	29.3	7.2	6.0	6.7	9.5	13.0	36.3	2.0	11.5	1,216
Բարձր	64.1	29.2	10.5	82.4	33.2	24.7	8.0	5.9	6.0	11.4	18.3	42.9	0.7	10.6	1,299
Ամենաբարձր	66.6	29.8	11.3	84.3	34.9	25.1	7.8	6.4	5.7	10.1	20.5	37.2	1.5	7.7	1,391
Ընդամենը	61.2	28.9	9.0	79.1	31.3	26.3	6.6	5.3	5.3	8.9	14.8	37.0	1.2	12.3	6,021

կրժքավանդակի ցավը, ամենաքիչն են նշվել, որպես տուբերկուլյոզի ախտանիշեր:

Կանանց տոկոսը, ովքեր նշել են, որ խորխով հազը հանդիսանում է տուբերկուլյոզի ախտանիշ, տարիքին և կրթական մակարդակին զուգահեռ աճում է: Ցուցանիշն ամենացածր տարիքային խմբում կազմել է 68 տոկոս, իսկ ամենաբարձր տարիքային խմբում՝ 83 տոկոս: Ըստ կրթական մակարդակի ցուցանիշը տատանվում է 64 տոկոսից մինչև 86 տոկոս: Հազը՝ որպես տուբերկուլյոզի ախտանիշ, ի տարբերություն գյուղաբնակ կանանց, ավելի շատ նշել են քաղաքաբնակ կանայք (համապատասխանաբար՝ 74 և 82 տոկոս): Նշանակալի տարբերություններ են նկատվել և՛ հազի, և՛ խորխով հազի ցուցանիշների միջև ըստ մարզերի: Հարկ է նշել, որ մի քանի շաբաթ ձգված հազը և խորխով թաց հազը, որոնք տուբերկուլյոզի առավել արտահայտիչ ախտանիշեր են, ավելի քիչ են նշվել Կոտայքի և Տավուշի մարզերի կանանց կողմից:

Աղյուսակ 14.9.2 Իմացությունը տուբերկուլյոզի ախտանիշերի մասին, Տղամարդիկ

Տուբերկուլյոզի մասին լսած տղամարդկանց շրջանում, տուբերկուլյոզին բնորոշ ախտանիշերի վերաբերյալ տեղյակ անձանց տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Հազ	Խորխով հազ	Մի քանի շաբաթ ձգված հազ	Որևէ տիպի հազ	Տենդ	Արյուն քթում	Ախտածակի կորուստ	Գիշերային տենդ	Ցածկ կրծքավանդակում	Հոգեմտորոշում	Քաշի կորուստ	Գունատություն	Այլ	Զգիտի	Տղամարդկանց թվաքանակը
Տարիք															
15-19	39.9	19.1	15.1	55.4	13.7	22.0	5.6	6.5	5.4	5.4	6.8	18.7	0.4	40.2	217
20-24	51.4	35.5	17.4	75.5	19.9	37.3	2.9	3.1	5.2	6.4	8.1	28.7	0.5	18.9	212
25-29	55.1	43.4	18.5	84.1	22.3	33.4	2.7	3.5	3.7	5.5	10.8	31.3	1.9	11.8	177
30-34	62.6	52.0	10.1	84.2	23.4	35.1	3.3	10.8	3.1	3.5	9.5	31.7	0.0	14.3	143
35-39	49.9	37.7	23.1	85.4	28.1	47.0	2.0	4.9	8.2	4.4	13.3	32.1	1.3	9.3	132
40-44	57.3	30.6	13.4	77.8	25.9	32.9	5.8	8.1	5.9	6.5	14.8	38.4	0.5	15.9	183
45-49	49.9	39.0	21.1	80.9	15.8	39.5	4.7	9.0	6.7	4.2	14.4	23.3	1.2	14.0	198
Բնակավայր															
Քաղաքային	50.6	45.9	22.2	80.1	17.7	39.9	3.1	6.2	6.8	6.2	12.8	27.3	0.5	15.3	785
Գյուղական	53.4	19.0	8.2	70.5	25.5	25.9	5.5	6.9	3.2	3.7	7.8	30.7	1.3	24.7	476
Մարզ															
Երևան	51.7	63.6	29.7	88.0	13.7	48.0	2.3	7.7	9.4	5.2	9.4	18.7	0.0	9.0	461
Արագածոտն	87.6	9.6	8.5	90.6	53.0	10.1	16.6	33.3	13.3	8.1	13.1	38.7	0.3	5.6	70
Արարատ	20.6	30.4	24.0	58.5	42.9	33.5	3.2	3.6	0.0	0.2	0.3	14.9	0.0	38.8	104
Արմավիր	72.7	3.4	1.0	73.4	10.4	33.6	5.6	1.3	1.9	3.2	17.4	64.0	3.4	21.7	138
Գեղարքունիք	48.2	25.1	7.9	70.9	12.6	13.0	3.6	2.2	1.0	12.6	6.7	25.3	0.0	24.6	70
Լոռի	(30.5)	(25.3)	(2.8)	(44.6)	(9.4)	(22.3)	(2.8)	(8.0)	(7.7)	(5.5)	(8.4)	(7.6)	(6.7)	(47.4)	64
Կոտայք	76.7	8.2	0.7	79.5	13.3	23.5	1.3	3.0	2.2	11.1	15.6	36.1	0.7	14.3	148
Շիրակ	10.1	28.5	11.6	50.3	41.5	24.6	0.0	1.0	1.6	0.0	11.8	29.5	0.0	43.1	91
Սյունիք	7.0	61.2	44.3	82.0	19.6	75.3	3.4	0.0	4.1	3.5	46.3	72.0	0.0	12.3	27
Վայոց ձոր	14.7	32.5	42.2	63.0	72.3	44.6	29.7	16.3	0.9	6.0	2.3	3.6	0.0	16.6	28
Տավուշ	80.0	27.8	3.2	86.0	5.6	22.6	2.3	0.4	2.5	0.8	6.5	33.9	0.0	9.9	60
Կրթություն															
Հիմնական															
ընդհանուր	49.4	24.3	13.9	69.1	15.8	25.0	3.0	4.0	4.7	1.7	9.1	26.2	2.1	25.2	154
Միջնակարգ															
ընդհանուր	45.5	26.4	16.6	69.8	21.6	31.9	4.1	5.7	5.1	4.9	7.1	25.6	0.6	24.2	514
Միջին															
մասնագիտական	56.5	37.5	17.1	79.3	23.4	36.5	4.5	7.9	6.7	5.1	9.3	30.9	0.4	15.0	277
Բարձրագույն	58.6	54.8	18.7	88.3	19.0	42.0	3.8	7.6	5.2	7.7	19.5	32.6	0.8	10.3	317
Բարեկեցության մակարդակ															
Ամենացածր	54.4	15.9	8.5	68.5	24.1	21.8	5.4	9.1	3.8	2.6	9.7	27.1	2.3	27.0	233
Ցածր	48.1	27.0	15.2	73.1	24.5	27.2	5.0	4.2	3.7	4.3	7.6	35.6	0.0	22.1	238
Միջին	43.3	30.8	21.5	74.0	21.8	41.9	4.4	7.5	3.5	6.4	10.3	27.1	0.3	21.6	288
Բարձր	52.2	48.1	26.1	82.3	21.0	45.2	3.6	6.8	9.1	4.6	12.6	32.4	0.8	10.8	270
Ամենաբարձր	62.4	56.2	10.8	84.1	11.7	33.7	1.4	4.4	6.9	8.2	14.2	20.4	0.7	13.2	233
Ընդամենը	51.7	35.7	16.9	76.5	20.7	34.6	4.0	6.4	5.4	5.2	10.9	28.6	0.8	18.8	1,261

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Ինչպես կանանց կողմից տրված պատասխանների դեպքում, այնպես էլ տղամարդկանց շրջանում, որևէ տեսակի հազը կամ քաշի կորուստն իբրև տուբերկուլյոզի ախտանիշ նշած տղամարդկանց տոկոսը նշանակալիորեն աճում է տարիքին և կրթական մակարդակին զուգահեռ: Ի տարբերություն գյուղական բնակավայրերի, քաղաքային բնակավայրում, որևէ տեսակի հազը կամ քաշի կորուստն իբրև տուբերկուլյոզի ախտանիշ նշած տղամարդկանց տոկոսն առավել բարձր է: Այս ախտանիշերի վերաբերյալ տղամարդկանց կողմից տրված պատասխանները նշանակալիորեն տարբեր են ըստ մարզերի:

2000 թվականի համեմատությամբ, թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ ավելի տեղեկացված են եղել տուբերկուլյոզի ախտանիշերի վերաբերյալ: Օրինակ, 2000 թվականին անցկացված նույն հետազոտության արդյունքներով, տղամարդկանց միայն 25 տոկոսն էր նշել, որ խորխով հազը տուբերկուլյոզի ախտանիշ է, այնինչ 3ԺԱՅ-2005-ի արդյունքում ցուցանիշը կրկնապատկվել է՝ կազմելով 52 տոկոս:

Տուբերկուլյոզի բուժելի լինելու վերաբերյալ գիտելիքները, և տուբերկուլյոզով հիվանդ ընտանիքի անդամ ունենալու մասին փաստը գաղտնի պահելու պատրաստակամություն

Հարցվողներին տրվել է հարց, թե արդյոք տեղյակ են, որ համապատասխան բուժման դեպքում տոբախտը լիովին բուժվող հիվանդություն է: Աղյուսակ 14.10-ը ցույց է տալիս, որ տուբերկուլյոզի մասին երբևէ լսած, հարցված կանանց կեսը և տղամարդկանց երեք հինգերորդը գիտեն տուբերկուլյոզի լիովին բուժելի լինելու մասին: Ի տարբերություն 3ԺԱՅ 2000-ի արդյունքում ստացված, տղամարդկանց և կանանց, մոտ 70 տոկոս ցուցանիշի, 2005 թվականին այս ցուցանիշը նվազել է: Քաղաքաբնակ, համեմատաբար բարձր կրթական և բարեկեցության մակարդակ ունեցող հարցվողներն ավելի տեղեկացված են տուբերկուլյոզի լիովին բուժելի լինելու մասին: Տեղեկացվածության տոկոսային ցուցանիշները զգալիորեն տատնվում են ըստ մարզերի: Կանանց շրջանում, տուբերկուլյոզի բուժելի լինելու վերաբերյալ գիտելիքները տատնվում են նվազագույնը 28 տոկոսից Վայոց ձորի մարզում մինչև առավելագույնը 60-62 տոկոս Երևանում և Արմավիրի մարզում: Տղամարդկանց շրջանում ցուցանիշները առավել տատանողական են: Հարկ է նշել, որ տղամարդիկ ավելի տեղեկացված են դրական կանխատեսման մասին, քան կանայք, սակայն սա չի համապատասխանում իրականությանը Շիրակի և Գեղարքունիքի մարզերի տղամարդկանց համար:

Հարցվողները պատասխանել են նաև, տուբերկուլյոզով հիվանդ ընտանիքի անդամ ունենալու դեպքում, այդ հանգամանքը գաղտնի պահելու կամ չպահելու վերաբերյալ հարցին: Հարցվողների 20 տոկոսից պակաս մասն է նշել, որ կցանկանար գաղտնի պահել ընտանիքի անդամի տուբերկուլյոզով հիվանդ լինելու փաստը: Նկատելի է, որ Հայաստանում կանանց և տղամարդկանց մեծամասնության վերաբերմունքը տուբերկուլյոզին, ինչպես թույլ է տալիս ենթադրել տուբերկուլյոզի հետ կապված բարդույթի բացակայության մասին, այնպես էլ հերքում է այն տարածված կարծիքը, որ վարակված մարդը, բուժաստատություն գնալիս ի վիճակի չէ երկար ժամանակ չտարածել վարակը:

Քաղաքաբնակ, կրթական և բարեկեցության առավել բարձր մակարդակ ունեցող կանայք, ավելի հակված են գատնի պահելու ընտանիքի անդամի տուբերկուլյոզով հիվանդ լինելու փաստը: Ի տարբերություն կանանց, քաղաքաբնակ, կրթական և բարեկեցության առավել բարձր մակարդակ ունեցող տղամարդիկ ավելի քիչ են հակված գատնի պահելու այդ փաստը: Պատասխանները տատանվում են ըստ ենթախմբերի և մարզերի: Երևանում բնակվող կանանց 25, և տղամարդկանց 6 տոկոսը նշել է, որ կցանկանա գաղտնի պահել ընտանիքի անդամի տուբերկուլյոզով հիվանդ լինելու մասին փաստը, մինչդեռ Արմավիրի մարզում, նույն ցուցանիշը կանանց շրջանում կազմել է 17, իսկ տղամարդկանց շրջանում՝ 46 տոկոս:

Տուբերկուլյոզը լիովին բուժվող հիվանդություն է, որն առաջին հերթին խոցում է 45 տարեկանից ցածր տարիքային խմբերի չափահասներին (այսինքն, բնակչության այն մասը,

որն ավելի քիչ է շփվում առողջապահական ծառայություններ տրամադրողների հետ, բացառապես նախածննդյան խնամք ստացող կանանց): Հետևաբար, հասարակության ուսուցումը՝ տուբերկուլյոզի փոխանցման, ախտանիշերի, բուժման և կանխատեսման վերաբերյալ, հանդիսանում է տուբերկուլյոզի տարածման վերահսկման ծրագրի կարևոր մաս:

Աղյուսակ 14.10 Տուբերկուլյոզի լիովին բուժման մասին իմացություն և վերաբերմունքը տուբերկուլյոզով հիվանդ ընտանիքի անդամի նկատմամբ

Տուբերկուլյոզի մասին լսած կանանց և տղամարդկանց շրջանում, տուբերկուլյոզի լիովին բուժման մասին տեղյակ և իրենց ընտանիքի անդամի տուբերկուլյոզով հիվանդ լինելու փաստը գաղտնի պահել ցանկացող անձանց տոկոսներն ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանայք			Տղամարդիկ		
	Տեղյակ են, որ տուբերկուլյոզը լիովին բուժվում է	Կցանկանան գաղտնի պահել, եթե ընտանիքի անդամն ունենա տուբերկուլյոզ	Կանանց թվաքանակ	Տեղյակ են, որ տուբերկուլյոզը լիովին բուժվում է	Կցանկանան գաղտնի պահել, եթե ընտանիքի անդամն ունենա տուբերկուլյոզ	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք						
15-19	36.9	19.7	917	43.7	22.3	217
20-24	48.0	19.1	1,045	57.3	10.1	212
25-29	50.4	20.3	851	61.1	12.8	177
30-34	54.4	19.5	715	69.4	12.8	143
35-39	51.8	19.8	676	66.9	9.9	132
40-44	57.5	18.6	909	62.5	16.1	183
45-49	61.4	18.4	909	70.3	15.8	198
Բնակավայր						
Քաղաքային	54.8	21.1	3,979	63.1	10.0	785
Գյուղական	44.5	15.9	2,042	56.7	22.3	476
Մարզ						
Երևան	60.1	24.7	2,391	67.4	6.4	461
Արագածոտն	52.0	24.5	261	57.8	34.0	70
Արարատ	40.2	4.9	418	55.0	0.0	104
Արմավիր	61.7	17.1	499	75.3	45.7	138
Գեղարքունիք	34.7	31.0	324	28.3	15.3	70
Լոռի	48.1	15.7	488	(79.3)	(45.4)	64
Կոտայք	53.2	24.1	532	59.3	11.6	148
Շիրակ	28.5	2.2	507	17.0	0.9	91
Սյունիք	35.6	1.5	227	46.8	3.5	27
Վայոց ձոր	27.8	10.6	101	78.2	4.5	28
Տավուշ	56.7	26.4	274	74.6	13.1	60
Կրթություն						
Հիմնական ընդհանուր	29.5	14.7	394	48.4	22.3	154
Միջնակարգ ընդհանուր	41.9	18.5	2,174	55.3	12.3	514
Միջին մասնագիտական	55.1	19.2	1,896	59.8	15.1	277
Բարձրագույն	65.3	21.7	1,557	76.2	14.1	317
Բարեկեցության մակարդակ						
Ամենացածր	37.7	14.8	964	48.2	22.1	233
Ցածր	42.5	16.5	1,150	51.3	14.7	238
Միջին	51.9	22.2	1,216	62.2	12.2	288
Բարձր	55.7	19.7	1,299	66.6	13.5	270
Ամենաբարձր	63.3	21.9	1,391	73.8	11.4	233
Ընդամենը	51.3	19.3	6,021	60.7	14.6	1,261

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

14.4 ՀԻՊԵՐՏՈՆԻԱ

Ինչպես շատ երկրներում, այնպես էլ Հայաստանում, մահացության առաջնային պատճառ են հանդիսանում սիրտ-անոթային հիվանդությունները: Հայաստանում 2003 թվականին սիրտ-անոթային հիվանդություններից մահացությունը կազմել է 58 տոկոս (ԱՀԿ, 2005): Կանանց և տղամարդկանց սիրտ-անոթային հիվանդություններից մահացության ցուցանիշները տարբեր են: 2003 թվականին արյան շրջանառության համակարգի հետ կապված մահացության ցուցանիշը տղամարդկանց շրջանում 40 տոկոսով գերազանցել է կանանց նույն ցուցանիշը (536 հակառակ 751-ի՝ հաշվարկված ըստ 100 000) (ԱՀԿ, 2006):

Ըստ ազգային վիճակագրական ծառայության վարչական գրանցումների հիման վրա ստացված տվյալների, արյան շրջանառության համակարգի հիվանդությունների հետ կապված մահացության ցուցանիշը 15-49 տարեկանների շրջանում կազմել է 27 տոկոս, ընդ որում այս ցուցանիշը տղամարդկանց շրջանում 10 տոկոսով գերազանցում կանանց շրջանում գրանցված նույն ցուցանիշին:

ՀԺԱՀ-ի նպատակներից է սիրտ-անոթային համակարգի համար ռիսկային հանդիսացող գործոնների (հիպերտոնիա, ծխախոտի օգտագործում և սնուցման կարգավիճակ) վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը: Վերոնշյալ տեղեկատվությունը հավաքագրվել է ոչ թե բուժիաստատությունների կողմից ներկայացված տվյալների, այլ ներկայացուցչականությունն ապահովող, բնակչությունից ստացված տվյալների միջոցով:

Չափման գործընթաց

ՀԺԱՀ-2005-ի կանանց և տղամարդկանց անհատական հարցաթերթերը ներառում էին նաև հարցեր, որոնց նպատակն էր պարզել, թե հարցվողին երբևէ ախտորոշվել է հիպերտոնիա, և նա երբևէ ընդունել է դեղամիջոց արյան ճնշումը կարգավորելու նպատակով: Հետազոտության շրջանակներում, համաձայնություն ստանալուց հետո չափվել է կանանց մոտավորապես 94 և տղամարդկանց 83 տոկոսի արյան ճնշումը:

Չափումները կատարվել են բուժաշխատողների կողմից: Նախքան դաշտային աշխատանքների սկսելը նրանք մասնակցել են ուսումնական դասընթացի, որի ընթացքում, առաջնորդվելով արտադրողի կողմից առաջարկված օգտագործման ուղեցույցով, ծանոթացել են ոչ հիվանդանոցային պայմաններում, արյան ճնշումը չափելու համար նախատեսված, թվային, ինքնափքվող սարքերի (Սամսունգ HD-503 կարգավորվող փքումով) միջոցով արյան ճնշումը չափելու կանոններին: Կատարվել են դիաստոլիկ և սիստոլիկ արյան ճնշման եռանվագ չափումներ, հինգ րոպե ինտերվալներով:

Երկրորդ և երրորդ չափման արդյունքների միջինն օգտագործվել է տվյալների դասակարգման համար, հաշվի առնելով ԱՀԿ-ի կողմից ներկայացված հետևյալ միջազգային ստանդարները (ԱՀԿ, 1999):

Հիպերտոնիայի մակարդակ	Սիստոլիկ (mmHg)	Դիաստոլիկ (mmHg)
Օպտիմալ	<120	<80
Նորմալ	120-129	80-84
Բարձր, սակայն անձի համար նորմալ	130-139	85-89
1 աստիճան, թեթև	140-159	90-99
2 աստիճան, միջին	160-179	100-109
3 աստիճան, ծանր	180+	110+

Այն անձինք, ովքեր ընդունել են հակահիպերտոնիկ դեղամիջոցներ, որոնց արյան սիստոլիկ ճնշումը մեծ կամ հավասար է եղել 140-ի, կամ դիաստոլիկ ճնշման ցուցանիշը մեծ կամ հավասար է եղել 90-ի համարվել են հիպերտոնիկ հիվանդներ:

Հիպերտոնիայի մակարդակներ

Աղյուսակ 14.11.1-ը և 14.11.2-ը ցույց են տալիս կանանց և տղամարդկանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշները: Կանանց 22 տոկոսի մոտ հայտնաբերվել է հիպերտոնիայի առկայություն, որոնցից 15 տոկոսի մոտ՝ 1-ին աստիճանի, 4 տոկոսի մոտ՝ 2-րդ աստիճանի, 2 տոկոսի մոտ՝ 3-րդ աստիճանի հիպերտոնիա: Ընդհանուր առմամբ, կանանց 1 տոկոսն ընդունել է հակահիպերտոնիկ դեղամիջոցներ:

Տղամարդկանց շրջանում հիպերտոնիայի առկայության ցուցանիշը կազմել է 27 տոկոս: Տղամարդկանց 23 տոկոսի մոտ առկա է 1-ին աստիճանի, 2 տոկոսի մոտ՝ 2-րդ աստիճանի և 2 տոկոսի մոտ՝ 3-րդ աստիճանի հիպերտոնիա: Տղամարդկանց 1-ից էլ փոքր տոկոսն է արյան ճնշման տատանումները կարգավորում դեղամիջոցների օգնությամբ:

Արյան ճնշման վերաբերյալ Հայաստանում ընդունված դասակարգիչները համընկնում են միջազգային չափորոշիչների հետ¹: Գրականության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 35-44 տարիքային խմբի վերաբերյալ տեղեկատվությունը համեմատելի է ԱՄՆ-ի նույն տարիքային խմբի տվյալների հետ: Հայաստանում, այդ տարիքային խմբում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը կազմել է՝ կանանց շրջանում 31 տոկոս (անկախ այն հանգամանքից ներառված են, թե՛ ոչ, հղի կանայք այս տարիքային խմբում), իսկ տղամարդկանց շրջանում՝ 36 տոկոս: ԱՄՆ-ում նույն ցուցանիշը ոչ հղի կանանց շրջանում կազմել է 15, իսկ տղամարդկանց շրջանում՝ 17 տոկոս: Համեմատելով Հայաստանում և ԱՄՆ-ում գրանցված հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշները, հարկ է նշել, որ Հայաստանում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը խիստ բարձր է և այն հանդիսանում է հանրային առողջության լուրջ խնդիր:

Տարածվածություն

Կանանց և տղամարդկանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 22 և 27 տոկոս (Աղյուսակ 14.1.1 և 14.1.2), սակայն առաջին աստիճանի հիպերտոնիան առավել տարածված է տղամարդկանց, քան կանանց շրջանում (համապատասխանաբար՝ 23 և 15 տոկոս): Այնուամենայնիվ, կանանց և տղամարդկանց միջև առկա է արյան ճնշման երեք խմբերի (օպտիմալ, նորմալ և բարձր, սակայն անձի համար նորմալ) միջև բաշխվածության տարբերություններ: Կանանց 37 տոկոսի մոտ գրանցվել է արյան ճնշման օպտիմալ մակարդակ, իսկ 41 տոկոսի մոտ՝ նորմալ և բարձր, սակայն անձի համար նորմալ արյան ճնշման մակարդակ: Տղամարդկանց շրջանում արյան ճնշման օպտիմալ մակարդակը կազմել է 19 տոկոս, իսկ նորմալ և բարձր, սակայն անձի համար նորմալ արյան ճնշման մակարդակ՝ 53 տոկոս:

Էպիդեմիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ հիպերտոնիայի և տարիքի միջև գոյություն ունի դրական կախվածություն, ինչն էլ հաստատվեց ՀԺԱՀ-2005-ի արդյունքում: 45 և բարձր տարիքի կանանց և տղամարդկանց մոտ առկա է հիպերտոնիայի որևէ աստիճան, որն էլ խոսում է այն մասին, որ Հայաստանում հիպերտոնիան հանդիսանում է լուրջ առողջական խնդիր: Հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշն աճում է գրեթե 8 տոկոսից՝ մինչև 25 տարեկան կանանց շրջանում, մինչև 49 տոկոս՝ 45-49 տարիքային խմբի կանանց շրջանում: Տղամարդկանց շրջանում ցուցանիշը տատանվել է 13 տոկոսից (15-19 տարիքային խումբ) մինչև 47 տոկոս (45-49 տարիքային խումբ): Տարիքին բնորոշ հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը մինչև 45 տարեկան կանանց շրջանում ավելի

¹ Վիճակագրորեն, անձինք, դասակարգվում են որպես հիպերտոնիկ, եթե նրանք ընդունում են հակահիպերտոնիկ դեղամիջոցներ կամ եթե նրանց արյան ճնշումը $\geq 140/90$ mmHg:

ցածր է, քան տղամարդկանց մոտ, սակայն նույն ցուցանիշը 45 և բարձր տարիքի կանանց մոտ, գերազանցում է տղամարդկանց ցուցանիշին:

Բարձր կրթական մակարդակ ունեցող տղամարդկանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշն առավել բարձր է: Այս օրինաչափությունը նկատելի է կանանց դեպքում: Միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթություն ունեցող կանանց շրջանում հիպերտոնիան առավել տարածված է (24 տոկոս), քան առավել բարձր կրթական մակարդակ ունեցող կանանց շրջանում (16 տոկոս):

Հիպերտոնիայի տարածվածությունն ըստ բնակավայրերի ավելի ակնհայտ է տղամարդկանց, քան կանանց շրջանում: Ի տարբերություն գյուղաբնակ տղամարդկանց, հիպերտոնիան ավելի տարածված է քաղաքաբնակ տղամարդկանց շրջանում (համապատասխանաբար՝ 25 և 32 տոկոս): Արյան ճնշման օպտիմալ մակարդակ ունի քաղաքաբնակ տղամարդկանց 22, իսկ գյուղաբնակ տղամարդկանց՝ 15 տոկոսը: Ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Լոռու մարզում (համապատասխանաբար՝ 38 և 53 տոկոս):

Հիպերտոնիայի տարածվածության տվյալների նշանակալի տարբերություն է նկատվել այն հարցվողների շրջանում, որոնց համար հաշվարկվել է մարմնի զանգվածի ցուցանիշը (ՄՁՑ): Ինչպես և ակնկալվում էր, ի տարբերություն նորմալ քաշ ունեցողների, հիպերտոնիայի մակարդակն ավելի բարձր է գերքաշ/գեր հարցվողների շրջանում: Գերքաշ/գեր (ՄՁՑ \geq 30) կանանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը կազմել է 50 տոկոս: Նույն ցուցանիշը միայն (ՄՁՑ $<$ 18.5) և նորմալ քաշ ունեցող (ՄՁՑ 18.5-24.9) կանանց շրջանում կազմել է համապատասխանաբար՝ 8 և 12 տոկոս: Նույն օրինաչափությունն առկա է նաև տղամարդկանց շրջանում: Գերքաշ/գեր տղամարդկանց շրջանում ցուցանիշը կազմել է 62 տոկոս, իսկ միայն և նորմալ քաշ ունեցող տղամարդկանց դեպքում համապատասխանաբար՝ 8 և 23 տոկոս:

Հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը փոքր-ինչ բարձր է ծխախոտ օգտագործող կանանց և տղամարդկանց շրջանում: Հիպերտոնիան ավելի քիչ է տարածված ամուսնացած կան համատեղ բնակվող հարցվողների շրջանում: Հարցման պահին ամուսնացած կան համատեղ բնակվող կանանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը կազմել է 25, իսկ ամուսնալուծված/առանձին բնակվող/այրի կանանց դեպքում՝ 33 տոկոս:

Մասնավորապես տղամարդկանց շրջանում գոյություն ունի նաև որոշակի կախվածություն տնտեսական ակտիվության և հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշների միջև: Հարցման պահին զբաղված տղամարդկանց 32 տոկոսն ունեցել է հիպերտոնիա, ի տարբերություն գործազուրկ տղամարդկանց 19 տոկոսի:

Ընդհանուր առմամբ, տղամարդկանց շրջանում հիպերտոնիայի տարածվածության ցուցանիշը դրականորեն է կապված տարիքի, գերքաշության/գիրության, կրթական մակարդակի, տնտեսական կարգավիճակի և բնակության վայրի (քաղաքային) հետ: Հայաստանում հիպերտոնիան լուրջ առողջական խնդիր է: Հետազոտությանը մասնակցած 45 և բարձր տարիքի հարցվողների գրեթե կեսի մոտ արձանագրվել է հիպերտոնիայի առկայություն:


Հիպերտոնիայի վերաբերյալ տեղեկացվածությունը և դրա Վերահսկումը

Գծապատկեր 14.4-ը ցույց է տալիս 15-49 տարեկան կանանց և տղամարդկանց, իրենց մոտ առկա հիպերտոնիայի վերաբերյալ տեղեկացվածությունը և այն բուժելու նպատակով իրակացվող միջոցառումները: Հիպերտոնիկ կանանց և տղամարդկանց մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 82 և 81 տոկոս) տեղյակ է են եղել իրենց մոտ առկա հիպերտոնիայի մասին: Բարձր արյան ճնշում ունեցող կանանց 7 և տղամարդկանց 2 տոկոսը իրագել են եղել իրենց մոտ առկա հիպերտոնիայի մասին և ստացել են բուժում:

Ջարմանալիորեն, տղամարդկանց 11 և կանանց 5 տոկոսը տեղյակ են եղել իրենց մոտ առկա հիպերտոնիայի մասին, սակայն բուժում չեն ստացել:

Հիպերտոնիան կարող է հանգեցնել վաղաժամ մահվան և ֆիզիկական անկարողության: Այդ իսկ պատճառով կարևոր է արյան ճնշման մակարդակի վերահսկումը, որն էլ հնարավոր է իրականացնել նախևառաջ անձանց՝ իրենց մոտ առկա հիվանդության վերաբերյալ տեղեկացվածության բարձրացմամբ: Հիպերտոնիայի անբարենպաստ հետևանքների վերաբերյալ բնակչության տեղեկացվածության բարձացումը և արյան ճնշման չափումը, մասնավորապես տարեցների և տղամարդկանց շրջանում, պետք է առանցքային տեղ զբաղեցնեն առողջապահական ծրագրերի մշակման գործում:

Գծապատկեր 14.4 Հիպերտոնիայի առկայության մասին տեղեկացվածությունն ու բուժման կարգավիճակ



ՀԺԱԴ-2005

Աղյուսակ 14.11.1 Հիպերտոնիայի մակարդակ, կանայք

Հիպերտոնիայի տարածվածությունը կանանց շրջանում և կանանց տոկոսային բաշխումն ըստ արյան ճնշման աստիճանի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Արյան ճնշման (ԱՃ) դասակարգում*									
	Հիպերտոնիայի տարածում	Օպորտուն	Նորմալ	Բարձր, սակայն ամուստի համար նորմալ	Թեթև բարձրություն (փաստիճան 1)	Միջին բարձրություն (փաստիճան 2)	Ծանր բարձրություն (փաստիճան 3)	Նորմալ ԱՃ և դեղի ընդունում	Ընդամենը	Կանանց բնութագրիչներ
Տարիք										
15-19	8.4	58.6	24.3	8.7	6.6	1.5	0.2	0.1	100.0	1,055
20-24	8.1	51.3	27.6	13.0	7.4	0.2	0.5	0.1	100.0	1,059
25-29	13.3	45.7	27.5	13.4	11.3	0.9	0.4	0.7	100.0	889
30-34	18.2	32.5	28.7	20.6	12.9	2.4	0.8	2.1	100.0	702
35-39	24.9	29.8	24.2	21.1	18.9	3.3	2.1	0.5	100.0	684
40-44	34.8	19.4	22.6	23.2	19.2	10.5	2.4	2.7	100.0	914
45-49	49.4	14.4	17.5	18.8	29.1	11.9	4.3	4.0	100.0	879
Ամուսնական կարգավիճակ										
Երբևէ չամուսնացած	11.9	52.9	25.2	10.0	9.1	2.0	0.5	0.2	100.0	1,900
Հարցման պահին ամուսնացած	25.2	30.7	24.3	19.7	16.6	5.2	1.9	1.5	100.0	3,827
Նախկինում ամուսնացած	33.4	26.7	24.8	15.1	20.0	6.1	1.9	5.4	100.0	453
Տնտեսական ակտիվության կարգավիճակ										
Հարցման պահին զբաղված է	25.4	30.7	25.1	18.9	16.7	4.7	1.6	2.3	100.0	1,668
Չբաղված է եղել անցյալ տարվա ընթացքում	18.8	36.8	31.5	12.9	12.6	2.1	0.0	4.1	100.0	134
Չբաղված է չէ	20.4	39.8	24.2	15.6	13.8	4.2	1.5	1.0	100.0	4,379
Ծխում է										
Այո	26.4	36.7	29.0	7.9	9.4	10.7	1.6	4.7	100.0	103
Ոչ	21.7	37.3	24.5	16.6	14.6	4.2	1.5	1.3	100.0	6,078
Մարմնի զանգվածի ցուցանիշ (ՄՁՑ)										
<18.5 (նիհար)	8.3	62.1	19.0	10.6	5.7	2.6	0.0	0.0	100.0	312
18.5-24.9 (նորմալ)	11.8	48.3	26.8	13.1	8.6	1.7	0.4	1.1	100.0	3,239
25.0-29.9 (զերբաշ)	28.7	24.1	25.4	21.8	20.0	5.2	1.6	1.9	100.0	1,656
>=30 (զեր)	50.0	12.2	17.4	20.4	29.4	12.8	5.6	2.1	100.0	919
Տվյալ չկա	(4.3)	(56.8)	(21.2)	(17.6)	(3.6)	(0.7)	(0.0)	(0.0)	(100.0)	55
Բնակավայր										
Քաղաքային	21.1	39.1	24.9	14.9	13.7	4.5	1.6	1.3	100.0	3,932
Գյուղական	22.8	34.0	24.0	19.2	16.0	4.0	1.3	1.6	100.0	2,249
Մարզ										
Երևան	17.1	45.7	24.7	12.5	11.4	3.6	0.9	1.2	100.0	2,265
Արագածոտն	23.1	37.8	20.2	18.9	14.2	3.8	2.9	2.1	100.0	281
Արարատ	29.9	16.0	30.1	24.0	21.7	5.1	1.2	1.9	100.0	442
Արմավիր	14.0	42.8	29.0	14.2	10.9	1.8	0.3	1.1	100.0	551
Գեղարքունիք	10.2	55.7	21.2	13.0	5.7	1.5	0.2	2.7	100.0	398
Լոռի	37.8	22.5	20.1	19.6	22.1	9.6	5.4	0.8	100.0	524
Կոտայք	19.9	33.9	26.6	19.6	13.1	3.6	2.1	1.2	100.0	525
Շիրակ	31.9	23.5	25.4	19.1	22.0	7.2	1.4	1.3	100.0	550
Սյունիք	17.7	44.0	19.6	18.7	12.2	3.2	1.3	1.0	100.0	277
Վայոց ձոր	37.8	21.9	21.3	19.0	30.7	5.0	2.1	0.0	100.0	93
Տավուշ	28.8	23.4	24.6	23.2	20.0	5.3	0.6	2.9	100.0	275
Կրթություն										
Հիմնական ընդհանուր	16.2	43.4	24.6	15.7	10.5	3.2	0.9	1.6	100.0	501
Միջնակարգ ընդհանուր	24.3	33.8	25.2	16.8	16.7	4.2	1.6	1.7	100.0	2,314
Միջին մասնագիտական	24.5	33.8	23.4	18.3	16.4	4.7	1.8	1.6	100.0	1,879
Բարձրագույն	16.2	44.9	25.2	13.8	10.2	4.3	0.9	0.7	100.0	1,487
Բարեկեցության մակարդակ										
Ամենացածր	23.5	33.6	23.8	19.0	16.1	4.0	1.0	2.4	100.0	1,113
Ցածր	26.2	31.5	24.7	17.6	18.4	4.6	2.0	1.2	100.0	1,230
Միջին	23.9	34.9	24.2	17.0	17.8	4.1	1.3	0.7	100.0	1,231
Բարձր	20.2	39.0	24.0	16.8	11.6	4.7	1.6	2.3	100.0	1,262
Ամենաբարձր	15.6	46.0	26.1	12.3	9.5	4.1	1.4	0.6	100.0	1,345
Ընդամենը	21.7	37.2	24.6	16.4	14.6	4.3	1.5	1.4	100.0	6,181

Նշում՝ Երբ արյան սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումները գտնվում են տարբեր խմբերում, ապա բարձր խմբին պատկանող տվյալն է համընդհանուր որոշիչ արյան ճնշման աստիճանի որոշման համար: Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությանը (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և ամուրիները: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

*Արյան ճնշումը $\geq 140/90$ mmHg կամ հարցման պահին օգտագործել է հակահիպերտոնիկ դեղեր:

Աղյուսակ 14.11.2 Հիպերտոնիայի մակարդակ, Տղամարդիկ

Հիպերտոնիայի տարածվածությունը տղամարդկանց շրջանում և տղամարդկանց տոկոսային բաշխումն ըստ արյան ճնշման աստիճանի և հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Արյան ճնշման (ԱՃ) դասակարգում՝									
	Հիպերտոնիայի տարածում	Օպորտուն	Նորմալ	Բարձր, սակայն ամիսափ համար նորմալ	Թեթև բարձրություն (փաստիճան 1)	Միջին բարձրություն (փաստիճան 2)	Ծանր բարձրություն (փաստիճան 3)	Նորմալ ԱՃ և դեղի ընդունում	Ընդունելը	Տղամարդկանց թվաքանակ
Տարիք										
15-19	13.2	36.3	37.4	13.1	13.1	0.1	0.0	100.0		246
20-24	18.7	20.9	41.5	18.9	17.4	0.0	1.3	100.0		196
25-29	27.4	17.1	30.8	24.6	25.2	2.2	0.0	100.0		164
30-34	22.5	14.2	31.8	31.6	18.1	2.9	1.5	100.0		135
35-39	29.6	13.9	27.3	29.3	27.1	2.5	0.0	100.0		118
40-44	40.0	12.1	23.4	24.5	30.1	3.7	4.7	100.0		168
45-49	46.9	11.2	17.5	24.4	35.3	6.1	3.0	100.0		173
Ամուսնական կարգավիճակ										
Երբևէ չամուսնացած	16.1	28.3	38.6	16.9	15.1	0.6	0.4	100.0		505
Հարցման պահին ամուսնացած	35.2	13.3	25.3	26.2	28.9	3.5	2.0	100.0		682
Նախկինում ամուսնացած *		*	*	*	*	*	*	*		14
Տնտեսական ակտիվության կարգավիճակ										
Հարցման պահին զբաղված է	32.0	15.6	28.0	24.4	28.5	1.7	1.5	100.0		601
Չբաղված է եղել անցյալ տարվա ընթացքում	30.4	12.6	33.7	23.3	21.8	4.7	4.0	100.0		193
Չբաղված չէ	18.8	28.6	33.2	19.5	15.3	2.1	0.3	100.0		404
Ծխում է										
Այո	29.5	16.3	28.5	25.8	24.7	2.3	1.9	100.0		729
Ոչ	23.9	24.3	34.2	17.5	20.3	2.3	0.9	100.0		471
Մարմնի զանգվածի ցուցանիշ (ՄՁՑ)										
<18.5 (նիհար)	(8.2)	(35.1)	(52.7)	(3.9)	(8.2)	(0.0)	(0.0)	(100.0)		38
18.5-24.9 (նորմալ)	22.8	22.5	31.9	22.8	20.1	1.5	0.7	100.0		796
25.0-29.9 (զերքաշ)	35.0	9.9	26.8	28.3	30.0	2.5	2.2	100.0		273
>=30 (զեր)	62.4	6.1	20.9	10.6	40.4	10.5	8.5	100.0		76
Տվյալ չկա	*	*	*	*	*	*	*	*		18
Բնակավայր										
Քաղաքային	24.7	21.9	32.4	21.0	20.9	1.8	1.6	100.0		780
Գյուղական	32.1	14.9	27.6	25.4	26.9	3.1	1.2	100.0		421
Մարզ										
Երևան	20.3	26.4	34.5	18.9	18.9	0.4	0.7	100.0		489
Արագածոտն	38.9	10.6	21.1	29.4	27.8	3.5	4.4	100.0		61
Արարատ	40.8	6.2	18.3	34.7	35.7	5.1	0.0	100.0		103
Արմավիր	28.8	12.8	31.8	26.6	26.2	2.0	0.0	100.0		135
Գեղարքունիք	10.4	39.4	33.7	16.6	9.6	0.7	0.0	100.0		55
Լոռի	52.9	14.7	19.2	13.2	35.9	7.9	9.0	100.0		81
Կոտայք	20.1	19.5	37.5	22.9	15.2	3.4	0.8	100.0		99
Շիրակ	24.5	12.5	35.6	27.4	21.8	1.8	0.9	100.0		83
Սյունիք	(5.9)	(21.1)	(31.7)	(41.2)	(5.9)	(0.0)	(0.0)	(100.0)		14
Վայոց ձոր	41.0	18.7	19.0	21.3	34.6	3.8	2.6	100.0		19
Տավուշ	43.2	7.6	27.0	22.2	31.4	5.0	4.1	100.0		61
Կրթություն										
Հիմնական ընդհանուր	24.1	27.5	30.6	17.8	22.6	1.5	0.0	100.0		175
Միջնակարգ ընդհանուր	26.2	19.9	29.1	24.8	21.3	2.1	2.0	100.0		494
Միջին մասնագիտական	30.1	15.9	31.5	22.5	25.0	3.5	0.4	100.0		260
Բարձրագույն	28.7	16.9	33.0	21.3	24.3	2.0	2.4	100.0		271
Բարեկեցության մակարդակ										
Ամենացածր	32.8	18.8	21.9	26.5	28.2	2.1	1.6	100.0		215
Ցածր	30.9	14.8	33.3	21.0	25.5	3.6	1.8	100.0		220
Միջին	26.8	18.8	30.5	23.8	21.8	2.7	1.6	100.0		279
Բարձր	21.8	19.5	36.9	21.9	17.6	1.8	1.3	100.0		254
Ամենաբարձր	25.4	25.1	30.0	19.4	23.0	1.3	1.2	100.0		233
Ընդամենը	27.3	19.4	30.7	22.5	23.0	2.3	1.5	100.0		1,200

Նշում՝ Երբ արյան սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումները գտնվում են տարբեր խմբերում, ապա բարձր խմբին պատկանող տվյալ է հանդիսանում որոշիչ արյան ճնշման աստիճանի որոշման համար: Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությանը (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և ամուրիները: Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա:

Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

*Արյան ճնշումը $\geq 140/90$ mmHg կամ հարցման պահին օգտագործել է հակահիպերտոնիկ դեղեր:

Սույն գլխում ներկայացված են կանանց լիազորություններին վերաբերող երեք բնութագրիչներ, որոնք դիտարկվել են որոշ ժողովրդագրական և առողջապահական արդյունքների հետ համատեղ:

ՉԺԱՅ-ի ընթացքում, կանանց հարցաթերթի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել կին հարցվողների հիմնական ժողովրդագրական բնութագրիչների վերաբերյալ (այսինքն տարիք, կրթություն, բարեկեցության մակարդակ և տնտեսական ակտիվության կարգավիճակ): Տեղեկատվություն է հավաքագրվել նաև կնոջ լիազորություններն արտահայտող առանձնահատուկ բնութագրիչների վերաբերյալ, ինչպիսիք են՝ կանխիկ վարձատրությունը, վարձատրության չափն ամուսնու/զուգընկերոջ վարձատրության համեմատությամբ, նրա և ամուսնու աշխատած գումարների տնօրինումը: Սույն բաժնի աղյուսակները և կանանց լիազորության բնութագրիչների առկայությունը ներկայացվել են ըստ կին հարցվողների հիմնական բնութագրիչների: ՉԺԱՅ-ի ընթացքում, կանանց հարցաթերթի միջոցով հավաքագրվել է նաև տեղեկատվություն տնային տնտեսությունում որոշումների կայացման հարցում կնոջ մասնակցության, կոնկրետ իրավիճակում, սեռական հարաբերություն ունենալու հարցում ամուսնուն մերժելու կնոջ իրավասության, և կնոջ ծեծի նկատմամբ իր իսկ վերաբերմունքի մասին: Լիազորությունն արտահայտող երեք առանձին բնութագրիչները հիմնված են տնային տնտեսությունում հարցվողի մասնակցությամբ կայացվող որոշումների քանակի, ամուսնուն սեռական հարաբերություն ունենալու հարցում իր կարծիքով մերժման իրավունք ունենալու իրավիճակների թվի և ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացնելու պատճառների թվի վրա: Կնոջ դիրքորոշումն այս երեք բնութագրիչների նկատմամբ ներկայացվել է առանձին ժողովրդագրական և առողջապահական արդյունքների հետ համատեղ՝ ներառյալ հակաբեղմնավորման մեթոդների օգտագործումը, ընտանիքի իդեալական չափը և հակաբեղմնավորման մեթոդների նկատմամբ չբավարարված պահանջը: Ի լրումն, ներկայացվել է նաև երեխաների կենսական կարգավիճակն ըստ լիազորությունն արտահայտող բնութագրիչների վերաբերյալ մոր ունեցած դիրքորոշման:

15.1 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԻԿ ՎԱՐՋԱՏՐՈՒԹՅՈՒՆ

ՉԺԱՅ հարցաթերթերում ներառվել են մի շարք հարցեր հետազոտության անցկացման պահին կնոջ տնտեսական ակտիվության կարգավիճակի և հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում զբաղվածության շարունակականության վերաբերյալ: Կանանց տրվել են հարցեր նաև աշխատանքի դիմաց վարձատրության տեսակի վերաբերյալ: Աղյուսակ 15.1-ը ցույց է տալիս հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, որևէ ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսը և նրանց տոկոսային բաշխումն ըստ վարձատրության տեսակի (կանխիկ, բնամթերքով, կանխիկ և բնամթերքով):

Ըստ ՉԺԱՅ տվյալների, հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում հարցման պահին ամուսնացած կանանց 30 տոկոսը եղել է տնտեսապես ակտիվ: Ի տարբերություն մյուս տարիքային խմբերի, 15-19 և 20-24 տարիքային խմբերի կանանց շրջանում տնտեսական ակտիվությունն ավելի ցածր է, ինչը հնարավոր է պայմանավորված լինի այդ տարիքային խմբերի կանանց ոչ թե աշխատանքի շուկայում, այլ ուսումնառության գործընթացում ներգրավվածությամբ: Տարիքին զուգահեռ աճում է նաև կանանց տնտեսական ակտիվության մակարդակը: Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում տնտեսապես ակտիվ կանանց 73 տոկոսն իր աշխատանքի դիմաց վարձատրվել է միայն

կանխիկ, այնինչ 20 տոկոսն ընդհանրապես չի վարձատրվել: Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում տնտեսապես ակտիվ կանանց 6 տոկոսը վարձատրվել է կանխիկ և բնամթերքով, մինչդեռ կանանց գրեթե 1 տոկոսը՝ միայն բնամթերքով: Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում տնտեսապես ակտիվ, հարցման պահին ամուսնացած կանանց մասնաբաժինը նվազել է, կազմելով 30 տոկոս, ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 36 տոկոս ցուցանիշի:

Աղյուսակ 15.1 Հարցման պահին ամուսնացած կանանց տնտեսական ակտիվությունը և կանխիկ վարձատրությունը

Հարցման պահին ամուսնացած 15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, որևէ ժամանակահատվածում եղել են տնտեսապես ակտիվ և նրանց տոկոսային բաշխումն ըստ վարձատրության տեսակի և տարիքի, Հայաստան 2005

Տարիք	Տնտեսական ակտիվություն/ Զբաղվածություն		Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, որևէ ժամանակահատվածում տնտեսապես ակտիվ, հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ վարձատրության տեսակի						
	Չբաղվածների տոկոս	Հարցման պահին ամուսնացած կանանց թվաքանակ	Միայն կանխիկ	Կանխիկ և բնամթերքով	Միայն բնամթերքով	Չի վարձատրվել	Տվյալ չկա/ Չգիտի	Ընդամենը	Զբաղված կանանց թվաքանակ
15-19	6.4	78	*	*	*	*	*	*	5
20-24	11.2	504	(73.9)	(3.1)	(0.0)	(22.1)	(0.9)	(100.0)	56
25-29	18.2	695	71.4	3.3	0.0	23.8	1.5	100.0	127
30-34	31.0	601	77.8	4.4	0.7	17.1	0.0	100.0	186
35-39	37.7	602	72.5	6.1	0.8	20.5	0.0	100.0	227
40-44	39.4	824	72.8	7.5	0.5	19.2	0.0	100.0	325
45-49	40.8	741	72.1	5.2	1.3	21.4	0.0	100.0	303
Ընդամենը	30.4	4,044	73.2	5.6	0.7	20.2	0.2	100.0	1,229

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

15.2 ՎԱՍՏԱԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում տնտեսապես ակտիվ, կանխիկ վարձատրությամբ աշխատող, հարցման պահին ամուսնացած կանանց տրվել է հարց իրենց և իրենց ամուսնու/զուգընկերոջ վաստակների հարաբերակցության մասին: Ավելին, տրվել է հարց, թե ով է հիմնականում որոշում կայացնում իրենց վաստակի տնօրինման հարցում: Հավաքագրված տեղեկատվությունը թույլ է տալիս պարզել կնոջ լիազորությունների շրջանակը: Ենթադրվում է, որ կնոջ տնտեսապես ակտիվ լինելը և վաստակ ունենալը մեծացնում է կնոջ լիազորությունների շրջանակը, եթե կինը՝ տարբերակելով իր վաստակն ամուսնու/զուգընկերոջ վաստակից, ինքն է տնօրինում իր վաստակը:

Աղյուսակ 15.2-ը ցույց է տալիս կնոջ վաստակի տնօրինումը և կնոջ ու ամուսնու վաստակների հարաբերակցությունն ըստ հիմնական բնութագրիչների: Ամուսնացած, կանխիկով վարձատրվող կանանց 23 տոկոսը հիմնականում ինքնուրույն է տնօրինում վաստակած գումարը, մինչդեռ 70 տոկոսը որոշումը կայացնում է ամուսնու/զուգընկերոջ հետ համատեղ: Կանանց 6 տոկոսը նշել է, որ իրենց վաստակած գումարները հիմնականում տնօրինում է ամուսինը: Ի տարբերություն մյուս ենթախմբերի կանանց, բարձր կրթական մակարդակ, բարեկեցության բարձր մակարդակ, քիչ երեխաներ ունեցող և քաղաքային բնակավայրերի կանայք հիմնականում իրենց վաստակն ինքնուրույն են տնօրինում: Մարզային կտրվածքով, կնոջ կողմից իր վաստակի տնօրինման ցուցանիշը տատանվել է՝ կազմելով ամենացածրն Արարատում՝ 7 տոկոս, մինչև ամենաբարձրը Սյունիքում՝ 37 տոկոս:

Աղյուսակ 15.2 Կնոջ վաստակի տնօրինումը, կնոջ և ամուսնու կանխիկ վաստակների հարաբերակցությունը

15-49 տարեկան ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում վարձատրվել են կանխիկով, ըստ այդ գումարը տնօրինելու վերաբերյալ որոշում կայացնող անձի, կնոջ և ամուսնու/զուգընկերոջ վաստակած գումարների հարաբերակցության, համաձայն հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կանխիկ գումարի տնօրինման վերաբերյալ որոշում կայացնող անձ					Կնոջ և ամուսնու կանխիկ վաստակների հարաբերակցությունը							
	Հիմնականում հարցվողը	Հարցվողը և ամուսինը/զուգընկերը համատեղ		Հիմնականում ամուսինը/զուգընկերը		Այլ	Ընդամենը	Ավելի	Պակաս	Նույնը	Ամուսինը/զուգընկերը չի վաստակում		Կանանց թվաքանակ
		Չգիտի/Տվյալ չկա	Ընդամենը										
Տարիք													
15-19	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	*	5
20-24	(19.8)	(71.1)	(6.0)	(3.1)	(100.0)	(10.1)	(79.3)	(3.9)	(0.0)	(6.7)	(100.0)	43	
25-29	23.1	69.3	4.4	3.1	100.0	7.8	77.6	10.8	2.0	1.7	100.0	94	
30-34	21.8	67.9	6.8	3.5	100.0	8.8	74.0	11.7	3.4	2.1	100.0	153	
35-39	23.5	69.6	4.7	2.3	100.0	6.6	67.7	15.6	7.1	3.0	100.0	179	
40-44	19.9	72.8	5.4	1.9	100.0	13.7	63.2	15.3	5.7	2.1	100.0	261	
45-49	26.6	67.7	5.0	0.7	100.0	11.8	61.0	12.8	10.6	3.8	100.0	234	
Կենդանի երեխաների թվաքանակ													
0	31.6	52.6	13.6	2.3	100.0	6.5	75.5	11.5	4.3	2.3	100.0	61	
1-2	24.9	68.5	4.6	2.0	100.0	9.6	68.8	12.1	6.8	2.7	100.0	578	
3+	17.2	74.3	6.1	2.3	100.0	12.4	63.5	15.2	5.7	3.1	100.0	331	
Բնակավայր													
Քաղաքային	26.2	67.3	4.3	2.1	100.0	9.8	67.4	13.3	7.0	2.4	100.0	676	
Գյուղական	14.5	74.5	8.9	2.1	100.0	11.6	67.3	12.8	4.4	3.7	100.0	294	
Սարգ													
Երևան	28.9	64.6	5.5	1.1	100.0	9.4	70.9	11.3	6.9	1.4	100.0	386	
Արագածոտն	24.9	55.0	20.1	0.0	100.0	17.7	63.9	13.9	0.7	3.7	100.0	32	
Արարատ	6.5	82.9	9.7	0.9	100.0	13.8	68.3	11.7	2.2	4.1	100.0	43	
Արմավիր	13.4	71.6	13.1	1.9	100.0	6.7	65.5	18.4	8.3	1.1	100.0	132	
Գեղարքունիք	15.4	84.0	0.0	0.6	100.0	10.6	74.4	7.6	6.4	1.0	100.0	62	
Լոռի	10.6	82.9	0.0	6.6	100.0	10.2	61.1	14.9	5.5	8.4	100.0	60	
Կոտայք	21.6	73.1	2.0	3.3	100.0	9.3	62.2	11.2	12.0	5.2	100.0	89	
Շիրակ	22.7	68.3	3.8	5.3	100.0	17.1	48.5	19.0	6.5	8.8	100.0	48	
Սյունիք	36.6	56.6	2.4	4.4	100.0	10.5	68.3	17.7	0.0	3.6	100.0	69	
Վայոց ձոր	11.1	81.2	7.7	0.0	100.0	8.1	83.0	6.8	2.1	0.0	100.0	11	
Տավուշ	20.2	78.0	0.8	1.0	100.0	17.1	68.8	11.7	1.4	0.9	100.0	37	
Կրթություն													
Հիմնական ընդհանուր	(26.6)	(56.3)	(9.9)	(7.2)	(100.0)	(5.7)	(53.7)	(13.8)	(20.5)	(6.3)	(100.0)	37	
Միջնակարգ ընդհանուր	18.5	69.3	9.0	3.1	100.0	11.6	57.9	20.4	7.5	2.6	100.0	224	
Միջին մասնագիտական	23.6	68.8	5.5	2.0	100.0	8.7	70.9	9.1	8.2	3.1	100.0	348	
Բարձրագույն	24.0	71.6	3.4	1.0	100.0	11.7	71.3	12.6	2.2	2.3	100.0	361	
Բարեկեցության մակարդակ													
Ամենացածր	13.2	70.4	12.4	4.0	100.0	17.2	53.5	19.7	6.3	3.3	100.0	127	
Ցածր	18.0	70.3	9.1	2.6	100.0	10.0	65.1	13.9	5.6	5.3	100.0	139	
Միջին	19.1	74.9	4.0	2.0	100.0	7.4	63.0	14.8	11.6	3.2	100.0	193	
Բարձր	28.5	64.6	5.3	1.6	100.0	11.8	70.2	11.4	5.3	1.4	100.0	223	
Ամենաբարձր	27.1	68.9	2.5	1.4	100.0	8.4	75.5	10.1	3.7	2.2	100.0	286	
Ընդամենը	22.7	69.5	5.7	2.1	100.0	10.4	67.4	13.2	6.3	2.8	100.0	969	

Նշում՝ Փակագծերում ներկայացված տվյալները հիմնված են 25-49 չկշռված դեպքերի վրա: Աստղանիշը նշանակում է, որ տվյալները հիմնված են 25-ից քիչ չկշռված դեպքերի վրա և սեղմվել են:

ՀԺԱՀ 2000 և 2005 համեմատականը ցույց է տալիս, որ իրենց վաստակը տնօրինող ամուսնացած կանանց տոկոսը նվազել է՝ կազմելով 23 տոկոս, ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 36 տոկոսի: Հետազոտությունների արդյունքների համեմատականը

Աղյուսակ 15.3 Կնոջ և ամուսնու աշխատավարձերի տնօրինման հարցում կնոջ իրավասությունները

Հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումը, ովքեր հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում վարձատրվել են կանխիկով ըստ այն անձի, ով տնօրինում է կնոջ և իր ամուսնու կանխիկ վաստակները, համաձայն հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում կնոջ և ամուսնու կողմից կանխիկ վաստակած գումարների հարաբերակցության, Հայաստան 2005

Կնոջ և ամուսնու վաստակած գումարների հարաբերակցություն	Կնոջ կանխիկ վաստակի տնօրինման վերաբերյալ որոշում կայացնող անձ						Ամուսնու/զուգընկերոջ կանխիկ վաստակի տնօրինման վերաբերյալ որոշում կայացնող անձ						
	Հիմնականում հարցվողը	Հարցվողը և ամուսինը/զուգընկերը համատեղ	Հիմնականում ամուսինը/զուգընկերը	Չգիտի/Սկսում է	Ընդամենը	Կանանց իտորձովի	Հիմնականում հարցվողը	Հարցվողը և ամուսինը/զուգընկերը համատեղ	Հիմնականում ամուսինը/զուգընկերը	Այլ	Չգիտի/Սկսում է	Ընդամենը	Կանանց իտորձովի
Ամուսնու/զուգընկերոջ վաստակից ավելի	30.4	63.5	6.1	0.0	100.0	101	16.0	54.5	12.2	16.5	0.9	100.0	101
Ամուսնու/զուգընկերոջ վաստակից պակաս	20.1	73.2	5.2	1.5	100.0	653	8.9	80.4	8.8	1.7	0.1	100.0	653
Ամուսնու/զուգընկերոջ վաստակի նույն չափով	16.8	73.2	9.9	0.0	100.0	128	4.9	80.7	14.5	0.0	0.0	100.0	128
Ամուսինը/զուգընկերը չի աշխատում կամ չի վարձատրվում	48.6	47.0	1.3	3.1	100.0	63	42	42	42	42	42	42	0
Կինը չի վաստակում կանխիկ	42	42	42	42	42	0	10.0	78.4	5.1	5.7	0.9	100.0	257
Հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում կինը չի աշխատել	42	42	42	42	42	0	7.9	67.0	13.5	11.5	0.2	100.0	2,815
Ընդամենը	22.7	70.4	5.7	1.2	100.0	944	8.3	70.1	12.1	9.2	0.3	100.0	3,953

42 – Կիրառելի չէ

նաև ցույց է տալիս, որ վաստակի տնօրինումն ամուսնու/զուգընկերոջ հետ համատեղ իրականացնող կանանց տոկոսն աճել է՝ կազմելով 70 տոկոս, ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 52 տոկոսի:

Աղյուսակ 15.2-ը նաև ցույց է տալիս, որ կանանց մեծամասնությունը (67 տոկոս) նշել է, որ վաստակում է ավելի քիչ, քան իր ամուսինը, մինչդեռ 13 տոկոսը նշել է, որ ինքը և ամուսինը վաստակել են նույն չափով: Կանանց միայն 10 տոկոսն է նշել, որ աշխատանքի դիմաց ստացած կանխիկ վարձատրությունը գերազանցում է ամուսնու վարձատրությանը:

Աղյուսակ 15.3-ը ցույց է տալիս հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում հարցման պահին ամուսնացած կանանց և իրենց ամուսինների կանխիկ վաստակած գումարները տնօրինող անձի վերաբերյալ տեղեկատվություն ըստ կնոջ և ամուսնու վաստակների հարաբերակցության: Աղյուսակը նաև ցույց է տալիս, թե ով է իրականացնում կնոջ և ամուսնու/զուգընկերոջ վաստակների տնօրինումը, ինչպես նաև թե որքանով է տնօրինումը կախված կնոջ աշխատելու հանգամանքից և նրանց վաստակների հարաբերակցությունից: Կանայք, ովքեր ավելի շատ կանխիկ դրամ են վաստակել, քան ամուսինը/զուգընկերը, ինչպես նաև կանայք, որոնց ամուսինները հարցմանը նախորդ 12 ամիսների ընթացքում չեն վարձատրվել կամ չեն աշխատել, առավել հակված են եղել իրենց վաստակի ինքնուրույն տնօրինմանը: Ավելին, եթե կանայք ամուսիններից շատ են վաստակել, նրանք տնօրինել են նաև իրենց ամուսինների վաստակը:

15.3 ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ

Տնային տնտեսությունում (SS) կանանց ինքնուրույն որոշում կայացնելը գնահատելու նպատակով, ՀԺԱՀ-ի ընթացքում հավաքագրվել է տեղեկատվություն հետևյալ չորս տարբեր որոշումների կայացման հարցում կանանց մասնակցության վերաբերյալ՝

- կնոջ առողջության խնամք,
- SS հիմնական գնումներ,
- SS օրական կարիքների համար գնումներ,
- այցելություններ ընտանիքի բարեկամներին և ընկերներին:

Աղյուսակ 15.4-ը ցույց է տալիս հարցման պահին ամուսնացած կանանց տոկոսային բաշխումն ըստ վերոնշյալ հարցերի շուրջ սովորաբար որոշումներ կայացնող անձի: Կնոջ՝ կյանքին վերաբերվող հարցերում որոշում կայացնելու կարողությունն արտահայտում է նրա լիազորությունների շրջանակը:

Ըստ տվյալների, ամուսնացած կանանց մեկ երրորդն իրենց առողջության խնամքի մասին որոշումը կայացնում է ինքնուրույն: Ամուսնացած կանանց 57 տոկոսն այդ որոշումը կայացնում են ամուսնու հետ համատեղ, մինչդեռ հարցման պահին ամուսնացած կանանց 10 տոկոսը չի մասնակցում իր առողջության խնամքի վերաբերյալ որոշման կայացմանը: Հարցման պահին ամուսնացած կանանց 23 տոկոսն ինքնուրույն է որոշում կայացնում տնային տնտեսության համար հիմնական գնումներ կատարելու հարցում, կանանց 54 տոկոսն այդ որոշումը կայացնում է ամուսնու հետ համատեղ, իսկ 22 տոկոսը՝ մասնակցություն չի ունենում այս հարցի շուրջ որոշում կայացնելիս: Ամուսնացած կանայք ավելի շատ են հակված օրական կարիքների համար գնումների վերաբերյալ որոշումներ կայացնելուն, քան իրենց ամուսինները, մինչդեռ ընտանիքի բարեկամներին և ընկերներին այցելությունների վերաբերյալ որոշումները կայացվում են ամուսնու հետ համատեղ (74 տոկոս):

ՀԺԱՀ 2000-ի համեմատությամբ, SS-ի համար հիմնական գնումներ կատարելու հարցում, ամուսնացած կանանց ինքնուրույն որոշում կայացնելու ցուցանիշը ՀԺԱՀ-2005-ի արդյունքում նշանակալիորեն աճել է (համապատասխանաբար՝ 10 և 23 տոկոս): Երկու հետազոտությունների արդյունքների համեմատականը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ, ամուսնու հետ համատեղ SS-ն վերաբերյալ նշված չորս որոշումների կայացման ցուցանիշներն աճել են: Ավելին, միայն ամուսնու կողմից կայացվող որոշումների ցուցանիշը նվազել է:


Աղյուսակ 15.4 Կնոջ մասնակցությունը SS-ում որոշումների կայացմանը

Հարցման պահին ամուսնացած, 15-49 տարեկան կանանց տոկոսային բաշխումն ըստ այն անձի, ով սովորաբար որոշում է կայացնում SS-ն վերաբերող հետևյալ չորս իրավիճակներում, Հայաստան 2005

Որոշում	Հարցվողը				Որևէ այլ մարդ	Այլ	Տվյալ չկա	Ընդամենը
	Հիմնականում հարցվող	ամուսինը/ գուզը/համատեղ	Հիմնականում ամուսինը/ գուզը/համատեղ	Որևէ այլ մարդ				
Առողջության խնամք	33.3	56.6	7.6	2.1	0.2	0.2	100.0	
SS համար հիմնական գնումներ	23.0	53.9	12.3	10.1	0.6	0.2	100.0	
SS համար օրական կարիքների համար գնումներ	41.1	37.5	9.1	11.5	0.7	0.2	100.0	
Այցելություն բարեկամներին, ընկերներին	12.7	74.3	7.1	5.4	0.4	0.2	100.0	

Աղյուսակ 15.5-ը ցույց է տալիս որոշման կայացման ցուցանիշների փոփոխությունը ըստ հիմնական բնութագրիչների: Ընդհանուր առմամբ, ամուսնացած կանանց մեծամասնությունը տնային տնտեսության վերաբերյալ որոշումները կայացնում է ինքնուրույն կամ ամուսնու/զուգընկերոջ հետ համատեղ: Կանանց 90 տոկոսը մասնակցել է իր առողջության խնամքի վերաբերյալ որոշման կայացմանը, իսկ կանանց գրեթե 80 տոկոսը մասնակցություն է ունեցել SS հիմնական և օրական գնումների վերաբերյալ որոշումների կայացմանը: Կանանց 87 տոկոսը նշել է, որ մասնակցել է ընտանիքի բարեկամներին կամ ընկերներին այցելելու վերաբերյալ որոշման կայացմանը: Հարցման պահին ամուսնացած կանանց 68 տոկոսը մասնակցել է բոլոր նշված հարցերի շուրջ որոշումների կայացմանը, մինչդեռ կանանց 5 տոկոսը չի մասնակցել ոչ մի որոշման կայացման (Գծապատկեր 15.1):

SS որոշումների թիվ	Կանանց տոկոս
0	4.7
1	5.8
2	10.1
3	11.2
4	68.2



Աղյուսակ 15.5 Կնոջ մասնակցությունը որոշումների կայացմանն ըստ հիմնական բնութագրիչների

Հարցման պահին ամուսնացած, 15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր SS-ում, հետևյալ չորս իրավիճակների վերաբերյալ որոշումները կայացնում են ինքնուրույն կամ ամուսնու հետ համատեղ, ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Ինքնուրույն կամ ամուսնու հետ համատեղ կայացվող որոշումները հետևյալ հարցերի շուրջ՝				Բոլոր չորս որոշումներում մասնակից կանանց տոկոս	Ոչ մի որոշմանը չմասնակցող կանանց տոկոս	
	Առողջական խնամք	SS գնումներ	SS օրական գնումներ	Այցելություն բարեկամներին, ընկերներին		Կանանց	Թվաքանակ
Տարիք							
15-19	66.0	35.9	31.6	59.5	28.0	27.0	78
20-24	83.5	54.5	50.8	74.2	43.2	12.9	504
25-29	87.3	65.9	67.7	82.6	54.9	5.0	695
30-34	91.1	77.6	80.8	87.1	68.8	3.2	601
35-39	92.5	84.6	86.7	89.7	77.8	2.9	602
40-44	92.5	86.8	90.2	92.7	79.4	2.3	824
45-49	93.1	88.5	91.2	94.1	80.9	1.8	741
Հարցմանը նախորդող 12 ամիսների տնտեսական կարգավիճակ							
Չգբաղված Վաստակում է կանխիկ	89.1	73.6	75.8	85.2	65.3	5.5	2,906
Չի վաստակում կանխիկ	92.4	86.4	86.1	92.4	76.6	2.5	895
Կենդանի երեխաների թվաքանակ							
0	82.8	60.4	59.3	74.5	50.8	13.0	265
1-2	90.6	74.8	76.8	87.1	66.5	4.4	2,458
3+	89.9	83.9	85.6	89.4	74.7	3.6	1,321
Բնակավայր							
Քաղաքային	91.7	78.9	79.9	89.6	69.8	2.9	2,447
Գյուղական	87.1	73.7	76.4	83.0	65.7	7.4	1,597
Մարզ							
Երևան	93.0	78.4	80.0	91.0	69.8	2.1	1,362
Արագածոտն	85.1	71.8	77.3	78.8	60.4	9.5	196
Արարատ	92.5	75.7	78.8	88.3	74.3	6.3	307
Արմավիր	85.7	69.5	73.8	82.7	62.5	11.3	381
Գեղարքունիք	78.4	69.2	73.7	79.2	57.7	6.5	303
Լոռի	95.6	88.2	86.3	94.7	79.4	1.7	343
Կոտայք	90.7	75.5	76.8	85.0	67.8	5.5	357
Շիրակ	92.2	77.0	77.3	83.2	72.9	4.9	357
Սյունիք	76.9	81.0	75.2	84.3	51.6	2.0	189
Վայոց ձոր	83.7	73.4	75.4	86.9	64.7	10.5	65
Տավուշ	93.9	78.4	82.4	85.3	71.9	4.1	184
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	80.4	64.0	69.1	76.4	59.3	14.0	235
Միջնակարգ ընդհանուր	88.8	74.4	76.8	84.5	66.5	5.4	1,629
Միջին մասնագիտական	91.0	79.6	80.3	88.7	70.0	3.7	1,353
Բարձրագույն	92.9	80.7	81.7	92.0	71.1	2.3	828
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	85.3	73.3	74.0	78.8	63.4	9.7	764
Ցածր	89.0	75.6	78.8	87.8	68.6	5.0	809
Միջին	91.4	78.8	81.3	87.9	71.8	3.4	788
Բարձր	88.7	74.2	77.6	87.2	65.7	4.7	841
Ամենաբարձր	94.7	82.0	80.8	92.5	71.1	1.1	842
Ընդամենը	89.9	76.8	78.5	87.0	68.2	4.7	4,044

Նկատելի է խիստ կախվածություն տարիքի և որոշումների ընդունման ցուցանիշների միջև: Բոլոր նշված հարցերի շուրջ որոշումների կայացման մասնակցության ցուցանիշը 15-19 տարիքային խմբի կանանց շրջանում կազմել է 28 տոկոս, իսկ 45-49 տարիքային խմբում՝ 81 տոկոս: Որոշումների կայացման հարցում կանանց մասնակցության ցուցանիշն աճել է նաև կնոջ կրթական մակարդակին զուգընթաց: Ի տարբերություն միջնակարգ ընդհանուր կրթությունից բարձր կրթական մակարդակ ունեցող կանանց 71 տոկոսի, բոլոր հարցերի շուրջ որոշումների կայացմանը մասնակցել են հիմնական ընդհանուր կրթություն ունեցող կանանց 59 տոկոսը: Ցուցանիշը տատանվել է նաև մարզային կտրվածքով: Հարցման պահին ամուսնացած կանանց, բոլոր նշված որոշումների կայացման հարցում մասնակցության ցուցանիշը տատանվել է 52 տոկոսից՝ Սյունիքի մարզում, մինչև 79 տոկոս՝ Լոռու մարզում:

15.4 ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ԿՆՈՋ ԾԵԾԻ ՆԿԱՏՄԱՍԲ

Կանանց լիազորությունների շրջանակը պարզելու նպատակով, ՀԺԱՀ-ի ընթացքում հավաքագրվել է տեղեկատվություն կնոջ ծեծի նկատմամբ կանանց վերաբերմունքի մասին: Ենթադրվում է, որ այն կանայք, ովքեր նշել են, որ նշված որևէ իրավիճակում ամուսինն իրավունք ունի ծեծել կնոջը, համարում են, որ ունեն ավելի քիչ լիազորություններ, քան տղամարդիկ: Նման նոտեցումը կարող է մեծ ազդեցություն ունենալ կնոջ բարեկեցության վրա: Կանանց տրվել է հարց, թե արդյոք ամուսինն իրավունք ունի՞ ծեծել կնոջը հետևյալ իրավիճակներում, եթե կինը՝

- այրել է կերակուրը,
- հակաճառել է ամուսնուն,
- դուրս է եկել առանց ամուսնուն զգուշացնելու,
- անուշադրության է մատնել երեխաներին,
- մերժել է ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն:

Աղյուսակ 15.6.1-ը ներկայացնում է կանանց վերաբերմունքը կնոջ ծեծի նկատմամբ վերոնշյալ հինգ իրավիճակներում:

Կանանց 22 տոկոսը, վերոնշյալ պատճառներից առնվազն մեկի դեպքում, նշել է, որ ամուսինն իրավունք ունի ծեծել կնոջը: Կանանց 17 տոկոսը նշել է, որ ամուսինն իրավունք ունի ծեծել կնոջը, եթե նա անուշադրության է մատնել երեխաներին, 15 տոկոսը՝ եթե նա հակաճառել է ամուսնուն, 10 տոկոսը՝ եթե նա դուրս է եկել առանց ամուսնուն զգուշացնելու, 4 տոկոսը՝ եթե նա մերժել է ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, 2 տոկոսը՝ եթե նա այրել է կերակուրը: Հարկ է նշել, որ ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 32 տոկոս նույն ցուցանիշի, ՀԺԱՀ-2005-ի արդյունքում ցուցանիշը նվազել է 10 տոկոսով:

Ինչպես բարձր կրթական մակարդակ ունեցող, այնպես էլ կանխիկ դրամ վաստակող կանայք ավելի քիչ են նշել, որ տղամարդն իրավունք ունի ծեծել կնոջը վերոնշյալ պատճառներից որևէ մեկի դեպքում: Հարցման պահին ամուսնացած կանանց 25 տոկոսի կարծիքով վերոնշյալ պատճառներից առնվազն մեկի դեպքում, ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացված է: Նույն ցուցանիշը երբևէ չամուսնացած կանանց ցուցանիշը ամուսնացած կանանց շրջանում կազմել է համապատասխանաբար՝ 18 և 19 տոկոս: Ի տարբերություն քաղաքաբնակ կանանց 15 տոկոսի, գյուղաբնակ կանանց 34 տոկոսի կարծիքով վերոնշյալ պատճառներից առնվազն մեկի դեպքում, ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացված է: Նկատելի է ցուցանիշի տատանում մարզային կտրվածքով՝ կազմելով ամենացածրը Սյունիքում՝ 7 տոկոս, մինչև ամենաբարձրն Արմավիրում՝ 47 տոկոս: Ի տարբերություն ամենաբարձր բարեկեցության մակարդակում գտնվող կանանց, ամենացածր բարեկեցության մակարդակում գտնվողներն ավելի հակված են վերոնշյալ պատճառներից առնվազն մեկի դեպքում կնոջ ծեծն արդարացնելուն (համապատասխանաբար՝ 10 և 41 տոկոս):

Վերոնշյալ իրավիճակներում ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացնելու վերաբերյալ իրենց կարծիքն են հայտնել նաև տղամարդիկ: Աղյուսակ 15.6.2-ը ցույց է տալիս, որ տղամարդիկ ավելի հակված են, վերոնշյալ պատճառներից որևէ մեկի դեպքում, ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացնելուն, քան կանայք (համապատասխանաբար՝ 31 և 22 տոկոս): Տղամարդկանց գրեթե մեկ քառորդը նշել է, որ իրավունք ունի ծեծել կնոջը, եթե կինն անուշադրության է մատնել երեխաներին կամ հակաճառել է ամուսնուն: Հարցված տղամարդկանց 14 տոկոսն արդարացրել է կնոջ ծեծը, եթե կինը դուրս է եկել առանց ամուսնուն զգուշացնելու, 5 տոկոսը՝ եթե կինը մերժել է ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն և 1 տոկոսը՝ եթե կինն այրել է կերակուրը: Նշված պատճառներից որևէ մեկի դեպքում, ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացնելու ցուցանիշը, ի տարբերություն ՀԺԱՀ-2000-ի արդյունքում ստացված 42 տոկոսի, ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շրջանում նվազել է՝ ՀԺԱՀ-2005-ի արդյունքում կազմելով 31 տոկոս:

Ինչպես բարձր կրթական մակարդակ ունեցող, այնպես էլ կանխիկ դրամ վաստակող տղամարդիկ ավելի քիչ են նշել, որ ամուսինն իրավունք ունի ծեծել կնոջը վերոնշյալ պատճառներից որևէ մեկի դեպքում: Ի տարբերություն քաղաքաբնակ տղամարդկանց 27 տոկոսի, գյուղաբնակ տղամարդկանց 37 տոկոսը արդարացրել է ամուսնու կողմից կնոջ ծեծը նշված պատճառներից առնվազն մեկի դեպքում: Առնվազն մեկ պատճառի դեպքում կնոջ ծեծն արդարացնող տղամարդկանց տոկոսն ամենաբարձրն է Սյունիքում (73 տոկոս), իսկ ամենացածրը՝ Շիրակում (4 տոկոս): Հետաքրքրական է այն փաստը, որ Սյունիքի մարզում կանանց և տղամարդկանց կարծիքները այս հարցի շուրջ խիստ հակասական են: Նշված պատճառներից որևէ մեկի դեպքում, ամուսնու կողմից կնոջ ծեծն արդարացրել են Սյունիքի մարզի կանանց՝ 7 և տղամարդկանց 73 տոկոսը:

Աղյուսակ 15.6.1 Վերաբերմունքը կնոջ ծեծին, Կանայք

15-49 տարեկան կանանց տոկոսը, ովքեր համաձայն են, որ ամուսինն արդարացի է, երբ ծեծում է իր կնոջը նշված հատուկ իրավիճակներում ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կնոջ ծեծն ամուսնու կողմից արդարացի է, եթե նա՝					Նշված պատճառներից առնվազն մեկի հետ համամիտ կանանց տոկոս	Կանանց թվաքանակ
	Այրել է կերակուրը	Հակաճառել է ամուսնուն	Տանից դուրս է եկել առանց ասելու	Անտեսել է երեխաներին	Մերժել է ամուսնուն ունենալ սեռական հարաբեր.		
Տարիք							
15-19	1.6	15.3	10.2	17.5	3.0	22.0	1,123
20-24	2.4	13.9	9.1	15.6	3.0	20.2	1,131
25-29	1.0	15.0	10.0	16.3	4.2	21.8	929
30-34	2.6	14.2	10.5	18.8	3.2	23.5	749
35-39	1.9	13.7	11.1	16.7	4.1	22.3	711
40-44	2.6	15.7	11.5	20.4	5.7	25.0	965
45-49	2.5	15.2	10.3	16.8	3.1	20.8	958
Հարցմանը նախորդող 12 ամիսների տնտեսական կարգավիճակ							
Չզբաղված	2.1	16.0	11.7	18.5	3.9	23.6	4,789
Վաստակում է կանխիկ	1.6	10.2	6.4	12.6	2.9	16.1	1,488
Չի վաստակում կանխիկ	3.9	17.8	7.5	23.4	5.0	28.4	282
Կենդանի երեխաների թվաքանակ							
0	1.4	12.4	7.9	14.8	2.7	18.8	2,352
1-2	1.9	14.1	9.4	15.2	3.5	20.4	2,812
3+	3.7	20.0	16.1	26.2	5.9	31.1	1,402
Ամուսնական կարգավիճակ							
Երբևէ չամուսնացած	1.4	11.8	7.5	14.2	2.4	17.9	2,043
Հարցման պահին ամուսնացած	2.5	16.5	12.1	19.4	4.1	24.7	4,044
Նախկինում ամուսնացած	1.5	12.5	7.0	13.6	6.2	18.5	479
Բնակավայր							
Քաղաքային	1.2	9.9	5.7	11.3	2.4	15.2	4,194
Գյուղական	3.7	23.3	18.4	28.2	5.9	34.3	2,372
Մարզ							
Երևան	1.1	6.7	3.0	6.9	1.6	10.0	2,468
Արագածոտն	7.7	32.5	23.1	33.5	10.5	45.9	292
Արարատ	0.0	8.8	3.6	15.8	1.3	16.9	462
Արմավիր	4.1	36.1	20.2	38.2	5.2	47.2	567
Գեղարքունիք	3.7	24.1	26.9	31.9	3.1	38.0	443
Լոռի	1.3	19.3	9.4	14.7	3.7	24.6	537
Կոտայք	3.1	21.8	17.4	23.8	8.3	29.5	563
Շիրակ	1.5	12.1	18.1	24.7	6.8	25.9	563
Սյունիք	0.6	3.9	2.7	6.1	1.7	7.3	281
Վայոց ձոր	0.0	9.2	2.9	8.3	1.8	11.8	107
Տավուշ	4.3	14.3	8.3	22.8	4.3	28.2	285
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	4.0	21.5	16.2	22.4	5.8	28.3	529
Միջնակարգ ընդհանուր	2.9	20.2	15.1	24.1	5.5	29.4	2,440
Միջին մասնագիտական	1.6	14.5	8.8	16.5	3.1	22.2	1,997
Բարձրագույն	0.8	4.6	3.0	6.5	1.1	8.8	1,600
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	4.8	29.2	21.6	32.8	7.7	41.1	1,164
Ցածր	2.8	19.1	15.7	23.4	4.5	28.8	1,284
Միջին	1.2	11.6	8.4	15.0	3.7	18.7	1,303
Բարձր	1.6	10.9	5.5	11.7	2.3	16.0	1,375
Ամենաբարձր	0.5	5.7	2.8	7.1	1.1	9.7	1,440
Ընդամենը	2.1	14.8	10.3	17.4	3.7	22.1	6,566

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությամբ (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները:

Աղյուսակ 15.6.2 Վերաբերումները կնոջ ծնունդին, Տղամարդիկ

15-49 տարեկան տղամարդկանց տոկոսը, ովքեր համաձայն են, որ ամուսինն արդարացի է, եթե ծնունդ է իր կնոջը նշված հատուկ իրավիճակներում ըստ հիմնական բնութագրիչների, Հայաստան 2005

Հիմնական բնութագրիչներ	Կնոջ ծնունդ ամուսնու կողմից արդարացի է, եթե նա՝					Նշված պատճառներից առնվազն մեկի հետ համամիտ տղամարդկանց տոկոս	Տղամարդկանց թվաքանակ
	Այրել է կերակուրը	Հակաճառել է ամուսնուն	Տանից դուրս է եկել առանց ասելու	Անտեսել է երեխաներին	Մերժել է ամուսնուն ունենալ սեռական հարաբեր.		
Տարիք							
15-19	1.4	22.5	13.0	23.5	11.2	30.5	292
20-24	0.1	27.8	13.6	26.1	3.8	38.3	237
25-29	2.6	21.6	11.5	19.1	4.9	28.8	202
30-34	0.6	21.9	17.9	21.1	3.9	26.4	156
35-39	0.7	17.7	14.5	22.9	1.3	28.8	150
40-44	1.5	24.4	18.4	28.6	4.5	34.0	199
45-49	0.2	13.4	12.0	19.4	3.4	24.4	211
Հարցմանը նախորդող 12 ամիսների տնտեսական կարգավիճակ							
Չգբաղված	1.4	22.4	13.8	22.8	7.6	31.9	716
Վաստակում է կանխիկ	0.8	19.3	13.4	21.9	2.9	28.1	666
Չի վաստակում կանխիկ	0.0	39.4	27.3	39.3	2.8	41.4	60
Կենդանի երեխաների թվաքանակ							
0	1.2	24.6	14.3	23.7	7.3	33.1	688
1-2	0.7	16.0	11.9	21.0	2.2	26.3	519
3+	1.4	25.1	18.7	25.9	5.8	32.1	240
Ամուսնական կարգավիճակ							
Երբևէ չամուսնացած	1.1	26.1	14.7	25.2	7.6	35.3	615
Հարցման պահին ամուսնացած	1.0	18.4	13.7	21.4	3.4	26.9	815
Նախկինում ամուսնացած	2.5	14.7	22.5	27.5	6.8	27.5	17
Բնակավայր							
Քաղաքային	0.4	16.4	10.2	20.8	4.2	27.0	913
Գյուղական	2.2	30.5	21.0	27.1	7.0	36.5	534
Սարգ							
Երևան	0.0	13.3	7.9	19.3	2.6	24.9	547
Արագածոտն	5.2	54.6	33.7	35.4	10.6	57.9	71
Արարատ	0.0	6.5	4.0	2.5	0.0	6.5	110
Արմավիր	1.0	34.0	23.0	36.3	2.8	40.8	139
Գեղարքունիք	3.0	49.1	32.3	36.5	3.6	57.1	81
Լոռի	1.6	12.1	7.8	18.2	1.6	22.3	87
Կոտայք	0.0	31.0	17.0	26.8	9.8	38.3	151
Շիրակ	0.0	1.0	0.0	3.0	0.0	3.9	98
Սյունիք	4.7	47.6	37.9	64.1	30.3	73.1	67
Վայոց ձոր	0.0	11.5	13.9	13.3	4.7	13.9	31
Տավուշ	4.6	20.6	20.8	21.4	14.0	29.7	64
Կրթություն							
Հիմնական ընդհանուր	2.4	28.7	24.1	32.7	10.9	40.9	205
Միջնակարգ ընդհանուր	1.1	25.1	13.2	25.1	4.8	33.4	586
Միջին մասնագիտական	0.6	20.4	16.1	24.0	4.5	29.9	310
Բարձրագույն	0.5	12.6	8.3	13.2	3.3	20.1	346
Բարեկեցության մակարդակ							
Ամենացածր	3.2	34.7	26.6	32.6	8.8	42.3	261
Ցածր	1.2	22.5	17.0	22.8	6.0	31.0	264
Միջին	0.7	20.6	13.7	23.5	3.7	31.4	326
Բարձր	0.2	19.8	10.8	25.3	4.2	32.4	316
Ամենաբարձր	0.3	11.9	4.5	11.5	4.2	15.8	280
Ընդամենը	1.0	21.6	14.2	23.1	5.2	30.5	1,447

Նշում՝ Հարցման պահին ամուսնացած խմբում ներառվել են նաև քաղաքացիական ամուսնությամբ (համատեղ բնակվող) հարցվողները: Նախկինում ամուսնացած խմբում ներառվել են ամուսնալուծվածները, առանձին բնակվողները և այրիները:

15.5 ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ՍԵՌԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Ժողովրդագրական և առողջապահական արդյունքների գնահատման տեսանկյունից կարևոր է պարզել կանանց՝ սեռական հարաբերությունների վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասության սահմանները: Սա նաև կնոջ լիազորությունների շրջանակն արտահայտող բնութագրիչ է, քանի որ այն հնարավորություն է տալիս գնահատել, ամուսնուն, որևէ պատճառով սեռական հարաբերություններ ունենալու հարցում, մերժելու կնոջ իրավասությունը:

ՀԺԱՀ-ի հարցաթերթը ներառել է հետևյալ հարցը. «Ստորև բերված, ո՞ր իրավիճակներում կհին իրավունք ունի մերժել ամուսնուն ունենալու սեռական հարաբերություն»՝

- կինը գիտի, որ ամուսինն ունի սեռավարակ,
- կինը գիտի, որ ամուսինը սեռական հարաբերություններ ունի այլ կանանց հետ,
- կինը հոգնած կամ անտրամադիր է:

Կնոջ իրավունքների և առողջության վերաբերյալ հարցերն արդյունավետ համադրելու նպատակով, ընտրվել են այս երեք իրավիճակները: Աղյուսակ 15.7.1-ը ցույց է տալիս վերոնշյալ պատճառներով, ամուսնու հետ սեռական հարաբերությունները մերժելն արդարացնող, կանանց տոկոսն ըստ հիմնական բնութագրիչների:

Ընդհանուր առմամբ, կանանց 56 տոկոսն արդարացի է համարել սեռական հարաբերություններում ամուսնուն մերժելն ըստ բոլոր երեք նշված իրավիճակների: Կանանց 88 տոկոսը նշել է, որ կհին իրավունք ունի մերժել ամուսնուն ունենալ սեռական հարաբերություն, եթե ամուսինն ունի սեռական ճանապարհով փոխանցվող (ՍԾՓ) հիվանդություն, 82 տոկոսը՝ եթե կինը գիտի, որ ամուսինը սեռական հարաբերություններ ունի այլ կանանց հետ, և 59 տոկոսը՝ եթե կինը հոգնած կամ անտրամադիր է:

